

ՅՈՒՆԱՆՔԱՆՍ

ԱՊՐԻԼ ՏԱՆՆԸՐԵԿԻ



Միջոցառման շարժում
Այսպիսով ընդհանրապես
չարձանեմք - Գեորգիան
Բեռնիս Այսպիսով շարժանք
Ք. Կոչի 1919

ՅՈՒՇԱՐՁԱՆ

Ա.ՊՐԻԼ ՏԱՄՆԸՄԷԿԻ



ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

«Ա.ՊՐԻԼ ՏԱՄՆԸՄԷԿԻ ՄԿՈՂԱՆԳԻՍԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ» ԻՆ ԿՈՂՄԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
1919



Գ Ե Ղ Ե Փ Ե Բ Ի Մ Յ Ե Ղ Թ Ե Ն Ե Կ Ը

Հայ ժողովուրդի մարտիրոսագրութիւնը լեցուն է հոգեվարքի ու մահուան հիշերով :

Բայց հայ մտածումը, սերունդէ սերունդ, կանգ պիտի առնէ, առանձին խռովքով մը, թւականի մը առջեւ, որ կը գերազանցէ բոլորը իր անլուր եղբրականութեամբ. 1915 Ապրիլ տասնամէկի գիշերը : Այդ գիշերն է, որ բռնակալութիւնը, բռնակալութիւններուն է՛ն վայրագն ու է՛ն արիւնկզակը, դաւադրեց հայ ժողովուրդի մտածող ու գործող ուժերուն դէմ :

Այդ գիշերն է, որ հաւաքեցան մէկիկ մէկիկ հայ մտաւորականները, ա՛լ անգամ մըն ալ չվերադառնալու համար, ա՛լ անգամ մըն ալ չբաղխելու համար այն դուռը, որ գոցած էր իրենց ետեւէն ցաւի ու յուսահատութեան անհուն հառաչանքներու մէջէն :

բռնակալութիւնը կարծեց սպաննել հայ ժողովուրդը, սպաննելով անոր ընտրած զաւակները :

Բայց հայ ժողովուրդը ողջ՝ ու իր հետապնդած իտէալը կենդանի է այսօր, աւելի քան երբեք, որովհետեւ անմտութիւն է յաւակնիլ մեռցնել Մարմնին մէջէն Գաղափարը :

լռնակալներու անարգ փորձը՝ ընկնել Գաղափարը Բունի Ուժով, ոչ նոր է, աւա՛ղ, եւ ոչ ալ բացառիկ :

Յիշեցէ՛ք ձօրտանո Պրուեսները, Էթիէն Տօլէները, Միջնադարեան խաւարին դէմ ընդվզող այդ ազատ միտքերը : Հաւատարմութիւնը յաւակնեցաւ, իր խարոյկներով խորտակել անոնց մտքին ու հոգիին ազատ թռիչքը :

Բայց դուք գիտէք այսօր թէ որո՞ւն մնաց յաղթանակը :

Յիշեցէ՛ք նաեւ ամբողջ փաղանգը այն հերոսներուն, որ ծառացան նոյն բռնակալութեան դէմ, փշրելու համար իրենց ժողովուրդին ստրկութեան շղթաները :

Ո՛ւր են անոնք, որ հաւատացած էին թէ կրնան սպաննել Գաղափարը խարոյկներու կամ կախաղաններու վրայ, հրով ու սրով :

Պատմութիւնը ծածկած է անոնց անունները մոռացութեան անարգ քօղով :

Ու մինչդեռ կը լռեն ամօթի մէջ, անարգանքի տակ, դահլիճները, զոհերը կը խօսին փառքի մէջ, անմահներու լեզուով :

Մեր Յանձնաժողովը մատուցանելով յարգանքի այս պարզ, բայց սրտագին հարկը մեր նահատակած զրական ու քաղաքական այն գործիչներուն, որոնց մէջ բռնակալութիւնը յաւակնեցաւ սպաննել հայ ազատագրութեան իտէալը, առաջնորդեցաւ միակ մտածումով մը. տօնել Գաղափարին յաղթանակը Բիրտ Ուժին վրայ :

2. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԷՐԻԿԵԱՆ (ԱՏՈՄ). — Ծնած է Շ. Գա-
րահոսար 1860ին. Նխն. կրթութիւնը հոն ստանալով՝ Պօլիս կուզայ և կը վկայ-



ուի Կալթա Սէրայի Լիսէէն: Պահ մը
ուսուցչութիւն ալ ըրած է իր Յննդա-
վայրին մէջ: — Իննսունական թուական-
ներուն՝ աշխատակցած Շահնազարի
«Հայրենիք»ին: Ամուսնացած է Տրապի-
զոն, որուն 1896ի կոտորածին՝ յայտնի
ջարդարար Նէմլի Ջատէ Հաճի Օսմանի
հետապնդումին վրայ կ'ապաստանի Օսմ.
Դրամատուն: 3 օր յետոյ դուրս ելլելուն՝
ձերբակալուելով բանտ կը նետուի: Օ-
տար միջամտութեամբ ներման արժա-
նանալով, 13 ամսուան բանտարկութենէ
մը վերջ (որու միջոցին՝ ցկեանս բերդար-
գելութեան վճիռը ստացած էր) ազատ
կ'արձակուի: Անգլ. լեզուն սորվիլ ար-

գելափակ կեանքին միակ միթարութիւնը կ'ըլլայ: Այլ ևս նոյն քաղաքը մնալը
վտանգաւոր նկատելով՝ 97ի վերջերը կը փախչի Պաթում, ապա Թիֆլիզ ուր
ուսներէն կ'ուսանի, և քանի մը տարիէն լեզուին հմտանալով՝ քննութիւն կ'ան-
ցունէ և փաստաբանութեան վկայական կ'ստանայ: Իր արուեստը բաւական ա-
տեն կիրարկելէ վերջ՝ կը քաշուի աղ. ասպարէզէն, Մանթաշէֆի գործերուն
իւր վարիչ պաշտօնավարելով: — Դաշնակցութեան կարկառուն դէմքերէն մին,
անխօնջ աշխատանքով ձեռք բերած օրէնսգիտական իր հմտութեամբ և իր
երկաթէ տրամաբանութեամբ: Կանուխէն նուիրուած է հանրային գործունէու-
թեան և ապրած է միշտ իբրև անհաշտ ազատական: Սահմանադրութեան հըռ-
չակումին կուզայ Պօլիս, և հակառակ իր յառաջացած տարիքին՝ կը ներկայա-
նայ կրկին պայքարի նոյն աննկուն մարդը, թէ՛ ազգ. երեսփոխաններու ժողո-
վատեղին և թէ՛ մամուլին մէջ, ամէնուն ակնածանքին առարկայ դառնալով:
— Հրատարակած է ուշագրաւ յօդուածներու շարք մը «Ազատամարտոյի մէջ, ո-
րուն անստորագիր խմբագրականներէն ոմանք իր գրչէն ելած են: Դաշնակց.
բազմաթիւ թերթերու մէջ ունէր աշխատակցութեան իր բաժինը՝ Նիկի, Վա-
ղիկակ և Ատոմ Ծածկանուններով (այս վերջինը՝ զաւկին անունը): — Ազգ. երես-
փոխան ընտրուած Սիււտարէն: — Անգամ մը՝ Իթթիհատէն հրաւիրուած է՝ ան-
դամակցելու Պետական Խորհուրդի, բայց մերժած է: — Երկերը՝ Պետական Լոգո-
գութիւնն ու հողային հարցը, Մեր Հաւասարը, Ազգ. Սահմանադրութիւնը, Բարե-
կոտորումներու հարցը, Օսմ. Կայսրութեան անկումն պատմութիւնը, Ամուսնական
խնդիրը: Ասոնցմէ դատ կայ Ապագայնացում գիրքն ալ՝ իսկոյն փճացուած: Կը
թողու անտիպներ՝ Բերա, Յոյնի մը քով պահ դրուած: — Ա. Անտոնեանի
«Կաւէ արձանները երգիծական հատոր մըն է Շահրիկեանի վրայ:

Մ Ե Ծ Դ Է Մ Ք Ե Ր

Մեծ ազգերու պատմութիւնը անոնց Մեծ Դէմքերուն պատ-
մութիւնն է: Անոնցմէ ք կեսարներու, Աղեքսանդրներու, Արիստո-
տէլներու պատմութիւնը, եւ այլ եւս չմնար փայլը Հռոմէական,
Մակեդոնական, Յունական մեծութիւններէն ու փառքերէն:
Բայց այս՝ պայմանադրական ճշմարտութիւն մըն է: Այդ
մեծութիւնները չէին կրնար դարձուիլ, եթէ միջավայրը եւ զա-

նոնք ծնող ժողովուրդները ընդունակ չըլլային այդ մեծութիւն-
ները ծնելու, սնուցանելու, մէկ խօսքով՝ դարձնելու:

Անհատին դիրք մեծ եղած է, ու դեռ երկար դարեր պիտի
ուեննան անհատները իրենց մեծ կշիռը. զուցէ այդ ծանրութիւն-
ները պիտի կշռեն ցորչափ մարդկութիւնը կ'ապրի, բայց երբեք
անհատները չեն կրցեր ժողովուրդները քաշել իրենց ետեւէն, չէ
ստեղծուած ո՛չ մէկ քաղաքակրթութիւն, չէ կատարուած ո՛չ մէկ
յեղաշրջում եթէ անոնց պատկանած ժողովուրդներու ձգտում-
ներէն, հոգեբանութիւնէն չեն արտադրուած, հետեւորդներ չեն
ունեցած, բանակնիր չեն կազմուած:

Այդ պատճառով է որ կ'ապրին այն ժողովուրդները որոնք
անցեալի հպարտութիւնն ունին, ներկային պիտի փարած են
իրենց ստեղծագործութիւններով ու իտէպլներով, եւ որոնք իրա-
ւամբ վստահաբար կը նային ապագային:

8. ԵՍԷՐԻԿԵԱՆ

3. Գ. ԽԱՎԱԿ (ԳԱՐԵԳԻՆ, ԶԱԳԱԼԵԱՆ) ԻՅՆՖԱԿԵՏԱ-
ԳՐՈՒԻԼԵ. — Ծնած եմ Ալեքսանդրապոլ 1867ին. Նխն. ուսումը հոն առնելէ



վերջ, մտած եմ էլմիածնի Գէորգեան
ձեռնարանը 1883-6. սոյնուհետև 7 տարի
շարունակաբար ուսուցչական պաշտօն
վարած եմ Բագուի, Գանձակի և Աղու-
լիսի ծխական դպրոցներուն մէջ. Ըն-
տանիքս կը կուրէր Զախալ Օղլի որ ապա
վերածուած է Խաթակի, և պապուս եղ-
բայրը՝ Ստեփան Նպակ.ն ալ նոյն մակա-
նունը կը կրէր: 1893ին անցած եմ ժը-
նէվ և աւարտած տեղւոյն համալսա-
րանին հասարակագիտական (Sciences so-
ciales) բաժինը, իբրև գործիչ՝ մեկնած
եմ իսկոյն Աղեքսանդրիա ուր տարի մը
մնալով գացած եմ Իզմիր (6 ամիս) և

Պօլիս 2 տարի), ութամսեայ բանտարկութենէ վերջ աքսորուելով հայրենիք,
կրկին նետուելու ուսուցչական ասպարէզ, Շուշի թեմական դպրոցը վարեցի 2
տարի. ամուսնացայ և 1903ին Թիֆլիզ տեղաւորուելով կարգուեցայ խմբագիր
«Մշակ»ի և յաջորդ. տարի նաև ուսուցիչ Ներսիսեան դպրոցի (պատմութիւն,
Ֆրանսերէն և քղ.ք. տնտեսութիւն): 1906ին երբ հնարաւոր դարձաւ ընկեր-
վարական ոգիով թերթեր հրատարակել, Ա. Ահարոնեան, Թփիշեան և ես հիմնե-
ցինք «Յառաջ», «Ալիք» և չն. թերթերը: 1908ին ձերբակալուեցայ և վեց ամիս
բանտը մնալով երաշխաւորութեամբ ազատ արձակուեցայ, ինն ամիս ետք վե-
րտին ձերբակալուեցայ և տարիի մը չափ բանտային կեանք մը բոլորեցի Թիֆ-
լիզ (Մետեխ), Բագու, Թոստով և Նովոչէրքասք: 1912ի ամիսն էր որ Ահա-
րոնեանի և Խահակեանի հետ եկայ Պօլիս և 1913ին Սամաթիոյ ազգ. վարժա-
րանի տնօրէնութիւնը ստանձնեցի: — Խօսելու ընդունակութիւնս ժառանգած
եմ մօրմէս, Տիկին Սուլթանէն որ սիրուած դէմք մըն էր և շատերէ կը փնտուէր՝
իր համոզկեր խօսքերով ընտանեկան խնդիրներ կարգադրելու: — 1887 Մա-

յիսին էր որ առաջին անգամ երեւցայ «Մշակ»ի մէջ Գաւառացի Երիտասարդութիւն յղուածովս, յետոյ աշխատակցեցայ «Մուրճ»ի և «Տարազ»ի. 1896ին հրատարակեցի Մի բարոյական այլանդակութիւն յեղափոխական մտաւոր գործում և ժողովրդի բանաստեղծը Բաւառ Քարիպա, 1904ին Հարկերը Տանկասանում, Հայրենիք եւ ազգ. շարժումներ, Հայկական շարժման պատմութիւնը, 1905ին Ռուսական Ձեմարթիւն եւ Կովկասի պահակները, 1907ին Դեպի Ֆեֆերցիա, 1912ին Ի՞նչ է ազգութիւնը, Տառապանքի գիշերը, 1913ին Ի՞նչ է դասակարգը, Հին Արեւելք, Հայոց պատմութիւն: Թարգմանած եւր Վինակրատովի Յ հատոր Ընդհ. Ազգաց պատմութիւնը, նաև քղք. և ազգ. ինքնութիւնը մասին խել մը գրեցիներ՝ Շնիցլէրէ, Տաստղէվսքիէ, Օսթրովսքիէ և Ն. և Թատերական երկեր:

* * Դաշնակցութեան ալս սլատկառելի անդամը որ ճանչցուած է մեր մէջ յայտնի բեմբասաց ու գրագէտ՝ կը մոռնայ յիշել գրական իր միւս ծածկանունն ալ — «Պապա Դասպար»:

* * *

Խաժակ Ընսանիքին մտերիմ Օր. Յ. Սարգիսեան խմբագրութեանս փութացուցած է հետեւեալ նամակը — գրեթէ fac-simile մը: Ահա՛ անմոռանալի ախորականին ամենափերջին տղերը, Աղէսայի ձամբուն վրայ մատիտով հեւ ի հեւ գրուած:

Սիրելի,

Տանում են ինձ հեռո՞ւ, հեռո՞ւ ք'զանից, դէպի Տիգրանակերտ: Ինձ հետ են Այաշի բանտարկեալներից հետեւեալները. — Ակնունի, Ջարդար, Սարգիս Միլասեան, Տօթ. Տաղաւարեան, Ճիհանկիւլ:

Էրէյլի կայարանում հանդիպել ենք մի Հայու, որ խոստացել է քեզ բերել իմ այս նամակը: Լաւ խնամիր քեզ եւ աղջիկներինս, Նունուսին եւ Ալոսին:

Ձեք խմանում թէ ինչի՞ մեզ տանում են. բայց մեծ յոյս ունիմ որ նորից կը տեսնենք միմեանց:

Դէ՛հ, ցտեսութիւն, համբուրում եմ քեզ եւ կօտաններին(*):

Մայիս 1915 Քո
Գ. ԽԱԺԱԿ

(*) Տե՛ր եւ Տիկին Խաժակի կողմէ տուած փաղափայական մակդիր իրենց երկու աղջիկներուն, Նուարդին եւ Արասիին: Այս անուններն ալ այլափոխելով կը կոչուին Նունուս եւ Ալոսա:

ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ԱԼՊՕՄԷՆ

Մէրը Աստուծոյ քնարին մէկ արծազանգն է՝ մեր սրտին մէջ կրկնուած:

Անթիպ Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

4. Ի. ԱԿՆՈՒՆԻ (ԽԱՉԱՅՈՒՐ ՄԱԼՈՒՄԵԱՆ). — Ծնած է Մեղրի (Ջոկիստան). մտաւորապէս 50 տարու: Արծրունիի կենդանութեանը, մնած անոր գաղափարներով, կ'սկսի գրել «Մշակ»ի մէջ: (Հիմադրին մահէն ետք թերթը փոխանցուած է Հ. Առաքելեանի, Բալանթարի ու Իրենի): Երկար ժամանակ Բեթերսպուրկ մտալով՝ կ'աշխատակցի «Դրօշակ»ի է. Ակնունի ծածկանումը, գլխաւոր նիւթ ունենալով ուսու կառավարութեան վերաբերումը դէպի Կովկաս և Կովկասահայերը՝ Կովկասեան խապրիկներ խորագիրին տակ, Հայ-Թթթ. ընդհարումներէն վերջ կ'սկսի գրել Կովկասեան վերջերը (ապա առանձին հատոր կազմուծ եւ ֆրանսերէնի ալ վերածուած ուշագրաւ երկ): Անժխտելի են հրատարակագրի և բեմբասացի իր արժանիքները. — Բարիք 1904ին մտանակցած է ժէօն Թիւրքերու և Հայոց «քոնֆէրանս»ին, 1907ի Հ. Յ. Դ. Ընդհ. ժողովը պատուիրակ կ'որոշէ զինք հայեւթուրք դաշնակցութեան խորհուրդին, և Ակնունի յաջորդ տարին յաջողութեամբ գլուխ կը հանէ այդ գործը, որուն իբր արդիւնք Օսմ. Սահմանադրութիւնը կը վերահաստատուի: Յետոյ, իբր պատասխանատու անդամ իր պատկանած կուսակցութեան՝ կուգայ Պոլիս և իր ատենախօսութեանց ատեն՝ յաճախ առարկայ կը դառնայ իսնդավառ ցոյցերու: 1912ին կը մեկնի Ամերիկա, և հայ դաղութիւններու մէջ շրջան մը ընելով՝ կը դառնայ Պոլիս. — Հրատարակած է ուսումնասիրութիւն մը Գր. Արծրունիի վրայ, նաև Դեպի Կոնս, Դեպի Երկիր և Մեծ Իդէալիստ: Ինք կազմած է Յարգանքի Պակը (Փորթուգալեանի Յոլեւեանին) և Սգապակը (Քիլիսեանի մահուան անթիւ): — Ազատամարտի անստորագիր խմբագրականներէն մէկ մասն իր գրէն ելած է:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Ազատագրական արիւնը չէ, — նոյն իսկ այնքան սոսկալի, ինչքան «հայկական կոտորածները» — որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը: Մի՛ մոռացիր, որ քսան տարուց աւելի է ինչ օսմանեան բունապետութիւնը ե՛ւ հրդեհածգութեամբ, ե՛ւ սովով, ե՛ւ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի. վերացնել, նւազեցնել Հայերին, դարձնել Հայաստանը անհայաբնակ, որպէս զի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզմանաբար դրւի այն մեծ, ոգեւորիչ հարցի վրայ, որ զբաղեցնում է ամբողջ Եւրոպան՝ «Հայոց հարց» անունով եւ որը 600 տարուայ ստորակ ժողովրդի սրտում ծնել է ե՛ւ յոյս, ե՛ւ հերոսութեան ձգտում, ե՛ւ մարդկային մեծ իդէալներ...: Այո՛, իդէալներ որոնց իրագործման համար Հայութիւնը միայն մի վայր ունի, — Հայաստան: Մայր-հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ,

այլ փշրակի. քափքփուփ, անպէտ եւ անկարեւոր: Երկիրն է նրա պատմական դերի քենը, նրա կուլտուրական բաղձանքների հնոցը: Թափառական, շրջիկ կեանքը. տարագրութիւնը՝ սպանեց հրէական տաղանդաւոր ազգը. նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը հայկական ջնուդոքեան:

... Մեզանից աւելի հայածական եւ տգէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն — Հայրենիք: Ի՞նչ, միթէ մենք պէտք է մեր ապագայ սերունդին Հայրենիքի փոխարէն թողնենք լուկ հայկական գաղութներ, ցիրուցան ովկէանի այս եւ այն կողմը, չշողկապուած ո՛չ մի զգացմունքով, ժողովրդական ոչ մի գաղափարով . . . :

է. ԱԿՆՈՒՆԻ

5. ՏԻՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ (ԻՅՖՆՈՒՍՅԱՆՆԱԳՐՈՒՄԻՆ). — Ծնած եմ Կեսարիա 20 Սեպտ. 1862ին և ընտանեօք Պօլիս փոխադրուած՝ երբ 6 ամուս էի դեռ. Նիւն. կրթութիւնս ստացած եմ Հասցէօյի Ներսէսեան վարժարանը, յետոյ Մեզպուրեան եւ Սուրէնեան. 1880ին դրկուելով Մարսիլիա, յաճախած եմ վաճառականական դպրոց, Հետեւած Գիտութեանց Կաճառի. Ուսանողի այդ տարիներուս՝ յօդուածներ դրկած եմ «Մանգումէի էֆօքեարի», որուն խմբագիր եղայ վերադարձիս, և թերթին անկման միջոցներուն՝ 3-4 տարի ես վարեցի զայն. յետոյ հրատարակեցի «Ճիհան» հայատառ-թրքաբարբառ շաբաթաթերթը մէկ տարի. Նոյն ատեններուն էր որ Համիտ վէհայի անուն ծանօթ գրագէտը սկսաւ հրատարակել «Սաստէթ» թերթը որուն՝ թարգմանիչն ու



խմբագրականները գորող եղայ, վերջէն ալ խմբագրապետը: ԾԱի դէպքերուն ստիպուեցայ մեկնիլ Յունաստան և Մարսիլիա. կուրծքի հիւանդութենէ ալ կը տառապէի. Հինգ ամիս վերջ Պօլիս դարձիս՝ աշխատակցեցայ «Ճէրիտէի Շարգիէ»ի, «Սաստէթ»ի և «Թարիգ»ի՝ որուն խմբագրապետութիւնը ստանձնեցի. Իզմիրեան Պատրի որով կարգուեցայ Ա. Թարգման Ազգ. Պատրիարքարանի, Զարդերէն յետոյ անցայ Եւրոպա եւ աշխատակցեցայ «Նայնթինթհ Սէնչըրի»ի (ուր երեւցած է Թուրքիա եւ իր վեհապետը յօդուածս) եւ «Բոսթամբուրըի Ուլիու»ի (ուր գրած եմ Կեանքը երջողի մէջ): Այս 2 յօդուածներս վերատալանուած են շատ մը եւրոպ. թերթերէ: Աշխատակցեց եղայ «Տէյն Սէյն»ի (որուն արեւելեան լուրերու բաժնին օժանդակեցի 7 ամիս չափ) նաեւ «Տէյն Կուէֆիք»ի և այլ թերթերու: 1898ին, Եւրոպա գտնուող օսմ. հայատակներու մասին հրատարակուած ներումէ մը օգտուելով դարձայ Պօլիս և աշխատակցեցայ «Սասպահ»ի: Այդ միջոցներուն էր որ կառավարութիւնը որոշեց թուրք թերթերու խմբագիրներ. ես ալ «Խաղիմէի Խասսա»ի քարտուղար կարգուեցայ: Բողք. պարագաներու ստիպման տակ՝ Պօլիսը կրկին ձգելով եգիպտոս անցայ և խըմ-

բազիր եղայ «Ժուռնալ տիւ Գէռ»ի, ապա խմբագրապետ «Պուստ Էփրեսիէն»ի, միտամանակ թղթակց Վիէնայի «Բուէսթրոն»-ի և Բարիզու «Բուէս Աստիէ»ի: Հրատարակեցի նախ «Էճիբըլն Կուէֆիք» անգլ. թերթը մէկ տարի, յետոյ «Նէնի Ֆիքիր» թուրք ազատական երկշաբաթաթերթը 2 տարի: Օսմ. Սահմանադրութեան հոչակումէն վերջ Պօլիս եկայ և խմբագրապետ կարգուեցայ «Սասպահ»ի, 31 Մարտի վաղորդայնին: Իբր «ամսթէօն» աշխատակցած եմ Զօհրապի «Մասիս»ին, Շամտանիեանի «Նուրիկ»ին ու «Մասիս»ին, «Ժամանակ»ի ու «Տարեցոյց»ի: Գր. ծածկանունս՝ Գլանիկ զոր Եւրոպա ալ գործածեցի «Վիքոսթ» ալ Գլանիկ ձեւին տակ. — բաց ի վերջու մը ծածկանուններէ՝ նոյնպէս Եւրոպա: «Սուրհանդակ» օրաթերթին կանոնադրաբար աշխատակցած եմ Սիրայր ծածկանունով, և ճուռնայի մը հետեւանօք պահ մը դարձած գրելէ. յետոյ վերստին՝ Տիւնիս ծածկանունով. — 1879ին երբ պատանի էի դեռ, լյս ընծայած եմ Անցեայն եւ Ապագայն կամ Ազգ. Վերակազմութիւն վերնագրով տետրակ մը, նաեւ հեղինակած՝ Ֆրես.Կ թրք. Բառգիրք մը:

* * * Տաղանդաւոր հրատարակագիրը կը պատկանէր Սահմանադր. Ռամկավար կուսակցութեան:

ԽՐԱՏՆԵՐ

Անձնական պայքարները հանրային կարծիքին զրգուովին ատեններուն՝ կրնան մեծ շահեկանութիւն ընծայել, բայց գրէթէ միշտ նողկանք կը յաջորդէ այդ հիւանդոտ հետաքրքրութեան: Գաղափարի պայքարն ընդհակառակն երբ հանրութեան շահը կը շօշափէ եւ այն համոզումը կը ներշնչէ թէ անձնական նկատումներէ գերիվեր է, մնայուն անդեցութիւն մը կը գործէ:

*

Զգացումը մեծ ազդակ մըն է. սակայն պէտք չէ անոր դիմել, եթէ գործունէութեան հետեւանքը պիտի չվաւերացուի միտքին կողմէ:

*

Ճշմարիտէն մի՛ զատուիր, սակայն ճշմարտութիւնը ժողովրդեան գլխուն մի՛ նետոր: Երբ ճշմարտութիւն մը անհանոյ է ընթերցողին, զայն ներկայացուր այնպէս՝ ինչպէս բարեկիրթ մարդ մը սրահին մէջ կը ներկայացնէ իր համակրելի ընծայել ուզած մէկ անձանօթը:

ՏԻՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ

6. ՍԻԱՄԱՆԹՕ (ԱՅՈՒՄ ԵԱՐՁԱՆԵԱՆ). Ծնած է Ակն 1 Յնվր. 1878ին. 13 տարեկանին Պօլիս գալով՝ կ'աշակերտի Միքիճանեան եւ Պէրպէրեան վարժարանները: Պանքայի դէպքին կը փախչի ժընէվ ու կը խառնուի ազգային ու գրական գործունէութեան: — Դաշնակցական: — Արտասահմանի թերթեր եւ հանդէսներ (Վաղուան Զայնը, Անահիտ, Բանբեր, Շիրակ, Դրօշակ, Ռազմիկ, Ժողովուրդին համար, եւն.) իրեց էջերը կը բանան Դիւցազներգութեան այս վարպետին, որ, արհամարհելով յանգ ու չափաբերութիւն՝ իր ցեղին մարտիրոսները կ'եղերբագէր, հերոսներու կեանքը կը պանծացնէր ու վրէժ կը կայծկէր: Բայնքան հոսով եւ սիրալի ոճով մը, 1908ի վերջերը Պօլիս գալով՝ աշխատակցած է



Ազատամարտի: — Երկերը. Դիւցազներգեան, Հայոցիկներէ շարքը, Հոգեվարքի եւ յոյսի բաներ, Կարմիր լուրեր բարեկամես (Կիլիկիոյ կոտորածին առթիւ), Հայրենի կրակեր. Սուրբ Մկրտիկ (Մեծ Յոբելեանին), որոնցմէ մեծագոյն մասնամիտքուեցաւ Ամբողջական գործին մէջ՝ տպ. Ամբերկա: Իր քերթուածներէն մին թարգմանուած է անգլիերէնի: — Սիւսանթօ պիտի սպրի հայ գրականութեան մէջ՝ իբր լաւագոյն ներկայացուցիչը խորհրդապաշտ բանաստեղծութեան, և գրական այդ սեռին մէջ ո՛չ ոք ունեցած է իրեն հաւասարող. եթէ իր եւ վարուժանի զուգակշիռն ընել հարկ ըլլայ, կրնանք ստապէս ըսել. «Սիւսանթօ գաղափարէն զգացումին կ'երթայ, իսկ վարուժան զգացումէն ու պատկերէն՝ գաղափարին»: — Իր երգերէն գլուխ-գործոցը կարելի է նկատել «Հայոցիկները»ին մէջ Սովամահները ցորենի դաշտեր):

Ծ Ա Ր Ա Ի

Հոգիս վերջալոյսին մահը մտիկ կ'ընէ.
Զարչարանքի հեռաւոր հողին վրայ ծնրադիր,
Հոգիս վերջալոյսին ու հողի վէրքերը կը խմէ...
Եւ իր մէջ, դեռ իր արցունքին անծրեւումը կ'զգայ...

Ու ջարդուած կեանքերուն աստղերը համակ՝
Աւրուած աչուրներու այնչափ նման,
Սրտիս աւազաններուն մէջ այս իրիկուն՝
Յուսահատութենէ, սպասումէ կ'ոգեվարին...

Ու բոլոր մեռածներուն ուրուականներն այս գիշեր
Աչքերուս եւ հոգիս հետ Արշալոյսը պիտի սպասեն...
Որպէս զի, կեանքերուն ծարաւը յագեցնելու համար՝
Թերեւս վերէն իրենց վրայ՝ կաթիլ մը լոյս իյնայ:

ՍԻԱՄԱՆԹՕ

7. ՀՐԱՆԴ (ՄԵԼԻՔՈՆ ԿԻՐՈՅԵԱՆ). — Ծնած է 1859 Սեպտ.ին Հաւաւ (Բալու): 1870ին Պօլիս պանդխտելով՝ կը յաճուի Սկիւտարի ձեռնարանը մինչեւ 1875, դասընկեր ունենալով Միհրան Դուրեանը (յետոյ Եղիշէ Եսսիկ.), ապա Ս. Իաշ — Խ. Միսաքեանի դասերուն: 1878էն մինչեւ 96, անի ո՛չ կերպով՝ ւանդած է գրաբան լեզուն ու հայկական դպրութիւնը զանազան դպրոցներու մէջ (Ռոստոթօ, Ղալաթիոյ Կեդրոնական, Սամաթիոյ Նուենեան-Վարդուհեան, Մեղպուրեան ևն.): 96ի դէպքին Վառնա կը փախչի ուր Օր. Արմ. Մինասեանի հետ կը բանայ Արծրունեան վարժարանն ի յիշատակ Դր. Արծրունիի՝ որուն հիացող մըն էր: 98ի աշնան Պօլիս դարձին բանտ կը նետուի և 6 ամիս վերջ



կ'աքորուի Գասթէմուհի, ուր ապրած է 10 տարի, ուսուցչութեամբ պարապելով: — 1883էն սկսեալ անընդհատ աշխատակցած է պօլսահայ թերթերու (Մասիս, Արեւելք, Հալքենիք), լեզուական և ազգ. հարցերու շուրջ յօդուածներով՝ որոնցմէ ամստանալի պիտի մնայ շարքը Պանդուխտի կեանքին խորագրով իր պատկերներուն, կեանքով ու տառապանքով թրթռուն: Վտարանդի կեանքին մէջ — երբ արգիւտուած էր իրեն գիրք ու գրիչ — դողնիւող արտադրած է ձախձախուցիլն մէջ՝ երկու առանցիի վրայ տոհմային կեանքէ ստուար վէպը, զոր անստորագիր սկսաւ թերթօնել «Սուրհանդակ» եւ զոր 18 թիւ վերջ ակամայ ընդհատեց... գրաքննութեան հոտաւութեան հետեւանօք: — Հրանդ գրաբանի խնդիրներու մէջ երկիցս չափուած է հեղինակաւոր անձերու հետ (Պէրպէրեան ու Դուրեան) եւ ցոյց տուած խոր հմտութիւն: Վառնա գաղթին, Շառապ Ծածկանունով աշխատակցած է «Շարժում»ի. իսկ Օսմ. Սահմանադրութենէն ետք Պօլիս դարձին՝ երանդեամբ նետուած ուսուցչական ասպարէզ, առանց լքելու գրչի իր պարապումները: Ազգ. երեսփոխան: Դաշնակցական: — Ունի Գրաբար լեզու դասագիրքը, Մետոյս եւ Սահակ անուն հայ նշանագրերու պատմութիւնը, նաև Թի ի՛նչ կը խորհի կիները իրենց ամուսիններու մասին թարգմանութիւնը:

Գ Ի Բ Ո Ի Գ Ի Բ Բ

... Մենք չենք զտներ բան մը որ այնքան մերը ըլլայ՝ որբան գիր ու գիրք. նոյն իսկ թարգմանութեան մէջ որ հայ գրիչներու առաջին զրական աշխատանքը եղաւ, այնքան փառալից եւ հոյակապ է այդ դրոշմը: Աստուածաշունչի մէջ Եսայի, Երեմիա, Դանիէլ, Յոբ, Դաւիթ միշտ տուած են մեզի անուշ պատրանք մը ազգայնացած մտածումներու: Նոյն հմայքին ներքեւ կը կարդանք Ոսկեբերանը՝ վճիտ կանոնաւորութեամբ, իշխանապերճ հայերէնով մը, այնպէս որ ան իբրեւ թէ մերը ըլլար: Սկզբնագրին մէջ սովորական ոճով ըսուածը՝ հայ թարգմանութեան մէջ վայելուչ եւ ձեւաւոր խօսք մը կը դառնայ:

... Գիր ու գիրք միայն շօշափելի ու զգալի ձեւեր եւ երեւոյթներ չեն. այլ անոնց մէջ խօսուն է ամբողջ ցեղը, իր մտքի եւ ընդունակութեանց պատիւը:

ՀՐԱՆԴ

8. ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ (ԶԻՊՈՒԳԻՅԱՐԵԱՆ). — Ծնած է հայ հուովր. Ծնողքէ, Սվազի Բրգնիք գիւղը 1884ին. 12 տարեկանին պատճառով տաճարէն և յաճախած Վենետիկի Միխիթարեանց վարժարանները Բերա և Դասըքէոյ. 1903ին Միաբանութիւնը կ'ուղարկէ գինք Վենետիկ. Մուրատ-Ռաֆայէլեանի շրջանը բուրբելով, Դանիէլ կը դրկուի Պելճիքա՝ Կանտի համալսարանը. Ուսողութեան այդ օրերուն է որ կ'սկսի աշխատակցել «Բազմավէպի», «Գեղունիի», «Անահիտի», «Շիրակի», «Ռազմիկի» եւ «Հայրենիք»ի հրատարակչութեանը որոնցմով Վարուժան յայտնութիւն մը կը դառնայ. Համալսարանէն ուսումնաւարտ ելլելուն, Օսմ. Սահմանադրութիւնն արդէն հըռազակուած, կուգայ մայրաքաղաքս եւ Պոլսահայը բախտը կ'ունենայ բանաստեղծը ճանչնալու իր տաղանդին բարձրութեանը մէջ. Դիւանագիտական ասպարէզին համար պատրաստուած այս երիտասարդը սակայն շեղում մը կ'ընէ եւ ինքզինքը կը նուիրէ ուսուցչութեան, 1909էն 1912 իբր տնօրէն պաշտօնավարելով Սվազի եւ Թօզաթի ազգ. վարժարանները. Կը դառնայ Պոլիս եւ տեսուչ կը կարգուի Բերայի Հոմո. Հայոց Լուսաւորչեան դպրոցին, հասցնելով բազմաթիւ սաներ. — Երկերը. Սատուռներ (Վենետիկ), Զարդը (Բարիզ), Տրտունջի Ե. Տեմիրճիպաշեանի (Սվազ), Յեղին Սիրոյ, Հեքսնոս Երգեր (Պոլիս). Կը թողու բանաստեղծութեանց անտիպ հատոր մը՝ Հացին երգը վերնագրով, զոր Տիկին Վարուժան հազիւ կրցաւ փրկել թուրք բռնապետութեան ձեռքէն. — Սիրոյ, թշուառութեան եւ հայրենիքի անզուգական երգիչն ու հոյակապ գերթողը որ օժտուած էր վսու երեւակայութեամբ և արտադրելու աննախընթաց կարողութեամբ մը, 1914ին Յ. ճ. Սիրունիի հետ լուս ընծայեց Նաւասարդ անուն շքեղ տարեգիրքը գր. եւ գեղարուեստական. — Ս. Դ. Լ. Ուսումնարանի «Տարեկան տեղեկագիր»ին մէջ երեւցած է իր յուզիչ Հուսկ Բանքը. — Դաշնակցական:



Ո Ր Բ Ո Ւ Հ Ի Ն

Աշնան ծաղիկ մըն եմ, ծաղիկ արցունքի՝
Որ շողերու ըսպասումով կաթոգին՝
Մութ անդունդի մը եզերքին կը ցամքի.
Ցամբում մը լուռ, անզգայի եւ հեշտին:
Սըրտիս՝ որբի կրակիճն ունիմ հիւժող զիս.
Գեղս նախկին ճանկընթեցին զըրկանքներ.
Եւ անհրաժեշտ գրգուանքներ իմ տարիքիս
Չը ճանչցայ ես եւ չը զըտայ սիրոյս՝ սէ՛ր:
Ծուխ ու մուրի եւ սարսուռի խըշտեկին,
Զիս թողուցին անօգնական, մինաւոր.
Ո՛հ, անարգանքը սեմիս վրայ գըրեցին,
Եւ մոռացօնքն՝ որ կը ստուարի օր է օր:

... Ո՛հ, խեղճ ծընողք, ըսէ՛ք, արդեօք ձեր աչքեր
Ո՞ր ամպիկէն, եւ կամ երկրի ո՞ր խորշէն
Ձերին բոկո՛տրն ճըռգածին են յառեր՝
Ձոր անօթի թափառումներ կը մաշեն:
Է՞ր դու եզերքն հեղեղատի մ'արիւնի
Տընկեցիր քու թոյլ եղեգնիկը վախկոտ.
Դու, ո՛վ մըշակ, ո՛վ դու մըշակ եղեռնի,
Դու, ո՛վ մայրիկ յեշատակի մը աղօտ...

... Ո՛վ մարդեր, դուք որ ինձ գուժով կը նայիք,
Մի՛ տաք ինձի ձերին պատառը՝ զոր է
Թըրած օտար աշխատութեան մը քըրտինք,
Եթէ նոյն իսկ զանի սէրն ալ խըմորէ:
Մի՛ տաք, մի՛ տաք ինձի ձեր ծածքը զերմին՝
Ուր եւ սակայն բընիկ ոգին չի շընչեր.
Մի՛ տաք ինձի մախրերը ձեր կըրակին,
Կամ հանգրըւան մը ոտքերուս կարելէր:

Մի՛ կըտրատէք ձեր խնդութիւնն ինձ համար.
Թողէ՛ք որ իր մացառուտին մէջ խեղդի
Կեանքիս ծաղիկը վայրահակ, դալկահար.
Հոգ չէ թ'ըլլամ թօշնած, լալկան, կամ նօթի:
Այլ — սա բոլոր դաշտերուն մէջ խանձոտած՝
Ուր շուշանին ցամքած է սերմն իսկ վերջին,
Սա վերիվար բըլուրներուն սըգազգեաց՝
Ուր սոսկ եղինք ու բաղըրջու՛կը կ'աճին,

Արաքսի սա սեւ փրփուրներն արցունքոտ՝
Ուր անընդհատ կը ծըփան ցուրտ դիակներ,
Եւ յօշոտուած քըղամիդի մահահոտ
Պատուըւածքները խութերու են կառչեր.
Սա լեռներուն արիւն հագած, վարդագոյն,
Կամ բերնին քով քարայրներու՝ որք եղան
Մարդ գիշատող անզըղ-մարդու մը սեւ բոյն,
Եւ թաքըստոյ հափափումի մը դաժան.

Փըլուզին մէջ հիւզակներու, տուներու՝
Ուր տեղ թաղուած գանկեր երկա՛ր կը նընջեն,
Եւ կը մաշին կուրծքեր, թեւեր ահարկու,
Ուր կ'իջնայ սոսկ լուսնին արցունքն ուղիսօրէն:
Վերջապէս սեւ ու սուգ ամէն այն տեղիք
Ուր վանդալի մ'կը տեսնուի երթեւեկ,
Ո՛վ մարդեր, դուք որ ինձ գուժով կը նայիք,
Մօրըս միայն գերեզմանն ինձ ցոյց տըլէք...

9. ՌՈՒՌԻՆ ԶԱՐԴԱՐՆԱՆ. — Ծնած է Խարբերդ 1874ին: Նին. կրթութիւնը ստացած հոն, յետոյ ուսուցչութեամբ պարապած եւ յերգփո-



խականի իր հակումներուն պատճառաւ ձերբակալուած: 1904ին կ'անցնի Իզմիր, Մանիսայի մէջ կը մնայ ուսուցչ. պաշտօնով, և երբ հալածանքը կ'սկսի նորէն՝ յաջորդ տարին կը փախչի Ֆիլիպէ եւ կ'սկսի հրատարակել Ռազմիկ թերթը, մինչեւ Սահմանադրութեան հռչակումը: Ծածկանունները՝ «Հրաչեայ» եւ «Էթտէհար»: Թուրք Դաշակցական: Ունի գրական ջղուտ, յղկուած եւ պատկերալից ոճ մը, եւ իր նիւթերը քողած է գաւառիկ տեսարաններէ, հէքեթներէ եւ մարտաշունչ ըմբոստ կեանքերէ, որոնցմով շինած է վարպետ արձակագիրի աչքառու անուն մը: Զա-

նազան լրագիրներու եւ պարբերականներու մէջ հրատարակած իր արձակ էջերը 1910ին խմբած է Յայդադոյ հատորին մէջ: Իր գրուած քննութիւն ու շարժումներն «Սարբերու տղան» (Մասիս 1902), «Վախ եւ մեռնէի» (Ա. Մամուլ), «Սեւ հաւը կանչեց» (Բանբեր գրականութեան եւ արուեստի), «Պահակները արթուն են» ևլն.: Պօլիս գալուն, պահ մը «Ժամանակ»ի աշխատակցիէ վերջ՝ 10 Յն. 1909ին հիմնեց Ազատամարտ օր. թերթը, զոր մինչեւ իր տարագրումը շարունակեց ձեռնհասօրէն, իր շուրջ խմբելով յայտնի գրագէտներ ու հրատարակիչներ եւ օրը օրին հրատարակելով օրուան հարցերու մասին կուռ խմբագրականներ՝ անստորագիր: Ատենախօսած է Հ. Յ. Դաշակցութեան կազմակերպած զանազան միջիններուն, եւ ազգ. երեսփոխան ընտրուած: — Հրատարակած է Միդրագեցներու շարքը, — գր. հաւաքածոներ՝ դասագիրք 1911-4ին, — նաեւ «Յաւելուած Ազատամարտի» եւ «Բագին» շաբաթաթերթերը: — «Հայ աքսորականը» ծածկանունով Ֆիլիպէ տպուած Առիւծի ժանիֆէն եւ գրքովը բանտի իր յուշերը կը բովանդակէ:

Ա Ր Ի Ի Ն Ե Ի Ա Ր Յ Ո Ւ Ն Ք

Ժողովուրդներու արիւնը այնքան առատ ու անհաշիւ հոսած է՝ որքան անօրինակ, աննախընթաց ու հազուադէպ եղած է խրդահարութիւնը Բռնաւորին մութ հոգիին մէջ: Բայց Բռնաւորին Արցունքը չէ կաթած երբեք պատմութեան մէջ:

... Ահա թէ ինչո՞ւ համար վշտակիր մարդկութեան Տառապանքն ու Արիւնը՝ իրրեւ նախատինք ու վրէժխնդրութիւն պիտի շարունակեն պղպջալ ու վեր ժայթքել միշտ բռնաւորներու պալատներուն սեմին վրայ եւ բազմատեսակ բռնութեանց ընդդէմ, մինչեւ որ ընկերական արդարութեան ու ազատութեան մեծ Գաղափարը գայ վերջ դնելու մարդկային ստրկութեան եւ շահագործութեան, խնայելով Բռնաւորներուն պղնձէ աչքերը՝ կարեկցութեան արցունքներէ, եւ մարդկութիւնը՝ իր ծով արիւնէն:

Ռ. ԶԱՐԴԱՐՆԱՆ

10. Ռ. ՍԵՒԱԿ (ՅՕԳԹ. ՌՈՒՌԻՆ ԶԻԼԻՆԿԻՐՆԱՆ). — Ծնած է Սիւնիքի 15 փետր. 1885ին: Հոն իր նախնական կրթութիւնը ստանալով կ'անց-



նի Պարտիզակ, յետոյ Պէրպէրեան՝ ուր կէ ընթացաւարտ 1905ին: Գր. կարողութիւնն զատ ունենալով խոր հակում գիտութեանց, ուսուցչապետին խորհուրդով և օժանդակութեամբ կը մեկնի Լօզան՝ որուն բժշկանոցէն հազիւ վկայուած, կը ծառայէ հիւանդանոցներ եւ դարմանատուններ, հմտանալով արուեստին թագնութեանց: — Երագողն ու գիտունը կ'ապրէին իր մէջ: Զկրցաւ լքել Բնարը՝ Հիբոքատի արուեստին սիրոյն, եւ երգեց Մարդկութիւնը, Հայրենիքն ու Սէրը: — 1910ին լոյս կ'ընծայէր Կարմիր Գիտքը՝ կիսկիոյ կոտորածէն ազդուած: Վերջին Հայերը

ընդարձակ իր քերթուածը մարդարէութիւն մըն է կարծես՝ Հայկ. վերջին մարտիրոսագրութեան, իսկ իր գլուխ-գործոցն է — իբր բանաստեղծութիւն — Լեւանի յիմը: — 1914ին գերան կ'ունջ հետ կուգայ հաստատուել Բերա՝ իր արուեստը կիրարկելով: Ազատամարտի մէջ սկսած է Բժիշկին գիրքն փրցուած էր յօդուածաշարքը զոր լսիելով կարգից ամէն ոք, Պատերազմի վաղորդայնին՝ երբ Պօլսոյ մէջ հիւանդապահութեան դասընթացք մը կ'սկսէր հայ բժշկ. դասուն կողմէ, Սեւակ ծափեր խլեց՝ իր յանկուցիչ եւ օգտաշատ բանախօսութիւններով, իբր բժիշկ Մագրեքէզի բանակին՝ զին. ծառայութիւնը կատարած միջոցին էր որ առանձին տարագրուեցաւ Զանդըրի:

Բ Ա Ս Թ Է Լ

Դաշտանը կար մըն է հոգիս Բասթէլի,
Ուր ոչինչ կայ աչքի խօսող, ոչինչ վառ,
Ուր ամէն ինչ մըշուշի մէջ կը հալի:

Կապոյտ սարի մը կատարին ամայի՝
Բաղեղապատ խարխուլ գմբէթն Հաւատքիս
Տարակոյսին անդունդն ՚ի վար կը նայի:

Բըլուրն ՚ի վեր, բըլուրն ՚ի վար, իմ կեանքիս
Խոպան ճամբան է որ կ'երթայ մինաւոր...:
Բասթէլի մութ դաշտանը կար մ'է հոգիս:

Խոպան ճամբուն եզերքն ՚ի վար իմ մոլոր
Բագիններուս ու մեղքերուս, վերքերուս
Կըրանիքի մահարձաններն են բոլոր:

Պուրակ, առու իր դաշտերուն մէջ չի կան.
Իր ձորերուն մէջ ո՛չ լելակ, ո՛չ նարկիս,
Որ քաղէի իմ սիրտիս քոյր աղջկան:

Մոռցուած ա՛լի մը ջուրի վրայ հեռաւոր,
Այքէ հեռու, սէգերու մէջ կը սահի
Անուրջներու վայրի կարապը ալւոր . . . :
Ու այս բոլորը կը դողայ, կը հալի
Մըշուշի մը տարտամութեանը մէջ ուր
Լացող դէմքի մ'ստուերը կայ պաշտելի . . . :
Հոգիս նիհար նըկար մըն է Բասթէլի :

Անտիպ

Ռ. ՍԵՒԱԿ



11. ՍԱՐԳՍԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ. — Ծնած է Զէնկիէր (Եալօլա) 1873ին. Պարսիկահի բարձրագոյն վարժարանէն անցնելով Կեդրոնական՝ կ'աւարտէ անոր շրջանը: Յոյց տուած իր արտակարգ կարողութեան շնորհիւ և Հրանդի աջակցութեամբ կը մեկնի ժընէվ, 1894էն մինչեւ 1903 հոն մտալով եւ հետեւելով քղ. եւ ընկերային գիտութեանց, երկար ատեն կ'աշխատակցի «Իրօշակ» եւ կը գրէ Թուրքիոյ շուրջ շահեկան յօդուածներ: Այնուհետեւ կ'անցնի Ամերիկա՝ վարելու համար Պոսթընի «Հայրենիք» թերթի խմբագրութիւնը: 1905ին կը վերադառնայ ժընէվ ուր կը մտայ մինչեւ 1909. Յետոյ Պօլիս գալով՝ կը զբաղի ուսուցչութեամբ եւ գրականութեամբ: — Ազգ. երեսփոխան Բերա՝ Գասում Փաշայէն: — Ընդհ. Պատերազմին սկիզբները երբ առողջապահական բանաստեղծներ տեղի ունեցան Բերա՝ հայ բժշկներու կողմէ, «Ազատամարտ»ի մէջ օրամիտ ու կծու քննադատականներու շարք մը կ'սկսի ատոնց մասին: Ունի նաեւ բարացուցական գովալիքի քրոնիկներ միեւնոյն թերթին մէջ՝ լեզուի ինքնատպութեամբ եւ նկարէն ոճով մը: Գանիցս բանաստեղծ է Բերա, էստեան վարժարանի սրահը, նիւթ ունենալով մեր ժողովրդական լեզուին գանձերը, ուրիշ անգամ ալ ընելով լուրջ տեսութիւն մը հին փիլիսոփայական դպրոցներու մասին: Գաջ հմուտ ֆրանս. լեզուի, Պօլիս դարձէն ի վեր անընդհատ կ'աշխատէր՝ աւարտելու համար Յրանս.է հայ. քառարան մը, ընթացիկ յատկաբանութիւններու, նորաբանութեանց եւ գաւառիկ բառերու հարուստ ընդլայնումով մը: Այս գործը՝ գրէթէ ամբողջացած՝ ձեռագիր կը մնայ տարաբախտ իր մօրը քով: Ժընէվ անանուն հրատարակած է կենսագրութիւնն Աղբիւր Սերոբի: — Գրական ծածկանունն էր «Արամ Աշոտ»:

Ի Բ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ի Ի Տ Է Ա Լ

Իրականութիւն եւ իսկայ. առանց այդ երկերեակ ըմբռնումներուն՝ ազգ մը միշտ ենթակայ է անկումներու եւ դառն յուսախաբուութեանց: Մէկով միշտ կենսաբնի շփումը կ'ունենանք, միւսով՝ մեր աչքերը հեռանշող աստղին կը յառենք:

ՍԱՐԳՍԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ

12. ՏԱՐԹ. ՆԱԶԱՐԷԹ ՏԱՂԱՍԱՐԵԱՆ (իր ընդարձակ անտիպ իրենց կենսագրութեան համառոտումով). — Ծնած եմ Սվազ 25 Դեկտ. 1862ին. 7 տարու Պօլիս գալով՝ աշակերտած Ամենափրկչեան վարժարանի, ուր կէ շրջանաւարտ 1878ին եւ մեկնած Յրանս: Տարի մը ազարակներու մէջ գործն. երկրագործութեան ընտելանալէ վերջ՝ յաճախեցի Մէօրսի երկր. վարժարանը, ուրկէ ուսումնաւարտ՝ 81ին մրցմամբ Բարիզի երկր. վարժարանը մտայ եւ 2 տարիէն ելոյ երկրագործական ճարտարագէտի աստիճանով. այդ միջոցին էր որ աշակերտ էի նաև Ծառաբուծական եւ Այգեբանական վարժարաններու: Դառնալով Պօլիս 1883ին, քանի մը ամիս երկր. նախարարութեան մէջ ծառայելէ վերջ՝ ծննդավայրիս դըպրոցին տնօրէն կարգուեցայ, հաստատելով հոն լսարան, չափահասներու կիրակնօրեայ կրթարան, եւ պօսասհայ թերթերու դրկելով յօդուածներ: 1885-6, տնօրէն Գատըքէօյի Արւմտեան վարժարանի: 87ի սկիզբները կրկին Բարիզ անցնելով՝ հետեւեցայ Սօւպօնի եւ Բժշկանոցի դասերուն, շարունակելով 85ին Պօլիս հաստատած Գիթ. Շարժումիս հրատարակութիւնը: Վկայականներս ստացած՝ եկայ Բերա բնակիլ: 97ին՝ Յրնս. Հիւանդանոցի օժանդակ բժիշկ եւ 99ին բժշկապետ Ազգ. Հիւանդանոցի: — Համետեան խումբայոյ շրջանն էր. քանիցս բնակարանս խուզարկեցին և հարցաքննեցին դիս: 96ին բանտ մտոյ եւ 4 ամիս վերջ ազատ արձակուեցայ ընդհ. ներումին: 1900ին կրկին բանտարկուեցայ, բայց ֆրանս. դեսպանատունն ազատեց դիս: Հիւանդանոցը բժշկ. բանաստեղծութիւններ ըրի ամենազգի ուսանողներու՝ գործնականին մէջ զանոնք մարդերու նպատակով. այս պարագան ոստիկանութիւնը չար մեկնելով՝ արգիլեց հիւանդանոց այցելելս: Հսկողութիւնը չէր դադարած. որոշեցի երկրէն դուրս ելլել, եւ մինչ կը պատրաստուէի մեկնիլ՝ իմացայ որ կը փնտուռուէի . . . : Իբր հեւանդ. ապաստանեցայ Ֆրնս. հիւանդանոց, որ պաշարման տակ առնուեցաւ եւ ուրկէ 4 ամիս վերջ միայն կարելի եղաւ ինձ Մարսիլիս փախչիլ: 1905ի վերջերը հաստատուեցայ Գահրէ: Մղում տուի կրթ. գործին, եւ քանի մը ընկերներով Պօլիս Փաշայի հովանաւորութեամբ հիմնուեցաւ «Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութիւնը», որուն ատենադպիրն ու վարիչը եղայ՝ մինչեւ Եգիպտոսէ մեկնումս: — Սահմանադրութեան հռչակումին՝ ընտանեօք Պօլիս դարձայ եւ ընտրուեցայ ազգ. երեսփոխան, ապա մկպառ Սվազէն, երբ կաթող. ընտրութեան իբր պատուիրակ՝ կողկաս կը գտնուէի: Թունդ. ազգայնական, Բառլամէնթին մէջ վիճեցայ մանաւանդ հողային հարցի եւ ազգ. իրաւանց պահպանումին ի նպաստ: Յիվրջ հակառակեցայ եւ ազգակից ընկերներէս ե՛ս եղայ իթիւաֆի հիմնադիր: — Վարած պաշտօններս. Գննիչ ազգ. հիւանդանոցի (1895), անդամ Ուսուցչ. Գննիչ Յանձնաժողովի (1895-7), Բերայի դպրոցներուն հոգաբարձու (1894-6), անդամ Բղք. Ժողովի (1910-2) եւ Իզմիրեանցի (1912-5). Օգնական (1912), ապա Ընդհ. Գննիչ Բաղադաստեղծութեան 1913): — Երկերս. Բնական Պատմութիւն, Ուսումնասիրութիւն միզային խտրու եւն. (Ֆրնս.) Ծագումն հայ ջառից, Մանեքաբնութիւն (նաեւ թրք.), Տիեզերք եւ իր կազմութիւնը նաեւ Ֆրնս.), Գրիգոր Աղաբոն, Առեկի ստորապահութիւն, Ենկղանկան գործարան, Մարդկային սաղմնախօսութիւն, Բառացուցակ պատմութեան, Տարւիականութիւն, Հայոց հիւն կրօնները, Մարդկ. կազմախօսութիւն, Առողջապահութիւն, Ուրուագիծ Պատմ. Հայոց, Մանեքի, Գրիգոր. Բողոքականութիւն եւ



1862ին. 7 տարու Պօլիս գալով՝ աշակերտած Ամենափրկչեան վարժարանի, ուր կէ շրջանաւարտ 1878ին եւ մեկնած Յրանս: Տարի մը ազարակներու մէջ գործն. երկրագործութեան ընտելանալէ վերջ՝ յաճախեցի Մէօրսի երկր. վարժարանը, ուրկէ ուսումնաւարտ՝ 81ին մրցմամբ Բարիզի երկր. վարժարանը մտայ եւ 2 տարիէն ելոյ երկրագործական ճարտարագէտի աստիճանով. այդ միջոցին էր որ աշակերտ էի նաև Ծառաբուծական եւ Այգեբանական վարժարաններու: Դառնալով Պօլիս 1883ին, քանի մը ամիս երկր. նախարարութեան մէջ ծառայելէ վերջ՝ ծննդավայրիս դըպրոցին տնօրէն կարգուեցայ, հաստատելով հոն լսարան, չափահասներու կիրակնօրեայ կրթարան, եւ պօսասհայ թերթերու դրկելով յօդուածներ: 1885-6, տնօրէն Գատըքէօյի Արւմտեան վարժարանի: 87ի սկիզբները կրկին Բարիզ անցնելով՝ հետեւեցայ Սօւպօնի եւ Բժշկանոցի դասերուն, շարունակելով 85ին Պօլիս հաստատած Գիթ. Շարժումիս հրատարակութիւնը: Վկայականներս ստացած՝ եկայ Բերա բնակիլ: 97ին՝ Յրնս. Հիւանդանոցի օժանդակ բժիշկ եւ 99ին բժշկապետ Ազգ. Հիւանդանոցի: — Համետեան խումբայոյ շրջանն էր. քանիցս բնակարանս խուզարկեցին և հարցաքննեցին դիս: 96ին բանտ մտոյ եւ 4 ամիս վերջ ազատ արձակուեցայ ընդհ. ներումին: 1900ին կրկին բանտարկուեցայ, բայց ֆրանս. դեսպանատունն ազատեց դիս: Հիւանդանոցը բժշկ. բանաստեղծութիւններ ըրի ամենազգի ուսանողներու՝ գործնականին մէջ զանոնք մարդերու նպատակով. այս պարագան ոստիկանութիւնը չար մեկնելով՝ արգիլեց հիւանդանոց այցելելս: Հսկողութիւնը չէր դադարած. որոշեցի երկրէն դուրս ելլել, եւ մինչ կը պատրաստուէի մեկնիլ՝ իմացայ որ կը փնտուռուէի . . . : Իբր հեւանդ. ապաստանեցայ Ֆրնս. հիւանդանոց, որ պաշարման տակ առնուեցաւ եւ ուրկէ 4 ամիս վերջ միայն կարելի եղաւ ինձ Մարսիլիս փախչիլ: 1905ի վերջերը հաստատուեցայ Գահրէ: Մղում տուի կրթ. գործին, եւ քանի մը ընկերներով Պօլիս Փաշայի հովանաւորութեամբ հիմնուեցաւ «Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութիւնը», որուն ատենադպիրն ու վարիչը եղայ՝ մինչեւ Եգիպտոսէ մեկնումս: — Սահմանադրութեան հռչակումին՝ ընտանեօք Պօլիս դարձայ եւ ընտրուեցայ ազգ. երեսփոխան, ապա մկպառ Սվազէն, երբ կաթող. ընտրութեան իբր պատուիրակ՝ կողկաս կը գտնուէի: Թունդ. ազգայնական, Բառլամէնթին մէջ վիճեցայ մանաւանդ հողային հարցի եւ ազգ. իրաւանց պահպանումին ի նպաստ: Յիվրջ հակառակեցայ եւ ազգակից ընկերներէս ե՛ս եղայ իթիւաֆի հիմնադիր: — Վարած պաշտօններս. Գննիչ ազգ. հիւանդանոցի (1895), անդամ Ուսուցչ. Գննիչ Յանձնաժողովի (1895-7), Բերայի դպրոցներուն հոգաբարձու (1894-6), անդամ Բղք. Ժողովի (1910-2) եւ Իզմիրեանցի (1912-5). Օգնական (1912), ապա Ընդհ. Գննիչ Բաղադաստեղծութեան 1913): — Երկերս. Բնական Պատմութիւն, Ուսումնասիրութիւն միզային խտրու եւն. (Ֆրնս.) Ծագումն հայ ջառից, Մանեքաբնութիւն (նաեւ թրք.), Տիեզերք եւ իր կազմութիւնը նաեւ Ֆրնս.), Գրիգոր Աղաբոն, Առեկի ստորապահութիւն, Ենկղանկան գործարան, Մարդկային սաղմնախօսութիւն, Բառացուցակ պատմութեան, Տարւիականութիւն, Հայոց հիւն կրօնները, Մարդկ. կազմախօսութիւն, Առողջապահութիւն, Ուրուագիծ Պատմ. Հայոց, Մանեքի, Գրիգոր. Բողոքականութիւն եւ

կարգ մը գրքերը: Անտիպրիտի յիշում միայն՝ 86ին սկսած եւ 18 տարիէն աւարտած 10 հատոր կենդանաբանութիւն մը, զոր Խրիմեանի թելադրութեամբ պատրաստած եմ:—Ծածկանուններս. Արարչահիւթ, Բորակածին, Տիուն, ***, Սկսնակ Բանասէր, Ս. Բ.:

* * * Բազմադղուն բանասէր-բժիշկը համեստօրէն զանց կ'ընէ յիշատակել որ Ֆրնս. կառավարութենէն ունէր 1902էն ի վեր Officier d'Académie, իսկ 1910ին արժանացած էր Mérite agricole պատուանշանին:

Հ Ա Յ Ա Չ Գ Ը

Արեւմտեան Ասիան իր աշխարհագրական դիրքով եղած է ճանապարհ անցողարձից աշխարհակալաց, ու իր սիրելի բերրութեան աղազաւ՝ պատճառ նախանձու դրացի մեծագոր տէրութեանց... որով եւ անդ անող բազմաթիւ փոքր ազգութիւններն այս շարունակական հարուածներուն հետեւանօք տկարանալով՝ ժամանակաւոր գոյութիւն եւ փայլ մը միայն կրցած են ունենալ:

... Անոնցմէ Հայը կայ ու կը մնայ, կառչած իր Մայր Հայրենիքին, խօսելով իր նախահարց բարբառը, պահելով իր տոհմային պատմութիւնն ու աւանդութիւնները. եւ այս ամէնը՝ շնորհիւ իր բարոյական յատկութեանց ուժին, այսինքն հայրենասիրութեան, քաջութեան, չարքաշուութեան, խնայողութեան եւ ընտանեկան յարկի սրբութեան նախանձախնդրութեան, որով եւ տկուռ ազգ կոչուած է պատմագիրներէ:

Քրիստոնէական տեսակէտով Հայը մեծ դեր մը կատարած է. ո՛չ միայն Յիսուսի կրօնը պաշտօնապէս ընդունող ազգը եղած է, այլ եւ նազովրեցւոյն վարդապետութիւնն անդ ա՛յնչպի գորացած է որ այդ երկիրը եղած է զօրաւոր թումը մը Արեւելքի Մաղդէականութեան եւ Հարաւի Իսլամութեան դէմ:

Ասիոյ այս միակ կարեւոր Քրիստոնեայ ազգը պաշտպան կանգնած է դրացի փոքր եկեղեցիներու, եւ միջին դարուն՝ իբր առաջնորդ ու օժանդակ՝ ծառայած է Արեւմուտքի խաչակրաց, Ս. Երկիրն ազատագրելու գործին մէջ, եւ որու հետեւանօք՝ վրայ տուած է իր Կիլիկեան թագաւորութիւնը: Իբր Քրիստոնեայ իր այս դերն արժանի ըրած է զայն՝ բազմաց կողմանէ նահասակ ազգ անուանումին:

ՏՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

13. ՏՔԹ. ԿԱՐԱՊԵՏ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ. — Ծնած է Կէտիկ ֆաշա 1864ին: 1888ին Պօլսոյ բժշկանոցէն վկայուելով՝ կը պաշտօնավարէ Բայու եւ Մալաթիա, իբր թղպար բժիշկ: 1889ին կը հաստատուի Տիվրիկ եւ իր արուեստով կը պարապի, մասնակցելով ազգ. գործերու: Յաջորդ տարին Բագաուիճի մէջ (Կամախ) կը ձերբակալուի իբր յեղ. խումբեր կազմակերպող, հուսկ ուրեմն կը նետուի Սվազի բանտը՝ մահուան դատապարտութեամբ եւ 1891 Մարտին անպարտ կ'արձակուի՝ դատաւորին աչքը դարմանելուն ի վարձ: Այնուհետեւ Շ. Գարահիսար կը մայ եւ բժշկութիւնը կը շարունակէ, մինչեւ իր վերջին ձերբակալումը 1893 Սեպտ.ին, եւ բանտէ բանտ թափառելով՝ 3 տարուան դատավարութեան մը արդիւնքը կ'ըլլայ մահապարտութեան վճիռ: Պօլսէն իր նշանածին՝ Օր. Թորգոմեանի ողորմութեան ազդուած՝ անգլ. դեսպանուհի Ֆ. Բըրրի կ'յաջողի իր ներումն ապահովել: Անցնելով Պարսկաստան, 7 տարի կը մայ Դաւէթ. կը կարգուի Շահին Պալատան բժիշկ եւ չղադիրը զարկ տալէ բարեգործ. ու կրթ. գործերու: 1903-6, գինքը կը տեսնենք Աղեքսանդրիա, ուր Հ. Յ. Դաշնակցութեան լսարանը, նաեւ «Կամպէթթա» անուն տպարան մը կը բանայ ուրիշ լոյս կ'ընծայէ Հորիզոն թերթը: Առողջապահական եւ այլ պաշտօններով կը հրաւիրուի Պարսկաստան եւ 6 տարի Պէնտէր Կէզ քաղաքը կը հաստատուի, արժանանալով տիտղոսի եւ պատուանշաններու:—Սահմ. հուշակումէն վերջ Պօլսոյ գալուն՝ մեկուս կ'ընտրուի Սվազէն, եւ ազգ. երեսփոխան Խարբերդէն 1912ին: — Երկոտանեակ մը իր երկերէն յիշենք Ժողովրդի բարեկամները, Աղջկան մը յիշատակարանը, Վիպ. հաւաքածոյ, Դպրոցական առողջապահութիւն, Երեսփոխանի սնունդը եւն.: Աշխատակցած է Թրքահայ եւ արտասահմանեան թերթերու, Եւրոպ. հանդէսներու եւ դիտական երկարաշունչ գիրքերու՝ Քրանսերէն:



14. ԼԵՒՈՆ ԼԱՐՆԵՅ (ՔՐԻՍՏՅԱՆ). — Ծնած է Սամաթիա 1875ին, Շրջանաւարտ Ռօպէրթ Գօլէճէ: Պահ մը «Բիւզանդիկոն» խմբագրատունը պաշտօն վարելէ վերջ՝ քղք. պատճառներով կը մեկնի Ամերիկա և Վեր. Հընչակեան իր ընկերներուն հետ Պօսթըն կ'սկսի հրատարակել Չայն Հայրենեաց թերթը: Կ'անցնի Եգիպտոս և Օրօլտի Պաքի մէջ գրագրութիւն կ'ընէ: Արփիարի սպանութենէն ետք՝ կ'ուղեւորի Աթէնք, ուրիշ Պօլսոյ Սահմանադրութեան հուշակումին: — Հեղինակ Դրախտի Երգեր բանաստեղծական հատորին, 23 Հոկտ. 1908ին կը վարէ խմբագրութիւնն «Չայն Հայրենեաց»ի Ա. տարին, իսկ 1912ին սկիզբէն՝ «Մուրա» օրաթերթի: Անգլ. հայերէնի կը վերածէ Քուրանն ու Լինչի երկհատոր պատկ. Հայաստանը, Ֆրնս, Յեղափոխութեան Պատմութեան թարգմանիչն ալ եղած է՝ Բ. հատորէն սկսեալ:



15 ՍՄԱՍՏ ԲԻՒՐԱՏ (ՏԵՐՂԱԶԱՐԵՆՑ) . — Ծնած է Ձեյթուն 3 Մարտ 1862ին, 1871-80ին աշակերտ



երուսաղէմի Ժառանգաւորաց վրժո՞ն.ի. 1880-2ին Մարաշ՝ իբր ուսուցիչ ու տնօրէն. 1882-4ին Ձեյթուն՝ Միացեալի ուսուցիչ. Այդ ատեն է որ պաշտօնակից ի. Տատրբեանի հետ կը պատրաստէ Ուլկիա կամ Ձերուն տեղագրականը, որուն ձեռագիրը Յ. Ալլահվէրտեան շորթելով իբր իրը մամուլի յանձնած է վերջէն. 1885ին Սիս դպրոց մը կը բանայ. նոյն տարին Պօլիս գալով՝ կը ծանօթանայ գրչի մարդոց եւ կ'ամուսնանայ Գալֆայեան Որբանոցէն վարժուհիի մը հետ. 1885-7, տնօրէն կը միւլիճինէի եւ Ձեյթունի դպրոցներուն, 1887-90ին ալ Սամսոն՝ ուր կրթարան մը կը հիմնէ. իբր հնչ. գործիչ՝ կը ծամբորդէ

գաւառներ, բրդակահանի գործով, բայց ձերբակալուելով՝ 5 տարի Մարաշի եւ Հալէպի բանտերը կը մայ կնջը հետ. Ազատ արձակուելուն՝ Պօլիս կու գայ եւ 1 տարի կը պաշտօնավարէ Գատըքէօյի Արամեան դպրոցը, 96ին Եգիպտոս կը փախչի եւ դադարելով յեղ. կուսակցութեան մը պատկանելի՝ կը նուիրուի կրթ., գր. եւ հասարակական գործունէութեան. Գահիրէ հիմնած դպրոցը կ'աջողի 4 տարի շարունակել եւ հրատարակել Փիւնիկ եւ նոր օր թերթերը. 1904ին Աղեքսանդրիոյ ազգ. դպրոցին տնօրէնութիւն կը կոչուի զոր 2 տարի կը շարունակէ. 1907ին կը տեմենք քինք Ռուսանիա, ուր տարուան մը չափ մալէ վերջ՝ կ'ստիպուի Եգիպտոս դառնալ, լրտեսութեան մը զոհուելով. Սահմանադրութեան հոչակումին՝ շունչը Պօլիս կ'առնէ, նետուելու Պրոգրական եւ ուսուցչական ասպարէզները. Պահ մը շարունակած էր Փիւնիկը, նաեւ Գաղափար թերթը (42 թիւ). Ազգ. երեսփոխան ընտր. իր ծննդավայրէն. — Երկերը՝ մեծ մասամբ ազգավէպ, յեղափոխական կեանքէ. Բանօք բանօ, Ելջօզօք Սասուն, Ձերունի վրեժը, Դեպի Ելջօզ, Իննսուն-վեց, Ձերունցի վրդաք. Որդեպան ծնողը, Սասունէն ետք, Վերջին բերդը, Տեւիտ Մաշուր, Վեղարաւոր Հեռար, Թիակապուսները, Աւարայրի արծիւը, Ազատութեան համար, Արիւնի անարուն վրայ, Աւեսարան Ձեթունցերէն), Բուրգերէն, Պատմութիւն Հայոց (Ա. Հատոր), Արիւնի ձոր (Յետ Մահու տպ. . Ձեռագիր կը թողու Բանաստեղծութեանց հատոր մը, Լեռնականի մը յուշատետր, Լեռին կոչար, Հեմիտար (Վօլթէրի). — Վերու գրքեր.ի, Ֆրես.ի եւ պատմութեան.

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Ա Յ Ա Շ Ի Բ Ա Ն Տ Է Ն

28 Ապրիլ 1915 . — Ինծի համար մտահոգ մի՛ ըլլաք. ողջ եմ եւ հանգիստ. առանձին ալ չեմ, 84 հոգի ենք: Մօտ ատենէն կ'ազատինք Աստուծով:

16 Մայիս. — Թէտօտու Մենձիկեպան. հակառակ Ալի էքպէր Խանէն եկած հեռագրին — որով տեղեկութիւն կը տրուէր թէ իր Պօլիս դառնալուն հրամանն առնուած է — տակաւին հոս կը մնայ: Ութը հոգիէ աւելի ենք Պարսկահպատակներս. խնդրագիր տուինք, պատասխանի կ'սպասենք: Պատրիարքարան ալ հեռա-

զրած էինք, լուր մը չստացանք: Աստուածաշունչ մը ղրկեցէ՛ք որ տրտմութիւնս փարատի:

26 Մայիս. — Յոյսս մեծ է՝ Արդարութիւնը հուսկ ուրեմն երեւան գալուն մասին: Ասիկա փոթորիկ մըն է որ պիտի անցնի, հոգ մի՛ ընէք:

30 Մայիս. — Անցեալ շաբթու մեր մէջէն Ակնունի, Խաժակ, Ջարդարեան, Ճանկիւլեան, Տաղաւարեան եւ Սարգիս Մինասեան էնքարէէն կանչուած ըլլալով մեկնեցան. չենք գիտեր թէ հիմա ո՞ւր են: Կը ցաւիմ որ, հակառակ Բռնապետութեան տակ շատ մը զոհողութեանց ենթարկուելով՝ այս Ազատութեան ու Սահմանադրութեան շրջանին հասած ըլլալնուս, նորէն անիրաւ տեղը զրկանքի ենթարկուեցանք: Ա՞ս պիտի ըլլար արդեօք բախտն անոնց որ Հայրենիքի սիրոյն, տարիներով այնքան տառապանք ու նեղութիւն կրեցին: Եթէ Թալաթ պէյ գիտնայ թէ ընտանեօք ի՞նչ աղէտի ու զրկանքի ենթարկուած եմ, վերջ պիտի տայ ներկայ վիճակիս՝ որ կը նսեմացնէ իր վեհանձնութիւնը (մէրտլիք): Խեղճ կինս. դուն որ Բռնապետութեան տակ այնքան թշուառութեանց մատնուելուդ հետեւանօք աչքիդ լոյսէն եւ աշխարհի տեսութենէն զրկուեցար, ո՞ր ոստիկանութեան տնօրէնը պիտի չգլխի քու վրադ, վիճակիդ հասու ըլլալէ վերջ: Անշուշտ պիտի գայ օր մը — եւ այն օրը շատ մօտ է — որ Արդարութիւնը պիտի յայտնուի. ի՞նչ օգուտ սակայն, քաշածնիս մեզի պիտի մնայ:

6 Յունիս. — Պատրիարքարան երթայիք եւ Սրբազան Հօր յարգանքներս հաղորդելէ վերջ՝ ըսէիք թէ միայն Խօնասարեանի ազատ արձակումը ձեռք բերել բաւ չհամարէր, միւս բանտարկեալներուն ալ ազատութիւնն ապահովէր: Այս տողերս կարդացէ՛ք իրեն:

ՍՄԱՍՏ ԲԻՒՐԱՏ

16. ՀԱՄԱ. ՀԱՄԱՍԵՉՈՒՄԵԱՆ. — Ծնած է Պօլիս՝ 1890ին. էսսեանէն և Կերթոնականէն ընթացաւարտ:

Սահմանադրութեան վաղորդայնին լրագրող իր ծեպիւն ըրած է «Սուրհանդակ»ի խմբագրատունը. յետոյ անցած է «Ազատամարտ»ի, մինչեւ անոր իսպանուումը՝ յօդուածներ գրելով տնտեսական և պետական-օրէնսդրական խնդիրներու մասին. Աշխատակից «Լա թիւրք»ի, «Լ. Հէրալտ»ի և թղթակից «Պ. Թակէպլաթ»ի, «Ք. Չայթունկի» և «Իւմանիթէ»ի. Սղագրութեան արուեստ սորվելով՝ գրաւոր քննութեամբ եւրոպայէն ստացած է վկայական ու պատուանշան. — Դաշնակցական:



17. ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ. — Ծնած է Պոլսի Պոլսի (Վոսփոր) 1883 Յուլիսին: Ուսումը կ'ստանայ Մայր Վարժարան, Կերպարան և Միջնարան (Գատրճեյ) ուրիշ ընթացակարգի կ'ուղարկուի Վենետիկ: Հոն 2 տարի մնալով կը վկայուի, և Ահմետյանի մէկ այցելութեան առթիւ՝ Դաշնակցական կը մկրտուի: Պոլիս դուրսին՝ Շախմատյանի հետ կը հրատարակէ «Ծաղիկ» թերթը: 1903ին, Օրմանեան Ս.ի վրայ կատարուած մահափորձին հետեւանօք երբ կարգ մը հայ տղաք կը ձերբակալուէին՝ կը փախի Եգիպտոս, ուր 5 տարի կը մնայ առեւտր. ասպարէզի մէջ, չմոռնալով իր կրակոտ մասնակցութիւնն ունենալ ազգ. խնդիրներու և բանախօսութեանց ատեն, նաեւ աշխատակցի արտասահմանի թերթերու: Աղեքսանդրիա հրատարակած է Կրակ թերթը (2 թիւ), Այլախորհրդի եւ Եսասիրութիւն գրքով, Մտակ կիսամետան և Հայկուններ թուոցիկը: Սահմանադրութեան վաղորդայնին Պոլիս կուգայ և կ'ուղեւորի ներքին գաւառներ, հասարակական գործիչի իր դերին հաւատարիմ: Նոյն պաշտօնով կ'անցնի Պոլսկարի, Եգիպտոս՝ ուր 1912ին ամուսնանալէ վերջ կը մեկնի Բարիդ իրաւաբանութիւն սորվելու: Մ. Վարանդեանի հետ կը շարունակէ Pro Armenia ու կ'աշխատակցի «Հայրենիք» և «Հորիզոն»ի: Բիշ մնացած էր փաստաբանի վկայականն ընդունելու, երբ Բնդ. Պատերազմի նախօրեակին Պոլիս դարձաւ՝ Վեթիօն Պոլսուի կողմէ իրեն վստահուած պաշտօնով մը: — Օտուած էր դիւրասահ գրելու և խանդավառօրէն հրատարակախօսելու կրկնակ կարողութիւններով:



Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ինչ եղկելի «պայմանադրական սուտ» մըն է Բաղաբակա- նութիւնը: Ինչ յիմար են մարդիկ: Ինչ է պատերազմը, ինչ է պետութիւնը, ինչ է յեղափոխութիւնը: Ինչո՞ւ քանի մը հոգիներ տառապին յեղափոխելով, ուրիշներ տառապին՝ զանոնք զսպելու համար: Ինչո՞ւ այս ինչ ազգին պատկանող երիտասարդներ տանջուին՝ սպաննելու համար այն ինչ ազգէն ուրիշ տանջուող երիտասարդներ: Ի՞նչ է իրաւունք տուեր դասակարգ մը մարդոց՝ ըսելու թէ հողի այս պատառը «իրենց»ն է եւ այն պատառը «ուրիշներուն»: Ո՞վ է տուեր սահմանները. ա՛հ, յիմար մարդիկ որոնք Կեանքին քովէն կ'անցնին անտարբեր՝ առանց զայն ապրիլ գիտնալու, եւ փոխանակ պարզելու՝ կը խնդրեն միտքերը, Երազը երկունքի կը վերածեն եւ կ'ուզեն անպատճառ որ «Արցունքի ծովեր»ը «Արցունքի Լիճ»ի վերածուին:

Իր անտիպ մէկ նորավէպէն արտադրուած Բ. ՇԱՀՊԱԶ

18. ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (ԻՅՖՖԵԿԵՆՍՏՐՈՒՄԻՆԵ). — Ծնած էր 3 Հոկտ. 1873ին Մալկարա, — մենաւոր, աղքատ, աղտոտ ու մեղաւած՝ արեւելեան գիւղաքաղաք մը, որուն դարնանային արշալոյսերն ու աշնային վերջալոյսերը հրաշալի են սակայն: Ուսումն առած էր շատ անկանոն եղանակով՝ Ծննդավայրիս նախակրթարանը, շրջան առանց բարձրելու: Դպրոցը թողելէս անմիջապէս յետոյ՝ մտած էր հօրս խանութը, իբր կենսաշահութիւն: Ամբողջ բռնապետութեան շրջանին՝ դուրս չեմ ելած Մալկարայէ. չեմ ճամբորդած: Իրականութիւն ըրած էմ իբր սիրող: Կարծեմ թէ գրած էմ, որովհետեւ չէի կրնար չգրել: Բայց ըրածիս վրայ հաւատք չունիմ: Երկասիրութիւններս են՝ քերթուածներու 2 հատոր, Լիւնս Բնար (1902) և Երկունք (1906). տեսակ մը վարանուսով կուտամ անոնց անունները: Պատրաստ ունիմ հատոր մը, նոր Բնար՝ որուն վրայ երկասիրոյն աշխատած էմ, կարելի է ըսել՝ տարիներով: Քիչ մը կը յուսամ թէ լաւագոյն գործս պիտի ըլլայ ան: Ընդարձակ առումով, գրականութեան շահը կը նկատեմ գերազանց բոլոր կարելի շահերուն: Աշխարհի տեսարանն՝ ըստ գեղեցկութեան զգալու պայմանով միայն՝ ապրելուն մէջ շահեկանութիւն կը գրեմ նեմ: Թերեւս՝ բոլոր պարապութիւններուն լաւագոյնը Գեղեցիկին պարապութիւնն է. անտարակոյս ճաշակի խնդիր. այս՝ իմ ճշմարտութիւնն է:



Տաղանդաւոր գրագէտը կանուխէն աշխատակցած է թրքահայ մասնակցի՝ քերթուածներով, գեղեցիկ արձակներով և ըննադատականներով, որոնք յայտնի անուն մը ապահոված են իրեն: Իրականութեան մէջ իր մուտքը բանաստեղծութեան մը ըրաւ՝ Կարօ Ծածկանունով, և քերթողը ցվերջ ապրեցաւ իր մէջ: Իսկ իբր արձակագիր և գեղագէտ-ըննադատ՝ անփխտելի կարողութիւն մը ցոյց տուաւ իր գրական վերլուծումներով: — Երէց եղբայր՝ գրագէտ Վահան Յարութիւնեանի:

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Բ Ե Ի Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Այսօրուան իմացական դաստիարակութիւնը չի յաւակնիր իմացականութիւն մը տալ անոնց՝ որ չունին զայն: Անոր ծրագրուումն է կատարել յայտադեղի (révélateur) ճիշդ դեր մը:

Լուսանկարչական զգայուն տախտակին անբիծ երեսին վրայ hydroquinoneի լուծոյթ մը կը լեցնեն, ու երեւան կուգայ յանկարծ պատկերը՝ որ կար հոն անտեսանելիօրէն միայն: Բազմաթիւ տեսակի յայտադեղեր կան. անոնցմէ մէկը միւսէն աւելի լաւ կրնայ ըլլալ:

Արդի դաստիարակութիւնը յայտադեղեր կ'առաջարկէ մարդկային իմացականութեան զարգացման համար: Ու այս անգամ իր դերին մէջն է, — համեստ՝ բայց յարգելի դեր մը:

Միեւնոյնն է նաեւ նկարագրի կրթութեան համար: Մար-

դուն մէջ երբեմն կան գաղտնի գանձեր: Կ'սպասեն այն ձեռքերուն՝ որ դուրս պիտի հանեն զիրենք ենթագիտակցութեան մթուփիւններէն:

Բարոյականի գիրք մը բարոյական չի տար անո՛ր որ անընդունակ է կամ անզգայ՝ զայն ընդունելու. բայց շատ օգտակար կրնայ ըլլալ անո՛ր համար որուն մէջ բարի սերմերը կան բարոյական յատկութիւններու:

(Անտիպ) 1912

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

19. ԺԱԳ ՍԱՅԱՊԱԼԵԱՆ (ՓԱՅԼԱԿ). ԻՃԲԱԿԵՑԱԳՐՈՒՐԻՆԵ.— Ծնած եմ Գօնիա 1880 Յունիսին, և հոն ստացած նիւն. կրթութիւնս:



1896ին յաճախած եմ Պէրպէրեան, յետոյ Իզմիրի Ամերիկեան վարժարանը 2 տարի, և մտած առեւտր. ասպարէզ: 1904ին անցնելով Ծննդավայրս՝ 5 տարի իբր Թարգման մտացած եմ անգլ. հիւպատոսին մօտ, այդ ժամանակամիջոցին ալ 1 1/2 տարի փոխանորդութեանը վարած՝ նոյնին բացակայութեանը: 1909ին կրկին Պօլիս անցնելով, տնօրէն կարգուեցայ «Շէհպալ» հանդէսին: Առաջին գրութիւնս հրատարակուած է «Սուրհանդակ»ի մէջ, երգիծական կէս-երկ-վայրկեանական մը: Յետոյ աշխատակցած եմ պօլսահայ թերթերու, հանդէսներու և տարեցոյցներու: Տ. Ա. Ի «Մասիս»:

ներուն մէջ երեւցած վ. ծածկանունով ոտանաւորներս տեսակ մը թղթակցութիւններ էին՝ ուղղուած անո՛ր որ այսօր կինս է եղածս.— Երկերս. Առային սերը (վիպակ դպրոցական կեանքէս), Ներաշխարհ, Բոցիւր եւ Ընկ. (երգիծատետր) և Այրիախնամ-Որբախնամի ընդարձակ Տեղեկագիրք երբ կ'անդամակցէի նոյն Յանձնաժողովին (1911-2): Մտադիր եմ հրատարակել քերթուածներուս հաւաքածոն և «Հ. Հայնէի լաւագոյն էջերը», նաև անգլ. է. Թարգմանած Գօնընտօյլի «Մեծ Ստուերը» վէպը (Նաբօլէօն): Գաւառի գաւակ, մասնաւոր սէր մը ունեցած եմ որսորդութեան:—Նախասիրած հեղինակներս. Ռօսթան, Լամարթին, Տը Ռէնիէ, Հայնէ, Բուիւտօ, Սիլվէսթր Լեն., որոնցմէ ունիմ խել մը Թարգմանութիւններ:

* * * Փայլակ ազգ. երեսփոխան ընտրուած էր իր ծննդավայրէն:

Ա Չ Ք Ե Ր Ո Ւ Ե Ր Գ Ր

ես կը սիրեմ երկնագոյն քու աչքերըդ ոսկեծիր,
Իրենց ծաւի, լուրթ ցոլքով,
Խորն անուրջներ քընացող ջինջ աչքերը անյարիր,
Ալիքներու պէս վրդով:

Պատուհանները հոգւոյդ՝ որոնց նոյն իսկ է՛ն նրբին
Նայուածքին մէջ վիժանուտ,
— Ուր կրկնապէս կինս ես դուն — կը ցոյայ թռիչքը յետին
Ու աննըշան խոհերուդ:

Փողոցին մէջ, երբ կ'անցնիս, ամէնքն ապշած կը մնան՝
Անոնց թովքին տակ կախարդ,
Ինչու որ բուն ծաղիկը աչքերըդ են, ո՛չ թէ ան
Ձոր չրփակիդ կ'ընես զարդ:

Ո՛հ, այնքան թարմ են անոնք, յօնքերուդ տակը լայնշի,
Որ կը խորհի ամէն ոք՝
Թէ նշածն այդ երկար աչքերն իրաւ ալ նուշի
Պէս հեշտաբոյր չմ'ն արդեօք:

Օտարին քովը անոնք միշտ մտացիր, թախծոտ են,
Ու երբեմն ալ հեզնական.
Պղատունական ակնարկներ միայն ինծի կը նետեն՝
Իբրեւ սիրոյ զբաւական:

Իայց, քողերու տակ դողւոջ, երբ իրենց հետ միմակ եմ,
Կ'ուզեն որ շտորի մուրամ ես.
Եւ՝ բանտուած սպիտակ թեւերուդ մէջ՝ կը շնչեմ
Ինչ որ կ'ըսեն գաղտնապէս:

Անտիպ

ՄՕՐԻՍ ՌՕՒԻՆՍ
Թրգմ. ՓԱՅԼԱԿ

20. ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍՍԵԱՆ.— Ծնած է Ակն 1884ին. Մանուկ հասակէն Պօլիս գալով, նիւն. կրթութիւն



մը ստանալէ ետք՝ պահ մը պաշտօնեայ եղած է հրատարակի վրայ: Սկսնակի իր գրուածքները (Լիւպի գաւառաւորութիւններու մէջ) լուրջ բաներ էին: Քասիմի և Յ. Տէր-Յակոբեանի թելադրութեամբ սկսած է մշակել երգիծական հիւղը, շարթէ շարթ ծիծաղաշարժ էջեր տալով «Մանուկ»-ի որուն խումբագիրն ալ էր: Սահմանադրութենէն վերջ՝ Կովոօշի, Օտեանի և Համբիկեանի հետ պահ մը «Ծաղիկ»ը հանեց իբր ծաղրաթերթ, և գրաքննական կապանքէ գերծ՝ այնուհետեւ ազատօրէն ծեծեց միշտ ազգայնական խնդիրներ, 1909 Ապր. 1էն սկսեալ իբրբու ետեւէ լոյս ընծայած իր շառիվարիներուն մէջ

որոնք են Կիկօ, Կիմօ, Հիկօ (երբեմն դադրեցուցուելուն համար անուն փոխած), Կուկուկ, Չուռնա, Հի-հի-հի (նոյնպէս): 5 տարի հրատարակած է Կիկոյի Տարեցոյցը:—Ծածկանունները՝ ԲԱՆԱԳՈՂ ԼՌՈՒԹԻՒՆԵԱՆ և ԸՆԿԵՐ ԿԻԿՕ:

21. ԳՆԴԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ. — Ծնած է Պօլիս 1883ին, Ուսուցիչ ստացած է Կէտիկ Փաշայի ազգ. դպրոցը՝ Վարդգէսի և Լ. Շանթի շրջանին, Պատանի հասակէն լրագրական ասպարէզ իջնելով, «Մանգուսէ»-ի խմբագրատունն ըրած է իր ջոկըն. իսկ Ազատամարտի երեւոյթն մինչեւ խափանուից մնայուն խմբագիրը եղած է նոյն թերթին: Մտերմին՝ Շ. Միսաքեանի հետ 16 Դեկտ. 1908ին կ'սկսի հրատարակել Ազգակ գր. հանդէսը (41 թիւ), իսկ վերջերը Մեհեանը՝ Կ. Զարեան և Յ. Քիւֆէճեանի հետ, Խոստմալից տաղանդ մը: Ունի գրական գողտրիկ էջեր:— Դաշնակցական:



Խ Ո Ն Ա Ր Հ Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր

... Կայծերը կը ցայտին մթութեան մէջ, ինչպէս երկաթեայ անսպառ հրթիռէ մը, ինչպէս հուրքի հզօր շարորուանէ մը, բազմապատիկ ճանաչուելով եւ անծրելելով լուսեղինաբար, մթութեան մէջ՝ խոր ու թանձրամած՝ գամ շինողներու հէք ու թըշուառ գործանոցին:

Եւ մուրճերը կ'իջնեն սալին վրայ, ահաւոր ու դղրդազին բախումներով, զայրագին ու վրիժառու թափով, մոլեգնութեամբը բարբարոս կամքի մը, խրոխտազատ ուժգնութեամբը գործաւորի բազուկին, կռելով ատրաշէկ երկաթը, մինչեւ որ նորաստեղծուի բեւեռը սրածայր:

... Իրենց զրկանքին գիտակցութենէն դժնէցած՝ բայց անով իսկ հպարտ, գործաւորները անխոնջ են իրենց խոնջէնքին մէջ, եւ եթէ դժբախտ են իրենց Տառապանքին մէջ, իրենց կամքին մրճեայ ծայներուն տակ կը խեղդեն իրենց դժբախտութիւնն ու Տառապանքը որոնց ծոցէն արծանացող կամքին ոյժովը կը շինեն իրենց գամերը: Կայծերու շողը կ'երթայ լուսաւորել իրենց դէմքը, վասն զի լոյսը՝ մութին մէջ անոնց մոռցուած եւ անտեսանելի հերոսութիւնը սրբացնել կ'ուզէ. վասն զի տառապանքի, կամքի ու ստեղծագործ Աշխատանքի բովէն հերոսութիւնը կը յառնէ:

Կ'իջնեն, կը հարուածեն ու կը թնդան մուրճերը ահա՛ գամ շինողներուն, հրաշէկ երկաթէն կը ցայտեն կայծերը, եւ, անոնց ու հնոցին ստեղծած շողքերուն ընդմէջէն՝ կը լուսաւորուին դէմքերը Աշխատանքի Խոնարհ Հերոսներուն:

ԳՆԴԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ

22. ՏԻԳՐԱՆ ԶԷՕՒԽԻՐՅԱՆ. — Ծնած է 1884ին Կիւմիւշխանէ, «Թշուառ մանկութիւն մը անցուցած եմ — կը գրէ ինձ — որուն երախտապարտ եմ»: 1897ին, բախտին մէկ դարմանակի խաղովը՝ Գաղատիոյ Կարմիր Վանքի որբանոցը գտնուած է: Իր վաճիռ վէպին մէջ պատկերացուցած է նոյն որբանոցին ներքին կեանքը: 1903ի ընթացաւարտ Պէրպէրեանէ՝ ո. ր որդեգրուած էր և ուր երկ ր ատեն դասախօսած է պատ'ութիւն, աշխարհագրութիւն և օտար ազգաց մատենագրութիւն որոնք իր մասնագիտութիւններն էին: Ուսուցչական իր պաշտօնավարութիւնը շարունակած է Զաւա պոլսահայ վարժարաններու մէջ, միաժամանակ երեւալով թերթերու և հանդէսներու մէջ՝ յաջող վիպակներով, քերթուածներով ու ջննդատականներով, նորավէպերուն իր մէկ հաւաքածոն, Հայրենի Զայնը, լոյս տեսած է Զարդարեան Գրատան կողմէ: Շրջագայած է Եւրոպա և Տաճկահայաստան ու իր հետաքրքրաշարժ տպաւորութիւնները յանձնած Մամուլին: Խոստմալից այս տաղանդը որ հրապարակախօսութեան ալ մեծ ընդունակութիւն ցոյց տուած է, 1911-12ին Մ. Շամոտանձեանի հետ լոյս ընծայած է Ոստան եւամտնայ մեծ պարբերազիրը:



Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Հին օրերու քաղցր խօսք մը՝ բարեկամի մը պէս կ'անցնի քովէս ու կը յուզէ զիս այս գիշեր:

Հին օրերու ծայն մը խիղճիս կը հպի. մօրս ժպիտն է, մօրս ժպիտը որ կ'արթըննայ իմ մէջս: Ա՛հ, մայրս հիւանդ, մայրս նիհար, լքուած կին:

Պատմութիւն մը կը շրջի ականջիս մօտը, անորոշ աղու շեշտերով: Մայրիկիս ծայնն է որ կը յիշեցնէ այնքան անուշ օրերդ մը թախծոտ:

Օ՛հ, հին բարի երգ, սո՛ւրբ առասպել, ո՛րքէ եկար այս գիշեր՝ մօրս ժպիտին հետ: Ո՛րքան ապրեցայ, Աստուած իմ, մոռցած եմ իր դէմքը տմոյն:

Երանի՛, ո՛վ մայր, դեռ պզտիկ, դեռ անմեղ՝ տանէին հոգիս հովերուն հետ, ու մեղրամոմի հիւսքերով պատէիր թաթերս մանրիկ:

Հիմա մեղրամոմի թեւեր կը խեղդեն զիս ամէն օր, ու հոգիս կը փռուի մութ խորշերու, խոնաւ լորձնոտ գետիններու վրայ, կատաղի վիրաւոր սողունի մը պէս:

Երանի՛, ո՛վ մայր, դեռ պզտիկ, դեռ անմեղ, ձորին ոգիները

հովերուն հետ վազցնէին իմ հոգիս, ու քու արցունքներուդ մէջ ու քու արցունքներուդ տակ տանէին զիս:

Հիմա արցունքները մեղքի՝ բիւրեղ կ'ըլլան սուր ու այտերս կը խոցոտեն: Հիմա համբոյրները հրաշէկ երկաթներու պէս դէմքս կը մրկեն, ու սիրտս, տե՛ս, աւերակ:

Օ՛ մայր, համբոյրիդ տակ, արցունքիդ տակ, դեռ պզտիկ, դեռ անմեղ՝ պիտի ուզէի ննջել ու մեռնիլ...:

S. ՉԷՕԿԻԻՐԵԱՆ

23. ՇԱՒԱՐՇ ԳՐԻՍԵԱՆ. — Ծնած է Պէշիքթաշ 9 Յուլիս 1886ին.

Յաջորդաբար աշակերտած է Մաքրուհեանի, Պարտիզակի ամերիկեանի, Պեր-



պէրեանի և Ռ. Գօլէճի. իսկ 1906ին Բարիզ անցնելով՝ յաճախած մարմնամարզական վարժարան, իսկ ժամսօն (Տէպօնէ), ապա Լօնտօն՝ 2 1/2 տարի աշակերտելով Սանտօվի և վկայուելով Պօլիս դարձին՝ մարմնամարզի ուսուցիչ կը կարգուի զանազան դպրոցներու, և մասնաւոր դասեր ստանձնելէ զատ՝ կը կազմէ մարմնամարզական ակումբներ ույլեւայլ արուարձաններու մէջ. 1911 փետր.էն սկսեալ հրատարակած է Մարմնամարզ պատկերազարդ ամսաթերթը (յետոյ կիսամեայ) որ 4 տարուան մօտ կեանք մը ունեցաւ եւ որուն բովանդակութենէն շատեր օգտուեցան, իբր

«ազգային ֆիզիքական կրթութեան օրկան» է մը. — Յ. Թ. Հինթիւանի հետ հրատարակած է նաև Պոյ-Սփաուրը եւ իր կեանքին նպասակը գրքովը. — Եղբայր Տ. Քթ. Ճանիկ Գրիսեանի. — Դաշնակցական.

24. ԳՐԻԳՈՐ ԵՍԱՅԵԱՆ. — Ծնած է վան 1883ին. Ընթացաւարտ

Եւտիգուլէի Որբանորէն և Կալաթա Սէրայի Լիսէէն. Ազգ. դպրոցներու մէջ աւանդած ֆրանսերէն և մաթեմատիք. Պաշտօնեայ Բաղըպ Փաշայի էրէյիի անխահանքերուն. — Գրիգոր Նոր ծածկանունով բանաստեղծութիւններ հրատարակած է պօլսահայ հանդէսներու մէջ, և Ֆրանսերէնի թարգմանած՝ Ռ. Զարդարեանի «Յայդալոյսան ու լ. Շանթի» շին Աստուածները: Յիշատակելի է իր քերթուածներէն Զրամոյշները (տե՛ս Ազգակ). — Դաշնակցական.



25. ԱՐՄԷՆ ՏՈՐԵԱՆ (ՀՐԱՉԵԱՅ ՍՈՒՐԷՆԵԱՆ). — Ծնած է Իւսկիւպ 1892 Յունվարին. Հոն Հայութիւն չգտնուելուն՝ կը յաճախէ Յոյն դպրոց, յետոյ Մանասթըրի Ֆրնս. վարժարանը զոր կ'ամբողջացնէ: Պօլիս դալով 1911ին ընթացաւարտ կ'ելլէ Բանկալթիի Միսիթարեանց վարժարանէն ու կը մեկնի Բարիզ: Սօս.պօնէն վկայականը ստանալուն պէս կը դառնայ մայրաքաղաքս 1914ին, ուստ.ցլութեամբ ու դրականութեամբ պարապելով. — Բարիզ ապրած միջոցին լոյս ընծայած է L'art e հանդէսը, նաեւ Հիւկոյի և ուրիշներու անունին ձօնուած գրքովկեր: Քերթուածներէն մաս մը հրատարակուած կայ «Շանթ»ի մէջ: — Գիշերանց ձերբակալուած «Արդի վարժարան»էն:



26. ԱՐԻՍ ԻՍՐԱԵԼԻԵԱՆ. — Ծնած է Կիւմիւղհանէ 1885ին. Վերետիկի Մ. Պիափայէլեան վարժարանէն ընթացաւարտ. Ամերիկա անցնելով հոդաւանտեսութիւն կը սորվի և կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ. Բրօքա-



26



27

կանտիսթ եւ աշխատակից «Հայրենիք» թերթին (Պոսթըն) ուր լոյս կ'ընծայէ ուսումնասիրութիւն մը Ամերիկահայ գաղթականութեան վրայ: 1910ին կուգայ Պօլիս ու կը պարապի ուսուցչութեամբ, «Ազատամարտի» յօդուածագրութեամբ և բրօքականտի գործով: Ունի քանի մը գրքովկ թարգմանածոյ: Դրական ծածկանունը՝ «Իսրայէլ Տիրուհի»:

27. ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ. — Ծնած է Ատաբաղար 1878ին. Ուսումը հոն, ապա Արմաշ ստանալով կը մտնէ ուսուցչական ասպարէզ, մինչեւ Պօլսէն իր տարագրումը պաշտօնավարելով Դպրեվանուց, Օրթաքէօյի, Պալաթի ևն. վարժարանները: Աշխատակից պօլսահայ թերթերու. — Երկերը. Հանդիս հայ եւ ընդհ. գրականութեան, Գանձ Ոսկեղնի Դպրութեան, Աթանայի ծննդեան ծառը, Հայոց գրեռու գիւտը (տրամախօսութիւն). — Դաշնակցական:

28. ՅԱԿՈՒ ԹԻՐՁԵԱՆ (ՅԱԿԻԹԻՐ). — Ծնած է 22 Օգոստ 1879ին Հաճըն: Երև. կրթ.ը ստացած հոն, յետոյ Ատանայի ուղգ. եւ Յիսուսեան վարժարանները: 1897ին Պոլիս գալով, 1900ին ստացած է դեղագործութեան վկայական: Հաճընի եւ Ատանայի մէջ յաջորդաբար իր դեղարտաններն ունեցած է, միաժամանակ թղթակցութիւններով աշխատակցած է պոլսահայ թերթերու՝ Յակթէր, Հմայեակ, Տաւրոս, Քիթօ և Թղթակից կեղծանուններով, Կիլիկեան աղէտէն մազապուր ազատած՝ դարձած է Պոլիս և «Ատանա» դեղարանը բացած Գուրգաբու: — Հեղինակ Արուեստ Լուսակարտրեան, Աջանայի կեանքը և Կիլիկիոյ Արեթը (5 հատոր) գիրքերուն: Այս վերջինն (ամբողջովին գրաւուած կառավարութեան կողմէ)



ներկայացուցած էր իւրիւրեանցի: Կը թողու Հանքնի գաւառաքարաւոր գործը՝ ձեռնագիր:

Բ.—ԱԶԳ. ՈՒ ԿՐԹ. ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՒՆ.

29. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՕՅԱՃՅԱՆ (ՄՈՒՐԱՅ). — Ծնած է Հաճըն 1867ին: Ուսումը տեղւոյն Միացեալի դպրոցը ստանալէ վերջ՝ կուգայ Պոլիս և Իտաթի վարժարանէն վկայուելով կը մտնէ Բժշկ. համալսարան, ուրկէ թե՛րաւարտ՝ կ'ստիպուի հեռանալ: 1888ի Հնչ. Կուսակցութեան առաջին կազմակերպիչը, Համետեան Ռէժիմի դէմ իբր թունդ բողոքարկու և գլխ. կազմակերպիչ Գուրգաբուի «անգէն ցոյցին» որուն հետեւանօք կը փախչի Աթէնք: Կեղերունին հրահանգով Կովկասէն կ'անցնի Սասուն, դեկավարելու 95ի յեղափոխութիւնը որ հուսկ ուրեմն առիթ տուաւ Եւրոպ. միջամտութեան եւ Մոլիս 11ի Բարենորոգմանց Երազրին: Սասնոյ ջըրջանի ճակատութիւնն իր փրկիչը նկատած է զինք, զանի որ կրցած է ապրիլ կեանքի, ինչքն ու պատիւի ապահովութեամբ, — գոնէ միջոց մը: Այդ ապստամբութեան ընթացքին է որ Մուրատ ձերբակալուելով Բաղէշի բանտը կ'առաջնորդուի, ուր 2 տարի կը մնայ: Դատավարութիւնը տեղի սենեանալով՝ կ'արձակուի մահուան մէջիւ, որ օտար ազդեցութեամբ կը վերածուի ցկեանս բերդարգելութեան: 12 տարի Տրիպոլիս արգելափակ, 1904ին կ'ալողի խոստալ դէպի Ֆրանսա: Բարիզ պահ մը մնալով կը մեկնի Նոր Աշխարհ, Ամերիկահայոց խանդավառ ցոյցերուն առարկայ: Սահմանադրութեան վաղորդակին Պոլիս գալուն՝ կ'ընտրուի ազգ. երեսփոխան Գուրգաբուէն, եւ մեկտուս՝ Ատա-



նպէս: Բառամէջին մէջ կը հակառակի ոչ-խլամերու զինւորագրութեան, նաեւ Սուլթանին իրաւասութեանց ընդլայնումի խնդիրներուն մէջ: Իսկ Կիլիկիոյ աղէտին խստօրէն կ'արտայայտուի, որով հակառակորդ կ'ունենայ թուրք պաշտօնակիցներ: Անդամ Գղք. Ժողովի: — Գեոպ. Տ. Տէլալի: — Հին բունակալութեան շրջանին՝ յանուն Հայ Ազատագրութեան կախազան բարձրացող Անմահն Ժիրարի եղբայրը, որ տարիներ վերջ—24 Օգոստ. 1915ին— պիտի անմահանար նոյնպէս, վիզին անցուած չուանէ հանգրցին հետ՝ վերջակէտը դնելով իր Յեղին Մարտիրոսագրութեան, ազատաբողձ անյնքան Հաղորդներու նման:

30. ՎԱՐԳԳԷՍ (ՅՈՎՀ. ՍԷՐԴԵՆԿԻՆԵԱՆ). — Ծնած է Կարին 1871ին: Երև. կրթութիւնը հոն ստանալէ վերջ՝ ուսուցչութեամբ կը պարապի ասեն մը: 90ի Կարնոյ Մայիսեան ցոյցին մասնակցելով կը ձերբակալուի, ապա ներման կ'արժանանայ: Նոյն տարւոյն վերջերը Պոլիս գալուն՝ կը վարէ ուսուցչ. պաշտօններ, որոնցմէ յիշատակելի է Կէտիկ ֆաշայի ազգ. վարժարանի իր տեսչութիւնը, երբ «Յ. Զարմայր» ծածկանունը կը կրէր: 1892ին կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ և իր գործօն մասնակցութեան հետեւանօք կը բանտարկուի վերջապէս: Բաբգէն Սիւնիի դեկավարութեամբ Օսմ. Պանքայի Օգոստոսի ցոյցին մասնակցող 19 հոգիոց խումբէն (որ յետոյ «ժիւօնտ» պահակախումբ Մարտիկա զրկուեցաւ՝ Նէլիտօֆի միջամտութեամբ): Ժընէվ, Պուլիարիա և Կովկաս մնալով, Վարդգէս 1899 Հոկտ տն կ'անցնի Վան, ուր, ոստիկանական հսկողութենէ կարելի եղածին չափ խոստալով՝ թաղնաբար կը նուիրուի նորէն «Սուրբ Գործ»ին, մինչև 5 Յունվար 1903, և — մատուցեալ մը զոհ — սրունքէն վերաւոր ձերբակալուած՝ մահուան կը դատարարուի, բայց ֆրնս. բարեկամներու ազդեցութեամբ՝ տրուած վճիռը կը վերածուի ցկեանս թիապարտութեան: 1907ին Արդընի Մատեն, յաջորդ տարին Տիարպէրի՝ բանտէ բանտ տաժանադին կեանք մը քաշկոտելով, վրայ կը հասնի Սահմանադրութիւնը: Ազատութիւնը վերապտած՝ Պոլիս կ'առնէ շունչը: Կ'ընտրուի ազգ. երեսփոխան Սկիւտարէն, իսկ մեկտուս՝ իր ծննդավայրէն: Օսմ. Բառամէջին մէջ իր ձայնը գոռացած է միշտ, և ինք պատուհաս մը դարձած՝ թուրք ազգայնամուր ընկերներու աչքին, անկեղծ և անվերապահ իր խօսելակերպին պատճառաւ: Տեղական հայ և օտար լրագիրներ օրը օրին սիւնակներ կը նուիրէին, իր յարուցած զգայացունց վէճերուն արձագանգն ըլլալով: — Ապրիլ 11ի Մեծ Կարաւանէն վերջն էր որ այս անկուր հասարակական գործիչն ալ աքսորի ցուպը ձեռք կ'առնէ — Զօհրայի հետ ընկերովի, — եղբրականօրէն անփառունակ անհետելով միասին:



31. ՄԱՐՁՊԵՏ (ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐԵԱՆ). — Ծնած է Թամզարա 1878ին: Մանուկ հասակէն որբացած՝ կուգայ Պոլիս և Պէդձեան վարժարանը նին. կրթութիւնը ստանալէ ետք, հօրեղբայրը կ'ուղարկէ զինքը Միւնիխ, ուր կ'աւարտէ իր մասնագիտութիւնը (Մանկավարժութիւն): Հոնկէ մեկնելով Պուլիարիա՝ պահ մը ուսուցչութեամբ կ'զբաղի, յետոյ իր պատկանած

կուսակցութեան՝ Դաշնակցութեան կողմէ կ'անցնի Պարսկաստան, եւ խոյի մէջ պատասխանատու ներկայացուցիչ կը կարգուի. սակայն յաջս պոսկ. կառավարութեան կը ներկայանայ իբր Վէճիւր Խալիֆէ (առաջնորդի փոխանորդ): Կը մասնակցի հայ-թաթարական ընդհանրութեան, մասնաւանդ զէնքի փոխադրութեանց գործը ստանձնելով: Օսմ. Սահմ. նադրութեան հստակութիւն՝ կը մեկնի Թուրքիա եւ Բաղէշի մէջ գլխաւորաբար զարի կը տայ կրթ. գործին, մոտներով ամէն խաւէ ներս: Կուզայ Պօլիս եւ կը վարէ Եէնի Դաբուի դպրոցին տեսչութիւնը քանի մը տարի, յետոյ Պուլկարիա կ'ուղչուի կազմակերպական գործերով: Ընդ. պատերազմին սկիզբնէրը մայրաքաղաքս կը վերադառնայ: Սարսփի օրերուն՝ պահուցած կը մընար. բայց — անձնուրաց եւ պլասէր մարդ — նոր աքսորուած Թաւադեանը



դիմումներով փրկելու փութկոտութեամբ՝ դուրս կ'ելլէ Թաքստոցէն ու կամուրջին վրայ կը ձերբակալուի: Կէս տարի կեսարիա տարագիրի կեանք մը բոլորելէ ետք՝ կ'աջողի համոզել Վալին, զինքը Պօլիս վերադարձնելու համար, յայտարարելով թէ կարելոր յայտնութիւններ ունի ընելիք, մասնաւանդ երբ Կովկաս երթար՝ Թուրքիոյ ի նպաստ բրոքականտ պիտի ընէր... Սակայն գալէն քանի մը օր վերջ կրկին կ'աքսորուի: — Թուրքիկի ձեւով հրատարակած է «Զուլումաթի» զինուոր Օհաննէսի կենսագրութիւնը, իսկ Պօլիս՝ Մանկական Աշխարհը: — Կը կոչուէր նաեւ «Մարզպետունի»: — «Հայկ Առաքելեան» իր աւստր. հպատակութեան կեղծանունն էր՝ զոր կը գործածէր Պարսկաստան: — Երկու անհատ, — «մտաւորական»ն ու «հայրուկ»ը — կ'ապրէին իր մէջ:

32. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԳՍԱՊԱՐԵԱՆ. — Ծնած է Ատանա 1861ին, 1880-91, ազգային պետական եւ առեւտրական զանազան պաշտօններ վարելէ վերջ՝ իրաւաբանական ասպարէզն ընդգրկելով հաստատուած է Պօլիս, ուր մնաց մինչեւ իր տարագրումը: Ազգ. երեսփոխան ընտրուած Ատանայէն եւ անդամակցած այլեւայլ յանձնաժողովներու: 1880էն մինչեւ 1910, լուրջ յօդուածներ հրատարակած է «Մանգումէի», «Մէճմ. Ախպարի», «Բիւզանդիոնի» եւ «Սուրհանդակի» ընկերային թերթեր. հարցերու շուրջ: — Երկերը՝ բոլորն ալ օրէնսգիտական ու թրք. — Մեճմա՛ր յահրգալը գալանիյն, ձըզօանը գալանիյնի օսմանիի (1894), Մապսըր յահրգալը գալանիյն (1895), Չիլի յահրգալը գալանիյն, Հուզուզ միւշալիի եւ Իլամար քօպրասը (1901), մեծ մասամբ երկիցս տպագրուած:



33. ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ. — Ծնած է Վան 1855ին: Հնչակեան վաղեմի գործիչ, 1881ին Պօլիս կուզայ եւ 1890ի Գուլիսփուի բանդէն ցղոցին գործնականապէս եւ ծայր աստիճան խիզախութեամբ մասնակցած ըլլալուն հետեւանօք՝ ձերբակալուելով կ'ենթարկուի ահուելի տանջանքներու եւ մահուան կը դատապարտուի: Կ'աջողի սակայն փախչիլ բանտէն եւ անցնիլ արտասահման, միշտ հաւատարիմ մնալով իր ուխտին, մինչեւ Սահմանադրութեան հռչակումը: Պօլիս գալուն, ազգ. երեսփոխան կ'ընտրուի Կէտիկ Փաշայէն, նաև Միացեալ Ընկերութեան հիմնադիր ժողովի անդամ: — Չորս հատորի մէջ ամ Միացեալ Ընկերութեան հիմնադիր ժողովի անդամ: — անձեր ու անցքեր՝ Յիշատակներ Հայկական ձգնաժամին ի որագիրին տակ, լրովանդակելով ուշադրաւ վաւերաթուղթեր՝ ժամանակակից մեր պատմութեան իբր քառադէ:



33



34

34. ՍԱՐԳԻՍ ԱՍՐՍԵՂԵԱՆ (ՇԱՄՈՒ). — Երկար ատեն ծածկանունն էր այս՝ Գանձակեցի ԼԵՒՈՆ ՕՏԱՊԱՇԵՍԱՆԻ: Ծնած է 1875ին, Դաշնակցական Վանի կուռղ եւ բորականտ ընող անձնուէր գործիչներէն, ընկեր «Վանի իշխանը»ին պէս՝ Վանի Սարգիսը՝ կոչուած, ու նոյն գործը կարին ալ շարունակած: Մէկը՝ Ելլալի «դժոխային մեքենայի» կազմակերպիչներէն: — 1909ին Պօլիս գալուն՝ ամուսնացած է Թոսթամի աշակերտուհիներէն Պերճուհի Պարտիզեանի հետ: Վան մեկնած՝ դպրոցներու իբր շրջուն տեսուչ. նոյն պաշտօնով Կիրասոն ալ անցած: Հիմնադիրներէն «Աշխատանք» թերթին: — 1913-5ին Պօլիս կը գտնուէր:



35. ՊԵՏՐՈՍ ԳԱԼՅԱՆ. — Ծնած է իմէ (Խարբերդ) 1868ին: 12 տարեկանին որբացած՝ կը պանդխտէ Պօլիս, որդեգրուելով Պալթու Արեստ. ֆհ. Գուլիսեանէն՝ որմէ կ'ստանայ իր մականունը: Ուսումը խորէնեան դպրոցը ստանալէ վերջ՝ կը մտնէ առեւտր. ասպարէզ: Այդ հին օրերուն՝ իր ջանքերով է որ կը բացուի Թալին մանկապարտէզը: Կանուլէն մտած Հնչ. կուսակցութեան մէջ՝ կը մասնակցի 90ի Գուլիսփուի ցղոցին, յետոյ կը մեկնի Ա.

Փաղար, բրոքականի գործով: ԳՃին կը փախչի Աթէնք, ուրկէ Ռուսներն և Պուլիսի, Հնչ. մասնաճիւղերուն իբր ներկայացուցիչ: Քէօսթէնէի օսմ. հիւպատոսը տեղւոյն կառավարութեան միջոցաւ զինքն ու Մ. Տամատեանը ձերբակալել տալով Պօլիս կ'ուղարկէ, բայց նաւը մայրաքաղաք հասնելուն անգլ. նաւապետին շնորհիւ երկուքնին մէկ գիշերանց իտալ. շոգենաւ մը կը փոխադրուին և կ'անցնին Մարսիլիոյ շամբով Լօնտօն: Պետրոս կը մեկնի յետոյ Ռուսձուք, ուր բացի առեւտր. զբաղումէն՝ մէկ քանի ընկերներով կը հրատարակէ Վերածնորդան շաբաթաթերթը (որ ապա Բարիզ շարունակուած է «Ապագայ» անունին տակ): — 1910ին Պօլիս դարձին՝ կը հիմնէ յանձնակատարութեան գործ մը Հայկ. Պանքային մէջ, իբր ներկայացուցիչ Նիսեանց և Խաչատրեանց քարիւղի Տան: — Ազգ. երեսփոխան ընտրուած Աթը Մէրմէրէն, և ատենապետ ելեւմտից հոգաբարձութեան: — Ա. կարաւանէն վերջ, 4 Մայիս 1915ին անհատակի աքսորուած Այս՝, ուր 84 բանտարկեալներէն մնացորդ վերջին 20 հոգինոց խուճբէն: — Կուսակցական ծածկանունը «Որդոտնունի»:



36



38

36. 37. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼՖԱՆԱՆ. — Ծնած է Թալաս 1870ին. 1886ին Պօլիս գալով, կը վկայուի իրաւաբանական վարժարանէ. Յայտնի Դաշնակցական, Դէպքերու բերմամբ, 1896ին կը մեկնի Պուլկարիա՝ ուրկէ կառավարութիւնը կը վտարէ զինք, կարգ մը յեղ. գործիչներու հետ. երկար տարիներ եզիպտոս ու ժընէվ սպրեւէ վերջ, Սահմանադրութեան հռչակումին կ'անցնի Թուրքիա և պահ մը Իզմիրի շրջանը կը մնայ, իբր հասարակական գործիչ: Պօլիս դարձին՝ քաղաքապետական քննիչ կը կարգուի, ապա Մագրիքէօյի Թաղապետութեան նախագահ (Պէլէտիէ Բէյիտի), պաշտօնավարած 1892-6, մինչև իր աքսորման օրը: — Եղբայրը՝ փաստաբան ԳԱԼՖԱՆԱՆ ԱՐՄՆԱՆ (Ն: 37), Կեսարիա նահատակ:

38. ՍԱՐԳԻՍ ՍՈՒԻՆ (ՍՈՒՆԿԻՃԵԱՆ). — Ծնած է Պէշիքթաշ 15 Օգոստ. 1870ին. Միւքիէէ ընթացաւարտ. Ծով. նախարարութեան Թրզմ. սենեակին ու Հանր. Պարտուց Վարչութեան մէջ պաշտօնավարած 1892-6, մինչև իր ձերբակալումը 1 Յունիսին, իբր Իզմիրլեանի և օտար Թղթակիցներու յարաբերութեան միջնորդ: Եօթնամեայ բանտարկութենէ մը վերջ՝ ընդհ. ներումէն օգտուելով փախած է Եգիպտոս և հոնկէ Պուլկարիա, ուր ուսուցչութեամբ և առեւտրով պարապած. 2 տարի յօգուածագիր Իրաւունի, Ս. Ս.

սկզբնատառերով: Օսմ. Սահմանադրութեան հռչակումին Պօլիս դառնալով երեսփոխան ընտրուած Գումաշփուէն, և Ատանայի կոտորածին պատուիրակ ղըրկուած: Անդամ Քոք. Ժողովի, Պատրիարքարանի Քննիչ Յանձնաժողովի, Որբախնամի ևլն.: — Գանկաբան և դիմագէտ:



39



40

39. ԷՏՈՒԱՌ ՊԷՅԱՋԵԱՆ. — Ծնած է Սկիւտար 8 Փետր. 1873ին: Պէրպէրեանի սան: Դեղագործութեան վկայական ստացած 1893ին. Յետոյ շերամաբուծութիւն սորվելով փոխ-տնօրէն կարգուած Պրուսայի Շերամաբուծական վարժարանի և շերամաբուծական ընդհ. քննիչ Հանր. Պարտուց Վարչութեան: Պաշտօնով քանիցս ուղեւորած Իզմիր, Ատանա, Խարբերդ, Մալաթիա, Արաբկիր և այդ առթիւ շերամաբուծական բանախօսութիւններ ըրած, նաեւ գործօն դեր մը կատարած իր պատկանած Դաշնակց. Կուսակցութեան մէջ: Դանձապետ Աշխատանքի Տան: Երբեմն կը գրէր «Ազատամարտի» մէջ: — Մօրաքեռորդի Տքթ. Վ. Թորգոմեանի:

40. ՀՐԱՉ (ՀԱՅԿ ԹԻՐԵԱՐԵԱՆ). — Ծնած է Տրապիզոն 1871ին: Նանսի հողագործութիւն ուսած և Կովկաս ու Պօլիս ուղեւորած: Դաշնակցութեան յայտնի գործիչ: 13/26 Օգոստոսի Պանքայի Յայցին մասնակցողներէն մին, որ իր ընկերներով Մարսիլիա փոխադրուեցաւ մասնաւոր շոգենալով: Յետոյ գաղտնի Իզմիր անցնելով կը ձերբակալուի եւ ցկեանս բերդարգելութեան կը դատապարտուի Պոտուրում, ուրկէ Սահմանադրութեան հռչակումին ազատ կը դատապարտուի Պոտուրում, ուրկէ Մահմադրութեան հռչակումին կ'ըլլայ «Ազատամարտի» և կարգ մը կարեւոր գիրքերու, նաեւ կերպասեղէնի հայթայթիչ Պարզմ. Նախարարութեան: [Անունի, մականունի և բնակավայրի նոյնութեան պատճառով՝ բերացի նպարտվածառ մըն ալ աքսորուած, բայց կրցած է վերադառնալ, շնորհիւ Հրաչի վեհանախ պնդումին՝ Թէ կառավարութեան փնտուած անձը բուն իսկ ինքն է]:

41. ԱՏՈՄ ԵԱՀԷՆ (ԵՐԻՑԱՆՑ). — Ծնած է Ակն 1875 Մարտին: Աշակերտ Դալաթիոյ Կեդրոնական վարժարանի. յետոյ Լայպցիկ, Եէնա և Բարիզ՝ համալսարանական ուսանող: Սահմանադրութեան հռչակումին Պօլիս գալով՝ Բերա կը բանայ «Արաքս» անուն տպարան մը ուրկէ Ա. անգամ «Ազատամարտ» լրս կը տեսնէ: Սթամբուլ փոխադրուելուն՝ իր մամուլէն դուրս

կ'ելեն գրական ու դպրոցական գիրքեր ու հանդէսներ.—Դաշնակցական, Ազգ. երեսփոխան ընտրուած իր ծննդավայրէն.—Երկերը (Թրգւր.), Հարսասնայու արուեստը (Օտա Ակնի ծածկանունով), Հայնէի բանաստեղծութիւնները ևլն.



41



42

42. ԵՆՈՎԻՐ ՇԱՀԷՆ.—Ծնած է Պարտիզակ 1881ին, Եղբայր՝ Թուազէտ Գրիգոր Անգուծի որ տարագրութեան ատեն ողջ մնաց, Դերասան, իր գլխաւոր դերերն էին Գօրէի «Դարբիններուն գործադուլը», Հիւկոի «Թռիպուլէն» (Արքայն զբօսնու), Շէքսպիրի «Եսկօն» (Օթէլլօ) և «Շայլօք»ը (Վենետիկի վաճառականը). — Դաշնակցական.

43. ԿԵՐՍԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ.— Ծնած է Ագուլիս (Կովկաս) 1872ին, Որդի վանցի Տ. Մեսրոպ շուշտակ վարդապետի, և Եղբայր՝ յայտնի գրագէտ



Վրթանէսի ու Վահանի (այժմ՝ Բարեզ՝ Հոյկ. Պատուիրակ), Վան փոխադրուելով, մանկութիւնը հոն անցունելէ ետք, կուգայ Պոլիս եւ Եւտիգուլէի որբանոցը կ'աշակերտի, Հոնկէ կ'անցնի Արմաշ, և Դպրեվանուց շրջանը բոլորելով՝ վարդապետ կը ձեռնադրուի Տ. ՄԱՇԹՈՅ յորջորջմամբ և իր 6 ընկերներու խումբով որ Արմաշի առաջին հունձքն էր, իբր հովիւ կը ղրկուի Ամերիկա ուր կը գործակցի Սարաճեան Եպսկ.ի, Յետոյ Նիւ Եօրքի Գլըմպիս համալսարանը կը յաճախէ ուրկէ կը վկայուի եւ կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ, Իննամեայ հովուութենէ մը վերջ, կ'անցնի Կովկաս՝ ուր կը մասնակցի հայ-թաթարական ընդհարումներուն, Եկեղեցապետական կալուածներու գրաւմանց ան թիւ խօսած մէկ ճառին համար՝ ոռու կառավարութիւնն էջմիածինէն իր հեռացումը կը պահանջէ, Մաշթոց վրդ. կը կարգուի առաջնորդ թէհրանի, ուր 2 տարի կը մնայ, իբր հասարակական գործիչ կ'ստիպուի սքեմը թողուլ եւ մեկնել Ամերիկա, 1906ի վերջերը ստանձնելով «Հայրենիք»ի խմբագրութիւնը՝ Վրաստանի տեղ. Սահմանադրութենէն

կաս՝ ուր կը մասնակցի հայ-թաթարական ընդհարումներուն, Եկեղեցապետական կալուածներու գրաւմանց ան թիւ խօսած մէկ ճառին համար՝ ոռու կառավարութիւնն էջմիածինէն իր հեռացումը կը պահանջէ, Մաշթոց վրդ. կը կարգուի առաջնորդ թէհրանի, ուր 2 տարի կը մնայ, իբր հասարակական գործիչ կ'ստիպուի սքեմը թողուլ եւ մեկնել Ամերիկա, 1906ի վերջերը ստանձնելով «Հայրենիք»ի խմբագրութիւնը՝ Վրաստանի տեղ. Սահմանադրութենէն

ետք Պօլիս կուգայ և մտակոյ գաւառները կ'ուղեւորի բրօքականտի պաշտօնով. իսկ «Ազատամարտի» հրատարակուելուն՝ կը մնայ հայկ. բաժինին խըմբագիր, մինչեւ 1915 Ապրիլ 11. Նոյն թերթին ոճրապատումներն իր գրչէն կ'ելլէին.— Աշխատանքի Տան՝ հիմնադիրներէն, եւ ուսուցիչ «Արդի վարժարան»ի. Վերջերը ձեռնարկած էր ամուսնական դատերու փաստաբանութեան՝ Դատաստ. Խորհուրդի առջեւ, իբր հմուտ եկեղեցական օրէնքներու.



44. ԿԵՐՍԷՍ ԶՍ.ՌԱՐԵԱՆ.— Ծնած է իգմիթ 1883ին, Ընթացաւարտ Խտատի, Առեւտր. եւ Յրէրներու վարժարաններէն, Թուրք լեզուի մասնագէտ՝ պաշտօնավարած է Պօլիս եւ այլուր

կարգ մը դպրոցներ, Հնչակեան գործիչ, Ազգ. երեսփոխան ընտրուած Կէտիկ փաշայէն.— Հրատարակութիւնները. Բերսկան օտմ. լեզուի, Ապագայ և Նոր Աշխարհ թերթերը.



45



46

45. 46. ՏՕՐԹ. ՍՍԵՓԱՆ ՄԻՍԻՔՃԵԱՆ.— Ծն. Պօլիս 1852ին, Կոյս. Բժշկանոցէն վկայուած վաղեմի բժիշկ, մանկաբարձ և վիրաբոյժ, որ ատենօք Եւտիգուլէի մեր հիւանդանոցը պաշտօն ալ վարած է և անդամակցած կաթոլիկ եկեղեցիի թաղ. Խորհուրդին Օրթաքէոյ՝ ուր կը ընսկէր.— Եղբայրը Գրիգոր (ՆՅ 46) դեղագործ, 50 տարու, նոյնպէս աքսոր. [իր աքսորեալ պաշտօնակիցներէն ՏՁԹ. Գաղազեան կ'ենթադրուի փրկուած ըլլալ].

47. ԱՐԾԻՐՈՒՆԻ (ՅԱԿՈՐ ԱՐԵՏԻՍԵԱՆ).— Ծն. Վան 1873ին.— 17 տարու Պօլիս գալով՝ կը միանայ Հնչակեաններու. 95ի Պապը Ալիի ցոյցին կը փախչի Պուլիարիս և բացակայութեանը մահուան կը դատապարտուի. Աթէնք, Եգիպտոս և Կովկաս քանի մը տարի դեգերելէ վերջ կը նետուի Մեստիսի բանառը. 98ի վերջերը կ'անցնի Վան, և 1903ին երբ Վարդգէս վիրաւոր կը ձերբազարդուի հոն՝ անոր գործակիցը ենթադրուելով՝ կրկին կը բանտարկուի. Յաջորդ տարին կ'անցնի Պարսկաստան և ուսուցչութեամբ կը պարապի. Սահմանադրութեան հռչակումին Պօլիս կուգայ՝ զբաղելու կուսակցական գործերով և Կէտիկ փաշայէն կ'ընտրուի ազգ. երեսփոխան և անդամ Վանօրէից Խորհուրդին. — Աշխատակցած է Պօլսոյ և արտասահմանի խել մը թերթերու.

48. ՍԱԲՕ. — Կովկասահայ, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան յայտնի դէմքերէն: Ուսած է գիւղատնտեսութիւն Բարիզ, եւ ուսանողութեան շրջանին՝ յարաբերութիւն հաստատած նազար Բէկի և այլոց հետ: 95ի Սասնոյ ապստամբութեան ատեն՝ ինք էր որ նիւթական եւ բարոյական ամէն օժանդակութիւն կը փութացնէր հերոս Մուրատի (Հ. Պոլաճեան): Բազմիցս մասնակցած Կովկասի Հնչ. յանձնախումբին եւ անդամ «Գաղափար» թերթի խմբ. մարմնին: Հայաստանց Կալիցինի տէրօրը կազմակերպողներէն ըլլալով՝ ուսուցանողութիւնը կ'աքսորէ զինք Սիպերիա. Օսմ. Սահմանադրութենէն ետք կուգայ Պօլիս ուր կը մնայ մինչեւ իր տարագրումը:

49. ՅՐԹ. ԼՆԻՈՆ ՊԱՐՏԻՉՊԱՆՅԱՆ. — Ծն. Խարբերդ. 1887ին. Վկայուած Կայս. Բժշկանոցէն: Օսմ. Բանակին մէջ՝ հարկւրապետի աստիճանի իր համազգեստով ձերբակալուած և քսորուած: — Դաշնակցական:



50



51

50. ԱՐՏԱՇԷՍ ՍԷՄԷՐՃԵԱՆ (ԹՈՐԳՈՄ). — Ծն. Սամաթիա, 45 տարու: Պօլսոյ հին Դաշնակցականներէն և իր ծննդավայրին շրջանակին եւանդուն կազմակերպիչներէն: Կը վարէ զանազան տէրօրներ մինչեւ 1895: Յետոյ կ'անցնի Պուլկարիա, և Պօլիս դարձին՝ կը մասնակցի Պապը Ալիի ցոյցին և Պանք Օթօմանի դէպքին, փոխադրական գործով զբաղելով: Ելլալով չորս տարու մեքենայի պայթման իր դերակատարութենէն ալ վերջ՝ կը մեկնի արտասահման ուր կը մնայ մինչեւ Սահմանադրութեան հռչակում, և կուգայ մայրաքաղաքս, հոս մնալով մինչեւ իր տարագրումը:

51. ՎՈՍՄՇԱՊՈՒՀ ԱՐԱՊԵԱՆ. — Ծն. Մալկարա, 20 տարեկանին՝ Դաշնակցութեան մէջ մտնելով կ'անցնի Պուլկարիա, ուր կ'զբաղի զինագործութեամբ մինչեւ 1908: Թուրքիա դարձին՝ կը մտնէ Օսմ. Բանակին մէջ, երբ զինագործ-մեքենագէտ. կը ղրկուի Սանաա՝ հոնկէ աշխատակցելով «Ազատամարտի» Վաւմ ստորագրութեամբ: 1915ի սկիզբները Պօլիս կը գտնուէր:

52. ՆԵՐՍԷՍ ՇԱՀՆՈՒՐ. — Կեսարացի, Ս. Կարապետի վանքէն ընթացաւարտ երիտասարդ ուսուցիչ որ պաշտօն կը վարէր Բերա՝ Ս. Գ. Լուսաւորչեան կաթողիկէ վարժարանը:

53. ՍԵՐՈՎՐԷՆՆՈՐԱՅՈՒՆԿԵԱՆ. — Ծնած է Սղերդ. 1884ին և հոն ստացած նիւն. կրթութիւնը՝ երբ Միացեալը գրութիւն ունէր դեռ. այնուհետեւ աւարտած Սանասարեանի դասընթացքը: 1903-15, թուրքերէնի ուսուցիչ: Հետեւած է Օսմ. Համալսարանի դասախօսութիւններուն: Ազգ. երեսփոխան ընտրուած իր ծննդավայրէն: — Դաշնակցական:



53



51

54. ԳԱՐԵԳԻՆ ՀԻՒՍԵԱՆ. — Ծն. Վան 1882ին. Ուսումը ստացած Երամեան վարժարանը, Պօլիս գալով՝ կը պաշտօնավարէ Գումգափու, Հասքէյ և Կեղրոնական. Վերջին ատենները տնօրէն էր Պէշթաշի Մաքրուհեան դպրոցին: Ուսուցման ձիւղերը. Ազգ. պատմութիւն, աշխարհագրութիւն, գծագրութիւն և գեղագրութիւն: — Հնչակեան գործիչ: — [Եղբայրը Երուանդ՝ արտուած, յայց վերադարձած է]:

55/56. ՄԱՐՏԻՐՈՍ Հ. ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ. — Ծն. 1888ին Կեսարիա՝ ուր ուսումը ստանալէ վերջ, 1909ին կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ և Մարտ 31ի դէպքին՝ զարկ կուտայ ինքնապաշտպանութեան գործին: Յետոյ Պօլիս գալով՝ 1913ին կը վկայուի Իրաւաբանական վարժարանէն և կը սկսի իր արուեստը կիրարկել: Անդամ «Ասպարէզ» քիւլակի, հիմնադիր Կեսարիոյ Կրթ. Միութեան և աշխատակից «Ճ. Շարգիէ» ծննդավարէն ընտրուող մեկուսներու մասին քննադատութիւններով: — Պօլսէն Կեսարիա տարուելով կախողան բարձրացած 13 Սեպտ. 1915ին, Գոնիայէն տարագիր իր փաստաբան ընկերոջ ԿԱՐԱՊԵՏ ԹՈՇՃԱՆԻ (№ 56) հետ, նոյնպէս Դաշնակցական:



55

57. ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻ. } Մ. Գունտազեանի Եօզղատցի ընկերները, միասին փաստաբան վկայուած և ընկերովի գործել սկսած, Չլական տարու: — Դաշնակցական:

59. ՄԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. — Ծն. Սկիւտար՝ որուն Ս. Խաչ դպրոցը ստացած նիւն. կրթութիւնը: 11 տարի ընդհ. դաստիարակ Մայր վարժարանը:

ժարանի, յետոյ տնօրէն Գուճափուի դրսի դպրոցին: Գառորդ դարու կրթական վաստակաւոր: [իր անունն ու մականունը կրող հռոմէական հայ մը քարտուելէ վերջ՝ վերադարձուեցաւ]:

60. ԱՐՐԱՀԱՄ ՀԱՅՐԻԿԵԱՆ. — Ծն. Ռոտտոթօ 1870ին եւ հոն ստացած նին. կրթութիւնը: Գաղթին Ս. Խաչ Թաղի դպրոցը, նաև Զօրու ուսուցչական պաշտօններ վարելէ վերջ՝ Պօլիս կուգայ, մէկ կողմէ դասախօսելով զանազան Թաղերու դպրոցներուն մէջ, միւս կողմէ ուժով ցնեցնելով Թուրքերէնն ու աշխարհագրութիւնը որոնք իր մասնագիտութիւններն էին: Սահմանադրութենէն տարի մը ետքը՝ Բերա՝ Նշան Թաշ կը հիմնէ Արդի Վարժարանը զոր ապա Օրթաքէյ կը փոխադրէ:



60



61

61. ԼՆԻՈՆ ԱՂԱՊԱՊԵԱՆ. — Ծն. Բաղէշ 1887ին: Սանասարեանի ընթացաւարտ: Քէօթահիա և Ազ-Նէհիր՝ տնօրէն ազգ. վարժարաններու (1908-14): Քէօթահիա անհատական դպրոց մըն ալ ունեցաւ որ 3 տարի տեւեց: Վերջին ատենները՝ խմբագիր «Ազատամարտ»ի:—Թուագէտ:



սին ունեցած հակումէն՝ կը սիրէր գրականութիւնը: Իր ձեռագիրները—հետաքրքրական էջեր—մտադրած է հատորի մը մէջ ամփոփել եղբայրը՝ Սամուէլ:

63. ՏԻԳՐԱՆ ԱՇԽԱՐՈՒՆԻ — Ծն. 1873ին և Արմաշու դպրեւանքը վարդապետ ձեռնադրուած 1901ին՝ ՄերՈՒԺԱՆ կոչուելով: Երբեմնի տեղապահ Արաբկիի: 1909ին հոգեւորականութենէ հրժարելով կը մտնէ Դաշակցութեան շարքին մէջ և միաժամանակ ուսուցչութեամբ կ'ըզատի (Մագրիքէյ՝ Պէզազեան վարժարան):

64. ԳԷՈՐԳ ՀԻՐՄԻՉ. — Ծն. Օրթաքէյ (Պօլիս) 1868ին և ուսումը ստացած Վենետիկի Մ. Ռափայէլեան վարժարանը: Թղթակից՝ Երոպ. Թերթերու, մասնաւորապէս «Թայմզ»ի, որ պատճառ եղած է իր տարագրումին: — Հայ հռոմէական, Բերայէն:



64



65

65. ԳԷՈՐԳ ՏԻՐԱՅՈՒՆԵԱՆ. — Ծն. Իզմիր 1883ին և հոն ստացած իր ուսումը: Երկար ատեն ծառայած է Թուրք մամուլին, գլխաւորաբար «Թասֆիրը Էֆքարաի» խմբագրութեան: Տարագրուած՝ լրագրող և իթիլաֆական մը ըլլալուն: — Հայ հռոմէական, Բերայէն: — Կը ճանցցուէր նաև «Գէորգ Յէրիտ» յորջորջումով:

66. ՄԻՀՐԳԱՏ ՀԱՅԱՋՆ. — Ծն. Պէշքէթաշ 1864ին: Երջանաւարտ ծննդավայրին Մաքրուհեան դպրոցէն: 1883ին խառնուած է յեղ. կեանքի, որուն հետեւանօք Տրիպօլիս աքսորուած, Ն. Մէլհամէի ձեռամբ: Սահմ. հռչակումին Պօլիս գալով՝ բեմադրել տուաւ իր քաջածններն ու զինքը հալածողին գործելակերպը: Իզմիրեանի եւ յաջորդին կաթող. ընտրութեանց ութիւ երկիցս էջմիածին ուղևորած՝ իբր պատգամաւոր: Վարած ուղգ. բազմութիւ պաշտօններ, հովանոցավաճառութիւնը բարձի Թողի ընելու աստիճան: Ազգ. երեսփոխան ընտրուած Ռոտտոթայէն: Նախագահութիւնը կը վարէր Պէշքէթաշի «Ահարոնեան» Ակումբին:



Գ.— ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐ ԵՒՆ.

67. ԲՈՍՏՈՄ (ԲՈՒՍՏՈՒՄ) ԲՈՍՏՈՄԵԱՆՆԵՐ.— «Արիստակէս» ալ կը կոչուէր. Ծն. Աղեքսանդրապոլ 1861ին. 18 տարեկանին Պօլիս գալով ներկայացուցիչ կը կարգուի «Գէորգօֆ» առեւտր. Տան մասնաձեւիւն (որ մեծ գործառնութիւն ունէր կովկասեան մետաքսի և կապերտի), շիրհիւ իր ուղիւնութեան և ուղղամտութեան. պաշտօն զոր 20 տարի ձեռնհասօրէն կը վարէ, պատիւ ու վարկ շահելով ամենազգի օտարականներէ. Այնուհետեւ հրապարակի վրայ անկախաբար կը գործէ և կ'ընդարձակէ գորգի գործառնութիւնը, մինչև իր Ապրիլ 11ի քմաճած տարագրումը, վասն զի ո՛չ կուսակցութեան ո՛ր կը պատկանէր, ոչ ալ ազգ. գործունէութիւն մը ունեցած էր. Յեղ. յայտնի գործիչ «Ռոստոմ»ի սնունակից ըլլալուն՝ իբր այն ձերբակալուած. — լաւ ճանչցուած դէմք մը՝ Ամերիկայի և Եւրոպայի մէջ, Բարութեան և ազնուութեան մարմնացումը. — Ռուսահպատակ:



67



68

68. ՎՈՒՍՏՐԱԿՈՒՆ ԱՍՏՈՒՆԻՍՅԱՆ.— Ծն. Սամաթիա 13 Մարտ 1880ին, Երկար տարիներ պաշտօնավարած է. Սթամպուլեան վաճառատան մէջ և հոսակ ուրեմն հաստատած սեփական սեղանաւորական տուն մը. Օտեսա գացած է, իր զինուորական ծառայութիւնը կատարելու համար. Ծննդավայրին Սահակեան Սանուց Բնիկեան մէջ գործօն դեր մը ունեցած է, իսկ Սահմանադրութեան հռչակումին՝ նուիրուած ազգօգուտ ձեռնարկներու. 2 տարի հոգաբարձու Սամաթիոյ երկեսու վարժարանին, Ատանայի եղեռնին հետեւանօք կազմուած Որբախնամ-Այրիխնամին և «Աշխատանքի Տան» անդամ, «Հայ կարմիր Խաչ»ի գանձապետ. Բարենպաստակ ընկերութեանց հանդէսներու սարքումին՝ իր ներկայութիւնն անհրաժեշտ կը դառնար. — Ռուսահպատակ:

69. ԱՐՇԱԿ ԽԱՋԽԱՋՅԱՆ.— Կարնեցի վաճառական (բնիկ իւր նուսցի՝ վերջերը Պօլիս հաստատուած, 40 տարու. Հայրենակից կարգ մը առեւտրականներու հետ իր տարագրումէն յետոյ՝ միջոցը գտնելով թէեւ կ'աջողի մայրաքաղաք դառնալ, բայց մատուցելով կրկին կ'աքտրուի Ձանդըրէն հեռու. Մէճիտ-Էօզիւ, անվերադարձ:

70. ՄԿՐՏԻՉ ՍՅԵՓԱՆԵԱՆ (ԹԱՒԱԿԵԱՆ). — Ծնած է Նուխի (կովկաս) 8 Փետր. 1864ին. Նխն. կրթութիւնը հոն ստանալէ յետոյ կ'ընդգրկէ առեւտր. ստպարէզը, Կանուխէն կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ և իբր կուռող կը գործէ «Թաւուդեան» ծածկանունին տակ. 1905ի հայ-թուրքական ընդհարումներուն՝ իբր յեղափոխական հալածուելով կ'անցնի Պարսկաստան և կը հաստատուի Էնդէլի. Պրսկ. քաղաքակառնութիւնը կը փոխուի, Մէհմէտ Ալի Շահ գահընկէց կ'ըլլայ այդ գործին մէջ Հաւերն իրենց մասնակցութիւնը ցոյց կուտան Եփրատի ղեկավարութեամբ. Չարը կ'ուզէ Շահը վերահաստատել, և ահա կ'սկսի հայ կուսակցականներու հալածանքը. Ստեփանեան կ'ստիպուի թուրքիս ապաստանի և 1911ին Պօլիս գալով՝ հիմնադիրներէն մին կ'ըլլայ Նիշլի Նեպօխան ռուս. լիմոնատի գործարարին ուր աշխատութեան կը կոչուին կուսակցական անգործ բանուորներ:



70



71

71/73. ԼԵՒՈՆ ՇԱՇԵԱՆ.— Ծնած է Պրուսա 29 Դեկտեմբեր 1890ին. Երախակութեանը Պօլիս փոխադրուելով ընտանեօք, ռուսումը կ'ստանայ Լուսաւորչեան դպրոցը. Հայ կաթողիկ Շաշեան յայտնի գերդաստանէն վաղվուռն և անձնուէր երիտասարդ մը որ արկածախնդիր կեանք մը վարած է Պուլկարիա և Եգիպտոս. Սահմանադրութենէն վերջ՝ Պօլիս յանձնակատարութեամբ կ'գլխադէր և յեղ. կուսակցութեանց գաւառ. զէնքի առաջուներու գործին մէջ կարեւոր դեր մը կը խաղար. — Կինը՝ Ֆրանսացի. — Առաջին բանտարկութիւն մը լրացնելէ ետք՝ զին. տարիք ունեցող Հայերու արտասահման փախուստը դիւրացուցած ըլլալուն ամբաստանութեամբ կրկին ձերբակալուելով 5 տարուան կը դատապարտուի Պատերազմ. Ատեանէն. Բանտակից ընկեր՝ այս սողերը գրողին, Պօլսոյ Հապահանէի Ուսումիին մէջ. Կայս. ներուսէ մը օգտուելով ազատ արձակուելուն, 1915 Յունիսին՝ անխոհեմութիւնը կ'ունենայ քարափին վրայ խնդակցութիւնը յայտնելու Այաշէն աքտորարած պուլկարահպատակ Բրիտի և Նոյնհետայն ձերբակալուելով կը ջրուի Տէր Զօր՝ ուր հասնելու հայտնութիւն մը լեցուած էր արդէն. Հոն, Պէլլտիէի Բրաթիանէն կը վերածէ պանդոկ-ձաշարանի և մեծ օգտակարութիւն ցոյց կուտայ չքաւոր տարագիրներու. Կը փոխուի քաղքին կառավարիչը, կը յաջողէ Զէքին որ 1916ի Յուլիսեան ահաւոր ջարդը կազմակերպեց. Բանտի տանջանքներէ վերջ՝ Լեւոն կը փոխադրուի Մուրատ գիւղը, Գաղատացի Ս. ԿՂԻՄԷՍ ՎՐԻՊ. ՎՅԱՎԼԻՃԻԱՆ, (ՆՅ 72), Մարաշցի Ս. ՅԱՎՍԷՓԻ (ՆՅ 73) և քանի մը Զէյթոն նշաններու հետ, բոլորն ալ նահատակ. [Բաղուած՝ Զօրէն դարձող Կիւրիցի ՏԿ. Կատար Տա-

տուրեանէ, Գղեցի որբ Գր. Մարկոսեանէ և Ախալքալաքցի Սրգ. Մակարոֆ ուսանայ քաղաքական գերիէն)։

74. **ԲԱՐՈՒՆԱՆ ԶԻՐՈՒՆԱՆ** — Ծն. Պօլիս 1884ին. Զարգացեալ երիտասարդ մը՝ քաջ ջուրհան և ելեւմտ. Նախարարութեան Մագրիքէզի մասնաճիւղին պաշտօնեայ։



74



75

75. **ՕՆՆԻԿ ՄԱՂԱՋԱՃԵԱՆ** — Ծն. Պօլիս 1878ին. Պապը Ալի ձատտէսի «Հայրենիք» (Վաթան) կազմատան տէր։ Հրատարակած է Ասիական և Եւրպ. Թուրքիոյ մեծածաւալ ֆուտբոլերը, նաեւ Իրպանի աջլաս մը՝ Ա. Պիպէռճեանի աշխատակցութեամբ։ Կը վարէր Գումուզափուի «Յաւազդիմասէր Ընկերութեան» ատենապետութիւնը՝ որուն պատճառաւ կ'ենթարկուի արտօնաժամ ըլլալ։

76. **ԹԷՈՏՈՐ ՄԵՆՆԻԿԱՆ** — Նախապէս տոմարակալ Ս. և Բ. Տամատեան վաճառատան, վերջերը հիմնած էր անհատակի առեւտրական տուն մը Գաթըրճը օղլու խանին տակ։ Դաշնակցութեան համակիր։

77. **ՎԱՐԳԵՐԵՍ ԱԹԱՆԱՍԵԱՆ** — 42 տարու. Բերա, Ճէրիքէզի «մըլիթար» — վերակազմեալ Հնչակեան։

78. **ԱՌԿ ՃԱՄՊԱՋ** — Հայ Հռոմէական՝ Բերայէն։ Առեւտրական։

79. **ՎԱՀՐԱՄ ԱԼԹՈՒՆԵԱՆ** — Աւարտած գերմ. վարժարանը։ Անատոլի երկաթուղիի պաշտօնեաներէն։ — Դաշնակցական։ Պէշիքթաշի «Ահարոնեան ակումբ»ի անդամ։

80. «ԵՐՋԱՆԻԿ» **ԱՐԱՄ** — Սեփականատէր Պահճէ Գափու՝ համանուն ճաշարանին որ կերդրոնավար մը եղած էր մտաւորականներու և գործիչներու. այդ իսկ պատճառաւ տարագրուած, 50 տարու, գաւառացի ձեռներէց և զուարթ մարդ։

81. **ՆԵՐՍԷՍ Տ. ԳԷՈՐԳԵԱՆ** — Վաճառական։

82. **ՕՆՆԻԿ ՍՐԱՊԵԱՆ** — Ծն. Երզնկա 1878ին և հոն ստացած նին կրթութիւնը։ Ատեն մը գրադրութիւն ընելէ վերջ՝ ընտանեօք կ'աւանդէր Երզնկայի թիւսպետ և կը պաշտօնավարէր Գումուճեան վաճառատունը։ Դաշնակցական։ Սահմանադրութեան ետք Պօլիս գալով՝ Բարթող Զօրեանի հետ ընկերովի կը հիմնէ Լուսադրիւր հրատարակչական «Օննիկ-ժիրայր» ֆիրմայով։



82



83

83. **ԲԱՐԹՈՂ ԶՕՐԵԱՆ (ԺԻՐԱՅԵՐ)** — Ծն. Թամազարա 1 Յնվր. 1879ին եւ հոն ստացած նին կրթութիւնը զոր շարունակած է Երզնկայի մէջ։ 18 տարեկանին Ֆիլիպէ անցնելով հետեւած է մասնաւոր դասերու։ Դաշնակցական։ Երբ Ռ. Զարդարեան կ'սկսի «Ռազմիկ»ը հրատարակել հոն, Բարթող կը ստանձնէ թերթին վարչական գործերը։ Սահմ. հոշակումին Պօլիս գալով՝ Օննիկ Սրապեանի հետ կը հիմնէ Լուսադրիւր հրատարակչական տունը (Օննիկ-ժիրայր), լոյս ընծայելով «Մեղրագետներու շարքը», «Երկրագործին բարեկամը» եւլն. — Ազգ. երեսփոխան ընտրուած է. Գարահիսարէն։

84. **Ա.ԳՐԻԿ ԳԷՐԵՍԹԵՃԵԱՆ** — Ծն. Գարթալ, 60 տարու. Գիւղին չջօրպաճիւն և Մէճիլը Իտարէի անդամը։ Ատողձավաճառ. կուսակցութեան մը չէր պատկաներ։

85. **ՄԵԼԻՔՈՆ ՓՈՒՍԵԱՆ** — Ծն. Գարթալ և հոն դեղարան մը հիմնած։ 32 տարու. Դաշնակցական։ Վարած թաղականի և հոգաբարձուի պաշտօններ նոյն գիւղին մէջ։

86. **ՓԻԼԻՊՊՈՍ ԶԻԼԻՆԻՐԵԱՆ** — Ծն. Ռոտտաթօ 1855ին և հոն զբաղած թաղային գործերով։ Աներհայր՝ զբաղէտ Գէորգ Մեսրոպի, որուն տեղ աքտորուած է Այաշ, Գումուճափուէն։

87. **ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՕՆԻԱԼՍԱՆ** — Ծն. Կեսարիա 1877ին. Կրետէ կղզին 7 տարի դերձակութիւն ընելէ վերջ՝ Սահմանադրութեան հոշակումին Պօլիս կուգայ և կը շարունակէ իր արհեստը, որուն մէջ ունէր եղական համբաւ։ 1913ի Լոնտօնի ցուցահանդէսին մրցանակ ստացած էր, ձերմակ ապրըւմով կ'որոճ (և կարերն անտեսանելի) ալօֆինի մը համար։ — Դաշնակցական։

88. Վ.Ս.ՂԱՆ ԺՈՒՄՅԱՆ.—Ծն. Կեսարիա, 40 տարու, տեղւոյն Կիւմիւշեան վարժարանէն ընթացաւարտ. վաճառական:

89. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼՅԱՅԵԱՆ.—Սկիւտարցի երիտասարդ մը, Հնչակեան, ատենապետ «Արիւնդան» լսարանի [Զգոթել զինք Ձ 36ին հետ]:



89



90

90. ՅՈՎ.Վ. ԳՐԼԵՃՅԱՆ.—Տիվրիկցի, 37 տարու, Գրավաճառ. Զաքմաքճըլար: Նշ. Հնչակեան գործիչ եւ նահատակ Հայկազն Պարոյրի (Իրիգոր) եղբայրը: Ինքն ալ կը պատկանէր նոյն կուսակցութեան: Հրատարակիչ կարեւոր դասագիրքերու շարքի մը:

91. ՍՏԵՓԱՆ Ս. ԿՐԻՐԳՅԱՆ.—Ակնցի, 28 տարու, Պապը Ալի «Եփրատ» գործակալութեան տէր: Գրավաճառ-հրատարակիչ, Դաշնակցական:

92. ՅԻԳՐԱՆ ՅԱՐԳԻՍԵԱՆ.—Ծն. Մէզրէ 1855ին եւ ուսումը ստացած Խարբերդ: Ռ. Զարդարեանի սան: Ուսուցիչ եղած է իր ծննդավայրին Նղէգի գիւղը: 1904ին կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ: 1910ին Պօլիս դալով կ'աշակերտի Երկրաչափական վարժարանի եւ ընթացաւարտ չեղած՝ կը տարագրուի:

93. ՊԱՐՈՅՐ ԱՐՉՈՒՄՍԿՆՍԿԻ.—Ծն. Անջրդի գիւղը (Արաբկիր) 1878ին եւ նին կրթութիւնը ստացած Նզնիկեան ուսումնարանը (Երզնկա):— 2 Յունիս 1915ին կախաղան բարձրացող 20 Հնչակեաններէն Մկրտիչ Նրէցեանի ատենաք զէնք զրկած ըլլալը պատճառ կ'ըլլայ որ քանիցս Պտրզմ. Ատեանի առջեւ հարցաքննուի եւ հուսկ ուրեմն աքսորուի:

94. ՀՍԵՎ ՏԷՐՏԵՐԻՍԿԻ.—Ծն. Օրտու, 45 տարու, իբր Հնչակեան շրջազայած գաւառներ եւ հոս ճանչցուած «գործիչ Հայկ»: Վերջին անգամ Պօլիս գալուն՝ կը ձերբակալուի եւ չարչարանքներ կրելէ վերջ կ'աքսորուի Գօնիա ուր կը մեռնի բանտի մէջ:

95. ՄԻՐԻՃԱՆ ԱՐԹԻՆՅԱՆ.—Բերայէն, 30 տարու, «լ. Հէրալտ»ի գրաշարներէն, Դաշնակց. ամբաստանութեամբ Այաշ աքսորուած:

96. ՀԱՄԲ. ՊԱԼԱՍԱՆ.—Ռուսահայ, 32 տարու, Դաշնակցական: Մասնակցած հայ-թաթարական կռիւներուն: Բազուի բանտէն վերջ կ'աքսորուի Միպերիա ուրիշ խոյս տալով կուգայ Պօլիս:—«Ազատամարտ»ի սրճեփ:

97. 98. ՎՍ.ՂԱՆ ԲԷԼՅԱՅԵԱՆ. (Տէօքմէճի վահան).—Ծն. Ուրֆա 1874ին, Կանուխէն կը մտնէ Հնչ. կուսակցութեան մէջ եւ գործօն դեր մը կ'ուներայ: Աքսորակից ընկեր Մուրատի (Հ. Պօյաճեան) Ափր. Տրիպօլիս, ուրիշ կը դառնայ Պօլիս Սահմանադրութեան հռչակումին եւ կը շարունակէ իր գործունէութիւնը: Սամաթիոյ Հնչ. մասնաճիւղին անդամ: Զօրակոչէն յետոյ, իբր ճուղիչ կը դրուի Ձէյթուն Պրունիի գործարանը, բայց ամբաստանելով թէ ուժանակ կը պատրաստէ հոն՝ կը դատապարտուի Պտրզմ. Ատեանէն: Բանտէն արձակուելէն վերջ կ'աքսորուի Զանդըրի, ուրիշ հանուելով՝ վարուածանի, Սեւակի, Մաղազաճեանի եւ Օրթաքէյոյ հացալստաւ ԱՐԹԻՆԻ Ի հետ կը նահատակուի թիւնէյ կոչուած վայրը:

99. ԱՐՏԱՇԷՍ ՖԷՐԱՀՅԱՆ.—Մշելի, 25 տարու, «Եփրատ» Գօլէճի ուսանող, Պօլիս գալով կը հետեւի իրաւաբանական վարժարանի դասընթացքին:—Հնչ. Ուսանող. Միութեան անդամ եւ «Կայծառ» խմբագիր:

100. ԱՐԹԻՆ ՄՍԸՐԼՅԱՆ.— 21 տարու, մեքենավար «Ազատամարտ»ի տպարանին:—Այաշ աքսորուած:

101. ԱՐՄԵՆԱԿ ԱՌԱՔՆԼՅԱՆ.— «Ազատամարտ»ի աշխատակորներէն:—Այաշ աքսորուած:

102. ՄԻՆՐԱՆ ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ.— Կարնեցի «Կարօ»ի եղբորորդին, ուսանող Միլիթի:

103. ՆԻՍԱՆ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ.— Պօլսեցի դեղագործ: Ելլալով դէպքին՝ բանտարկուած եւ խոշտանգուած, Դաշնակցական:

Դ.—ԱՔՍՈՐԱՎԱՅՐԻ ՄԷՋ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ ՄԵՌՆՈՂՆԵՐ

104. ԵՂԻԱ ՍՈՒՋԻԿԵԱՆ.— Սամաթիացի, 43 տարու, լրագրող, երբեմնի թարգման Գօնիայի ուսու. հիւպատոսարանի, «Ժամանակ»ի Նոր Քաղաքագիտ: Մեռ. Պէլէմէտիկ-թաշտուրմազ: (Գր. Ծածկանունը՝ Ն. Ն. Ճար):

105. ՊԵՏՐՈՍ ԳՐԻՐՏԵԱՆ. (ՊԵՏԻՆ).— Պարտիզակից երիտասարդ, Պետական վարժարանէ ընթացաւարտ, խմբագիր հայ եւ թուրք թերթերու: Սահմանադրութեան հռչակումին՝ լոյս ընծայած իր «Պաշար» թերթը 1 թիւի կեանք կ'ունենայ:—Անհատակի աքսոր՝ ձեռնակապով, եւ մեռ. Մէսքէնէ:

106. ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆՅԱՆ.— Պօլսեցի ծանօթ փաստաբան եւ ազգ. երեսփոխան: Ուսուցիչ իրաւաբանական համալսարանի:— Անհատակի աքսոր:—Մեռ. Դամասկոս:

107. ԱՍԱՏՈՒՐ Տ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ.— Փաստաբան, խմբագիր հայ եւ թուրք թերթերու:

108. **ՅՈՒՍԵՒ ԿՆ. ԿՈՋՈՒՆԻ.**—Ծն. Արաբկիր 1851ին եւ քահանայ ձեռնադր. 1886ին, 5 տարի վերջ առաջն. փոխանորդ իր ծննդավայրին: Դաշնակցական: 1895ին Խարբերդ բանտարկուած եւ 1897ին Պատրիարքարանի հսկողութեան տակ Պօլիս դրկուած՝ ուր կը մտոր մինչեւ իր տարագրումը: Ազգ. երեսփոխան:



108



109

109. **ԵՐՈՒԱՆԴ. ԶԱՎՈՒՇԿԱՆ.**—Պօլսեցի, 49 տարու, Դեղարուեստից վարժարանի մէջ մաթեմատիքի ու ուցիչ, Վերակազմելու Հնչակեան, արտօնատէր «Զարն Հայրենեաց» եւ հեղինակ Զարմարի մեքենագիտական գիրքին (Թրք.)—Մեռ. Համնամ (որ կայան մըն է Եփրատի եզերքը, Մեսաքէնէի եւ Տէր Զօրի միջեւ):

110. **ՅԱԿՈՐ ՇԱՀՊԱՋ.**—Վանցի, 50 տարու, վաղեմի Դաշնակցական, արտասահման գտնուած եւ իր կուսակցութեան օրկաններուն աշխատակցած: Ոստիմանադրութենէն յետոյ Պօլիս գալուն՝ պահ մը Պատրիարքարանի քարտուղար: Հեղինակ Գուրդ-Հայ ժողովրդ. երգերու մասին ուսումնասիրութեան մը, բանասիրական իր մէկ երկն ալ Իզմիրեանցի ներկայացուցած: Ունի շահեկան տեսութիւն մը տարեցոյցիս մէջ (Ընթացք շարժման Հայ Յեղափոխութեան) Շահ-Բազէ ծածկանունով:

111. **ՍԱՐԳԻՍ ԳԱԼԻՆԱՆ.**— Էջմէցի (Կէյվէ), 23 տարու, յաճախած Բանկալիի Բագրատունի վարժարանն ու բժշկ. համալսարանը, Հնչ. Ուսանող. Միութեան անդամ:—Մեռ. Հայէպ:

112. **ԿԱՐԱՊԵՏ ԲԷՅԻՍՅԱՆ** (Շառլօ Պէյ).— Ռուսահայատակ սերունաւոր Սկիւտարցի:

113. **ԳԷՈՐԳ ԳՕՐՈՒՇԵԱՆ.**— Հաճընցի, 23 տարու, Պետ. Վարժապետանոցէն նոր ուսումնաւարտ, Հնչակեան, «Կայծառ» եւ «Հայ Դպրոց» խմբագրութեան անդամ, ծածկանունը՝ Գ. Շահպան:— Մեռ. Պապի մէջ:

114/116. **ՅԷՆԻԿԵԱՆ ԳՐԻԳՈՐ** հաբ եւ որդիք՝ **ԱՐԱՄ, ԳՈՐԵԳԻՆ.**— Ծնվածաւ Բերա, Կալաթա Սէրայ:— Պաղտատի Շինութեանց Գիծին վրայ տեսնուած, յետոյ անյայտացած են:

117. **ՅՈՎ. ԿՐԻՍՏԻԱՆ.**— Օհնկեաններու գործակիցը.— Նոյնպէս:
118. **ՏՆՆՐԱՆ ՊԱՂՏԻԿՍԱՆ.**— Խարբերդցի, գօլթճական, ուսուցիչ, Դաշնակցական:— Մեռ. Այալ:

119. **ՅՈՎ. ԶԼՕԿԻՐԵԱՆ.**— Կիւմիւշհանէցի: Դաշնակցական: Սահմանադրութենէն վերջ Ամերիկայէն գալով, Բերա՝ «Մինէրվա» դերձակատունը հիմնած: Եղբայր գրագէտ-ուսուցիչ Տիգրանի:—1919ի սկիզբները, ետամեայ իր տարագրութենէն դարձին՝ արկածի զոհ ի Զումրա:

Ե.— ՊՕԼԻՍ ԿԱԽՈՒՈՂՆԵՐ

120. **ՓԱՐԱՄԱՋ.**—Ծն. Ղարապաղ: Կուսակցութեան յայտնի գործիչներէն, — այլ անուամբ «Մատթէոս Սարգիսեան» կամ «Ռոտոսթոցի Համբարձում Դրեզոր» — որ մասնակցած է զանազան շարժումներու: Վանի ինքնապաշտպանողական կռիւներուն՝ մեծ դեր կատարելով, անունը երգերով նըրհրագործուած է: Հայ-թաթարակոն ընդհարումին առեն վարիչ ալ եղած է և թուուցիկներով ու բանակցութիւններով աշխատած՝ մերձեցում յառաջ բերելու երկու տարրերուն միջեւ: Անդամակցած է Կովկասի Հնչ. շատ մը մարմիններու և եղած կազմակերպիչներէն մին Կալեցիի տէրօրին, որով բազմիցս բանտարկուած ուս կառավարութեան կողմէ: Քէօթէնձէի պատմական ժողովէն յետոյ կուգայ Պօլիս և երկար դատավարութենէ մը վերջ կը դատապարտուի մահուան, իր 19 ընկերներուն հետ՝ որոնք են:



121



122

121. **ՏԻՐ. ՊԷՆՆԷ ԹՈՐՈՍԵԱՆ.** (Պետրոս Մանուկեան).— Ծնած է Հիւսէնիկ (Խարբերդ): «Եփրատ» Գօլթճէն 1903ին ընթացաւարտ՝ տարի մը ուսուցչութիւն ընելէ վերջ, կը մտնէ Պէյրութի Ամերիկ. Բժշկանոցը ուրկէ կը վկայուի և կ'անցնի Ամերիկա՝ իր մասնագիտութիւնը կատարելագործելու համար: Սահմանադրութենէն յետոյ Պօլիս գալով՝ կ'սկսի իր արուեստը կերարկել և շարունակել հասարակական գործիչի իր դերը:

122. **ԱՐԱՄ ԱԶԻԳՈՒՇԵԱՆ.**—Ծն. Արաբկիր, 55 տարու: Ուսումը հոն ստանալէ ետք՝ Պօլիս կուգայ և կը յաճախէ իրաւաբանական վարժարան: Ուսանողի տարիքէն յարբերութիւն մշակելով Մուրատի, Արփիարի,

ձանկիւնի եւ այլոց հետ կը մտնէ Հնչ. շարքին մէջ, այն օրերուն երբ Շմաւոն կը հասնի մալրաքաղաքս՝ նոյն կուսակցութեան սերմերը ցոյնելու: 97ի Գուռ-զափուի ցո ցին կազմակերպչներէն, Փաստաբանի վկայականը չստացած՝ կ'անդ-նի Եւրոպա, ուրկէ կ'ուղարկուի Փոքր-Հայք՝ կազմակերպելու հայ երիտասարդութիւնը: Երկար տարիներ արկածակից կեանք մը բոլորած եւ անձնուիրաբար դործած Շ. Գարաիսար, Սվազ եւն.: Դանիէլ Զավուշ իր խումբով Արամի օգ-նականն էր: 1905ի Պատգ. մալրական ժողովը կը կոչէ զինք անդամ կեդր. վարչութեան, պաշտօնն զոր կը վարէ ցվերջ, ինչպէս եւ ազգ. պ. շտաբներ: — Կալուածական սիջնորդութիւն ալ ըրած է Պոլիս, իբր կենսաշահութիւն:

123. ԳԵՂԱՄ ՎԱՆԻԿԵԱՆ.— Ենած է Վան, 20 տարու: Նին. կրթութիւնը երամեան վարժարանը ստանալէ վերջ կուզայ Պոլիս և 1913ին կ'ըն-դունի իրաւագէտի վկայական: Ուսանողական Միութեան հիմնադիրներէն, աշխատակից «Կայծ» ամսաթերթի և թղթակից «Հնչակ»ի:

124. ԵՐՈՒՅԱՆ ԹՈՓՈՒՋԵԱՆ.— Ենած է Պարտիզակ, 20 տա-րու: Ուսումը հոս ստանալով կը վարէ ուսուցչական պաշտօններ ծննդավայրին, Ատոփազարի և Կէլվէի շրջանի գիւղերուն մէջ: Աշխատակից դանազան թեր-թերու «Բանուր» ծածկանունով:

125. ՌՈՒՐԱԷՆ ԿԱՐՈՊԵՏԵԱՆ (Վահան Պոյաճեան). — Ենած է Զոհկածաք, 40 տարու: Իբր գործիչ՝ ապրած է Կովկաս, Թուրմանիա, Պուլկա-րիա և Ամերիկա: Սահմանադրութենէն յետոյ կուզայ Պոլիս և կը պարապի առեւտուրով: — Ազգ. երեսփոխան ընտրուած Զոհկածաքէն:

126. ՅՈՎ Է. ՏԻՐ ՂԱՋԱՐԵԱՆ.— Են. Կեսարիա 1878ին: Ուսումը հոն ստանալէ վերջ կը նուիրուի ուսուցչութեան, Մանուկ հասակէն ազդուած Զէլուլի եւ ժիրաբի յեղ. քարոզներէն՝ կը մտնէ անոնց կուսակցութեան մէջ եւ կը մասնակցի դանազան պատգ. ժողովներու, եւ Կիլիկիոյ Եղեռնին՝ իր ծննդավայրին ինքնապաշտպանութեան գործին, Ազատ-Ոստանիկի հետ: — Ան-դամ Կեսարիոյ Հնչակեան Մասնաճիւղին:

127. ԹՈՒՄՆԱՆ ԹՈՒՎՄԱՍԵԱՆ.— Են. Քիլիս, 27 տարու: Ու-սումը հոն ստանալով պահ մը դաստառութիւն ընելէ վերջ կ'անցնի Հալէպ, որուն վարժապետանոցէն վկայուած՝ կը շարունակէ ուսուցչ. պաշտօնն իր ծննդավ. յոր, նաեւ գործօն դեր մը կ'ստանձնէ տեղւոյն Հնչ. Մասնաճիւղին մէջ: — 1914ին կը բերուի Պոլիս:

128. ՅԱԿՈՒ ՊԱՍՄԱՃԵԱՆ.— Են. Քիլիս, 40 տարու: Կանուխէն Հնչ. արձանագրուելով կը նուիրուի մանուկանդ կրթ. գործին և 1902ին կը հիմնէ հոն «Ուսասիրաց» նախակրթարանը: Յետոյ կը բանտարկուի եւ Կիլիկիոյ կաթողիկոսին Քիլիս այդեղութեան առթիւ ներման կ'արժանանայ: 95ի շար-դերուն և Կիլիկիան Եղեռնի ատեն՝ ոգին կը հանդիսանայ ինքնապաշտպա-նութեան գործին, եւ որպէս զինագործ՝ մեծ դեր կը կատարէ: — Նախազա-հ Քիլիսի Հնչ. Մասնաճիւղին եւ հաւաքիչ Սինկէրի:

129. ՄՈՒՐԱՅ ՋԱԳԱՐԵԱՆ (Յակոբ Ղազարեան) — Են. Յրօնք գիւղը (Մուշ): Իր հայրենիքին տառապանքը կ'անուխէն միացուցած է զինք ևս բողոքարկու կարուանին: Փարամազի անբաժան ընկեր և Կալիցնի տէրօրիսթ-ներէն. մասնակցած հայ-թթր. ընդհ.՝ բուսներուն: — 1914ին մալրաքաղաքս մտած է «մասնաւոր պաշտօն»ով, — իմա՛ թալաթեան ուէժիմը տապալելու մտօք:

130. ՄԿՐՏԻՉ ՆՐԷՅԵԱՆ.— Են. Ապուլիս 1878ին: Ուսումը Խար-բերդ ստանալէ յետոյ կ'զբաղի առեւտուրով: Սահմանադրութենէն վերջ՝ ան-դամ Խարբերդի Հնչ. Մասնաճիւղին: Թալաթի հայահալած քաղաքականու-թեան նախորդուն կը բերուի Պոլիս անլուր տանջանքներով:

131. ԴԱՐՇԳԻՆ ՊՕՂՈՍԵԱՆ.— Են. Շ. Գարահիսար, Ալքալաշ-եանի սիրելին: Համիտեան ուէժիմին Կովկաս կ'անցնի եւ Սահմանադրութենէն ետք Պոլիս կուզայ: Սարաճահնէի մէջ վրանագործ: Իբր հեղինակ Արշակի Սահակեանի մահափորձին կը բանտարկուի:

132. ԱՐՄԵՆԱԿ ՀԱՄԱԿՐՁՈՒՄԵԱՆ.— Են. Տէրիզլի, 27 տա-րու, զէնք ու ուսմը շինելու արհեստին մէջ ճարտար եւ համաւաւոր նշա-նաճիգ: 1914ին Պոլիս գալուն՝ մատուցեան մը հետեւանօք կը ձերբակալուի, իբր դաւաճան իթթիհատի:

133. ԵՐՈՒՄԻԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Են. Թումարզա (Կեսարիա): Փոքր հասակէն Պոլիս պանդխտելով կը մտնէ Հնչակեան շարքին մէջ և կը մասնակցի տեղական յեղ. ցոյցերու: — Կօշկակար:

134. ԱՐՐԱԶՄ ՄՈՒՐԱՅԵԱՆ.— Կօշկակար: — Հնչակեան:

135. ՄԻՆԱՍ ԳԷՇԵՅԵԱՆ.— Այլ անուամբ «Սամսոնցի Սարը Խա-չիկ» կամ «Մինաս»: Են. Կեսարիա, 35 տարու: Մանուկ հասակէն մտած Հնչ. դրօշին տակ, Հայ-թթր. կոիւններուն՝ երեւան ու Շուշի պատասխանատու դեր ստանձնած. իր յողթանդամ դրսերեւոյթով՝ ահաբեկիչ:

136. ՍՄԱՅՏ ԴԵՂԵՅԵԱՆ (Անկուտի Պետրոս). — Են. Բաղէշ, 30 տարու: Թէեւ դերձակ քաջամարտ էր զինաշարժութեան մէջ եւ գործած Մուշ ու իր ծննդավայրը, որպէս հնարամիտ Հնչակեան:

137. ԳԱՌՆԻ ԳՕՅԱՃԵԱՆ.— Են. Շ. Գարահիսար, 35 տարու: Կանուխէն Պոլիս գալով՝ կ'զբաղի առեւտուրով (սրճագործութիւն) ու կը մտնէ Հնչ. շարքին մէջ: 1914ին կը ձերբակալուի իբր մասնակից թալաթի դէմ գոր-ծուելիք ռճրափորձի մը: Ազատ արձակուելու պահուն՝ պայման կը դրուի իրեն 30 ոսկի ճարել, 15 օրէն հատուցանելի: Այդ գումարն օրին չկրնալ հայթոյ-թելուն՝ կրկին կը նետուի բանտ: — Իր հուսկ բանքը՝ խոստովանահօր ուղղեալ. «Տէր Պապա, զնա՛ ըսէ որ 30 ոսկի չունենալովս համար կը կախուիմ կոր...»:

138. ՀՐԱՆՏ ԵԱՍԻՅԵԱՆ.— Արաբկիրցի, Բժշկական վարժարանի ուսանող:

139. ՊՕՂՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ.— Ակնցի ոսկերիչ, յառաջացած տարիքով:

1915 Ապրիլ 7/20ին, երբ Տարեցոյցիս տպագրիչ Մ. Յովակիմ-եանի հետ Պօլսոյ Պատերազմ. Ատեանի առջեւ վերջին դատավա-րութեանս՝ տարուան մը բանտարկութեան դատապարտուեցայ, նոյն գիշեր ի դիպահոջ մնացի վարի Մեծ Գօղուշը, տխուր առիթն ունենալով մէկիկ մէկիկ ճանչնալու վերոյիշեալ անձերը՝ որոնք անգիտակ էին դեռ սեւ վճիռին: Կեդր. Բանտ փոխադրուելէս

ամիս մը վերջն էր որ կ'իմանայի թէ անոնք իրենց ծանր կացութեան այլեւս իրազեկ՝ կը խնդրէին ինչ լուր մը հասցնել Պատրիարքարան : Բանտի մեր քահմանային միջոցաւ իսկոյն կարեւորը հաղորդեցի թէեւ , բայց Ձաւէն Սրբազան ոչինչ կրցաւ ընել , ցորչաի Թալաթ կը յամառէր Պատրիարքին այցելութիւնն իսկ չընդունելու : Եւ Յունիս 2/15ի լուսադէմին՝ բոլորը մէկանց բարձրացան կախաղան՝ Պատերազմական Ատեանի շէնքին առաջը , շատերու նման իյնալով Մեծ Երզնի ճամբուն վրայ : Այս քսան հոգիէն 7 ամիս վերջն էր որ Սուլթան Պայազիտ կախաղան կը բարձրանար :



140. **ՀՐԱՆՑ ԱՂԱՃԱՆՆԻՍԱՆ.** — 28 տարու կարնեցի , փաստըմաճեանի կեղծ մէկ նամուկը դիտուեալուր կերպով իր հասցէին դրկուելով իր դուռը ամբաստանուած : — Ընթացաւարտ Մարզուանի Գօլէճէն . 3 տարի Ամերիկա մնացած՝ առեւտր . զբաղումով , զոր շարունակած է յետոյ Մայրաքաղաքիս մէջ , եղբօրը հետ ընկերովի : Աներորդի՝ Պօլսէն տարագիր-նահատակ Արշակ Խաղխաղեանի :

1915ի գարնան , երբ Պօլսոյ կեդ . Բանտի տնօրէն եւ Թալաթի աջ բազուկ Իպրահիմ Խայրի կը մեկնի Պրուսա , Իզմիթ , Ատաիազար եւ շրջակաները՝ սկսելով իր սխրագործութեանց (ամենախիստ միջոցներով խուզարկութիւն , Հայերէ գէնքի հաւաքում եւլն .) , — Պօլիս կ'ուղարկէ հետեւեալ չորսը որոնք կը կախուին նոյնպէս :

141. **ԿԱՐԱՊԵՏ ՓԱԹՈՒԿԵԱՆ.** — Են . Պարտիզակ , 35 տարու , և հաստատուած Իզմիթ . փոքր հասակէն մտնելով Հնչ . շարքին մէջ՝ կը մասնակցի Պօլսոյ ցղցերուն : 1914ին կը ձերբակալուի իբր դաւաճան Իթթիհատի և կաշառք տալով ազատ կ'արձակուի . Յաջորդ տարին կրկին ձերբակալուելով կը բերուի Պօլիս :

142. **ԽՈՐԷՆ ԽՈՐԷՆՆԻՍԱՆ.** — Են . Ատաիազար , 40 տարու երկաթագործ , Հնչ . գործիչ , հմուտ զինաշարժութեան և ուռմբ պատրաստելու արհեստին , Ենդրապլայրին մէջ ընտրական պայքարներու ատեն թուրտ հակաթիհատական :

143. **ԱՄԱՍԻԱՅԻ ԳՐԻԳՈՐ ԳԱՅԵԱՆ.** — Պանդոկապետ Ա . փազար , 58 տարու , նիսկ . Հնչակեան , ապա Դաշնակցական որ 30 տարուան յեղ . գործունէութիւն մը ունեցած է : Իր միջավայրին ինքնապաշտպանութեան գործին ղեկավարը , շարտար՝ ուժանակ պատրաստելու արուեստին մէջ . Ատաիազարի մէջ ծանօթ՝ Ամասիայը յորջորջմամբ :

Ք . Մ Ս Ս

Գ Ա Ի Ա Ռ

Գաւառի եկեղեցականներ եւ բանակի մէջ ծառայող նահապետական բժիշկներ , ղեկավարներ եւայլն անջատակի ցուցակագրուած են և կենսագրական Բաժինիս վերջամասին մէջ :

Վ Ա Ն

144/148. **ԻՇԵԱՆ (ՆԻԿՈՂ ԱՅՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ).** — Են . Չարապաղ 1879ին և յապետած Շուշի Թեմական դպրոցը . կանուխէն կ'իջնէ յեղափոխական ասպարէզ . նախ կ'ընթացակցի Ք . Միքայէլեանի՝ Շուշի Դաշն . կոմիտէի մէջ և 1905ին կ'անցնի Վան ուր ցվերը կ'ապրի իբր ղեկավարական ղե-



144



149

կավար Վանայ շրջանին : Թիմար , Հայոց Ձոր , Գաւառ , Շատախ , — կեդրոններ ուր կը գործէ , կը զինէ ու կը կռուի անդուլ , գիւղացւոց պաշտպանութիւն առարկայ դառնալով : Անուս գեղջուկ մանկտին դաստիարակելու երանդէն տարուած , ընկերներու աջակցութեամբ բոլոր այդ տեղերը բանալ կուտայ բազմաթիւ դպրոցներ ուր կը դասախօսեն Վանի կեդրոնականէն ելլող երիտասարդներ : Այդ դպրոցներէն յիշատակելի է Աղթամարինը մանաւանդ . — Սահմանադրութենէն յետոյ Իշխան կը գործէ կրկին՝ գրչով ու լեզուով . կ'աշխատի «Աշխատանք» թերթին և բանախօսութիւններ կ'ընէ զանազան միթիւններու : Գղք . Ժողովի անդամ , մասնաւորապէս զարկ կուտայ կրթ . գործին : — 1914ին Շատախ ենթակայ կ'ըլլայ քիւրտ յարձակումի մը , դէպք որ ծանր համեմատութիւններ կ'առնէ : Կառավարութիւնը հարկ կը տեսնէ քննութիւն մը կատարել . Դաշնակցութեան տեղական մարմինն ալ քննիչ կը նշանակէ Իշխանը **ՅԱՄԸՆԱՅԻՆՆԻՍՈՎ** որոնք իսկզմն ճամբայ կ'իյն ան , սակայն կուտակալ ձեւութի սաղարանով՝ անոնք առաջին գիշերն իսկ քնացած պտենին կը խողխողուին Վերին Հայոց Ձորի կողմերը :

Առաջին արիւնն էր այս որ կը թափուէր Վասպուրականի մէջ, որմէ յետոյ Հայաշխարհի հողը ճակատագրուած էր ծայրէ ի ծայր ներկուելու կարմիրով, իր զետերն ալ ողողուելու դիակներով: Քասքնելի՛ տուամ, բեմադրուած՝ իթթիհատի ջոլի-րին կողմէ գերման ռեմիսիոնուութեամբ որ «ձերմակ կոտորած»ի գիւտն ալ երկնեց, յերկեմնից եւ ի խոնարհ մէկ միլիոն այս-չափ զոհերով՝ որոնց ճշգրիտ մահագրութիւնը կարողութեան սահմանէն դուրս է որ եւ է պատմագիրի: Պիտի թուենք ատոնցմէ յայտնիներն ու եղբրական վախճան ունեցողները մանաւանդ, — վերապրողներու կողմէ պատմուած, կամ լրագրութեան միջոցաւ ցարդ արծազանգուած, — ակամայ մոռցուածներ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ Բ. տպագրութեան առթիւ աւելցնելու առաջադրութեամբ:

149. ՎՈՒՄԵՍԱՆ (ՕՆՆԻԿ ԳԵՐՁԱԿԵԱՆ). — Են. Կօսկա (Պօլիս 1871ին. Նիսն. կրթութիւնը Սուրէնեան Վարժարանը ստանալով, Լ. Շանթի հետ կ'ուղարկուի էջմիածին և կ'աւարտէ ձեռնարանի շրջանը: Պօլիս դարձին, ռուսերէն լաւ գիտնալուն՝ ռուս նամակատունը պաշտօնի կը կոչուի, և այդ առթիւ կը նպաստէ շոգենաւերէն ու փանակի փոխադրութեանց գործին: Նոյն միջոցներուն էր որ կը հրատարակուէր Շահնազ՝ ըի «Հայրենիք»ը, որուն մէջ ունի շահեկան յօդուածներ Օգիմիյա Ծածկանունով: — Թուեալ Դաշնակցական, Պանքայի դէպքին՝ կը հալածուի ու կ'ապաստանի ռուս հիւպատոսարան: Ասիս ոչ հոն պահուեցողով Պուլկարի մը անցագիրը կ'աջողի ձեռք ձգել և անցնիլ Ֆիլիպէ ուր կ'սկսի հրապարակախօսութիւններ ընել: Կը մեկնի ժընէվ, և ատեն ոչ Դրօշակի խմբագրութեան մէջ կը մնայ: Հող էր որ իր ընկերներէն Վահայ ալ կը կոչուէր: Կ'անցնի Ամերիկա և անձնատուր կ'ըլլայ տեղագրին գործունէութեան մը, իբր լրագրող (Պօթընի Հայրենիքին խմբագիր), պայքարող և բեմախոս: 1907ին Կովկաս կը դառնայ և Սահմանագրութեան հըռչակուսին կ'երթայ Վան ուր — միշտ իբր հասարակական գործիչ — կը մնայ տարի մը: Պօլիս դարձին՝ կ'աշխատակցի «Ազատամարտ»ի. (անստորագիր խըմբագրականներէն ոմանք իր գրչէն ելած են): Բաւլամէնթական Բ. ընտրութեանց ատեն՝ Վանի մեպուս կ'ընտրուի: Քանի ոչ հեղ Վան ու Պօլիս իր առաքելութեանէն վերջ, Ընդհ. Պատերազմին սկիզբները հոն էր կրկին: Ինք ամէն ջանք թափեց՝ կանխելու համար այն չարիքը զոր իթթիհատ կը սաղմուէր: Կուսակալ ձէվտէթ Վանայ իշխանը սպաննելէ ետք՝ հեռաձայնով իր մտ կը հըրաւիրէ Արամն ու զինքը: Վուամեան կը գրէ ընկերոջը. «Ես կ'երթամ կոր, դուն կեցի՛ր»: յետոյ կը մեկնի պաշտօնատուն, ա՛լ չվերադառնալու պայմանաւ: — Հայ վերածննդեան անխախտ դաւանանքով և Հայ Յեղի մասին ունեցած իր բարձր համարումով, անիկա պիտի ապրի մեր ժամանակակից պատմութեան մէջ իբր մոլեռանդ հայրենասէր:

150. ԱՐՏԱՇԷՍ ՍՕԼԱՐԵԱՆ. — Են. Վան: 1901ին Երամեանէ ընթացաւարտ՝ կը պարապի ռուսացութեամբ և 1908ին կը կազմակերպէ Ծննդավայրին թատրոնը, բեմադրելով իր հեղինակած Ընթանիլը, նաև ուրիշ թատրերգութիւններ: Բացի այդսահայ թերթերու իր աշխատակցութեանէն՝ 1906ին կը հրատարակէ Առաջ իմրատիպ հանդէսը, յետոյ Կոյնակը որուն կը միանայ Բրուտեան: — Ինք և ստորեւ նշանակուած 4 ընկերները տեղւոյն Հնչ. կուսակցութեան վարիչներն էին, որոնք՝ հակառակ Բէօսթէնձէի ծանօթ ժողովին համաձայն չըլլալուն՝ մինչեւ ապստամբութեան օրը (17 Ապր. 1915) բանտը կը մնան և հոն կ'սպանուին ձէվտէթի հրամանով, մինչ անդին կը շարունակ-

ուէր համակուսակցական և համաժողովրդական հերոսամարտը, Դաշնակցականներու ղեկավարութեամբ:

151. ՏԻԳՐԱՆ ՕՏԵԱՆ (ԱՍՕ). — Են. Վան 1880ին և հոն ստացած նին. կրթութիւնը: Ուսուցիչ Պարսկաստան 1896-1906, որմէ յետոյ մտած Հնչ. շարքին մէջ, աշխատակցելով նոյն կուսակցութեան օրկաններուն եւ այլ թերթերու՝ զանազան ծածկանուններով: Հրատարակած է Երկիր թերթը: Հեղինակ Կարմիր օրեր, Հաւսե, Դասասան, Վահե, Դիւցազնուհի եւն. գրքակցութեան: [Իր եղբրական վախճանը տե՛ս № 150]:



152. ԱՐԲ ԲՐՈՒՅԵԱՆ. — Են. Վան՝ որուն Կեղը. Վարժարանէն ընթացաւարտ 1905ին: Յետոյ կը մտնէ Հնչ. շարքին մէջ և կ'արտայայտուի իբրև վարժ բեմախօս: [Իր եղբրական վախճանը տե՛ս № 150]:

153. ԿԱՐԱՊԵՏ ՏԱՆԹԷՅԱՆ. — Ուսուցիչ տեղւոյն վարժարանին և աշխատակից Կոչնակի: Հնչակեան: [Իր եղբրական վախճանը տե՛ս № 150]:

154. ՀԱՅԿԱԿ ԵՐԷՄԻՇԵԱՆ. — Հնչակեան: Համեստ ուսումով, բայց մարզակոն մեծ ընդունակութեամբ: [Իր եղբրական վախճանը տե՛ս № 150]:

Ի Ա Ր Բ Ե Ր Դ

155. ԵՐՈՒԱՆԳ ՍՐՄԱՔԷՇԵԱՆԼԵԱՆ (ԵՐՈՒՆԱՆ). — Են. Հասքէյ (Պօլիս) 1870 Յուլիսին: Ներսէսեանի, ապա Կեղըրճականի սան: Պատանի հասակէն «Երուանդ» ամուսնի կ'աշխատակցի «Ճ. Շարգիէ»ի, «Արեւելք»ի ու «Մասիս»ի, մեծ մասամբ ձըզնորաներու կեանքէ քաղուած սրտայայտ նորովէպերով: Ի՞նչպէս շատերու պէս ինք ալ Վառնա կը գաղթէ և կը պարապի ռուսացութեամբ: Հոն է որ կը հրատարակէ Շարժում թերթը (որ ետքէն փոխանցուած է Վարդոյի) և Շաւիղ հանդէսը: Նաև աշխատակցութեան լաւն ըստին մը կ'ուսննայ քաղաքամտէր Օ. Բարսեղեանի լոյս ընծայած Վիպարներին խմբագրութեանը մէջ: Վառնայէն էր որ կը թղթակցէր «Բիւզանդիոն»ի, գրաքննութեան խստութեան հետեւանօք՝



«Ե. Գաղթական» ծածկանունով: 1904ին Եգիպտոս անցնելով, կը շարունակէ գրագէտի և ուսուցիչի իր զբաղումները: Կ'ամուսնանայ և Աղեքսանդրիոյ մէջ Ս. Բիւրատի հետ լոյս կ'ընծայէ Սխառան ամսաթերթը, ՁԹԻ միայն: Արփիարի

մահէն վերջ՝ խմբագրապետ Վուսաբերի և աշխատակից Անահիտի: — Սահմանադրութեան հռչակումին, թրքահայ փախստական բոլոր մտաւորականներուն պէս՝ շունջը Պօլսի կ'առնէ և կ'ստանձնէ Արեւելքի խմբագրապետութիւնը — Տքթ. Թօփչեանի տեղ, — ստիով որը օրին ջղուտ առաջնորդներ և «Ազատ կարծիքներ»: — Ազգ. երեսփոխան ընտր. Բաբերդէն: — Տաղտկացած լրագրական ապերախտ ասպարէզէն, Երուանդ կը մտնէ աւելի մպերպտ ասպարէզէ մը ներս. Տնօրէնութեան կը կոչուի Սկիւտարի Ս. Խաչ վարժարանին, պաշտօն զոր 3 տարի կը վարէ և 1913ի աշնան կը հրահրուի Խարբերդ, ստանձնելով տեսչութիւնը տեղւոյն ազգային դպրոցին և հոնկէ թղթակցելով «Փամանակ» օրաթերթին:

Կուզայ Ահաւոր Տարին, 1915: Հալածանքը կ'սկսի. դպրոցները կը փակուին, եւ մտաւորականը — յայտնի դէմքեր բոլոր՝ կղերական, ուսուցչական, փաստաբանական եւ առեւտրական դասէն — կը լեցուին Մէզրէի բանտը, մատնուելով անլուր տանջանքներու. յետոյ կալանակապ՝ կը տարուին խուճք խուճք: Եւ գլուխներ կ'անձրեւեն գետին, արիւնի շատրուաններով . . . :

Գրչի ու միտքի անհամար մեր վաստակաւորներուն պէս՝ Սրմաքէշեան լեան չունի գերեզման, որուն վրայ մեր արցունքն ու ծաղիկը թափէինք օր մը: Բայց կը թողու տարաբախտ իր ը'կերներուն պէս նոյնքան նուիրական բաներ՝ մեր յարգանքին ու հիացումին առարկայ, — իր գործերը: Վէպերէն յիշատակելի են Կեանքին մէջ ի որագործ նորավէպերու ժողովածոն, Մեծուած սերը (Վառնա տպ. ապա թերթօն «Արեւելք»ի մէջ Ամիրային աղջիկը խորագրով) և Հարսգաս որդին զոր թատերագութեան վերածած է ի Խարբերդ: — 1913ին թարգմանած է էտ. Տոկուի Արեւելեան խնդիրը եւ Հայկ. Հարցը. իսկ 1894ին՝ Շ. Տիւրքի Բարոյագիտութիւնը:

156. ԹՂԿԱՑԻՆՑԻՆ (ՅՈՎ. Հ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ). — Ծն. 1860ին Խարբերդ. ուր ստացած նին. կրթութիւնը, ինքնաշխատութեամբ իր ուսումը



156



157

զարգացուցած, կը նետուի ուսուցչական ասպարէզ՝ նախ Խուփսի (Գղի) դպրոցը պաշտօնավարելով, յետոյ Ծննդավարին մէջ անհատական ջանքերով հիմնելով կրթարան մը զոր կ'աջողի կանգուն պահել ցմահ և հասցնել բազմաթիւ սաներ, որոնցմէ յիշենք Ռ. Զարդարեանը, Երկար տարիներ վարած է նաև Ս.

Յակոբ Թաղի վարժարանը: Հակառակ դաստիարակի իր կոչման հաւատարիմ մնալուն, բարձի թողի չէ ըրած բնաւ գրականութիւնը զոր շէնցուցած է համով հոտով արձակներով, — պատմութեամբ, աւանդավէպ, թատերագութիւն — բոլորն ալ թրքահայ և արտասահմանեան թերթերու մէջ ցրցնուած: Ատոնց մէջ գաւառի Հառն նահապետական ու թշուառ կեանքը կը ցլանայ՝ ինքնատիպ, քիչ մըն ալ խրթին լեզուով մը ուր բանասէրը պիտի գտնէ հարուստ մթերք մը գունազեղ բառերու եւ յատկաբանութեանց: Ամենացցուն դէմքը գաւառիկ գրականութիւնը մշակողներու շարքին մէջ, (Խրթեանի Սրուանձտեանցի ու Գեղամի նման), զոր Մեծ Եղեւնին. — Գործերէն յիշենք Ռ'ր մեկուն ետեւեւ եւ էնդի դիմեւ ուշագրաւ թատերախաղերը: Կը թողու շատ մը անտիպներ ուրոնք թէեւ խնամով հուշագրուած ու սրահուած էին աղէտէն հրաշքով ազատող հայրենակից իր սանին՝ Վահէ Հայկի կողմէ, բայց կ'երթարուին փճացած ըլլալ:

157. ԲՐՕՅ. ԿԱՐԱՊԵՏ ՍՈՂԻՆԵԱՆ. — Ծն. 1874ին Խարբերդ որուն Գօլէճէն ուսումնաւարտ: Լեզուագէտ եւ քիմիաբան, պաշտօնավարած «Յփրատ»ի եւ Թլկատինցիի դպրոցը: Ինստուական թուականներուն իրրեւ մը տերիմ Ռ. Զարդարեանի՝ հետեւած գր. շարձումն եւ գրած բնաստեղծութեանց հատոր մը (անտիպ): Աշխատակից թրքահայ եւ ամերիկահայ թերթերու. Ծածկանունը «Կամար»: 1910ին կ'սկսի հրատարակել Նփրաս կիսամսեան զոր կը շարունակէ մինչեւ աղէտալի տարին: Գանակոծումի հետեւանօք մեռած Խարբերդի ամերիկ. հիւանդանոցը: [Զգոթել զինք՝ իր մտաւոր ազգականներէն Բրօթ. Սադիկ Սողիկեանի հետ որ 1915ի կարին կը գտնուէր, իբր թարգման գերմ. հիւպատոսարանի՝ որուն շնորհիւ փրկուած է]:



158



159

158. ԲՐՕՅ. ՄԿՐՏԻՉ ՈՐԱՆՐԵԱՆ. — Ծն. Մալաթիա 1870ին, հօրեղծօրորդի բանաստեղծ Ռուբէնի: «Յփրատ»էն ուսումնաւարտ. բեմաւայ և մամնազէտ երկրաբանութեան և աշխարհագրութեան, 15 տարի պաշտօնավարած Խարբերդ: Ունի մակրօկն. ու գիտ. յօդուածներ գաւառական և պօլսահայ թերթերու մէջ: Վերջերը կ'ուզեւորի Ամերիկա և իբր համարարանական՝ վերադարձի տարին (Ընդհանուր Պատերազմ) Խարբերդ գտնուելով, բանտը մտագար վիճակի մէջ կը նահատակուի:

159. ԲՐՕՅ. ՅՈՎ. Հ. ՊՈՒՃԻԿԱՆԵԱՆ. — Ծն. Զնգուշ 1873ին, Ուսումնաւարտ «Յփրատ» գօլէճէն ուր բաւական ատեն փիլիսոփայութիւն և

մանկավարժութիւնն աւանդելէ վերջ՝ կ'անցնի Ամերիկա ու կը լրացնէ նոյն ճիւղերուն բարձր դոյն դասընթացը: Պատերազմէն 5 տարի առաջ խորքերդ դարձին տեսուչ կը կարգուի Գօլէճին, մինչեւ 1915, նահատակուելով տեղւոյն մտաւորականներու հոյլին հետ: Աշխատակցած էր թրքահայ և ամերիկահայ թերթերու՝ նշանակելի յօդուածներով:

160. ԲՐՈՅ. ՆԻԿՈՂՈՍ ԹԷՆԷՐԷՃՅԱՆ. Ծն. 1863ին Խորքերդ որուն Գօլէճէն ուսումնաւարտ՝ երկար տարիներ աւանդած է հոն պատմութիւն, թուրքերէն եւլն.: 1904ին իր 25ամեակը տօնուած է հանդիսաւորապէս: 34 տարուան իր պաշտօնավարութիւնը եղած է անշուկ և խորապէս տըպաւորիչ՝ դաստիարակող սերունդին վրայ: Ազգապետ Խորքերդի շրջանին:



160



161

161. ԲՐՈՅ. ԽԱԶԱՏՈՒՐ ՆԱՀԻԿՅԱՆ. Ծն. Հիւսէյնիկ 1860ին: Թէնէքճեանի հետ «Ինքիտա»ի առաջին ուսումնաւարտներէն: Յոբելեար: Մասնագէտ ուսողական գիտութեանց և աստղագիտութեան: Վաղեմի և բազմադիւն դաստիարակ:

162. ԲՐՈՅ. ՏՕՆԱՊԵՏ Կ. ԼԻՒԼԷՃՅԱՆ. Ծն. 1876ին Խորքերդ որուն Գօլէճէն ուսումնաւարտ: Հոն երկար ատեն պաշտօնավարելէ վերջ՝ 1908ին կ'անցնի Ամերիկա և կ'ամբողջացնէ Բօրնէյլի և Ելլի համալսարաններուն դասընթացը: Ծննդավայրը դարձին՝ կը շարունակէ իր պաշտօնը, իբր մասնագէտ կենսաբանութեան, բուսաբանութեան և կենդանաբանութեան, մինչեւ հալածանքի տարին, ինք ալ մասնակից ըլլալով ընկերներու խոշտանգումներուն: Հիւանդ կը փոխադրուի Ամերիկ. հիւանդանոց ուրկէ կ'աջողի իւրոյ տալ Տէրսիմ, հոնկէ ալ Կովկաս, բայց չտոկալով զաղթականական կեանքի տօժանքին՝ կը մեռնի Կարին: — Թարգմանած է Լօկֆէլլիի Իվանիչիկը: Կը թողու անտիպներ: Աշխատակից թրքահայ և ամերիկահայ թերթերու: — Թաւշանճեանի մրցումին շահած Գ. մրցանակ: — Գր. «Ծածկա՞նունը «Բագրատ»:

163. ԺԻՐԱՅԻ ՅԱԿՈԲՅԱՆ (Սարգիս Նալբանտեան). Ծն. Խորքերդ 1890ին: Ուսումը կ'ստանայ Գօլէճի և Թիւրքիստանի դպրոցին մէջ: Ամերիկա անցնելով, կը վարէ թերթերու խմբագրութիւններ: 1912ին կը մեկնի Վենետիկ, ուրկէ գաւառ, ստանձնելով տնօրէնութիւնը Միացեալ Ընկերան Հանրապետութեան:

ւաւի դպրոցներուն: Աշխատակից պօլսահայ պարբերականներու և տարեցոյցներու: — 1915 Յունիսին խորքերդի բանտը նահատակ:

164/167. ՊԱՅ. ԴԱՐՈՋԻՉՆԵՐ. Կիրակոս խաչատուրեան (տեղացի, 65 տարու), Չաքար Եղիկեան (տեղացի, 55 տարու), Պետրոս Պետրոսեան (տեղացի, 45 տարու), Սամուէլ Մանուկեան (Կիւրնիցի, 35 տարու):

168/177. ՌՍՈՍԻՅԻՉՆԵՐ. Գովհ. Տինկիլեան (Մարզուանցի գօլէճական), Յովհ. Աղանիկեան (Պօլսեցի, 35 տարու, Կալաթա Սէրայէն ընթացաւարտ), Արամ Սրապեան (տեղացի, 37 տարու, ուսած Վերնետիկ և այլուր, Ե. Սրմաքէշխանյանի պաշտօնակից), Արմ. Օնանեան (տեղացի գօլէճական, 32 տարու, թուրքէտ), Յովս. Մալեմեղեան (տեղացի գօլէճական, 31 տարու, Հնչ.), Գեղամ Սամուէլեան (տեղացի, 40 տարու, Թիւրքիստանի սան), Գաբր. Դանիէլեան, Գար. Կոստանդեան, Յակոբ Տինճեան, Արմ. Յովակիմեան (տեղացի գօլէճականներ):

178/184. ՓԱՍՏԱԿԱՆՆԵՐ. Ասատուր Ժամկոչեան (տեղացի, 55 տարու), Մուրատեան (ակնցի, 50 տարու), Յովհ. Չարդարեւ. ն (տեղացի, 37 տարու), Գէորգ Բէլէշեան (տեղացի, 40 տարու, նաև ուսուցիչ, երթաշտագէտ և հեղինակ Ոսկեղեմ Դանալի ա՛ գլ. դասագիրքին, Յակոբ Շուշանեան (Ռոտոսթօցի, 37 տարու, նախադատ ատենանի անդամ), Սեդր. Տիւրքիլեան (տեղացի, 32 տարու), Արամ Տապաղեան (Տիգրանակերտցի, 35 տարու):

185/186. ԳՈՐԾԻՉՆԵՐ. Յարութիւն Սէմէրճեան (Հնչակեան, հերոս Յարէթի և Յակոբի ընկերներէն՝ որոնց հետ 1905ին ձերբակալուելով, խորքերդի կառավարական շէնքէն վար կը նետուի և սրունքները կը կորսնցնէ՝ չարչարանքի տակ զաղտնիք չխոստովանելու մտադրութեամբ: Սահմ. հոչակումին՝ բանտէն ազատ արձակուած): — Սարգիս Էլճանեան (տեղացի, 35 տարու, Հնչակեան տէրօրիսթ):

Ս Վ Ա Ձ

187. ՎԵՐ. ՄԻՀՐԱՆ ԳԱԶԱՆՃՅԱՆ. — Հովիւ Աւետարանական Հայոց Սվազի, 55 տարու:

188. ՄԻՀՐԱՆ ԻՍՊՈՐԵԱՆ. Ծն. Սվազ 1873ին: Ուսումը կ'ստանայ Հալէպի Փրնս. և ազգ. դպրոցները, յետոյ Սիսի Ժառանգաւորացը՝ 6 տարի: Կը շրջի ամբողջ Կիլիկիա և Ասորիք, և կ'այցելէ Եգիպտոս ու Ֆրանսա: Հոյ և Փրնս. լեզուներու ուսուցիչ՝ ծննդավայրին ազգ. վարժարանը՝ 5 տարի, իսկ տասնեակ տարիներէ ի վեր Ազգ. Որբանոցի տեսուչ-դասախօս: Աշխատակից թրքահայ թերթերու՝ Վոյր, Եսփէրօ, Նարհիմ, Պուէտ, Մուշեղ և Տորք Ծածկանուններով: — Իր հոյիստակից գրչի եղբայրը ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԻԿԵԱՆ կ'ենթադրուի պրծած ըլլալ թուրք եւթաղանէն, աքսորադարձ Սերաստացիի մը վկայութեամբ համեմատ: — Երկերը. Խոյցեմ դուրս պատկերն' ի, Սր ի Լեւ, Գրական ջրգաններ, Հայաստանի ողբ: Կը թողու գր. և բանասիր. գործեր ձեռագիր:

189. ՍԵՆՆԻՐԵՐՄ Է. ԳԱԼԵՕՆՃՅԱՆ. Ծն. Լնտիլէս (Սուշէհր) 1882ին: Սվազի Ամերիկեան և Մարզուանի Անաթօլիա Գօլէճներէն ընթացաւարտ, յաջորդաբար կը դասախօսէ Սվազի Ամերիկ. և Շ. Գարահիսարի:

ազգ. վարժարանները՝ հայերէն ու պատմութիւն։ Աշխատակից թրքահայ թերթերու։ — Երկերը. Պուստայի Աւեսարանը, Չարիի հարցը, Կապոյտ բուռնը (Մէթերլինկէ թրգմ.), Չգիտականութիւն (թրգմ.)։ Կը թողու անտիպ Հայուն դերը ֆաղափարքեան պատմութեան մէջ ստուար գործը (վերջին անգամ ղրկուած իզմիրեանցի) և կարգ մը թարգմանութիւններ անգլիերէն։

190. Ս. ՄՈՒՐԱՏ (ՏԷՐՏԷՐԵԱՆ). — Են. Խորոխոն գիւղը (Սվազ)։ Ուսումը հոն ստանալէ վերջ կուգայ Պօլիս և կ'աշակերտի Ռօպէրթ Գօլէճի Մանելով Հնչ. շարքին մէջ, կը վարէ մարտական խումբեր Պարսկաստան և Թուրքիա, յանաւանդ այն արշաւախումբին որ կ'անդէր Հայաստան, երբ Անդրանիկի 1904ի Սասնոյ շարժումներէն յետոյ՝ այդ շրջանի ժողովուրդը կը մնար անշարժական։ Սահմանադրութենէն վերջ Պօլիս գալով կը վարէ պատասխանատու պաշտօններ. յետոյ կը մեկնի հայրենիք ուրկէ 1915ին ճամբայ հանուելով նա՝ հաստակ։



191

191. ԿԱՐԱՊԵՏ ՊԱՐԱՍՄ ԻԱՆ. — Տեղացի, 34 տարու։ Սահմանադրութենէն ետք իր սպարմը կ'ունենայ, ուրկէ լոյս կը տեսնի Հողդար, ապա Կափիտա թերթերը որոնց տէր և տնօրէն էր), Վարուժանի «Տրտու» ջգես. Տէմիրճիպաշեանին և գաւառացի գրողներու կարգ մը գրքոյկները։

192. ԳԱՆՆԻԿ ԹՈՒՂԱՆՃԵԱՆ. — Են. Պօլիս 1888ին, Նիսն. Կըրթութիւնը ստացած է Նտիգուլէի Ազգ. որբանոցը, յետոյ Կեդրոնական՝ ուրկէ շրջանաւարտ. Խմբագիր Մանգումի և Յիւր. Ս. Յիւր. եանի Օրագիրին։ — Անցած է Բարիզ՝ ուսումը կատարելագործելու համար, Դարձին, Սանասարեա՝ ի խնամակալութենէն Ֆրանսերէնի ուսուցիչ կարգուելով՝ մեկնած է Սվազ։

193 ՄԱՆՈՒԷԼ ՏԷՏԷՐԵԱՆ. — Են. Եօզղատ 1885ին. Ուսումնաւարտ Կարինի Սանասարեանէն որուն ծախքովը կը ղրկուի Վիէննա, սորվելով մանկավարժութիւն, Միթթարեանց ուսումնարանն ալ հաւերէն եւլն.։ 1909ին կը դառնայ Կարին ուր կը պաշտօնավարէ մինչեւ 1912, և վարժարանին Սվազ փոխադրուելովը կ'անցնի հոն նոյն պաշտօնով։

194. ԼԵՒՈՆ ԳԱՆՔՈՒՐԵԱՆ. — Են. Թօգաթ 1885ին. Կարինի Սանասարեան և Պօլսոյ իրաւաբանական վարժարաններէն ընթացաւարտ. — Սվազ փոխադրուող Սանասարեանի մէջ կ'աւանդէր Թուրքերէն։

195. ԱՐԱՄ ՅԱԿՈՒՅԱՆ. — Պօլսեցի 38 տարու։ Սանասարեանը լրացնելէ վերջ՝ Աբիկ Ունճեանի ծախքով կ'ուղարկուի Բարիզ և կը վկայուի Սօսպօնէն, Սանասարեանի ուսուցիչ Կարին-Սվազ։

196. ԽԱՉ. ԿՐՏՈՏԵԱՆ. — Են. Դավուա գիւղը (Սվազ), 32 տարու։ Սանասարեանէ ընթացաւարտ՝ կ'սկսի պաշտօնավարել հոն, ապա ծննդավայրին

ազգ. դպրոցը. Յաջորդաբար տեսուչ Արամեանի և ազգ. որբանոցի. Աղէտի օրերուն լեռ ելած և բախումներէ վերջ գիւղ դարձին՝ գնդակահար. — Դաշնակցական։

197. ՄԻՔ. ՅՐԷՆԿԻՒԼԵԱՆ, — Տեղացի 30 տարու, Ամերիկայի Օպրլէն Գօլէճէն վկայուած. 1911էն ի վեր գիտութեանց ուսուցիչ Սվազի վարժապետանոցը, հիմնադիր Մանչ-Ասպետներու (պօլսքաութ) միութեան։

198. ՌՈՒՐԷՆ ՐԱԳՈՒՊԵԱՆ. — Մանճրլըքցի, 35 տարու, Ամերիկայի Քըլմպիա համալսարանէն վկայուած և վարած «Կոչնակ» խմբագրութիւնը. 1912էն ի վեր մանկավարժ-հոգեբան Սվազի վարժապետանոցը։

199. ՀԱՄԱ. ՊԼԷՃԵԱՆ. — Տեղացի, 40 տարու, Ժընէվի համալսարանէն վկայուած. Ուսուցիչ Սվազի վարժապետանոցը։

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ ԵՒ ՈՒՐՅԱ

Մեծ ու Փոքր Հայրի բնակչութիւնն ամբողջ — 1915ի գարնան — կ'ենթարկուէր աննախընթաց պատուհասի մը որ մէկէնիմէկ իր արեւը խաւարեցուց։ Յանկարծական Տեղսհանութեան երեւոյթին տակ տեսակ մը Չուլում էր առիկա. բռնի հաւատափոխութիւն, անլուր հարստահարութիւն եւ զարհուրելի սպանդ՝ իրենց աղծապիղծ սարօքը։ Հայը վտարանջուրմի ո եւ է շարժում ընելու անատակ զգաց ինքզինք, վասն զի Կառավարութիւնը նախօրօք հաւաքել տուած էր ամէն աւարկայ որ կրնար ծառայել անոր ինքնապաշտպանութեան գործին։ Միւս կողմէ, մեր երիտասարդութիւնը հեռացած էր հայրենի կոտորէն՝ զինուորական պարտաւորիչ ծառայութեան հետեւանօք։ Տուե-տեղ դատարկացած այսպէս զէնքերէ եւ կորովի բազուկներէ, դիւրին եղաւ Իթթիհատի ջոխին՝ իր վայրագութեան ժահրը թափել այն անվերջ կարաւաններուն վրայ որոնք շարան-շարան կը քակուէին Մայր Հայրենիքէն, վայրափառին ու թշուառ։ — Անմոռանալի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ եւ ՄՈՒՇԷՆ յետոյ, Հայաշխարհի բոլոր քաղաքներէն ԳԱՐԱՀԻՍԱՐ եւ ՈՒՐՅԱ եղան միայն, որ — իբր պանծալի բացառութիւն — թատր հանդիսացան դիւցազնական դիմադրութեանց, որովհետեւ տեղացի Հայեր նախատեսած ու խորաչափած էին Աղէտին անհազնութիւնը։ Անհաւասար կուրի այդ թոհուբոհին՝ որ շաբաթներ տեւեց, ստոյգ է որ գրէթէ՛ ո՛չ ոք մնաց վերապրող, բայց զոնէ ոչխարի համակերպութեամբ անճիտուիլն անձանթ մնաց իրենց։ — Ահա՛ քանի մը դէմքեր։

200/202. ՎԱՀԱՆ Ն. ՀԻՍՍԻՍԵԱՆ. — Շ. Գարահիսարցի, 28 տարու։ Ազգ. վարժարանի ընթացքն աւարտելուն՝ կ'ստանձնէ հօրը վաճառատուը

կառավարելու հոգը Այդ ասպարէզը չկասեցնեք սակայն հանրային գործունէութեան իր եռանդը: Կանուխէն մտնելով Դաշնակցութեան շարքին մէջ, շարունակ ինքնազարգացումն հետամուտ, կը դառնայ անխոնջ կազմակերպիչը տեղւոյն երիտասարդութեան: Գարակէօզեան, Օզանեան և Չպուքճեան իր ընկերներուն հետ կը հիմնէ լսարան, թատրոն, արհեստակցական միութիւններ և գիւլէ գիւղ կը շրջի՝ դպրոցի ու բարձրագույն դաստիարակչութեան: — Ապրիլի ձերբակալութիւններէն առաջ, Ձէթէներ բախում մը կ'ունենան Հայերու հետ Բիւրք գիւղը, որուն հետեւանքով Գարակէօզեանի հետ ինք ալ կը փնտուռի՝ իբր գէնքի հայթաթիչ: Վահան կը պահուցուի և չդադրիր իր թագստոցէն խրախուսել տղերքը՝ պատրաստ գտնուելու մտալուտ աղէտին: Հայրը ՆԱԶԱՐԱԿ ԶԻՒՍԻՍԵԱՆ իրեն տեղ կը տանին Սվազ՝ որ կախաղան կը բարձրացնեն Դաշնակց. ՓԻՏՄԻՆ հետ: — Այնուհետեւ կ'սկսի պատմական Բերդէն (ուր ապաստանած էր քաղքին հայ բնակչութիւնն ամբողջ) այն հերոսամարտը որ ամսա մը կը տևէ և որուն զեկավարը կը հանդիսանան Քաջն Վահան և անմուռանալին շրջակայ Աղբար: Այդ անհաւասար կռիւն՝ խումբին մնացորդը հուսկ ուրեմն կ'աջողի պաշարման գծը կտրելով լեռ քաշուել, և — Լիճէսէի մտ — մինչեւ յետոյ կապար շարունակել դիմադրութիւնը՝ որուն ընթացքին Վահան կ'իյնայ զնդակահար:



203. ՀՄԱՅԵԱԿ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ { երկուքն ալ տեղացի, ու-
204. ԻՍՐԱԵԷԼ ՕՋԱՆԵԱՆ. — սուսական Դաշնակցական-
ներ, որոնք դպրոցին հոգը կ'ստանձնեն երկար ատեն: Վերջին աղէտին՝ Բերդին մէջ ինքնապաշտպանութեան ղեկավարները կը հանդիսանան և կը զոհուին քաջաբար: Առաջինին թաղումը կը կատարուի յուղիչ հանդիսաւորութեամբ՝ կռիւի ընթացքին:

205. ՏԱՃԱՏ ԶՊՈՒԲՃԵԱՆ. — Տեղացի Դաշնակցական գործով կ'ուղևորի էնտրէս, Զառա և Սվազ Համիտեան Ռէժիմին՝ սուսականի դիմակին տակ: Իբր նկարիչ՝ խոստմալից տաղանդ մը: Աղէտի օրերուն՝ Իտատիի մէջ գտնուելով, չաջողի Բերդ բարձրանալ ու կը նահատակուի:

206. ԼԵՒՈՆ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ. — Երես է Շ. Գարահիսար՝ ուր իր նիւն կը թուրիւնը ստանալով կը մտնէ առեւտր. ասպարէզ: Դաշնակցական: Բերդին ինքնապաշտպանութեան ատեն կուռուզ և նահատակուողներէն, որոնց կարգէն են դարձեալ հետեւեալները:

207/210 ՀԵՐՈՍ ՏՂԵՐԻ. — Հմայեակ Մարկոսեան, Հմ. Գարեպեան, Արտաշիկ և Յակոբ Պուռնաղեան, չորսն ալ Դաշնակցական:

Իսկ կռիւէն քանի մը օր առաջ քաղքին մէջ

211/213. ԿԱՆՈՒՈՂՆԵՐ. — Մ. Բարունակ Սարգսեան, Արշակ Բիգրեան, Յովհաննէս Պողոսեան:

214. Տ. ՍՈՓՈՆԻԱ ԿԷ. ԿԱՐՆԵԱՆ. — Դարձեալ կռիւէն առաջ, ատենօք Հաղերու հետ լուսանկար հանած ըլլալուն՝ իբր յեղափոխական ամբաստանուելով դէպի Կարին ճամբայ հանուած և սպանուած է:

ՈՒՐՅԱ հուսկ ուրեմն թնդանօթը գործեց եւ քարուքանդ ըրաւ քաղաքը: — Յիշենք քանի մը անձեր:

215. Գ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ. — Տեղացի ուսուցիչ, ապա քահանայ ձեռնադրուած: Վաղեմի թղթակից պոլսահայ թերթերու Գ. Կ. Ո. սկզբնատուերով:

216. ԱՆԳՐԱՆԻ ԳՕՋԱՃԵԱՆ. — Խարբերդցի, 30 տարու, ազգային վարժարանի տնօրէն:

217. ՊԱՏ. ՍՈՂՈՄՈՆ ԱԳՁԷԼԵԱՆ. — Այնթապցի, 37 տարու, Ուրֆայի Աւետարանական Հայոց հովիւ: — Խաչուած:

Ե Օ Ջ Ղ Ա Տ

Ի՞նչ գրել անոր զոհերուն մասին. ո՞ր մտաւորականը, փաստաբանը, կամ ազգային ու կրթական գործիչները կենսագրել, երբ տեղւոյն թիւրք առջի բնակչութենէն քանի մը խլեակ հազիւ կրնանք վերապրած տեսնել: Եօզղատի առաջնորդ հէ՛ք ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ (*) որ կեանքիդ բոլոր շրջաններուն մէջ չարչարա՛նքը միայն ճանչցար, Համիտի օրերէն մինչեւ կեղծ Սահմանադրութեան հուշակումը՝ կալանակալ եւ արգելափակ, աչքերէդ ու գրիչէդ թափելով միշտ «Կարիդ մը արցունք այրած սրտերու»: Ընդհ. Պատերազմի սկզբնաւորութեան, երբ կարգակիցներդ մայրաքաղաքէս չէին ուզեր զաւառ մեկնիլ՝ անապահովութիւնը պատրուակ բռնելով, դուն — Օտապաշեանի պէս «զինուոր Հայոց Մատուծոյ» — վազեցիր հասար հօտիդ քով, անոր հետ տառապելու եւ անոր հետ վկայուելու խժաբար . . . :

Հիմա, չորս տարի վերջ միեւնոյն ամսուն՝ երբ Արդարութեան ձեռքը կախաղանի չուանը անցուց Եօզղատի ջարդարար «գասապ» Քէմալի վիզը, ցցուն ապացոյցը չէ՞ որ տուած եղաւ թէ այդ քաղաքին կոտորածն ալ եղած է հարկու եւ աներեւակայելի, — ինչպէս Սվազ, Խարբերդ, Մուշ, Տիգրանակերտ, Բաղէշ, Տրապիզոն, Դաղատիա, Կեսարիա, Ակն, Ամասիա, Երզրնկա, Կարին եւ այլն:

(*) Կենսագրութիւնը տե՛ս Եկեղեցականներու քաժիկին մէջ:

ԿԱՐԻՆ, ԵՐՁՆԿԱ, ԽՆՈՒՍ

218. ՎԵՐ. Կ. ՍԻՆԱՆՆԱՆ.—Մարզուանցի, հովիւ կարինի Աւե- տարանական Հայոց.

219. ԱՐԱՄ ԱՏՐՈՒՆԻ.— Կիւրինցի, 34 տարու. Ուսումը հոն և Սվազ ստանալէ վերջ, երկար ատեն կրթ. պաշտօն կը վարէ Ակնայ կողմերը: 1902ին կ'անցնի Կարին ուր կը մնայ մինչեւ աղէտի տարին: Դաշնակցական: 1908ին իր նախաձեռնութեամբը կ'սկսի հրատարակուիլ «Յառաջ» թերթը: Հիմ- նադիր «Երիտասարդական միութեան»:

220. ԱՐԱՄ ՇԻՇԷԱՆ.—Տեղացի, 32 տարու. Արծնեան և Սա- նասարեան վարժարաններէ ընթացաւարտ՝ պահ յը ուսուցչ. պաշտօն վարելէ վերջ, կ'անցնի Եգիպտոս: Սահմանադրութենէն յետոյ կուգայ Պօլիս: Հայ Սահմանադր. Ռամկավար կուսակցութենէն, որուն օւկան «Վերածնունդ» հանա- դէսին ալ տնօրէն և աշխատակից: 1913ին իրաւաբանական վարժարանէն վկայ- ուելով կը մեկնի հայրենիք:

221. ՀՐԱԶ ԼՈՒՍՊԵՐՈՆԻԱՆ.— Կիւմիւշհանէցի, 30 տարու. Դաշնակց.: Սանասարեանէն եւ Պօլսոյ վարժապետանոցէն ընթացաւարտ՝ կ'անցնի Կարին ուր կը մնար մինչեւ աղէտի տարին, ուսուցչ. պաշտօնով:

222/223. ՄԿԻ. ԱՍՏՈՒՐԵԱՆ.—Տեղացի, 55 տարու. Ազգ. շարժ- ման առաջին աշխատակորներէն: Դաշնակց.: — Ձաւակը ԴԻՂԱՄ, Սանասար- եանի սան, Բաղէշ կախադան բարձրացած:

224. ՓԻԼՈՍ.— Բաբերդցի, 33 տարու. Հին ռէժիմին կը գտնուէր Ռուսիա՝ իր բանւոր: Դաշնակց.: 1904էն սկսեալ յաճախ կը մտնէ Թուրքիա՝ գործիչի հանգամանքով: 1906ի Կարնոյ յեր. շարժման ղեկավարներէն: Սահ- մանադրութեան հռչակումէն մինչեւ աղէտի տարին կը մնայ Կարին, գործա- կից Ե. Թօփչեանի եւ Ա. Ատրուսիի, աշխատակից «Յառաջ»:

225. ԶԻՌՈՂՅԻ ՍԵՎՐԱԿ ՎԱՐՎԱՊԵՏ.— 45 տարու, ուսու- ցիչ Կարնոյ շրջակայ գիւղերու. Դաշնակցական: Հին ռէժիմին՝ երկար ատեն բանտ մնացած:

226. ԲԱՐԹՈՂ ՕՏԱՊԱՇՆԱՆ.— Տեղացի, 45 տարու. Դաշնակ- ցական: Արծնեան վարժարանի ուսուցիչ:

227. ԳԱԼՈՒՍՏ ԿԱՐԱՊԵՏԱՆ.— Տեղացի, 30 տարու. Սանա- սարեանէ ուսումնաւարտ: Դաշնակցական: Ուսուցիչ և աշխատակից «Յառաջ»ի: Երգիծաբան:

228. ՎԱՀԱՆ ԳԱՍՊԵՐՆԱՆ.— Վանցի, 35 տարու. Դաշնակց.: Մանակցած ծննդավայրին 1907ի յեղափոխութեան, յետոյ անցած Կարին՝ ուր կը մնար մինչեւ աղէտի տարին, շարունակելով իր գործունէութիւնը:

229. ԳԷՈՐԳ ԶՈՒԼՈՒՄՅԱՆ.— Խարբերդցի գօլէճական, 37 տա- րու. Տնօրէն Երզնկայի դպրոցին:

230. ՊԱՏ. ԱՐՇԱԿ Կ. ԹԻՒԹԻՒՆ ԶՆԱՆ.— Ենած է Երզնկա 1878ին. Եգնիկեան ու- սումնարանի ընթացաւարտ՝ 6 տարի իբր ուսուցիչ կը պաշտօ- նավորէ Երզնկա, Քէմախ և Կա- րին: Յետոյ երկար ատեն քա- ըողջութիւն կ'ընէ Խնուս, իբր Բողոքական Պատուելի: — 1903էն սկսեալ աշխատակից թրքահայ թերթերու «Ա. Սէրունի» ծած- կանունով, եւ հեղինակ Պատմա- կան Յիսուս Քրիստոսը ուշագրու- էրծին (1914ին տպ. Մարզուան):



ՄՈՒՇ - ՍԱՍՈՒՆ ԵՒ ԲԱՂԷՇ

Գաղափար մը տալու համար Մշոյ Դաշտին եւ շրջականե- րուն ահուելի սրածութեան, նաեւ Ընդհանուր Հալածանքին մասին, ստորեւ կը հրատարակենք սահմուկեցուցիչ մէկ դրուագը բարե- կամի մը միջոցաւ մեզ հասնող ա'յն նամակին՝ զոր Զարդէն մա- զապուր ազատած Մշոյ Առաջնորդարանի քարտուղար Պրն. Նա- զարէթ Երեւանէն կ'ուղղէ այս օրերուս Պօլիս Դեղամ Տէր Կա- րապետեանի, անոր մահուան դեռ եւս անգիտակ: — «... Մշոյ «Դաշտէն 5000 հոգի ազատած են (մինչդեռ 200,000 էին), քա- «ղաքէն՝ 75 հոգի, Սասուն-Փսանքէն՝ 1000, Խուլք - Խիանէն՝ «13, Կէնց - Ճապաղջուրէն՝ 3, Խոյթ - Մօտկանէն՝ 2000, Ախլա- «թէն՝ 900, Խնուսէն՝ 300, Ներքին Պուլանքէն՝ 600, Բաղէշի «քաղքէն՝ 30, եւ այլն: Բնաջնջուած ու սահմանակից Տաճկա- «հայաստանի 5 նահանգներէն (Տրապիզոն, Կարին, Խարբերդ, «Բաղէշ եւ Վան) հազիւ թէ 200,000 հոգի ազատած են»:

231. ՊԱՏ. ԳՐԻԳՈՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Հովիւ Մուշի Աւետարա- նական Հայոց:

232. ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՏԱՆ.— Են. Զիարէթ գիւղը (Մուշ), 52 տարու, Մշեցիներուն ծանօթ՝ «Պատուելի Յակոբ» յորջորջմամբ: Մշոյ Ս. Կա- րապետի ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչ և Երեսնամեայ քարտուղար վանուց: Երջանակաշատակ վարդան վրդ. Յակոբեանի աջ բազուկը:

233. ԲԱՆ. ԶԼՂԱԹԵԱՆ (Բ. Բագրատունի).— Են. Մոկուսք գիւ- ղը (Մուշ): Երկար ատեն տարած արտասահման եւ Սահմանադրութենէն յետոյ հայրենիք դարձած: — Հնչակեան գործիչ:

234. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍՅԱՆ.— Սասունցի, 35 տարու. էջմ- ձեմարանէն եւ Պէրլիի ու Ենայի համալսարաններէն ընթացաւարտ: Դաշնա-

կցական: Պօլիս, Տրապիզոն եւ Մուշ կրթ. պաշտօններ վարած: Նահատակուած Մշոյ 1915ի ինքնապաշտպանութեան ատեն:

235. ԿՈՐԻԻՆ (ԿՈՄՍԵՅԻ ԻՍՕ). — Մշեցի, 39 տարու, 96ին կը մտնէ Դաշնակց. շարքին մէջ, Սերոբի եւ Անդրանիկի հետ գործելով, յետոյ անոնց յաջորդելով: Կոմս գիւղի գիւղապետ: 1915ի ամառը՝ Սասունի ինքնապաշտպանութեան ատեն Յամիս հերոսաբար կուռելէ վերջ կ'իյնայ գնդակահար:

236. ՄԿՐ. ԲՈՂԱՅՍԱՆ. (ՄՃՕ). — Մշեցի, 50 տարու: Վաղեմի Դաշն. գործիչ Մշոյ գաւառի, մասնակցած այդ կողմերու եւ Պարսկաստանի կռիւներուն եւ ճանչցուած իբր ղեկավար: 1915ի ինքնապաշտպանութեան ատեն, Կորիւնէն 5 օր վերջ գնդակահար՝ երբ քաջ գրոհ մը կը վարէր:

237. ՎԱՐԴԱՆ (ՏԻԳՐԱՆ). — Երեւանի շրջանէն՝ Կողբեցի, 42 տարու: Դաշնակց. գործիչ, մասնակցած է կռիւներու: 1915ի ինքնապաշտպանութեան ատեն՝ Կորիւնի եւ Մճոյի պէս նահատակ:

238. ԱՐՄ. ՅՈՒՆԿԵԱՆ. — Ծն. Բաղէշ 1873ին: 18 տարուան Դաշնակցական գործիչ, գտնուած է Պարսկաստան եւ Ռուսիա, մասնակցելով ինքնապաշտպանողական ընդհարումներու: Իրաւաբան: Սահմանադրութեան ընթացքին ապրած է իր ծննդավայրը, ուր 1915ին կախաղան բարձրացած:

Կ Ե Ս Ա Ր Ի Ա, Թ Ա Լ Ա Ս

Բարսեղ Հայրապետի այս պատմական հայրենիքը որ Համիտեան Զարդերուն՝ թատր հանդիսացած էր անլուր խժոճութեանց, 1915 Շնորհաց թուականին կը նուիրագործէ այլեւս իր անունը, ներկայանալով ամէնէն հարուստը՝ հոն կանգնուող կառավարնատներով: Յունիս 2, Յուլիս 24, 30 եւ 31, Օգոստոս 20, Սեպտեմբեր 5 եւ 13, Նոյեմբեր 15, Դեկտեմբեր 3. — Հայուն համար անմոռանալի թուականներ են ասոնք: Այդ օրերուն էր որ յիսուկը չորս հոգի մարտիրոսացան, իրենց վերագրուած մտացածին ոճիրները քաւելով չուանին ծայրը: Ատոնցմէ 3ը՝ 29º, 55º եւ 56º թուահամարներուն մէջ կենսագրուած, 2ն ալ «Նահատակ Բժիշկներ»ու ցանկը փոխադրուած ըլլալով, մնացորդ 49 հոգին իրենց բնակավայրերով կը տրոհենք ստորեւ:

239/267. ԲՆԻԿՆԵՐ. — Կարապետ ձամճեան (յայտնի վաճառական, 45 տարու, «Մէճիսը Իտարէ»ի անդամ, որուն Կաթող. պատուիրակ ատենօք էջմիածին երթալը քրէական յանցանք կը նկատուի), Գառնիկ Գոյուճեան (վճռ., Հ. Ս. Ռամկավար, 30 տարու), Աւետիս Զամկաքճեան (վճռ., 30 տարու), Կարապետ Նէվրուզեան (վճռ., 60 տարու, Բողոքական, ազգ. զանազան պաշտօններ վարած, Հ. Ս. Ռամկավար, մեռնող իր զաւկին՝ Լեւոնի հողթաղ զէնքը երեւան ելլելուն հետեւանօք), Յակոբ Խալըրլեւն (գորգազործ, 30 տարու, Դաշնակցական), Յակոբ Մէրտինեան (սեղանաւոր, չուանը փրթելէ վերջ կրկին կախուած, Դաշնակց.), Տ. Ղեւոնդ ՔՏ. Կէփիճեան (Ս. Լուսաւորիչ ժաման տէրտէրը, 55 տարու, ուսուցիչ, Հնչ.), Բարսեղ Մութաֆեան (յանձնա-

կատար, 50 տարու, դպրոցի և ժամի գործերու հոգատար, Հ. Ս. Ռամկավար), Գրիգոր Գոյուճեան գորգի վճռ., 35 տարու, Դաշնակց.), Սարգիս Աղարթմաճեան (Թալասցի ժամագործ, 38 տարու, գ.ու. ընդհ. ժողովի անդամ, Դաշնակց.), Յովհ. Պոյաճեան (երաժշտապետ, 35 տարու), Մարտիրոս Զուռնաճեան (հիւան, Հնչ., զինուոր վիճակի մէջ կախուած), Միրիճան Եօղուրտաշեան (նուագածու, Դաշնակց.) եւ եղբայրը՝ Յարութեան (պասմաճի), Յակոբ Սիւտաճեան (գորգազործ), Կարապետ Մուրատեան (պղնձագործ, Դաշնակց.), Յովհ. Նէվրէհիբեան (ուկերիչ), Աւետիս Էլմաճեան գորգազործ, Դաշնակց.), Մ. Գէորգ Թիւրքիճեան (գորգազործ), Յովհ. Պոյաճեան (ուսուցիչ Դաշնակց.), Յակոբ Ուրկանճեան (խանութպան), Յակոբ Եսայեան (Կէրմիրցի ուսուցիչ), Յակոբ Պալքաճեան (Թիթեղագործ), Կարապետ Ուղուհոյաճեան (փուպան), Դակոբ Մայիսեան (մագործ), Յակոբ Գազէղեան (գորգազործ), Յովհ. Զէյթունցեան (ժամակոյ), Յովհ. Դաւիթեան (Կէրմիրցի գրագիր), Սարգիս Թուլումճեան եւ Կարապետ Զիյոնեան կօշկակար):

268. ԱԶԻԶԻԷԷՆ տարուած. — Վահան Ամատունի (ուսուցիչ, Դաշնակց.):

269/282. ԷՎԷՐԷԷԷՆ տարուած. — Գրիգոր Մումճիհանեան (դատարանի անդամ), Գր. Խաչերուկեան (մանրավաճառ), Յր. Տայեան (նղնպէս), Ասատուր Մինասեան (լուսավարիչ), Յր. Քէօլեան (կերպասավաճառ), Կար. Աղջաթեան (գրագիր), Մանուկ Պըչաքճեան (դանակագործ), Յակոբ Զպուճեան (նպարավաճառ), Միհրան Գուղեան (վաճառական), Լ. Վարժապետեան (ճարտարապետ), Միս. Պահանճեան (ուկերիչ), Սրգ. Գարագըզեան (մշակ), Սեդր. Զէյնեան (մագործ), Գառնիկ Շէմշեան (պղնձագործ):

283/284. ԲՈՒՄՏԻԿԻՆ գիւղէն տարուածներ. — Յակոբ Պէրպէրեան (ուսուցիչ), Սահակ Գալսէրլեան (երկրագործ):

285. ԳԷՈՐԳ ՎԻՇԱՊԵԱՆ

(ՍԱՐԳԻՍ ԳԷՉԵԱՆ. Ծն. Կեսարիա 1884ին եւ հոն ստացած իր ուսումը: Առեւտր. գործով կը մեկնի Իզմիր և կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ: 906ին ռուսի զինուորի պայթման հետեւանքով դուրս կը փախչի և ի բացակայութեան կը դատապարտուի ցկեանս տաժանակիր աշխատութեան: Սահմանադրութեան հուշակոմիտէի Եգիպտոսէն կը մեկնի ծննդավայր, ուր կը շարունակէ իր դերակատարութիւնն՝ երբ հասարակական գործիչ եւ 2 Յունիս 1915ին կը կախուի, բանտի մէջ նախապէս սարսափելի տանջանքներու ենթարկուելով:



286. ՎԱՀԱՆ ԳՈՒՐԳՅԱՆ. — Ծն. Նիրզէ (Կեսարիա) 1878ին: Ս. Կարապետի վանքին շրջանը բողոքելով՝ ուսուցչ. պաշտօններ կը վարէ Կեսարիա եւ Օրտու: Դաշնակցական: Գլխաւոր աշխատակից «Հայեկ» շաբաթաթերթի: Կախուած 20 Օգոստոս 1915ին:

287. ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆ. — Կէմէրէկցի, 45 տարու, Մարզուանի Գօլճէն ընթացաւարտ՝ կը մտնէ Հնչ. շարքին մէջ, գործելով Մուշեղի ասպա-

տակային խումբին հետ: Ուսուցիչ կէմէրէկ և Կեսարիա: Մուշեղի կախուելէն յետոյ կը մեկնի Ամերիկա, ուրկէ հայրենիք դարձին՝ կը մնայ իբր ուսուցիչ, նաև ներկայացուցիչ Կեսարիոյ Հնչ. մասնաճիւղին: Կախուած 2 Յունիս 1915ին:

Հոս կ'աւարտի կախադաններուն շարքը: Կեսարիոյ զոհերէն կան դեռ հետեւեալները:

288. ՎԵՐ. ՄԻՊԱՐ ՄՆՋԵՐԵԱՆ. — Եար. ուզցի, 50 տարու, հովիւ Աւետարանական Հայոց Կեսարիոյ:

289. ՄԻՆԱՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ. — Եր. Եօղլատ: Ուսումը Կեսարիա ստանալէ վերջ կը նուիրուի կրթ. և յեղ. ասպարէզներուն, մտնելով Հնչ. դրօշին տակ: Այն միջոցին երբ Թորոս Մառուկեանի (2510) հրոսխումբը մէկ կողմէն և Ժիրայր միւս կողմէն սկսած էին սարսել Բունակալութեան հիմերը, առնոց Թեւ-Թիկունքը կ'ըլլայ Պետրոսեան: 93ին կը կախուի իր աներորդին՝ Կիււպէնկ Ամալեան, և 94ի սկիզբը երբ Ժիրայրի խումբը կը հալածուէր Պետրոսեան ձերբակալուելով կը բանտարկուի երկար ատեն: Սահմանադրութենէն ետքն ալ կը շարունակէ ուսուցչ. և յեղափոխ. իր գործունէութիւնը Կեսարիա:

290/297. ԿԵՄԵՐԷԿ ԽԱՐՈՒՆԻ տարուելով (Կեսարիայէն) խողխողուած անձինք, մեծ մասամբ առեւտրական. — Գէորգ և Վահան ձամճեան, Գաբր. Քիւրճեան, Մարգար Եազըճեան, Բարսեղ Քիւրճեան, Վահան Քէհեան (35 տարու, Օսմ. Պանքայի բանձապետ՝ զոր պէտք չէ շփոթել Յ 97ին հետ), Գր. Կէրէքմէզեան (Էվէրէկցի, 35 տարու), Յակոբ Եուսուֆեան և ուրիշ չորսեր:

298/302. ԹՕՄԱՐՁԱ տարուելով (Կեսարիայէն) խողխողուածներ, մեծ մասամբ առեւտրական. — Կարապետ Եուսուֆեան, Գառնիկ Գալճեան, Տէտէեան Եղբարք (1915ի Տարեցոյցէս գնած ըլլալուն՝ նախապէս 2 տարուան դատաւարտուած), Աբամ Տապանեան և ուրիշ 17 հոգի:

303/316. ԱԶԻԶԻԷ և ՇԱՐ ԳՐԵԼԱ տարուելով (Կեսարիայէն) խողխողուածներ. — Երուանդ Վարդերեսեան (փաստաբան), Մարտ. Լուսարարեան, Նշ. Հալաճեան, Կրպ. Զամկազճեան, Յովհ. Էքմէքճեան (Դաշնակց.), Յր. Պէօճէքեան, Վահան Զաբութեան, Մ. Կրպ. Մաթոսեան (65 տարու, վաղեմի Հնչ.), Վարդերես Վարդերեսեան (Թօգաթցի), Յակոբ Պոսթանճեան (Դաշնակց.), Յովհ. Թիւֆէնկճեան, Մ. Տիգրան Գասապեան (վաղեմի Հնչ.), Յր. Տէր Մկրտչեան, Գառնիկ Պալըգճեան (փաստաբան), համագումար 24+93=117 հոգի:

Իսկ Թալապի ամբողջ Հայութենէն առայժմ հազիւ մէկ հոգի կարելի եղաւ մեզ յիշատակել, ներքին գաւառներու հետ լայն յարաբերութիւններէ զուրկ ըլլալով դեռ:

317. ԳՍՈՄԷՆ (նախկին Տաճատ Վրդ. Մեղրոնեան, Էջմիածնական). — Երնած է 1880ին և վարդապետ ձեռնադրուած 1904ին. — Դաշնակցական: Իբր հասարակական գործիչ՝ կ'ստիպուի սքեմը թողուլ և գաւառի մէջ վարել կրթական պաշտօններ: Մուշ գտնուած ատեն՝ տիրահոլակ Մուսա պէյի դրդումով կը հալածուի կուսակալութենէն և ձմեռ եղանակին կ'ապաստանի Վան, ուր կ'առնանաւ յետոյ Պոլսեցի ուսուցիչ-գրագիտուհի Իսկ. Զիթճեանի հետ (Օր. Նինի) և միասին կը շարունակէ պաշտօնավարել նաեւ Մուշ ու Թալաս, մինչեւ 1915: — Հալէպ տարագիր՝ կնոջը հետ, որմէ բաժնուելէն վերջ՝ ցարդ անյայտ:

Մ Ա Ր Ձ Ո Ւ Ա Ն

Մարզուան եւ Այնթապ այն վայրերն են որոնք — Խարբերդի նման — տարիներէ հետէ լուսաւորութեան զխաւոր կեդրոններ եղած են հայ նոր սերունդին համար, իրենց բարեհամբաւ կրթաբաններով: Մարզուանի «Սնաթօլիա», Այնթապի «Կեդրոնական Թուրքիոյ» եւ Խարբերդի «Եփրատ» Գօլէճները մեծ դեր կատարած են կրթական տեսակէտով, հասցնելով ուսումնական երկտասարդութիւն մը, — մեծ մասն, ափսոս, զոր Մեծ Եղեռնին, պաշտօնավարող քրօքսօրներուն նման: Ահա՛ յայտնիներն ատենամէ:

318. ԲՐՈՅ ԱՌԱՔԵՆԻ Կ. ՄԻՎԱՍԼԵԱՆ — Եր. Մուշուսուն գիւղը (Կեսարիա) 1859 Յունիսին: Պ. Ա. աստիճանով Մարզուանի Գօլէճէն ընթացաւարտ՝ ուսուցիչ կը կարգուի հոն. և 1890-4ին հետեւելով Ամերիկայի Գարլթօն համալսարանին աստեղագիտութեան և ուսողութեան ճիւղերուն՝ Ph. D. տիտղոսը կ'ստանայ Արեգ-Սիւսի դրութեան մէջ շրջան ընող գիտաւորներուն ծիրերը՝ պատրաստած իր ուսումնասիրութեամբ (որուն ընկերացող քարտէսը մաս կազմած է ամերիկեան Աստեղագիտութեան դասագիրքի մը): Անցնելով Մարզուան, յիշեալ ճիւղերուն ուսուցչապետ կը կարգուի: Հեղինակ ժողովրդական Աստեղագիտութեան (Թրք.) զոր Պոլսոյ ամերիկ. միսիօնարութիւնը լոյս ընծայեց: Գիտ. յօդուածագիր զանազան թերթերու: — Թօգատի մտ՝ Զիթճեանի կողմէ տեղը նահատակ 1915 Օգոստոսին: — Երկու գաւառ ունի Ամերիկա:

319. ԲՐՈՅ ՅՈՎՀ. ՅԱԼՈՐԵԱՆ. — Երնած է Մուշուսուն 1862 Հոկտ.ին: 1886ին Պ. Ա. աստիճանով Մարզուանի Գօլէճէն ընթացաւարտ՝ Թրք. և ուսուցիչ կը կարգուի հոն: Օրէնսգիտական ուսումը զարգացուցած Պոլսոյ պետական վարժարանը: 1904ին Մասաչուսէցի նահանգէն վկայուած Վ. Ա. աստիճանով, Հեղինակ Անգլ.-Հայ բառարանի մը (որ Բ. տպագրութիւն ունի ալ վայելեց և Թարգմանիչ Սէյսի Բեքաջի գիրքին, նաև Գ. իմ ծեղ ըլլաւ՝ ինչ պիտի ընէր գրքոյին): Ունի բաղդատական լեզուաբանութեան և Օսմ. Պատմութեան մասին շահեկան յօդուածներ «Իւզանդիոն»ի և «Նոր Այգ»ի մէջ: — Զիթճեանի նահատակ 1915 Օգոստ.ին:

320. ԳՍԳԻՆ ՕԶԱՆԵԱՆ.

— Երնած է Շ. Գարահիսար 1882ին: Աշակերտ ծննդավայրին Ս. Փրկչեան դպրոցը, յետոյ Անաթօլիա Գօլէճը (Մարզուան): Պահ մը առեւտուրով զբաղած ու իբր հնչական գործիչ ձերբակալուելով 1/2 տարի բանտուած է Կիրասոն ու Տրապիզոն: 1908 Յին ուսուցիչ ծննդավայրին վարժարանը, իսկ այնուհետեւ տնօրէն Ս. Սահակեանի (Մարզուան), ստանձնելով հայերէնի, քղբ. տնտեսութեան և առեւտր. ուսմանց դասեր: Աշխատակցած պոլսահայ թերթերու: Մարզուանի մէջ հրատարակած Հայկունի երկշաբաթաթերթը: — Գործերը. Հայա-



պատու (Հայուն պատմական դերը), Պատմութիւն հայ լեզուի եւ բանասիրական-
բեան, 1912ին և 13ին տպուած Մարզական, երկու ուշագրաւ և երկարաշունչ
երկասիրութիւններ՝ որոնք բանասիրութեան ու պատմութեան մէջ ունեցած իր
հմտութիւնը ցոյց կուտան: — Սվազ սպաննուած՝ 1915 Ապրիլի տարագրեալ-
ներու խումբով:

321. **ԲՐՕՅ. ԱՐՇԱԿ Թ. ՏԱՂԼԵԱՆ.** — 40 տարու, գօլէճա-
կան, Շթուկարտի և Պէռլինի երաժշտանոցներուն մէջ զարգացած, հեղինակ
Զույնաչար անուն երաժշտ. երկի մը՝ գնահատուած գերման գեղարուեստի աշ-
խարհէն, երաժշտութեան և գծագրութեան ուսուցիչ Մարզականի Գօլէճին: —
Տարագրութեան շրջանին՝ անհետ:

322. **ԲՐՕՅ. ՅՈՎ. ԱՐՈՋՅԱՆ.** — Ենած է խորքերը: Նին՝ կըր-
թութիւնը հոն ստանալէ ետք՝ Ամերիկա կը մեկնի և 13 տարի անընդհատ կը
կը նուիրուի ուսման, Վ. Ա. աստիճա-
նաւ վկայուելով Եէյլի Համալսարանէն:
Իր մասնագիտութիւնն աւարտելու առ-
թիւ պատրաստած թեզը — պղնձէ և եր-
կաթէ կազմուած ծծմբատներու բիւ-
րեղացման տարանջատումը — կը գնա-
հատուի ուսուցիչներու կողմէ և կ'ան-
դամակցի զանազան ամերիկեան միու-
թիւններու: Սահմանադրութենէն յե-
տոյ հայրենիք դառնալով՝ տարբաբա-
նութեան դասատու կը կարգուի Սա-
նասարեանի (Սվազ): 1914ին կ'ամուս-
նանայ և Մարզականի Գօլէճէն հրաւեր
ստանալով՝ պաշտօնով հոն կը մեկնի:
— Տեղահանութեան օրերուն, իբր Ամե-



րիկ. քաղաքացի թէեւ կ'աջողի արտօնութիւն ձեռք բերել՝ մայրաքաղաքս
դառնալու համար, բայց Գաղատիա հասնելուն վար կը դրուի և կը խառնուի
այն Մեծ Կարաւանին որ սկսած էր արդէն իր Գողգոթան մազցիւ:

123. **ԿԱՐԱՊԵՏ ԳՕՃԱԵԱՆ.** — Կէմէրէկցի, 35 տարու, Մար-
զականի Գօլէճէն ընթացաւարտ, յաջորդաբար Թրք.ի եւ աշխարհագրութեան
ուսուցիչ Թալասի ամերիկեան վարժարն.ի եւ Անաթօլիա Գօլէճի: — 1915
Օգոստոսին նահատակ՝ միւս բրոֆէսօրներուն հետ:

324/327. **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒԼՆ.** — Բարսեղ Էնտէլէպեան եւ Նշան
Եէնիճէլեան (Հնչակեան), Մամբրէ Բհ. Թեփիկեան (60 տարու, կրօնուսոյց,
կարեւոր դէմք մը Մարզականի մէջ), Յովհաննէս Մոմճեան (60 տարու, Պօլսեցի
փաստաբան):

328. **ՊՍՏ. ԳԷՈՐԳ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ** — 50 տարու, Հովիւ Ա-
ւետարանական Հայոց Մարզականի: — Տարագրութեան մէջ անհետ:

329. **ԱՐՄ. ԿՈՐԿՈՏԵԱՆ.** — Տեղացի գօլէճական, 28 տարու: Ամե-
րիկա տարի մը ուսանելէ վերջ՝ կը դառնայ հայրենիք, հասարակական գործիչի
(Հնչ.) եւ ուսուցիչի կրկնակ հանգամանքով: — Նոյնպէս:

Ա Յ Ն Թ Ա Պ

330. **ԲՐՕՅ. ՃԷՍԻ ՄԱԹՈՍԵԱՆ.** — Տեղացի, 42 տարու, ընթա-
ցաւարտ Կեդր. Թուրքիոյ Գօլէճէն ուր կ'աւանդէր մանկավարժութիւն եւ հո-
գեքանութիւն: Վկայուած Ամերիկայի Գլարք համալսարանէն: — Տէր Զօր:

331. **ԲՐՕՅ. ԼՈՒԹՅԻ ՊԱՊԻԿԵԱՆ.** — Տեղացի, 32 տարու, ընթա-
ցաւարտ Կեդր. Թուրքիոյ Գօլէճէն ուր կ'աւանդէր երկրաբանութիւն եւ մա-
թեմատիկ: Վկայուած Եէյլի համալսարանէն, հեղինակ Մասեմիաթ Թրք. գիր-
քին: լուրջ հետազօտութիւններ կատարած Այնթապի շրջանակի մետաղներուն
մասին: — Տէր Զօր:

332. **ՅՈՎ. ՀԱՍԱՐՃԵԱՆ.** — Տեղացի, 30 տարու, ընթացաւարտ
Կեդր. Թուրքիոյ Գօլէճէն ուր կ'աւանդէր լեզուներ: — Տէր Զօր, անհետ:

333. **ԲՐՕՅ. ԱՐՇԱԿ ԲՈՒՄԵԱՆ.** — Ուրֆացի, 30 տարու,
Գերմանիա եւ Սկովտիա ուսած: Այնթապի Գօլէճը կ'աւանդէր հայերէն եւ
Աստուածաբանութիւն: — Հալէպ:

334. **ՎԵՐ. ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ.** — Մարաշցի, 30 տա-
րու, Այնթապի հովիւ: — Տէր Զօր:

335. **ՊՍՏ. ՅԱԿՈԲ ՆԱՃԱՐԵԱՆ.** — Ուրֆացի, 32 տարու, Այն-
թապի քարոզիչ: — Տէր Զօր:

336. **ՊՍՏ. ԽԱԶԱՏՈՒՐ ԹՕՓՈՒԶԻԵԱՆ.** — Արաբկերցի, 40
տարու, Այնթապի քարոզիչ: — Տէր Զօր:

Գ Ի Ռ. Զ Ա Ն Ա Ջ Ա Ն Վ Ա Յ Ր Ե Ր

Ներքին գաւառները տեղի ունեցած Տարագրութեան չարա-
շուք օրերուն՝ զործուած նախճիրները մէկիկ մէկիկ պատկերել
կանխահաս կը նկատենք, ցորչափ տեղական թերթերով եւ վե-
րապրողներու կողմէ հատակոտոր պատմուածքներով կարելի չէր
Զուլումը շարժանկարել իր լրումին մէջ: Ստոյգ է որ հեռաւոր
քաղաքներ բոլորովին ամայացած են իրենց հայ բնակչութենէն,
եւ վերապրողներէ ցանցաւ թիւ մը դեռ եւս կը մնայ աստան-
դական: Անհետող դէմքերու անհամար շարքերուն մէջէն՝ կրօնքի
պաշտօնեաներու, ազգային ու կրթական գործիչներու եւ զբոյժի
վաստակաւորներու կատարեալ մէկ խմբումն ունենալ հիմկու-
հիմա թէեւ անհնարին էր, բայց — հակառակ լուրերու անբա-
ւականութեան եւ հակասականութեան — մեր պրպտումները
տուին արդիւնք մը՝ թէեւ ինքնին վտիտ՝ գոնէ սակայն վաւերա-
կան: Մօտաւոր ապագային թողով զաւառականներուն լիակա-

տար մահագրութիւնը պատրաստելու գործը, կը բաւականանանք մտնել հիմա ներս կարգ մը քաղաքներէ եւ անոնց զոհերը թուել վերոյիշեալ վերնագրին տակ :

337. ՅՈՎ. Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ. — Ծն. 3 Ապր. 1870ին Թօզատ՝ ուր նին. կրթութիւնը ստացած: Իր զարգացումը կը պարտի ինքնաշխատութեան: Կուգայ Պօլիս եւ Յ. Գասարձեանի հետ կը հրատարակէ իր Ա. գիրքը՝ Գաղտնիք եւ Արուեստ Մոգութեան (1889), իրաւաբանական ուսմանց հետեւելով 93ին կը դառնայ ծննդավայր եւ փաստաբանութեամբ կը պարապի, պահ մըն ալ առեւտուրով: Գր. գործունէութիւնը կը սկսի 1892էն, հրատարակելով յօդուածներ Արեւելքի մէջ, նաև բոլոր պօլսահայ թերթերու եւ հանդէսներու, «Ա. Մամուլի» եւ «Հ. Ամսօրեայի» ընդհանրապէս լեզուաբանական եւ քննադատական ուսումնասիրութիւններով, որոնցմով ունէր հմուտ բանասէրի համբաւ մը: Ատոնցմէ է՛ն երկարաշունչն է Եւրոպիոյ Հայոց գաւառաբարբառը, 99ին վիեննա տպ. եւ 1901ին պսակուած Իզմիրեանց մրցանակով: 1908-10ին լոյս կ'ընծայէ Արդի հայերէն լեզուի Գերականոնքիւններու դասընթացք մը 3 հատոր, իսկապէս աշխատուած գործ: 1909ին կը հրատարակէ Մագնիսականութիւն եւ Ոգեհարցութիւնը՝ որուն շօշափած նիւթերուն մասին կը թուի մասնաւոր նախասիրութիւն մը ունենալ: Վարած է ազգ. վանազան պաշտօններ Թօզատ: 1909ին կրկին գալով Պօլիս՝ հայերէնի ուսուցիչ կը կ'ըրգուի Կեդրոնականի, պահ մըն ալ խմբագիր՝ Յ. Շահնազարի «Հայրենիք»ին: Ազգ. երեսփոխան ընտր. Ամասիա-Մարզուանէն: Այնուհետեւ Հայրենիք կը մեկնի, կարծես ա՛լ չապրելու համար:



338. ՏԻՒՐ. ԹԷՄԻՐԵԱՆ. — Ծն. 1886ին Թօզատ ուր ուսումը ստանալէ վերջ անցնելով Արմաշ՝ Դպրեվանուց ընթացքը կը բոլորէ եւ կը դառնայ հայրենիք ուր ուսուցիչ կը կարգուի (ապա էրպաա), նաեւ առաջնորդարանի քարտուղար, եւ կը հիմնէ տպարան մը: — Հնչակեան:

339. ԱԻՅՏ. ԽԸՏԸՐԵԱՆ. — Ծն. Թօզատ 1875ին, Եռանդուն գործունէութիւն մը ունեցած՝ իր ծննդավայրին մէջ: — Հնչակեան:

340. ՊԱՅ. Ս. ԳԷՈՐԴԵԱՆ. — Մուկաչուկոնցի, 45 տարու, հովիւ Աւետարանական Հայոց Թօզատի:

341. ՆՈՒՐ. ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆ. — Խարբերդի գօլէճական, 32 տարու, տնօրէն Գրիի դպրոցին:

342. ԵՂՕ. — Բինկեանցի, 50 տարու: 1891ին կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ եւ Պօլիս կը մասնակցի Մամբրէ վրդ.ի տէրօրին: Կառավարութենէն կասկածուելով, կ'անցնի Կովկաս եւ մաս կ'ունենայ կրկին տէրօրական գործի մը մէջ՝ որուն հետեւանօք կը ձերբակալուի եւ կ'աքորուի Սախալին:

Հոն կը մնայ մինչեւ 1905, երբ ձաբոն՝ կղզիին կէսը կը գրաւէ, զինքն ալ աղատ արձակելով: Սահմանադրութեան հռչակումին Պօլիս կուգայ եւ պահ մը առեւտուրով զբաղելէ վերջ կը մեկնի Ամերիկա: Պատերազմի տարին ծննդավայրը կը դառնայ: Սարսափի օրերուն, ծուղակը չկնալու համար Մուրտի հետ խմբովին կը բարձրանայ սար եւ մինչեւ 1916ի վերջը քահիցս կ'ընդհարի կանոնաւոր բանակին: Յետոյ կ'իջնէ Սամսոն, ուր ընկերովի բռնի վերցնելով առագոստանաւ մը՝ բաց ծովը կ'ելլէ, Ռուսիա անցնելու համար: Եզերապահ մը յատուկ հրահանգով Բիզէն կը մեկնի՝ նաւը բաւելու: Քահի մը ժամ վերջ եզերապահը կը վնասուի եւ պ'ըտուած ետ կը դառնայ, բայց ինքն՝ ի գընդակահար կ'ընայ:



343. ՅԱՆՈՐ ԱՂԱՍԷՐ. — Ծն. Պօլիս 1881ին: Կէտիկ Փաշայի եւ Դաւաթիոյ Կեդր. վճարաններէն ընթացաւարտ: Ելլալով դէպքէն վերջ Դերմաննա մեկնելով մասնակար: կը վկայուի եւ կ'անցնի Եգիպտոս կրթ. պաշտօնով (Կղէքսանդրիոյ վարժարանին տնօրէն): Այդ միջոցներուն երբ Հ. Յ. Գ. կուսակցութիւնը ընկերակարական ծրագիրը կ'ընդունի, կը հեռանայ կազմակերպութենէն, մնալով բողոքող Դաշնակցուկան: Սահմ. հռչակումին կուգայ Պօլիս եւ Միացեալի կողմէ տնօրէն կը կարգուի Ատանայի, որմէ յետոյ ընդհ. տեսուչ Գրիի դպրոցներուն: Ինքը միակը եղած է որ կրցած է անպայման յարգանքն ու վստահութիւնը վայելել Միացեալի Կեդրոնական Մարմինին:

344. ԹՈՎՄ. ՃԷԼԱԼԵԱՆ. — Բալուցի 45 տարու: Տեղւոյն Միացեալ ընկ.եան դպրոցն աւարտելէ վերջ, 1890ին Պօլիս կուգայ եւ մինչեւ 1895ի դէպքերը հոս մնալով կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ: Կ'անցնի Ամերիկա՝ իբր հասարակական գործիչ, եւ կը մասնակցի 1907ի (Վիեննա) եւ 1909ի (Վառնա) Դաշն. ընդհ. ժողովներուն: Յետոյ ծննդավայրը դառնալով, մեծ զարկ կուտայ կրթական գործին:

345. ՍՆՆԵՔԵՐԻՄ ՊՕՆՃՈՒՔԻԵԱՆ. — Մալաթիացի, 40 տարու: Նին. կրթութիւնը հոն ստանալով, կ'անցնի Ամերիկա ուր կը մտնէ Հընչակեան շարքին մէջ: Մասնակցած 1895ի Կիլիկիոյ ապստամբութեան եւ սպա Դաշնակցութիւնն ընդունած, երկար ատեն իր ծննդավայրը կ'ապրէր, պարսպելով առեւտուրով:

146. ՊԱՏ. ԵՐ. ԳԱՊՍՍՕՎԱԼԵԱՆ. — Սվազի, 32 տարու, հովիւ Աւետ. Հայոց Ամասիոյ: — Մարզուանի մօտ նահատակ:

147. ՄԻՆՕՍ ԻՐԷՔՃԵԱՆ. — Երած է 1875ին Ամասիա ուր ստացած իր ուսումը: 1911ին կ'սկսի հրատարակել Տքթ. Հ. Թուրքիականի հետ Ամասիա գաւառաթերթը որ քանի մը տարուան կեանք կ'ունենայ: — Հնչ.:

148. ՄՍԱՌԻԿ ԳԱՆԻԷԼԵԱՆ. — Երած է իրան (Տիգրանակերտ) Վաղեմի ուսուցիչ իր ծննդավայրին ու քաղաքին մէջ: Ունի ազգագրական յօդուածներ Ս. Դաւթեանի խմբագրութեամբ: հրատարակուող «Բիւրակն»ի մէջ, նաեւ պատրաստած իրանի գաւառաբարբառը:

349. ՆՇ. ԷՎՐԱՆՆԱՆ. — Ծն. 1865ին Ամասիա ուր ստացած իր ուսումը: — Վաղեմի Հնչակեան:

350. ԿՐՊ. ԶՐԱՃԵԱՆ. — Ծն. Տիգրանակերտ 1888ին եւ ուսած «Եփրատ» Գօյձ: Հնչ. ընդհ. կազմակերպիչ՝ Ծննդավայրին շրջանին: Օրէնագէտ: Մատենի գայմագամ:

351. ԳՆՐ ԿՈՉԻԿՅԱՆ (Եսալէմ). — Ծնած է Բալու 17 Օգոստ. 1878ին, եւ ուսումը կ'ստանայ Ջարսանձագ ու Խոբրերդ: 1896ին Ռուսիա



անցնելով՝ կ'աշխատի գործարաններու մէջ եւ կ'զգայ բանուոր դասակարգին կրած տանջանքները, որոնք Սոցիալ. Դեմոկրատ գաղափարին կը մղեն զինք: 1901ին իբր Հնչակեան գործիչ կը ձերբակալուի եւ երկու տարուան բանտարկութենէ մը վերջ ժընէվ կ'անցնի ուր Ե. Պալեանի հետ կը հրատարակէ Բանուոր ընկերվ. հանդէսը: 1905ին երբ Ռուս յեղ. շարժումը Բեթերպուրկի գործաւորներուն կողմէ ծաւալ կ'ստանար, անունը փոխելով կ'անցնի Թիֆլիզ եւ յաջորդաբար կը վարէ խմբագրութիւնը Կեանի, Ջայնի եւ Գործի, — բոլորն ալ խափանուած: Կ'աշխատա-

կցի արտասահման հրատարակուող «Սոցիալիսթ»-ի և Տ. Ջաւէնի «Երկրի Ձայն»-ին՝ զանազան ծածկանուններով: Սահմանադրութենէն վերջ Պօլիս կուգայ ու կը սկսի գրել «Մանգուլի»-ի: Քիչ յետոյ Գրաշարաց Միութիւնը կը հիմնէ եւ լոյս կ'ընծայէ Նոր Կեանի շաբաթաթերթը Հ. Նազարեանի հետ, նաեւ Ապագայ բանուորական հանդէսը: — Հեղինակ Թող ֆակդերը խօսիւն գրքոյկին: — Կ'ամուսնանայ եւ ուսուցչ. պաշտօնով ընտանեօք կ'անցնի Տրապիզոն ուր կը մնայ մինչեւ 1915, եւ տեղահանութեան ընթացքին՝ ձամբան կնոջը Ռոզիի հետ կամովին գերատաղին:

Սեւ Ծովի հայ քաղաքացիներու Տեղահանութիւնը (1915 Յունիս-Յուլիս) ճշմարիտ եղերերգութիւն մըն է: Ո՛չ մէկ Հայ զերծ մնաց յանկարծական աքսորէն, որուն ընթացքին՝ այրեր իսկոյն զատուելով բռնամահը հաշակեցին, իսկ կանայք ու մանկտին խումբ խումբ կորսուեցան դէպի ներքին գաւառներ, երեւակայութենէ դուրս անգթութեանց նշաւակ: Յիշենք միայն եւ անցնինք՝ թէ Տրապիզոնէն 36 երիտասարդ — մեծ մասամբ ռուսահպատակ — մակոյկներով տարուելով ծովամոյն եղան Տարագրութեան նախընթացին: — Տեղւոյն Առաջնորդ Հօր կենսագրութիւնը տե՛ս «Հայ Եկեղեցականներ»-ու բաժինին մէջ. իսկ քահանաներէն կան հետեւեալները:

352/354. Տ. ՄՆՍՐՈՊ, Տ. ԵԻՂԱՅ, Տ. ՅՈՒՍԻԿ. — Երեքն ալ տարագրութեան մէջ անհետ:

355. ԱՐՏԱՇ. ԳՂ. ՓԱՓԱՋԵԱՆ. — Կամարակացի, 47 տարու, հմետ հայ., ֆրնս. եւ Թուրք լեզուներու, աշխարհականութենէն մինչեւ 12 տարուան քահանայագործութիւնը՝ նուիրուած կրթ. գործին եւ պաշտօնավարած Կամարակայ, Ալին ու Ապուշեի՝ ուր հաստատուած վերջերը:

356/362. ԲՈՂՈՔ. ՔԱՐՈՉԻՉՆՈՐ. — Պատ. Յ. Մանուկեան (հովիւ Աւետարանական Հայոց Գաղատիոյ), Պատ. Ա. Եարտըմեան (40 տարու, քարոզիչ Մուշուսուսնի), Վեր. Կ. Աթմաճեան (50 տարու, քարոզիչ Մուսկուրուի, Վեր. Հայրապետ Օտեոն (Սթանօզցի, 64 տարու, բազմաթիւն հովիւ իր Ծննդավայրին), Վեր. Տիգր. Գօնտազճեան (Հոսան Պէլլիցի, 35 տարու, հովիւ Քէսապի, Խանի մէջ մեռած), Վեր. Յովհ. Էսկիճեան (Մարաշցի, 32 տարու, քարոզիչ Հալէպի, տարագրելոց մեծապէս օգտակար եղած), Պատ. Աւետ. Տ. Կարապետեան (Ատանացի, 65 տարու, քարոզիչ իր Ծննդավայրին):

363. ՎԱՀԱԳՆ (ՏՈՒԹԻՆՆԱՆ). — Սվազցի, 38 տարու, կրթական եւ ազգային գործիչ (Դաշնակց.): — Կախաղան բարձրացած Ատանա:

364. ԱՇՈՒՂ ԵԱՆԱՋԱՐ (Մարտիրոս Աշուղեան Բէյբութեանց). — Կովկասահայ, 45 տարու, վաղեմի Հնչակեան: Սահմանադրութեան հուշակումին Պօլիս գալով, պահ մը կը պարապի ուսուցչութեամբ եւ կը հրատարակէ Ջայն կրթութեան մանկավարժական թերթը (2 թիւ): Անցնելով Երուսաղէմ՝ կը պաշտօնավարէ Ժառանգաւորաց վարժարանի մէջ, ապա կը մեկնի Եգիպտոս՝ դարձեալ կրթական պաշտօնով: Պօլիս դարձէն յետոյ կ'ուղեւորի գաւառ եւ քահանայ կը ձեռնադրուի Նալու Խան: Աղէտի տարին իր հօտին հետ հոնկէ տեղահան և Գաղատիա նահատակ: — Կովկաս, Պօլիս եւ Եգիպտոս՝ իր շրջած վայրերուն մէջ յաջորդաբար հրատարակած իր հեղինակութիւններն են (մեծ մասամբ գրքոյկ) Մի քսածակ չուր, Ովիե՛ր են մեր հարսահարոյնները, Բախսաւոր եւ դժբախտ անձինք, Պատիւ, Ազատութեան օգուսները (Թրգմ.), Կովկասի վիճակը, Դեպի Սօց. Դեմոկրատիա, Հայ հերոսի արշաւանքը, Իդիալի զոհը, Խորհակուած սերը, Մտիս վերերը, Տանջուածները, Կնոջ մը վրեժը, Մայրը, Կնոջ մը գաղթիքը, Արիւնոս զաթիկը, Խորհակուած օջախը:

Ի Չ Մ Ի Ր

Տանկաստանի բոլոր քաղաքներէն 4 հատ հազիւ կրնանք թուել՝ ուրտեղի Հայութեան խնայուեցաւ ամբողջական տարագրում, — Կ. ՊՕԼԻՍ, ՔԷՕԹԱՀԻԱ, ՈՒՇԱԳԻ եւ ԻՉՄԻՐ: — Այս վերջնոյն զոհերն են հետեւեալները:

365. ՔԵՐՈՎՐԷ ԿԻՒԼՊԷՆՆԵԱՆ. — Տնօրէն Գալուստ Կիւլպէնկեան ազգարակին: — Ընդհ. պատերազմին սկիզբը՝ 1914 Հոկտ. ին սպանուած:

366. ՍՏԵՓԱՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. — Ծն. Մանիս 1885ին: Երջանաւարտ Ալիանս Իդրայէլիթ վարժարանէն, Իզմիր, ուր կ'ըբաղէր շոգենաւային փոխադրութեանց գործով: — Նախկին Հնչակեան: — 1915ի վերջերը, Թալաթեան Ռէժիմի դէմ Թուրք տարրին մէջ յեղափոխութիւն յարուցանելու դիտումով՝ Ֆրանսերէն «մանիֆէսթ» մը կը հրատարակէ. յետոյ կը հետապնդուի և

Ճերբակալուելով՝ բանտի մէջ տառապանքներ կրելէ ետք կ'աքորուի անվերադարձ: — Հետեւանքն ա՛յն կ'ըլլայ որ, կորդ մը տեղացի ու գաւառացի Հայեր և 1915 Ապրիլէն ի վեր իզմիրի մէջ բանտարկեալ կուսակցականներ, ինչպէս և Նալպանտեան գերդաստանի երկսեռ անդամներ կը ըջուին քաղքէն, համախուր՝ 60 չողի, Յիշենք անհետացողներէն:



366



367

367. **ՏԻՐՔ. ՅԱԿՈՒ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍՅԱՆ.** — Ծն. Էտեմիշ 5 փետր. 1890ին, Ս. Մեսրոպեան և Սէն ժողէֆ վարժարաններէն ընթացաւարտ՝ պահ մը գրագրի պաշտօն վարելէ ետք, կը շրջի Փոքր Հայք՝ Դաշնակցութեան բրօքալիստի գործով: 1910ին անցնելով Պէյրութ՝ 4 տարի վերջ կը վկայուի Ֆրնս. բժշկանոցէն: 1915ի գարնան իզմիրի բանտը կը փոխադրուի շրթայակապ և Դեկտ. 3ին կ'աքորուի բանտակից ընկերներով զորս յիշած ենք ստորեւ:—Մեռ. իսլահիէ:

368. **ԱՐՅԱՇԷՍ ՅԷՐ ԱՅԵՓԱՆԵԱՆ.** — Ծն. Գըրջաղաճ 1889ին, տէրտիրոջ որդի: իզմիրի Մեսրոպեանէն ընթացաւարտ՝ զրագրութիւն կ'ընէ մինչեւ 1902, որմէ յետոյ կը Նետուի ուսուցչ. ասպարէզ, պաշտօնավարելով Մ.Անիսո և Տէնիզլի:—Դաշնակց. 1905ին կը ճերբակալուի և տանջանքներու ենթարկուելով կ'ուղարկուի Պոտրուսի բերդը: Սահմանադրութեան հռչակումին, կը շարունակէ իր գործունէութիւնը՝ որպէս հասարակական գործիչ, տեսուչ Տէնիզլի, Էտեմիշի եւ Գարաթաշի վարժարաններուն: Վերջերը կրթական գործը լքած մտած էր առեւտր. ասպարէզ:



369. **ՎԱՐԴԱՆ ՄԻՍԻՐԵԱՆ.** — Ծն. Զմառա (Տիվրիկ) 1887ին, Մարդուանի Գոյէճէն ընթացաւարտ՝ տարի մը կը պաշտօնավարէ հոն, յետոյ կը մտնէ Պօլսոյ իրաւաբանական վարժարանը: 1911ին կրթ. նախարարութեան կողմէ կը կոչուի իզմիրի Սուլթանիէի ուսուցիչ անգլ. լեզուի, նաև Մեսրոպեանի ու մասնաւորներու՝ պոլսոյ: «Աշխատանք»ի յօդուածագիր:—Դաշնակց. —Ռաքքայէն Տէր Զօր տանող ճամբուն վրայ գնդակահար:

370. **ԱՌԱՐՅՈՒ Ա. ԱՊՐՕՅԱՆ.** — Ծն. Աֆ. Գարահիսար 1859ին, Ուսումը կ'ստանայ հոն, յետոյ կ'աւարտէ իզմիրի Սէն ժողէֆ վարժարանի դասընթացքը: Ծննդավայր դառնալով կը պաշտօնավարէ Ռէթիի մէջ: 1889ին

Մաղնիսա, առեւտր. գործով, իսկ 1892էն մինչեւ իր տարագրումը՝ իզմիր: Հասարակալ Դ. Եսայեան Տան: — Հնչակեան: — Մեռ. Մէրտինի ճամբուն վրայ:



370



377

371/376. **ԳՈՐԾԻՉՆԵՐ (Դաշնակց.)**— Կարապետ և Պերճ Պ. Դանիէլ (մեռ. մին իսլահիէ, միւսը՝ Եարպաշը), Մելքի Խանգէթեան (մեռ. Քէլէպէք), Սուրէն Յարութիւնեան (մեռ. Սեպգա), Կրպ. Յ. Միվրիսարեան (մեռ. Մուրտտ), Զինւոր Մարտիկ (Մշեցի, մեռ. Այնթապի ճամբուն վրայ):

377. **ՊԱՏ. ՍԱՄՈՒԷԼ Ե. ԳԷՆՏԻԿԵԱՆ.** — Ծն. Արաբկիր 1867ին: Այնթապի Կեդր. Թուրքոյ Գօյէճէն 1886ին ընթացաւարտ՝ կը դառնայ ծննդավայր, ուր տարի մը ուսուցչութիւն ընելէ ետք՝ յաջորդաբար կը պաշտօնավարէ Ռոտոսթօ և Տարտանէլ (ուր քարոզիչ, նաև անգլ. հիւպատոսարանի թարգման), Յետոյ կը մեկնի իզմիր, իբր դասատու Ամերիկ. վարժարանի, պաշտօն գոր 18 տարի կը վարէ՝ մինչեւ իր աքորումը, հակառակ անոր որ կուսակցութեան մը չէր պատկաներ: — Մեռ. Գօնիայի բանտը:

ՄԵՐՁԱԿԱՅ ՎԱՅՐԵՐ

Այս խորագրին տակ համախմբուած են զոհերը Նիկոմիդիոյ, Պարտիզակի, Ա. Փազարի (եւ շրջակայից), Պրուսայի, Պօլուի, Պանտրմայի եւ Պալքէսէրի, - վայրեր ուր Պատերազմ. Ատեաններ գործեցին անդուլ (ինչպէս ամենուրեք), Արդարութեան անունն արատաւորելով եւ քմայական վճիռներով Ձիդանը, Երաշխէպն ու Կառափնատը հրամցուցին մեր քամաքախտ ազգակիցներուն, պարզապէս անո՛ր համար որ անոնք հայ անունը կրելու անքաւելի մեղքն ունէին վիզերնին: Անսուաղ բորենիի ո՛չ նուազ բուռն իր մոլուցքը ցոյց տուաւ Պօլսոյ Կեդր. Բանտի տնօրէն Իպրահիմ Խայրի հրէշը մանաւանդ, որ, արջաուաջիլը ձեռքին, 1915ի գարնան մեկնեցաւ ճեպրնիթաց այդ վայրերը, սոսկում ու սարսափ տեղացնելու Հայոց զլխուն: Եւ կարգաւորէն մինչեւ ուսանող, աչքեր արիւն լացին, պարանոցներ շար ի շար ճօճեցան պարաններէ, ու դաստակներ սկսան գելանիլ սեւ շրուշակներու մէջ...: — Ահա՛ շարքեր՝ Իթթիհատի սխրագործութեանց:

378/411. ՊՕԼՈՒ ԿԱՆՈՒՈՂՆԵՐ. - Սիրական փոփազեան, Ալեքս. Յարութիւնեան (Ա. փազարէն, 28 Սեպտ. 1915ին), Ստեփան Աքայեան, Նշ. Մարգարեան, Մկր. Պարթընեան, Սրգ. Լազեան, Գար. Բաբելեան, Անժանօթ Հայ յը (Տիվրիկցի) և Սթէֆանի անուն Յոյն յը (21 Դեկտ. 1915ին), Տ. Խոթէն ԲՏ. և ուսուցիչ որդին (Էմմալուցի), Սարգիս և որդին Յովհ. Խոզաբուն, Նազարէթ և Միհրան Թաշեան, Կրպ. Զատիկեան, Հայոցեան, Կարապետ, Շմաւոն, Միհրան Գիրէմիտեան, Պետրոս, Մինաս, Գր. Սմբատեան և 2 Յոյն՝ Անասթաս ու Ինգնատիոս (Ա. փազարէն, 28 Դեկտ. 1915ին), Պետր. Կէնճեան, Պօլոս Կէկէնօզեան, Յովհ. Մուրատեան, Խաչիկ Մարտիկոսեան, Համբ. Իշեան, (Ա. փազարէն, 21 Մարտ 1916ին), Սիրական Սթամպուլցեան (Արմաշէն), Իսքենտէր Յամաքեան, Յակոբ Պիճոյեան (Խասկալէն, 3 Հոկտ. 1916ին, Կրպ. Լեզեան (Զէնկիլէրէն, 19 Դեկտեմբեր 1916ին):

412/414. ՊԱՆՏՐՄԱ ԿԱՆՈՒՈՂՆԵՐ — Դեղագործ յը (տե՛ս զինքը «Հիբոկրատի Աշակերտներ» ցանկին մէջ), Հայրապետ Պազըրճեան (Զաւկարացի ուսուցիչ, 33 տարու, 31 Օգոստ. 1915ին), Տ. Գասպար ԲՏ. Աւետիսեան (Մուրատչայցի), Յովս. Վարժապետեան (Մուրատչայցի, ուսուցիչ, 5 Սեպտ. 1915ին):

415/418. ՊՐՈՒՍԱ ԿԱՆՈՒՈՂՆԵՐ. — Բժիշկ մը (տե՛ս զինքը «Հիբոկրատի Աշակերտներ» ցանկին մէջ), Սիմոնիկ Սէֆէրեան (յանձնակատար-ապահովագրիչ, բնիկ, 45 տարու, կախուելու պահուն՝ չուանը հակառակ երկիցս փրթելուն՝ երրորդ անգամ կառափնատ բարձրացուցուած), Միսաք Մէրմէրեան (ոսկերիչ, բնիկ) և 2 գիւղացի Հայեր:

419/450. ԱՕՐԱՆՈՍ (Պրուսայէն 10 ժամ հեռու) ՀՐԱՅԱՆԱԶԱՐԿ ԵՂՈՂՆԵՐ. — Անդր. Խանճեան, Օննիկ Պալթեան, Աբր. Նաւապետեան, Յակոբ Գարուճեան, Գառնիկ Բէքմէզեան եւ եղբայրը՝ Թորոս (ատենապետ Թաղ. Խորհուրդի), Ստ. և Լ. Տինկիլեան (բողոքական), Լ. Լուծֆիեան, Մինաս Քէօլեան, Հրանտ Արապեան, Ազնիւ եւ Օննիկ Ֆիլիպէլեան, Գաբրիէլ Մոզիկեան (առեւտրականք), Լաբաճեան հայր եւ որդի, Սինէմ Եամամեան եւ որդին Պետրոս, Մինաս Ֆնտիլեան (Սսմ. Դրամատան մթերանոցապետ), Յր. Ուզունեան (55 տարու, փաստաբան), Միհրան Լուծֆեան (ուսուցիչ), Յր. Եազըճեան, Ստ. Հիսեան, Միք. Խանճեան, Արամ Գամպուրեան, Կրպտ. Էպէեան (գրագիրներ), Գր. Անտոնեան (պաշտօնեայ Հանր. Պարտ. Վարչութեան), Սրգ. Մջիկեան և Բիւզանդ. Մօրուքեան ուսանող), Գառնիկ եւ Կարապետ Բաջաճեան (մնագործ), Սարիմ Գըլըճեան (ղարբին, Էտուառ Պէյազեան (տե՛ս զինքը 39 Թուահամարով), Յր. Լուծֆեան եւ Արմենակ (տե՛ս զիրենք «Հիբոկրատի Աշակերտներ» ցանկին մէջ), Թեւոնեան եւայլն,

Թիւով հարիւր հոգի, որոնցմէ քսանը Պրուսայէն, միւսներն ալ շրջականներէն էին: Իսկ

451. ՍՈՒՔԻԱՍ ՏԻՒԼԿԻՐԵԱՆ. — Պրուսայի առաջնորդարանի վաղեմի քարտուղար, առաջնորդ Հայր Սուրբին հետ 5 տարուան դատապարտեալ, միասին կը բռնուին Տէր Զօր եւ բժաւոր ժանտատեանդէ կը մեռնին երկուքն ալ.— [Առաջնորդը տե՛ս «Հայ Եկեղեցականներ» բաժինին մէջ]:

452/459. ՏԵՐՏԻՐՆԵՐ. — Ներսէս Տօպրաշեան (Երրունազարդ քահանայ Իզմիթէն, տարագրութեան ատեն Գօնիա վախճանած), Յովակիմ Բէօմիւր-

ճեան (Իզմիթէն, 45 տարու, երբեմնի երածիշտ-ուսուցիչ՝ Իզմիթ և Տարտանէլ, հազիւ քանի մը տարի քահանայագործած, տարագրութեան մէջ անհետ), Կարապետ Միսլեան (Երրունազարդ քահանայ Պարտիզակէն՝ զօրաւոր յեղողութեամբ, իր ծննդավայրին ընդարձակ պատմութիւնը գիրի առած, տարագրութեան մէջ վախճ.), Բարթող Միսլեան (Տ. Կարապետի որդին, նոնպէս), Փիլիպ. Աբրահամեան (Պարտիզակէն, Հալէպի կողմերը ծեծի տակ վախճ.), Մատթիա Կէօնտիլեան (Պարտիզակէն, նախապէս ուսուցիչ, տարագրութեան մէջ անհետ), Բառնաբաս Բարունեան (Պարտիզակէն, նոնպէս), Ներսէս Պայեան (Կամարակապցի, աշխարհականութեանը — Սերովբէ Պայեան — Արեւելքի մէջ հրատարակած բանասիր. յօդուածներ և ուսուցիչ էտինճիք ու Պանտրիմ՝ ուր մասնաւոր վարժարան մըն ալ հիմնած, Պանտրիմէն տարագրութեանը մէջ վախճանած):

460. ՎԵՐ. ՄԱՅԹ. ՀՈՎԻԻԵԱՆ. — 52 տարու, հովիւ Աւետարանական Հայոց Իզմիթի, Գօնիա-Սուլթանիէ տարագրութեանը մէջ անհետ:

461. ՀՐԱՆՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ. — Իզմիթէն, 31 տարու, նկարիչ, խոստմնալից տաղանդ մը:

462/463. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ. — Յակոբ Կարազեան (Ա. փազարէն, 32 տարու, ուսուցիչ), Մեւքոն Յովէֆեան (Պարտիզակէն, յարգուած հին պատուելի մը գաւազը, 28 տարու, ուսուցիչ ազգ. վարժարանի, բանաստեղծ և յօդուածագիր, Դաշնակցական):

ՊԱՐՏԻՉԱԿԻ տեղահանութեան օրերուն՝ օղափոխութեան համար հոն գտնուող երկու յայտնի բնիկներ (Հ. Արսէն Ղազիկեան ներհուլ վննետացին եւ Մինաս Ծալեան դաստիարակ-բանասէրը), նաեւ տեղւոյն ազգ. վարժարանի տնօրէն Անդրանիկ Կարապետեան ամբրիկահպատակ համալսարանի բարեբախդաբար զերծ մնացին ընդհ. պատուհասէն: — Իսկ տարաբախտ եր. Թօփուզեան եւ Կ. Փաթուկեան պարտիզակցիներուն կենսագրութիւնն ու եղբրական վախճանը տե՛ս 124⁰ եւ 141⁰ Թուահամարներով:

464. ԶԱՐԵՀ ԳՕՉԵԱՆ. — Ա. փազարէն, 45 տարու, նիկ. Հնչակեան, ապա Վերակազմեալ, կուսակցական գործերով գտնուած եգիպտոս, Ամերիկա և Բարիզ վերջերը ծննդավայրը հաստատուած՝ կ'ըզաղէր առեւտուրով:

Բ. — ՇԻՐՈՎՐԱՏԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

465/567. ԲԺԻՇԿ. — Աբիկեան Մաքսուտ, Մարզուանցի, 32 տարու, Սվազ սպանուած.— Ազատեան, Խարբերոցի, Գոբի վրայ.— Ազօեան Սարգիս, Ատանացի, 60 տարու, Հալէպ.— Աճէմեան Նշան, Թօզաթցի, Երզնկա.— Այվազեան, Սղերդ սպանն.— Արսլանեան Սրտաշ, Խարբերոցի, 28 տարու.— Արսլանեան Լեւոն, Խարբերոցի, 48 տարու, Արտաշէսի եղբայրը.— Բարթողեան Լեւոն Թորոս, Սվազցի, Սվազէ դուրս.— Գավաֆեան Վահան? Իզմիթցի, Երզնկա.— Գարակէօզեան Միքէ, Պօլսեցի, 35 տարու, Վան.— Եարմաեան Մի-

նաւ, Թօզաթցի, Երզնկա. — Լւստեան, Սէվէրէկցի, անդ. — Էմիլեոն, Սվազցի, Զիւլ. — Թաճիբեան Յակոբ, Տիգրանակերտցի, անդ. — Թիւլպէնտճեան Մինաս, Ա. Փաղարցի, 45 տարու, Բարիզէն վկայեալ, Պաղտատի բանակը զոհուած. — Թէրզեան Յովհ., Տիգրանակերտցի 35 տարու, Բոքի վրայ. — Թօփալեան Ոսկան, Խարբերդցի, 42 տարու, Կարին. — Խաչատուրեան Նորայր, Երզնկացի, Թերջան. Իբրանտեան Գարեգին, Էսկի Տէնէք Մատենցի, Այաշ. — Կիւլէնպէնկեան Գրիգոր, Սամսոնցի, 25 տարու, Լնչ., Տրապիզոն. — Հալաճեան Տիգրան, Կիւրինցի, 34 տարու, Քէրքիւքի լճոտ. — Կիւլպէնկեան Գրիգոր, Տիւրիկցի, 28 տարու, Տրապիզոն. — Հալպեան Լեւոն Լուծֆի, Այնթապցի, 33 տարու, Բօքի վրայ. — Հալաճեան Յարութիւն, գնդապետ, Տիգրանակերտցի, 50 տարու, Խարբերդ. — Հալաճեան Արմ. Տիւրիկցի, Գերմանիա ուսած, 34 տարու, Դաշնակց., Սվազ. — Հիսարիեան Պօղոս, Պօլսեցի, 28 տարու, Մամախաթուի լճոտ. — Լազարեան Վահան, Մարաշեանցի, 40 տարու, Էթիոպիոս հանդէսին երբեմնի խմբագրապետ, Ուրլայի ճամբուն վրայ. — Լազարոս, Խարբերդցի, 38 տարու, Կարին. — Ճիւղեան, Մալաթիացի, 45 տարու, անդ. — Մանուէլեան Խաչ, Խարբերդցի, 40 տարու, Մալաթիա. — Մելքիսեդեկեան Ստ., Պրուսացի, 50 տարու, անուանի բժիշկ, Պրուսա կախուած՝ ուրիշ 4երու հետ. — Մօմճեան Սարգիս, Մալաթիա սպանն. — Յակոբ, Սղերդ սպանն. — Նազլեան Թորոս, Կեսարացի, հոն կախուած 31 Յուլիս 1915ին. — Նահիկեան Նշան, Խարբերդցի, 37 տարու, Մէզրէի բանտը հրկիզուած. — Նազլեան Յովհ., Թօզաթցի, 38 տարու, Բոքի վրայ, — Նշանեան Սուրէն, Կեսարացի, 35 տարու, Գաղատիայէն ծանրապէս հիւանդ վիճակ մէջ Կեսարիա տարուելով կախուած 5 Սեպտ. 1915ին. — Շահպաղեան Ներսէս, Վանցի, 33 տարու, Մուշ. — Չօպանեան Անիկտոս, Մամաթիացի, 30 տարու, Խարբերդ. — Պաղտատարեան Միսաք, Երզնկացի, 45 տարու, անդ. — Պաղտատարեան Պաղտ., Երզնկացի, Կարինէն դուրս. — Պապիկեան Թորոս, Սվազցի, 34 տարու, Տրապիզոնէն դուրս. — Պաղտատեան Նշան, Տիգրանակերտցի, Խուս. — Սերթիւրեան Սարգիս, Կարնեցի, ակնաբոժ, 32 տարու, Երզնկա. — Սէրայտարեան Արմենակ, Սվազցի, 35 տարու, Թօզաթ. — Վարդանեան Պաղտատար, Սվազցի, անդ. — Վէդիկեան Յարութիւն, Խարբերդցի, 40 տարու, Մալաթիա. — Տէր Մանուէլեան Խաչիկ, Խարբերդցի, Մալաթիա. — Տէր Վահրամեան Նշան, Խարբերդցի, 35 տարու, անդ. — Տօնիկեան Յովհ., Ամասիացի, անդ. — Փալապըճեան Պօղոս, Պօլսեցի, 30 տարու, Մուշի մօտ. — Փանտեան Միսաք, Թօզաթցի, 45 տարու, անդ. — Քէշիշեան Հմ., Քէրքիւքի մօտ սպանուած:

568/576. ԱՏԱՄՆԱՌՈՅԺ. — Ալթունեան Միհրան, Սվազցի, Սվազէ դուրս. — Ալպէրթեան Մկր, Կարնեցի, Երզնկայէն դուրս սպանն. — Աջապեան Համբ., Սվազցի, անդ. — Բենիամին, Սամսոնցի, Սարը Գամըշէն դուրս. — Թապիպեան Հայկազուն, Կեսարացի, 48 տարու, Լնչ., Ամասիա. — Եկաւեան Լեւոն, Արաբկիբցի, Երզնկայէն դուրս. — Դօնջէկիւլեան Նշան, Սվազցի, Սվազէ դուրս. — Մանուկ, Բաբերդցի, Կարինէն դուրս. — Մղիկեան Նշան, Երզնկացի, Քէմախ:

577. ԱՆԱՍՆԱՌՈՅԺ. — Սմբատ, Պօլսեցի, Երզնկա սպանուած:

578/605. ԴԵՂԱԳՈՐԾ. — Աճէմեան Բարուսակ, Պրուսացի, 40 տարու, Պանտրմա կախուած՝ 29 Օգոստ. 1915ին. — Արմենակ, Պրուսացի, Աթրանտի մէջ հրացանազարկ. — Բրուտեան, Կարնեցի, Մալաթիոյ մօտ սպանն. — Գոլյուճեան Յովհ., Բաբերդցի, Մալաթիոյ վրայ. — Գրաթիւրեան Սահակ, Սվազցի, Սվազէ դուրս. — Գոյունեան Սիմոն, Խարբերդցի, Բոքի վրայ. — Թաճեան Եղուսաբղ, Խարբերդցի, 35 տարու, Խարբերդի բանտը. — Թորգոմեան Խաչատուր, Սվազցի,

անդ. — Լուծֆեան Յարութիւն, Պրուսացի, 55 տարու, Աթրանտի մէջ հրացանազարկ՝ 100 Հայերու հետ. — Խաչատուրեան Նորայր, Երզնկացի. — Կիւրճեան Գարեգին, Խարբերդցի, 30 տարու, Մալաթիոյ ճամբուն վրայ. — Կիւրճեան Գէորգ, Խարբերդցի, 55 տարու, Բաբերդ. — Մեսիանեան Եղիազար, Սվազցի, անդ. — Շիտանեան Վահան, Սամսոնցի, Սվազ. — Սարայտարեան Խաչիկ, Սվազցի, Թօզաթ. — Սարայտարեան Տիգրան, Սվազցի, 32 տարու, Զիւլէի վրայ. — Սարգիս, Սվազցի, Վէֆայիա. — Սարիկեան Յակոբ, Ուրֆացի, 35 տարու, անդ. — Սեպուհ, Երզնկացի, Քէմախ. — Սրապեան Գասպար, Խարբերդցի, 32 տարու. — Վարդանեան Վահան, Սվազցի, 38 տարու, Սէրայէ դուրս. — Տէրպապեան Բիւզանդ, Սվազցի, Էնտիբէս. — Տէր Ստեփանեան Մկր., Մէզրէցի, 60 տարու, Մալաթիա. — Փանտեան Լեւոն, Կեսարացի, 45 տարու, Լնչ., Թօմարզա. — Փափանեան Եղիշէ, Կարնեցի, 38 տարու, Մալաթիա. — Փաստըրմաճեան Խաչիկ, Կարնեցի, 38 տարու, Մալաթիա. — Քէնտէրեան Յակոբ, Խարբերդցի, 35 տարու. — Քէշիշեան Խոսրով, Մալաթիացի, 36 տարու, բողոքական, Դաշնակցական, գրագէտ, Մալաթիա:

Գ. — Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

606. ՅԱԿՈՐ ԱՇՈՑ ԵՊՍԿ. (ՓԱՓԱՋԵԱՆ). — Ենած է Պօլիս 1847ին և եպիսկոպոս ձեռնադրուած 1898ին. Վարած է քարոզչական և առաջնորդական պաշտօններ՝ մայրաքաղաքս ու գաւառները: — Տառապանքի տակ վախճանած իզմիլի զինուորական բանտը, — Կիլիկիոյ աղէտին մասին մատուցած իր տեղեկագրին մէկ պատճէնին՝ իր թղթերուն մէջէն գտնուած ըլլալուն հետեւանօք:



606



607

607. ՆԵՐՍԷՍ ԵՊՍԿ. ԴԱՆԻԷԼԵԱՆ. — Իր անձնուիրութեամբ և բազմադիւն ու վշտաբարձար կեանքով Հայ Եկեղեցական Դատուն պատիւ այս սրբազանը ծնած է 16 Մաիս 1868ին Եարփուղ (Զէյթուն), աշխարհական անուամբ Գէորգ. Աշակերտ Սիսի մայրավանքին և Սամաթիոյ Մահակեան վարժարանի, ուրիշ վկայուելէ վերջ՝ Ատանա ուսուցչութեան կոչուած եւ 90ին վրդպտ. ձեռնադրուած Վահագնեան Մկր. Եպսկ. է: Մինչև 95, առաջն.

փոխանորդ Իսքէնտէրունի, Դէպքին, Ձէյթունի ապստամբութիւնը կազմակերպողներէն իբր մին ամբաստանուելով, 96ին կը բանտուի Հալէպ 7 ամիս: Ներման արժանանալով, Իսքէնտէրունէն կ'աքորուի Շամ: Օրմանեան Ս.ի բարեխօսութեամբ կը բերուի Պօլս ուր կը մնայ 10 տարի՝ իբր քարոզիչ Սկիւտարի, առանց զերծ մնալու լրտեսներու հետապնդումէն: 1907ին Կիլիկիոյ կաթողիկոսին երաշխաւորութեամբ Սիւ կ'ուղարկուի, կոչուելով տեսչ. պաշտօնի: Կիլիկեան ջարդէն ետք՝ 3 1/2 ամիս բանտերու խորը կը տառապի, Հաճընի ինքնապաշտպանութեան պարագլուխն ըլլալուն: 1910 Սեպտ.ին Ատանա փոխադրուած է, 1914ին ալ Եօզղատ՝ առաջնորդական պաշտօնով: Եպիսկ. ձեռնադր. 1911 Մարտին:—Երկերը. Կեանքն առանց հաւաստի և Կարիչ մը յոր այրած սրբեսեռ. կը թողու նաև անտիպներ: «Սասկան Վարդապետ» ծածկանունով աշխատակցած է պօլսահայ թերթերու:—Հնչ.:

608. ԽՈՐԷՆ ԵՊՍԿ. ԴԻՄԱԿՍԵԱՆ. — Ծնած է Կիւրին 1864ին. Վարդապետ ձեռնադր. Բէքմէզեան Ս.է 1892ին: Միաբան Կիլիկիոյ՝ որուն այլ և այլ քաղաքներուն մէջ պաշտօններ վարած:—Առաջնորդ Կիւրինի:

609. ՍՄԱՍ ԵՊՍԿ. ՍԱՍՏԷԹԵԱՆ. — Ծնած է Ատափազար 1871ին: Արմաշական, Վրդպտ. ձեռնադրուած 1895ին, Քարոզիչ Կէյվէի հասարակ գիւղերուն, (1896 և Պալաթի ու Կէտիկ փաշայի եկեղեցիներուն (1897), Շ. Գարահասարի (1898-1907), յետոյ Կարինի առաջնորդ, մինչեւ 1915: Եպիսկ. ձեռնադր. 1910ին: Ն. Լամբրոնացիի վրայ իր մէկ ուսումնասիրութիւնը վարձատրուած է Իվիբեանցէ 1903ին:



609



610

610. ԽՈՍՐՈՎ ԵՊՍԿ. ՊԷՀՐԻԿԵԱՆ. — Ծնած է 1869ին, Արմաշական: Վրդպտ. ձեռնադր. 1895ին, իբր քարոզիչ և առաջնորդ՝ պաշտօնավարած Պօլս եւ գաւառները:—Առաջնորդ Կեսարիոյ, մինչեւ 1915:

611. ԵՋՆԻԿ ԵՊՍԿ. ԳԱԼՈՍԻՃԵԱՆ. — Ծնած է Պօլս 1860ին: Ուսանող Կալաթա Սէրայի Լիսէին և բժշկ. «Միւքիէ» վարժարանի: Հին Արմաշական: Վրդպտ. ձեռնադր. 1886ին, և եպիսկ. 1912ին: Անդուլ պաշտօնավարած ներքին գաւառները:—Առաջնորդ Բալուի, մինչեւ 1915:

612. ԳԷՈՐԳ Ծ Վ. ԹՈՒՐԵԱՆ (Պըչաքձեան).—Ծն. Ռոտոսթօ 13 Փետր. 1872ին: Նխն. կրթութիւնը հոն ստանալով կ'անցնի Երուսաղէմ և կը բոլորէ Ժառանգաւորաց վարժարանի դասընթացքը, հայրենակցին՝ Սարգիս



611



612

Տ. Սարգիսեանի հետ (այժմ առաջնորդ Պրուսայի): 1893-5ին տնօրէն Չօրլուի ազգ. դպրոցին. յետոյ Եգիպտոս անցնելով գրագրութեամբ կ'ըլլայ, մինչեւ Ամերիկա իր մեկնումը 1897ին, և Տօռչէսթը քաղաքին ածաբանական համալսարանը մտնելով 1906ին վկայականը կ'ստանայ «բռօֆէսօր» պատուանունով ու նոյն համալսարանը դասաւանդութիւններ կ'ընէ: Պօրտ Ընկ.եան կողմէ կ'ուղարկուի Եւրոպայի զանազան քաղաքները, նաև Երուսաղէմ, հնամենական պաշտօններով: Աշխարհական անունն անփոփոխ պահելով՝ 1911ին վարդապետ կը ձեռնադրուի Իզմիթի առաջնորդէն, և տարի մը ածաբանութեան ու փիլիսոփայութեան դասեր կուտայ Արմաշի դպրեմանքը. յետոյ Պօլս դալով առժամեայ քարոզիչ կը կարգուի Կէտիկ փաշայի և Մազրիքէյի: 1912ին կ'ընտրուի առաջն. տեղապահ Տրապիզոնի:—Ընդհ. Պատերազմին սկիզբները մայրաքաղաքս գտնուելուն՝ կը փութայ իր վիճակը, երբ 2 օր վերջ Վսփորի նեղուցը փակուած էր: Քանի մը ամիս վերջ, հայ տարագրութեան ատեն՝ Պօլս կը հեռագրէ:—«Կարին» պատերազմական ատեն կը տանին զիս: Եւ այնուհետև մէջ մէկ լուր իրմէ. . . :

613. ՎԱՐԳԱՆ Ծ Վ. ՅԱԿՈՒԵԱՆ. — Ծն. Ահարոն գիւղը (Սասուն) 1846ին: Ուսումը Ս. Կարապետի վանքը ստանալով՝ կ'ընդունուի Միաբանութեան շարքին մէջ և կ'ստանայ Ա. սրբաւագի աստիճանը Մամբրէ Եպիսկ. Մամիկոնեանէ որ 1880ին վարդապետ կը ձեռնադրէ զինք: 1880-3, կը վարէ վարժարանի տեսչութեան պաշտօնը: 1883ին կէնձ մեթօսարըֆութեան վերածուելուն՝ կ'ստանձնէ նորակազմ վիճակին առաջն. տեղապահ պաշտօնը: Միացեալ Ընկ.եան դիմումներ կատարելով՝ կ'աջողի 2 նախակրթարաններ բանալ Կէնձի և Գուլբի մէջ:—1887ին երբ Սիվանի (Տիգրանակերտ) քրդախօս Հայեր անհովիւ մնալէն և իր ուղևորին կառավարութեանն անտեսուելէն յուսահատ կաթողիկոսութեան կը դիմեն, ինք պատրաստակամութիւն կը յայտնէ հոն երթալու և ուրիշներու չյաջողածը գլուխ հանելու: Վեհապետեան Պատր.է հովիւ կարգուելով՝ կը մեկնի Սիվան և կարճ միջոցի մէջ մայրենի եկեղեցւոյ գերկը կը դարձնէ իր հօտը. նաև Փարիսին մէջ դպրոց մը հիմնելով՝ կը դնէ զայն Միացեալի տրամադրութեան տակ. յետոյ կէնձ դառնալով՝ կը շարունակուի:

Նակէ իր պաշտօնը: — 1893-4, տեղի կ'ունենայ Սասուն-Տալուրիկի 2 կոտորած-ները շրջաքնակ Աշխարհներու կողմէ որոնց կը միանան կանոնաւոր զօրքեր: Մուշ կը հասնի Գննիչ Յանձնաժողով մը ֆրնս., անգլ. և ռուս հիւպատոսներէն բաղկացած՝ Շէֆիզ Պէյի նախագահութեամբ: Վարդան վրդ. հազիւ իր դէմ եղած քղք. ամբաստանութիւններէն ազատած, ամէն վտանգի դիմագրաւելով՝ Սասնոյ խժոճութիւնները պարունակող ֆրնս. տեղեկագիր մը կը պատրաստէ և Յանձնաժողովին կը հասցնէ, պաշտպանելով անմեղ ժողովուրդին դատը: — Այնուհետեւ իզմիրլեան Պատրիարք Առաջն. ֆոխանորդ կ'անուանէ զինք: Հա-մետեան արհաւիրաց այդ շրջանին երբ 1895ի ջարդին հրումանը տրուած էր, Վարդան վրդ. իր հեռատես և խոհեմ ընթացքով կ'աջողի Մուշ և շրջակայքը ազտէն զերծ պահել: Այսպէս կը հովուէ ու կը պահպանէ իր հօտն ու վան-քերու գոյութիւնը՝ մինչեւ 1899, երբ Բաբգէն Ծ. Վ. առաջն. տեղապահ կ'անուանուի Մուշ, և ինք Ս. Կարապետ կը քաշուի իբր վանահայրական փո-խանորդ, այնպիսի ատեն մը երբ ուխտաւորական երթեւեկութիւնք և հա-սոյթներ դարձած էին, վանքին ու ազարակներուն շէնքերը քայքայուած, տուրքերն ալ դիզուած ըլլալով՝ խիստ հարկահանութեան մը կ'սկսէր: Կասիլ չգիտեր ան. կ'իջնէ Դաշտի գեղերը՝ մինչեւ Զուխուր, հանդանակելով 800 ոս-կի և վճարելով աղմակի, աշարի և եմիսի տուրքերը: Այս տքնութիւններուն քաղաքական գոյն կը տրուի սակայն, իբր թէ Յեղափոխութեան անուամբ նպաստահաւաքութիւն մը ըրած ըլլար: Ահագին զրկանքներու կուրծք տալով՝ հազիւ կ'ազատէ օձիքը կեդրոնի կառավարութեան ձեռքէն: Յետոյ կը նուիր-ուի շինարար գործին, իրիմեանէն հասած մասնակի նպաստներով նորոգելով Ս. Գերեզմանի գմբէթի վերաբը, մայր-տաճարի որմերը, ուսումնարանը ևն., — նաև կառուցանելով Բոճեղ Զորի եւ ուրիշ տեղերու գոմեր, — իսկ 1913ին՝ վանքին Ս. Գեորգ եկեղեցին որ 1866ի Շարժէն վնասուած էր: Նշանակութեան արժանի իր մէկ գործն ալ վերին Կվարս ըստուած ընդարձակ հողերու դատին փոխանորդութիւնն էր զոր 1881էն սկսեալ վարելով՝ դատը շահեցաւ: — 1904ի Սասնոյ ահաւոր կոտորածին՝ ինք էր որ Մուշ փութաց և արկածեալ ժողովուր-դը հովուեց եւ անդեամբ, մինչ Ս. Կարապետի վանքը զերծ պահելու համար յեղ. ոտնձգութիւններէ՝ Համետեան կառավարութիւնը հոն կը զրկէր 200 զօրք, որոնք խելօք կեցան մինչեւ Սահմանադրութեան հոչակումը, շնորհիւ Հայր Սուրբին շրջահայեցութեան: — Դաշնակցական: — Խարսխանեան Ս. ի մահէն վերջ, անոր երբ կը յաջորդէր, ծերունազարդ վարդապետը նախկին իր կորովը կո-րուած՝ կը հակառակի ինքնապաշտպանութեան գործին եւ կը յորդորէ ժողո-վուրդը որ զգուշ շարժի: — Շատ մը երեւելիներու հետ զինքն ալ բոկոտն դուրս կը հանեն Մուշէն և Ալի Զոնան գեղին մէջ կ'այրեն նաւթով:

614. ՍԱՀԱԿ Ծ. Վ. ՕՏԱՊԱՇԵԱՆ. — Են. Սվազ 1875ին. Արմաշական. Վրդ.պտ. ձեռնադր. 1901ին. Կեդրոնական և «Նոր Դպրոց» դասաւան-դած հայկ. մատենագրութիւն ու կրօնք, նաև ստանձ-նած՝ ծննդավայրին Արամեան վարժարանի տեսչու-թիւնը: 1905էն ի վեր վարած է տեղապահի և ա-ռաջնորդի պաշտօններ Սվազ, Արասիա, Մարզուան, Սամսոն և Պրուսա (1912-4), որմէ յետոյ անձնուիրա-բար գաւառ մեկնած՝ պատրիարքական հրահանգի մը համաձայն: — Պօլսոյ և գաւառի բոլոր աշխահական-ներուն ու եկեղեցականներուն մէջէն առային զոհը՝ Պարտականութեան ճամբուն վրայ ինկած:



615. ՎԱԳՂԵԱԿ Ծ. ՎՐԴ. ԹՈՐԻԿԵԱՆ. — Ենած է 1870ին. Վրդ.պտ. ձեռնադր. 1901ին. Միաբան Սեբաստիոյ. Ատեն մը վանահայր եղած է Ածպտերի, իսկ վերջերը Շ. Գարահիսարի առաջնորդ՝ մինչեւ 1915:

616 ՊՍԱԿ Ծ. ՎՐԴ. ՏԷՐ ԽՈՐԷՆԵԱՆ. Ենած է 1882ին. Ար-մաշական. Վրդ.պտ. ձեռնադր. 1905ին և Դպրեվանքը դասախօսած: Պահ մը Պէպիւքտէրէի քարոզիչ Պօլիս մալէ ետք՝ մեկնած է գաւառ, իբր տեղա-պահ և առաջնորդ 1907էն 9 Քղիի, եւ 1911էն 15 Խարսերդի: — Երկերը. Սե-բեռն եպսկ.պատմիչ (3 հատոր), Խորհեան գաւառ (4 հատոր), Գրքըլպաշուր՝ ան ծա-գումը եւն., բոլորն ալ անտիպ՝ պատ-մական և ազգագրական ուսումնասիրու-թիւններ:



617. ՇԱՆԱՐՇ Ծ. ՎՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ. — Ենած է 1881ին. Ար-մաշական. Վրդ.պտ. ձեռնադր. 1905ին. Ատեն մը ֆոխ-տեսուչ էր Դպրեվան-քին, իսկ վերջերը Եւզոկիոյ առաջնորդ՝ մինչեւ 1915:

618. ԳԵՂԱՄ ՎՐԴ. ԹԷՎԷՔԷԼԵԱՆ. — Ենած է Էնտիբէս (Շ. Գարահիսար. Արմաշական. Վրդ.պտ. ձեռնադր. 1909ին. Եննդավայրը, յետոյ Պօլիս կրթ. և քարոզչական գրադուսներ ունեցած է 2 տարի, մինչեւ առաջ-նորդ ընտրուիլը Քղիի (1912-5): — Հեղինակ Նոր կշիռ՝ նոր արժիք՝ գրքովին. աշխատակցած «Հայրենիք»ի, «Ազատամարտ»ի և այլ հանդէսներու:



617.

618

619

619. ՄԼԻՏԻՉ ՎՐԴ. ԶԼՂԱՏԵԱՆ. — Ենած է 1871ին. Արմաշա-կան. Վրդ.պտ. ձեռնադր. 1898ին. Առաջն. տեղապահ Պայպիտի, յետոյ Տիգ-րանակերտի՝ մինչեւ 1915:

620. ԱՆԱՆԻԱ Ծ. ՎՐԴ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ. — Են. Տարէնտէ (Սվազ) 1864ին. 1888ին երուսաղէմ անցնելով՝ Ս. Տեղերուն ծառայած և կա-ռավարիչ կարգուած ժառանգաւորաց վրժերն.ի. Վրդ.պտ. ձեռնադր. 1892ին՝

Յարութիւն Պատր. Է. Միաբան Երուսաղէմի: Բանի տարի Ս. Փրկիչ և Ս. Աստուածածին վանքերուն տեսչութիւնը վարելէ վերջ՝ Զարդի վաղորդային անցած է Եդեսիա, իբր տեղապահ, յետոյ առաջնորդ՝ մինչև 1907: — Առաջնորդ Բաբերդի՝ մինչև 1915:

621. ՊԱՐԳՅԻ Ծ. ՎՐԳ. ԳԱՆԻԷԼԵԱՆ.— Ծն. Հասթէօյ 1881ին: Արմաշական, Վրդպտ. ձեռնադր. 1905ին: Պաշտօնավարած իւր տեղապահ և առաջնորդ՝ Քէօթահիւս-Աթ. Գարահիսար, Բաբերդ, իսկ 1914ի վերջերջ՝ Պրուսա, ողբացեալ Օտապաշեան Վրդ.ի պաշտօնով հոնկէ մեկնումին: — Աշխատակցած է Վոյս և Վճառք կրօնաթերթերուն:

622. ՍՈՒՐԷՆ Ծ. ՎՐԳ. ԳԱԼԷՄԵԱՆ.— Ծն. Բուշնա (Արաբկիր): Աշակերտ Պրուսայի շերամաւուծական վրձրն.ի: Արմաշական: Վարդապետ ձեռնադր. 1909ին: Բարողիչ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ և կրօնուսոյց Կեդրոնականի (1910): Առաջնորդ Բաղէշի (1911-5):



622



623

623. ԱՐՏՍԱԽԱԶՅ Ծ. ՎՐԳ. ԳԱԼԷՆՑԻՐԵԱՆ.— Ծն. Եջնիճէ (Պրուսա) 1876ին: Արմաշական, Վրդպտ. ձեռնադր. 1901ին: Առաջն. փոխառորդ Երզնկայի (1902-7), յետոյ տեղապահ Եւդոկիոյ և առաջնորդ Եդեսիոյ՝ մինչև 1915: — Երկերը. Միութեանական հարց եւ Շնորհայի, Սասուններ ձայնդր.):

624. ՄԵԼԻՔԻՍԵՒԵԿ ՎՐԳ. ՀՈՎԻԻՆԵԱՆ.— Առաջնորդ Երզնկայի և Բէմախի:

625. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ԵՂԻՍԷՆԵԱՆ.— Ծնած է Կիւրին 1864ին: Աշխարհակրօնութեանը՝ եղած է ուսուցիչ եւ ազգ. գործիչ, իրեն վիճակելով բանտ-աքորը: Սահմանադրութեան հռչակումին՝ Պարսկաստանէն եկած է Պոլս եւ վրդպտ. ձեռնադր. 1910ին: Արմաշական: Դպրեվանքը տարի մը Թրք.ի դաս աւանդելէ և Հասթէօյ քարոզիչ մնալէ վերջ՝ առաջնորդ ընտրուած է ձանկի վիճակին (Սամսոն) 1912էն 15:

626. ԳԻՈՐԳ ՎՐԳ. ՆԱԼՊԻՆՏԵԱՆ.— Ծնած է 1857ին: Միաբան Աղթամարի, Վրդպտ. ձեռնադր. 1887ին: Ատեն մը վանահայրութեան պաշտօն վարելէ վերջ, առաջն. ընտրուած Սղերդի՝ մինչև 1915:

627. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՎԱՐԳԱՆՆԵԱՆ.— Ծնած է 1868ին: Միաբան Կտուցի, Վրդպտ. ձեռնադր. 1898ին: Առաջնորդ Զարսանձաք-Զմշկածափ:

628. ԿՈՐԻՆ ՎՐԳ. ՍՐԱՊԵԱՆ.— Ծնած է 1847ին: Միաբան Գլակայ, Վրդ. ձեռնադր. 1902ին: Նախ տեղապահ Սղերդի, յետոյ Բասենի՝ մինչև 1915:

629. ԿԱՐԱՊԵՏ ՎՐԳ. ՅԱԿՈՐԵԱՆ.— Միաբան Երուսաղէմի: 1915 Ձնքուշ կը գտնուէր:

630. ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ԼԻՅՈՐԵԱՆ.— Ծնած է 1875ին: Միաբան Երուսաղէմի: Վրդպտ. ձեռնադրուած 1902ին: Նիսկ տեսուչ Պէյրութի:

631. ՍՍՀԱԿ ՎՐԳ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.— Միաբան Երուսաղէմի: Տեսուչ Պէյրութի:

632. ՅՈՎԱԼՓ ՎՐԳ. ՍԱՂՈՍՈՆՆԵԱՆ.— Ծնած է 1860ին: Միաբան Երուսաղէմի: Վրդպտ. ձեռնադր. 1886ին:

633. ՆԱՐԻՆՆ ՎՐԳ. ՄԿՐՏԻԶԵԱՆ.— Ծնած է 1864ին: Միաբան Եւդոկիոյ Ս. Յովակիմ Աննա վանքին: Վրդպտ. ձեռնադրուած 1895ին: Փոխառորդ Եւդոկիոյ:

634. ՍՐԳԵՐ ՎՐԳ. ԵՕԹՆԵՂՈՍՊԵԱՆ.— Առաջնորդական փոխառորդ Խնուսի:

635. ԲԱՐՍԵՂ Ծ. ՎՐԳ. ՄԱՆԿՐԵԱՆ.— Ծնած է 1850ին: Միաբան Կիլիկիոյ, Վարդապետ ձեռնադրուած 1885ին:

636. ՍՍՀԱԿ ՎՐԳ. ԶՈԼԱՔԵԱՆ.— Միաբան Սիսի:

637. ՆԱՐԻՆՍ Ծ. Վ. ՏԷՐ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԵԱՆ.— Ծնած է 1845ին: Հին Արմաշական, Վարդապետ ձեռնադրուած 1870ին:

638. ՅՈՎՀ. ՎՐԳ. ՄԱԻՆԵԱՆ.— Ծնած է 1858ին: Հին Արմաշական, Վարդապետ ձեռնադրուած 1892ին:

639. ՕՉԱՆ ՎՐԳ.— Կիւմիւշխանէի վանքին վանահայր:

640. ՊԵՏՐՈՍ ՔԷՆՅ. ԳՍՍԵԱՆ.— Առաջնորդական փոխառորդ Ակնայ, 52 տարու, բեմախօս, ատենօք ուսուցիչ և երանդուն գործիչ (Դաշնկց.):

641. ՅՈՐՈՒԹԻՒՆ ՔԷՆՅ. ՏԷՐ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ.— Ծնած է Այնթապ 1866ին: Բահանայ ձեռնադրուած Եդեսիա 1897ին: Առաջնորդական փոխառորդ Այնթապի:

642. ՎԱՐԳԱՆ ՔԷՆՅ. ՍՈՒՆԵԱՆ.— Ծն. Բինկեան 1863ին: Նախ կրթութիւնը հոն ստանալէ վերջ 3 տարի կը հետեւի դեղագործութեան: 1884ին Պոլս գրատուն մը կը հիմնէ: 1889ին կը շրջապալի Եւրոպա և կ'այցելէ Բարիդի արուեստահանդէսը: Դարձին՝ հիւսուածեղէնի գործարան մը հաստա-

տերով պատուանշան կ'ստանայ 1892ին ծննդավայրը կ'երթայ և ուսուցչութեամբ կ'ըզադի՝ մինչեւ իր քահանայ ձեռնադրուիւ (1897), 12 տարի պաշտօնավարելով Զմառա գիւղը (Տիվրիկ)։ Կը հրաւիրուի խորհրդ, Ս. Կարապետ թաղին իբր քարոզիչ քահանայ, միաժամանակ աւանդելով Թիկատինցիի դպրոցին եւ աղջկանց Սրբատեան ճեմարանին մէջ պատմութեան, աշխարհագրութեան և կրօնի դասեր։ Հին ու նոր Ուխտի դասագիրքերէն զատ՝ կը թողու պատմ. անտիպ երկեր, Վաղեմի աշխատակից պօլսահայ թերթերու՝ կրօնա-քարոյական յօդուածներով։ Իբր «Եղեղափոխական» դէմք, Սարսափի օրերուն՝ խորհրդի բանտը — Թիկատինցիի սենեկակից — ուր գրած է 2 գործեր, և ուր այլ մտաւորականներու հետ նահատակուած է հուսկ ապա՝ շէնքին հրկիզման պահուն։



643/647. ՄՈՒՇԻ ՄԻՍԻՍԻԱՆՆԵՐ. Եղիշէ Պալուսի, Կոմիտաս Արծրունի, Եղիշէ Կարապետեան, Ստ. Պաղտասարեան, Կրպ. Լարիեան (Ս. Կարապետի վանքէն՝ բոլորն ալ նահատակ վարդապետներ)։

Ո՛րչափ հարուստ էր Հայաստան իր պատմական գեղեցիկ վանքերով ու սրբավայրերով որոնք քարուքանդ են հիմա։ Աւելորդ է ըսել թէ ատոնց վանահայրերուն եւ անհամար քահանաներուն — բոլորն ալ նահատակ — անուններն ունենալ եւ անցունել մահագրութեան այս գլխուն մէջ՝ սահմանէն դուրս է ամէն հնարաւորութեան։ Երախտապարտ պիտի մնայինք եթէ վերապրող հայրենակիցներ բարի ըլլային ատոնցմէ կարեւոր դէմքերը միայն հաղորդել մնա՞ իրենց բնակավայրերով, որպէսզի կարող ըլլայինք զետեղել զանոնք ՅՈՒՇԱՐՁԱՆԻ Բ. տպագրութեան մէջ։ — (Ամէն տեղեկութիւն, կենսագրական, լուսանկար եւն. կը խնդրուի ուղարկել Օ. Արզուման տպարան, Կ. Պօլիս, Յակոբեան խան, «Թէոդիկ» անունին)։

Դ. — ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ (ՀՌՈՍԷԱԿԱՆ) *

648/656. ԿԱՐԻՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Յովս. Քչուրեան, Յովս. Աբրահամեան, Յովս. Զօհրապետեան, Պօղոս Զոտոյեան, Յակոբ Խաչատուրեան (Թուան գիւղ), Ալեքս. Ալեքոբեան և Յակոբ Տէր-Ներսէսեան (Հինձ գիւղ), Մարտ. Ղազարեան (Խապատ գիւղ), Ստ. Գրիգորեան (Նոր-շէն գիւղ)։

(*) Քաղաած եւ կենսագրութիւնները համառօտուած՝ Վիենն. Միխրարեան Հ. Յովսէփ Տէր-Մարգարեանի ինկատար մահագրութեան (մեռագիր)։

657/679. ԽՈՏՈՐՋՈՒՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Յարութիւն ֆիւրազեան, Ստ. Զաքարեան, Յակոբ Քէշիշեան, Զակոբ Մելիքեան, Աթանաս Ղազարոսեան, Յարութիւն Եանդղեան, Ստ. Լաչինեան, Յովս. Գարագաշեան, Պօղոս Գարագաշեան, Պետրոս Ապաղեան, Ա. Դրոս. Բրիստինեան, Յարութիւն Թուրշեան, Պօղոս Գասպարեան, Փրանկ. Նանեան, Ստ. Աբողեան, Պետր. Ռեհանեան, Իգն. Զէրշեան, Պօղոս (Արդուինէն, Վարդան Ղազարեան) — Կարմիր գիւղէն, Յով. Ավտ լեան, Կրպ. Վարդապետեան, Յակոբ Յովսէփեան, Յովս. Ներսէսեան։

680. Ն. ՄԱՏԹԷՅՈՍ ՎՐԳ. ՀԱՅՆԱՆ. — Խոտորջուրէն, Վիենն. Միխթարեան։ Ծն. 1868ին եւ ձեռնադր. 1891ին. — Երկերը. Մաթթոսի Աւետարանը (1898, ոտանուոր), Հին աւանդական հեթանոսներ (Խոտորջուրի, 1907), Տաղարան հոգևոր (1910), Ժողովրդ. ոտանաւորներ (իր ծննդավայրին), Առածներ եւ անկէմներ տպ. Թիֆլիզ, Խոտորջուր գաւառաքարաքան ընդ մահով)։



680



688

681/683. ՍԼԱՇԿԵՐՏԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Յովհ. Հուրիկեան, Իգնատիոս քահանայ, Պետրոս Նուրիճանեան։

684/687. ՌԱՍՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Պօղոս Թուրլաճեան, Կրպ. Եկէնեան, Ներսէս Սուքիասեան, Անտոն Ք. Եկէնեան։

688. ՅԵԿԱՐ ԵՊՍԿ. ԹՈՓՈՒՋԵԱՆ. (ՄՈՒՇ). — Ծն. Պարտիզակ 1855ին. Նին, կրթութիւնը հոն ստանալով. կ'անցնի Հռոմ՝ Ուրբանեան վարժարան։ Զեռնադրուելէ վերջ՝ հովուական պաշտօններ կը վարէ Պանտրմա, Կեսարիա եւ Վան. 1911ին Մշոյ թեմին Եպիսկոպոս ընտրուելով՝ հոն կը մնայ մինչև 1915։

690/691. ՄՇՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Մկրտ. Տէր-Մկրտիչեան, Մետր. Ուղուսեան, Պօղոս Գուլումեան։

692/693. ՍՎԱԶԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Սահակ Մատոյան և Պայեան։

694/695. ԿԻՐԻՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Ղեւոնդ Քեքեւեան և Սահակ Նահապետեան։

696/697. ԹՕՂԱԹԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Անտոն Մէրայտըրեան եւ Պօղոս Բոլոտեան:

696. ՄԻՔԱՅԵԼ ԵՊՍԵ. ԽԱԶԱՅՈՒՐԵԱՆ (Մալաթիա). — Ծն. Խարբերդ 1846ին: Ուսումը կ'ստանայ հոն և Մալաթիա: Յետոյ Զմուռի վանքը կը դրկուի և ձեռնադրուելով Մալաթիա կ'անցնի: Տարիներ վերջ Պօլիս կը կանչուի և 1899ին կ'ընտրուի եպսկ. Մալաթիոյ ուր կը մնայ մինչեւ 1915:

697/704 ՄԱԼԱԹԻՐՅՈՒՆՆԵՐ. ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Ղեկնող Խորխոսեան, Յովհ. Կոպեան, Ստ. Կոստիկեան, Կղեմէս Օինիրեան (Պէհէսնի), Միք. Տէր-Աստուածատուրեան և Կրպտ. քահանայ (Ատիամանէն), Իգն. Շահինեան (Կեվրեկէն), Մեսր. քահանայ (Հէքիմիանէն):



696



705

705. ԱՅԵՓԱՆ ՎՐԴ. ՍԱՐԵԱՆ (Տրապիզոն). — Վերետկ. Մխիթարեան: Ծն. Գաղատիա 1865ին և ձեռնադրուած 1887ին: Հռոմ Աստուածաբանութեան վկայական ստանալով՝ Ս. Ղազարու վանքը կը դառնայ և յաջորդաբար կը վարէ ուսուցչութեան, «Բազմավէպ»ի խմբագրութեան և տպարանի տեսչութեան պաշտօնները: Այնուհետեւ երկար ատեն կը մնայ իր ծննդավայրը, հոնկէ ալ Տրապիզոն՝ մինչեւ տեղահանութեան տարին, վարժարանի իւր տեսուչ. — Երկերը. Աստուածաբանութիւն ծեսական (1894), Մազնիսական իւն (1901), Էպիկեռու ծագումը (1905):

706. Հ. ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ (Տրապիզոն). — Վերետ. Մխիթարեան: Ծն. Մուշ 1882ին և ձեռնադրուած 1902ին: Վանքէն ու Մ. Ռափայէլեանի մէջ ուսուցչական պաշտօն վարելէ ետք՝ Ֆրիպուրկ կ'անցնի և Համալսարանէն Դպրութեանց պրոֆեսոր, կը դառնայ Ս. Ղազար, վարելով «Բազմավէպ»ի խմբագրութիւնը (1906-8) և հրատարակելով գողտրիկ քերթուածներ և բանասիրականներ: Ուսուցչական պաշտօնով 1914ին կը մեկնի Տրապիզոն՝ մինչեւ տեղահանութեան տարին, բախտակից ըլլալով իր տառաբարտ կարգակից Եղբօր՝ Սարեան Վ.ի: Երկերը. Հայ կայսերի Բիզանդիոնի (2 հատոր, 1907), Համիթի օսպայում (1910) Ամայիս Մամիկոնեան ծածկանուէնով, Շարպոյիան ան Օռիան ֆրնս. գիրքը:

707. Հ. ԹՈՎՄԱՍ ՎՐԴ. ՕՏԱՊԱՇԵԱՆ (Տրապիզոն). — Վերետկ. Մխիթարեան: Ծն. Տրապիզոն 1886ին և ձեռնադրուած 1911ին: Պահ մը ու-



706



707

սուցչ. պաշտօն վարելէ ետք՝ ծննդավայրը կ'ուղարկուի և բախտակից կ'ըլլայ հոն իր կարգակից Եղբ. յրեբուն: Սլրահար էր աշխատողական ուսմանը:

708 ԱՆԴՐԷԱՍ ԵՊՍՍ. ԶԵԼԷՊԵԱՆ (Տրապիզոն). — Ծն. Մէրտին 1818ին: Ուսումը հոն եւ Հռոմ ստանալէ յետոյ՝ Տրապիզոն կ'ուղեւորի, ուրկէ ծննդավայր. եւ հոն քահանայ կը ձեռնադրուի Նազարեան Արքեպիսկոպոսի որուն տանէն վերջ եպսկ. ընտրուելով կը յաջորդէ անոր 1899ին: Երկար տարիներ վիճակաւոր Տրապիզոնի թեմին:



708



709

709. ԻԳՆ. ԱՐԲՆՊՍԿ. ՄԱԼՈՅԱՆ (Մէրտին). — Ծն. Մէրտին 1878ին: Նխն. կրթութիւնը ստանալէ վերջ կը մեկնի Զմառ, որուն վանքէն ընթացաւորտ՝ քահանայ ձեռնադրուելով ծննդավայր կը դառնայ: Ժամանակ մը հոն պաշտօնավարելէ յետոյ՝ Պօլիս կուգայ եւ կը կարգուի քարտուղար Կաթողիկոսարանի, ապա եգիպտոս կ'ուղարկուի առաքելութեան: Տարիներ վերջ Պօլիս կը կանչուի, ընտրուելով Արքեպիսկոպոս Մէրտինի ուր կը մնայ մինչեւ տեղահանութեան տարին:

710/714. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Պողոս Խանպէկեան, Յովս. Նուրեան, Մկր. Ամպրեան, Յովս. Խաչատուրեան, Մկր. Մեղմունի:

715/716. ԱՄԱՍԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Գնէլ և Պայթունի քահանաները:

717/722. ՄԱՐԶՈՒԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ — Յովս. Յողունի, Գարեգին Տօնիկեան, Սողունեան, Միմոն Պայեան, Գր. Հատիկեան, Հ. Աղաճանեան վրդ. (Յիսուսեան Միաբ.):

723/731 ԳԱՂԱՏԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Գէորգ Էջիգեան, Յար. Ալակէօզեան Կղեմէս ձիւնիմեան. Գէորգ Վեթանեան, Յովս. Բուատեան, Յովս. Մաքսուտեան, Յովս. Գաղեան, Յովհ. Թօգաթլեան, Յովհ. Չիլտէմեան:

732. ԱՅԻԹԱՊԻ ՎԱՐԴԱՊԵՏ. — Վարդան Պահէճեան:

733/735. ԱՅԱՆԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Յար. Լաչինեան, Անտոն Մարուժեան, Յովհաննէս Գուլումճեան:

736/738. ՏԻԱՐՊԷՐԻՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Յր. Նազաշեան, Պողոս եւ Անտոն Մէրտինցիները:

739. Հ. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ Մէրտին). — Վենետկ. Միխայիլեան: Ծն. Մէրտին 1880ին եւ ձեռնադրուած 1906ին: Հռոմ Աստուածաբանութեան վկայական ստացած: Յանցառակի աշխատակցած «Բազմավէպի»:



739



740

740. ԱՅԵՓԱՆ ԵՊՍԿ. ԻՍՐԱԵԷԼԵԱՆ. (Խարաբերդ). — Ծնած է Մուշ 1866ին: Երանան դպրոցը հոն աւարտելով՝ կ'անցնի Հռոմ ուր ուսումը կը լրացնէ եւ քահանայ կը ձեռնադրուի: Յետոյ իբր ժողովրդապետ կ'ուղարկուի Արարկիւր ուր կը մնայ երկար ատեն, մինչև իր եպիսկոպոսացումը Խարաբերդի թեմին (1899 1915): Բաջանմուտ լատիներէնի եւ ճարտասան:

741/746. ՄԷՐՏԻՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Մկր. Գալեօնճեան, Սահակ Թէրզիպաշեան, Սահակ, Արսէն, Վարդան եւ Յովհաննէս:

747/749. ԽԱՐՈՆԵՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՔ. — Գրեգոր Փիլիպպոսեան, Սարգիս Խաչատուրեան, Ղեւոնդ Վրդ. Միլասեան:

750/761. ԱՆԱՐԱՏ ՅԶՈՒԹԵԱՆ ՄԻԱՐ. ԿՈՒՍԱՆՔ. — Կամելա Փիլիպպոսեան (Մեծաւորուհի), Գոյր Իսկուհի, Ռամելա, Երանուհի (Հ ն



ԿՈՒՍԱՆՔ ԿԱՄԵԼԻԱ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

ալ Թօգաթէն, Գոյր Շուշան (Մալաթիպէն), Վասիլուհի Մեծաւորուհի, Գոյր Մաքրուհի, Համասիլու Յ ն ալ Խարաբերդէն, Գոյր Էմիլիա, Մազտաղինէ, Գլեմանթին եւ Ժերմէն (Հ ն ալ Տիարպէթիէն):



Շնորհակալութիւն գրչի եղբայրներու, — մասնաւորապէս «Ազատամարտ»ի Ծերուկին եւ Պրն. Վահէ-Հայկի — որոնք նիւթի ու նօթի հեւիհեւ հաւաքման մեր գործը դիւրացուցին այնքան ազնուօրէն:

Բերա, Մարտ - Ապրիլ 1919

ԹԷՈՒԴԿ


ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ՎԱՐՎԱՐՈՂՆԵՐՈՒ



Գ Է Պ Ի Ա Յ Ա Շ

Հ Ի Ն ՈՒ Ն ՈՐ Յ ՈՒ Շ Ե Ր



ԱՅ ազգն իր հայրենի դարաւոր երկրէն վտարելու եւ բնաջինջ ընելու Իթթիհատի եւ գերման դիւա- յին խորհուրդին առաջին երկուները կրեց պոլսե- բնակ Հայութեան մտաւորական դասակարգը : 1915 Ապրիլ 11, 12 եւ 13ի սնմոռանալի օրերը տեղի ունեցած միա- հաղոյն ձերբակալութիւնը մահասարսուռ արհաւիրք մը սփռեցին գրէ- թէ բոլոր Հայերու սիրտերուն մէջ : Գերման ծախլիկ կայսեր ծախաւեր խորհրդով նիւթուած այս Տարագրութեան ճիւղային ծրագիրը գաղտնիք մը չէր սակայն ամէն անոնց համար որոնք ուշադիր կը հետեւէին օր- ուան իրադարձութիւններուն : Մինչ ճավիտ Բարիզի մէջ Օսմ. փոխա- ռութիւն մը կնքելու յաջողելով՝ կոչուեքէ կոչուեք կը հրաւիրուէր, մինչ եւրոպական մեծ տէրութիւնք Հայաստանի բարենորոգմանց խնդիրն իսկապէս լուծուած կը նկատէին հայաբնակ վեց նահանգներուն համար եւրոպացի երկու բնիկներ ընտրելով, անդին Քայզերը եւ Իթթիհատա- կան կառավարութեան վարիչ պետերը գաղտնաբար կը նիւթէին հրէ- շային դաւադրութիւն մը՝ ընդդէմ բովանդակ Հայ ազգին որուն միակ յանցանքն ուրիշ բան չէր բայց եթէ երկրին բարեկարգութիւնն ու բարգաւաճումը պահանջել, անզուգականն Նուպար Փաշայի բերնով որ իր բովանդակ ոյժն ու կորովը ի սպաս դրած էր Հայ Ազգին այս ար- դար դատին իրականացման :

Առաջին անգամ ռուսական թերթերը եղան որ մատնանիշ ըրին այս դիւային ծրագրին իսկական գոյութիւնը : Ի մէջ այլոց Մօսկուա

հրատարակուող ռուս Կօրս Մօսկոյ թերթը մատնանիշ ըրած էր Տարագրութեան հրէշային ու թաքուն ծրագրի մը գոյութիւնը : Գերմանիա Անատուրուի հայաբնակ նահանգները գերման գաղթավայրի մը վերածելու իր խորախորհուրդ ծրագիրը յաջողցնելու համար պէտք տեսած էր մէջտեղէն վերցնել այն տարրը որ իր անգուգական կորովով, աննկուն ոգիով եւ անյողդողդ կամքով հզօր մրցակից մը պիտի հանդիսանար իր ոտնձգութիւններուն դէմ : Այդ տարրը Հայն էր, անվեհեր Հայութիւնն էր : Եւ արդարեւ Գերմաններն ի վաղուց հասկցած էին թէ ապագային Հայը միայն պիտի ծառանար իրենց դէմ : Այս յամառ մրցակիցը միանգամ ընդ միշտ մէջտեղէն բառնալու համար յաջողած էին խաբել եւ հմայել տիրող թուրք տարրին անմիտ կառավարութիւնը, եւ ընդհ. տարագրութեան գաղափարը թելադրած էին անոր : Թուրք թերթերէն Իգսամ, իր 1914 Յնվ. 17ի թիւով, միամտաբար կը փորձէր հերքել ռուսական Կօրս Մօսկոյ թերթին մատնանշած թագուն ծրագրին գոյութիւնը : Աւանդ որ այն ատեն մեր ազգային իշխանութիւնը Իգսամի միամտութեան չափ անփութութիւն ցոյց տուած էին, երբեք չանդրադառնալով թէ իրօք այդպիսի թաքուն ծրագիր մը գոյութիւն ունէ՞ր թէ ոչ :

Աւասիկ Իգսամի տողերը, զոր համառօտիւ յառաջ կը բերենք, իրապէս ապացուցուած նկատելով թէ հայ տարագրութեան եւ բնաջնջման ծրագիրը Համբերոպական Պատերազմէն առաջ իսկ նիւթուած էր Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ, քանի որ ան իսկապէս գործադրուեցաւ պատերազմի տեւողութեան միջոցին, նոյն ինքն Գերմաններու առաջնորդութեամբ : Իգսամն է որ կը խօսի . — «Մօսկուայի Կօրս Մօսկոյ թերթը մատնանիշ կ'ընէ թուրքեւգերման ծրագրի մը գոյութիւնը, որուն նպատակն է հայաբնակ նահանգներէն Հայերը հեռացնել եւ դէպի Միջագետք տարագրել : Ռուս թերթը կը յարէ թէ Գերմանիոյ եւ Թուրքիոյ տնտեսական շահերուն համապատասխան պիտի ըլլայ Հայաստանի մէջ բնակեցնել Իսլամներ, որոնք ի հարկին Կովկասի Իսլամներուն հետ միանալով պիտի կրնան լուրջ ընդդիմութիւն մը ընել սլաւական ոտնձգութիւններուն :» Թուրք թերթը կը յարէ . «Օսմ. Կառավարութիւնը այդ տեսակ բան մը ընելու պէտք չունի, վասն զի հայաբնակ վայրերու մէջ Իսլամներն են որ կը կազմեն մեծամասնութիւնը : Կառավարութիւնը եթէ կարծած ըլլար թէ Հայերը սլաւական հոսանքին պիտի ծառայեն, հիմակ Արեւելեան Անատուրուի մէջտեղ հաշտարար ու բարեկարգիչ քաղաքականութեան մը հետեւելու տեղ՝ անհաշտ ու հակառակ քաղաքականութեան մը կը հետեւէր, մինչդեռ Օսմ. Կառավարութիւնը, Հայերը գոհացնելու համար, թոյլտուութեան վերջին աստիճանին հասած է : Կառավարութեան ընթացքը ժողովուրդին մէջ հայրենակցական սէրը հաստատելու կը միտի եւ ո՛չ թէ իրար ձգելու : Արդէն մենք չենք կարծեր որ Հայերը սլաւական հոսանքին ծառայեն, վասն զի ի՞նչ օգուտ պիտի ունենան . եթէ այդ հոսանքը սկսի, միթէ Հայութիւն կը մնայ :» Իգսամ Գազազ Յարութիւն ամիրայի Թուրքիոյ

մատուցած ծառայութիւնները յիշատակել վերջ՝ միամտաբար կը հարցնէ . — Միթէ կարելի՞ է հատիւր հազարաւոր Հայերը դէպի Միջագետք ղեկ : Եթէ Հայերն իրենի իսկ հաւանին, գործադրութիւնն անկարելի է : Ի՞նչ հատկ կայ այսօր անհրաժեշտ անհրաժեշտ քանի որ հրատարակել : Նպասակ մը միայն կայ, այն է միշտ դժուարութիւններ յարուցանել Օսմ. Կառավարութեան դէմ :

Ինչ որ թուրք թերթն անկարելի կը կարծէր, այսօր իրականութիւն է սակայն : Հարիւր հազարաւոր անմեղ Հայերուն արիւնը խմող էնվէրներու եւ Թալէթներու նման մարդկային հրէշներու համար միթէ անկարելի բան կա՞ր այս աշխարհիս մէջ :



Կիրակի օր, Ապրիլ 12, Սկիւտար կ'անցնէի այցելութեան : Մամաթիոյ կայարանը պատահաբար իմացայ թէ Շք. գիշեր կարգ մը Հայեր ձերբակալուած էին Բիրայի մէջ : Իսկզբան յայնքան մեծ կարեւորութիւն մը չընծայեցի, բայց երբ Սկիւտար հասայ՝ հոն իմացայ թէ գիշերային ձերբակալութիւնները կարծուածէն շատ աւելի մեծ ծաւալ մը ունեցած էին, եւ թէ Սկիւտարի մէջ Հնչակեան Ակումբին անդամներէն ոմանք եւս նոյն գիշերը ձերբակալուած էին առանց ուրեք պատճառի : Բնականաբար խորին տխրութիւն մը զգացի, չկրնալով մեկնութիւն մը տալ այդ միահաղոյն ձերբակալութեանց շարժառիթին մասին :

Միտքս կ'զբաղեցնէր նաեւ ուրիշ իրողութիւն մը : Քանի մը օր առաջ, պատերազմական պաշտօնատան հայթայթիչներէն մին, Լուծֆի պէյ (ծագումով Ալպանացի), երբ աշխատած գրասենեակիս մէջ առանձին կը գտնուէինք, խորին վշտով մը ըսաւ . — Այս ձեր Հայերը չէ՞ն ամէնար կոր . հարիւր յիսունի հասաւ պաշտօնապէս արձանագրուող հայ խափիկներուն թիւը : Ձեր գլխուն վրայ դժբախտութիւն մը կը դառնայ կոր, Աստուած պահէ զձեզ : — Ի՞նչ կ'ըսէք, Լուծֆի պէյ, ես չեմ հաւատար ատոր, սխալ ըլլալու է : — Հաւատացէք ի՞նչ որ կ'ըսեմ, ես Հայերը կը սիրեմ եւ կը ցաւիմ ձեր վրայ :

Աւելորդ է ըսել թէ Լուծֆի պէյ նոյն ատենուան ոստիկանութեան պետ Պէտրի պէյի սերտ բարեկամն էր : Եւ խորին տխրութեամբ մը համակուած էի, քանի՛ կ'իմանայի ձերբակալուած Հայերուն անունները, որոնք որոշ դասակարգեր կը կազմէին, անուանի բժիշկներ, խմբագիրներ, գրագէտներ, դպրոցի տնօրէններ, երեսփոխաններ եւլն. :

Հօրեղբորորդուս Թէոդիկի բանտարկութիւնը զոր Սկիւտարի մէջ իմացեր էի, ալ աւելի կը սաստկացնէր տխրութիւնս : Մեր ընթրիքէն վերջ բովանդակ խօսակցութիւնը դարձաւ նախընթաց գիշեր տեղի ունեցած ձերբակալութիւններուն վրայ : Գիշերը կարծես կ'երկարէր եւ չէր լուանար, մինչ ես քունս կորսնցուցած, անհամբեր լուսնալուսն կ'ըս-

պասէի՝ Պօլիս իջնելու եւ ձերբակալութեանց մասին որոշ եւ ընդարձակ տեղեկութիւններ քաղելու համար :

Բշ. առաւօտ առջի շոգենաւով վար իջայ , եւ ամէն ծանօթ բարեկամներուս , որոնց կը հանդիպէի , ակնարկով հարցումներ կ'ուղղէի : Վերջապէս երբ գրասենեակ հասայ , հոն լիուլի տեղեկութիւն առի թէ ո՞ր դասակարգի անձնաւորութիւնք ձերբակալուած էին , եւ այն ատեն միայն համոզում գոյացուցի թէ քաղաքական նշանակութիւն ունեցող դէպք մըն էր այս եւ թէ հայ մատնիչներու կողմէ նախապէս պատրաստուած ցուցակներու վրայ կատարուած էր : Նախասկիզբն էր այս Հայ տարագրութեան դժոխային ծրագրին զոր Խթիհատական Կուսակցութեան դաւաճան պետերը պատրաստած էին Գերմանիոյ դժուարմբեր խորհուրդով :

Երեկոյեան մօտ գրասենեակէն դուրս ելած էի նամակատուն երթալու եւ հեռագիր մը յանձնելու համար : Վերադարձիս , գրասենեակին արտաքին դրան առջեւ կանգնած տեսայ անծանօթ մարդ մը , որ իսկոյն հարցուց ինձ .

— Հո՞ս Բիւզանդը ո՞վ է :

— Ո՞ր Բիւզանդը կը փնտռէք , Բիւզանդ անունով շատ մարդ կայ :

— Բանի մը ամիս առաջ Գօճաման - Օղլու խանէն հոս եկած է , այն Բիւզանդը կ'ուզեմ տեսնել :

— Ես եմ , հրամմեցէ՛ք :

— Ոստիկանութեան Ընդհանուր տնօրէնը զձեզ տեսնել կ'ուզէ , մէկտեղ պիտի երթանք :

Դիւրին է երեւակայել զգացած ներքին յուզումս , բայց իսկոյն ինքզինքս զսպեցի եւ առանց պաղարիւնս կորսնցնելու՝ գրասենեակէն ներս մտայ : Բաղդոնս դուրս ելած էր . իր որդւոյն ըսի թէ ոստիկանութեան կողմէ կանչուած ըլլալով հո՞ն կ'երթամ կոր : Ապա քաղաքային ոստիկանին հետ սանդուխէն վար իջանք եւ երբ Գայսէրի ծանին առջեւ հասանք , տեսայ որ հինգ գաղտնի ոստիկաններ խանը պաշարած էին : Անոնց պետն իսկոյն հրաման ըրաւ որ զիս ալ տանին ընդհ. ապահովութեան պաշտօնարանը , որ կը գտնուէր Հանրային Պարտուց վարչութեան շէնքին դիմացը , եւ որ ապա եղաւ Խթիհատի Կուսակցութեան արիւնազանգ բոյնը : Հոն մասնաւոր սենեակ մը առաջնորդուեցայ , որուն պատերը զարդարուած էին անթիւ լուսանկարներով : Գրասենեակին պետը հարցուց անունս , մականունս եւ զբաղումս , եւ իր առջեւ հանգչող ընդարձակ ցուցակի մը հետ բաղատելէ վերջ՝ հրաման ըրաւ որ տանին զիս , բայց ո՞ր , չէի գիտեր : Երբ Այս - Սօփիայի եւ Սուլթան Ահմէտի հրապարակը տանող ճանքան բռնեցինք , հասկցայ որ Կեղը. Բանտը կը տարուէի : Թէեւ ինձ ընկերացող ոստիկանին քանիցս հարցուցի թէ ո՞ր կ'առաջնորդէր զիս , սակայն չյաջողեցայ պատասխան մը առնել : Հազիւ Մէհտէրհանէի արտաքին դուռնէն ներս մտեր էի , բակին մէջ կեցող պատանի մը իր ընկերներուն մօտ վազելով , գոչեց , — Ահա՛ Բիւզանդ Բէչեանն ալ բերին :

Շուրջս նայեցայ տեսնելու համար անուանակից բարեկամս , որուն ձերբակալութիւնը լսած էի արդէն , բայց ոչ որ տեսայ , արդեօք Բիւզանդ Բէչեանին հե՞տ կը շփոթէին զիս , կը հարցնէի իւրովի : Վերջապէս գրասենեակ մը առաջնորդուեցայ , որուն պատերն ալ զարդարուած էին դատապարտուած եւ կասկածելի անձանց նկարներով : Հոն ալ նոյն հարցումներն ու բաղդատութիւնը լայնածաւալ ցուցակի մը հետ : Յետոյ հրաման ելաւ որ վար տանին զիս : Երբ գրասենեակէն դուրս կ'ելլէի ինձ ընկերացող ոստիկանին հետ , դուռ մը բացուեցաւ եւ սեւազգեստ անձնաւորութիւն մը դուրս ելլելով ըսաւ . — Սյս էֆէնտին ալ վերի էֆէնտինն քով դրէ՛ք :

— Ինչպէ՞ս... հոս գիշերելու դատապարտուած եմ . եթէ այդպէս է , հրաման ըրէ՛ք որ ընտանիքիս հեռագիր մը ուղղեմ եւ բացակայութիւնս իմացնեմ , որովհետեւ տանս մէջ ինձմէ զատ այր մարդ չկայ :

— Եթէ այդպէս է , վա՛ր տարէք , պատասխանեց :

Վերջապէս երբ բանտին դուռնէն ներս մտայ , վանդակորմին առջեւ շարուած տեսայ շատ մը ծանօթ դէմքեր , որոնք նոյն օրն իսկ ձերբակալուած էին : Աղբքս . Փանոսեան հեզնական ժպիտով մը ողջունեց զիս , «Օ՛ , բարով եկաք , հազար բարով» գոչելով : — Ձեզ կարօնալուս համար եկայ , պատասխանեցի :

Անմիջապէս հեռագիր մը ուղղեցի աներորդւոյս , որ հեռագրատան դրացի ըլլալով հանդերձ՝ հազիւ յաջողօր օրը ստացեր է զայն : Դիշերն անցուցինք Մէհտէրհանէի ընդարձակ պարտէզին մէջ կառուցուած փայտակերտ շէնքի մը մէջ , որ երբեմն իբրեւ դպրոց կը ծառայէ եղեր դեռատի բանտարկեալներու : Քանի մը գրասեղաններ կային , որոնց վրայ լուսուցիչներ գիշերը : Յաջորդ օրը , երկու խումբի բաժնեցիներ բանտարկեալներս . մէկ մասն ազատ թողուցին , իսկ միւս մասը նոյն շէնքին մէջ արգելափակեցին : Չկրցանք մեկնութիւն մը տալ այդ իւրտրութեան : Մեր հէք ընկերները գիշեր ցերեկ արգելափակուած կը մընային , մինչդեռ ես ու ընկերներս ազատ համարձակ կը ճեմէինք պարտէզին մէջ եւ բացօդեայ ժամանակ կ'անցունէինք : Փանոսեան մէկ օր միայն մնայէ վերջ , ազատ արձակուեցաւ : Ընդամէնը 29 հոգի էինք , որոնցմէ 13ը արգելափակուած էին :

Մեր բնակութեան սահմանւած էր բարուկիր եւ յոյժ ընդարձակ սրահ մը , խոնաւ , բորբոսահոտ , պատուհաններու նուազութեան պատճառաւ : Հոն էին նաեւ հինգ վեց թուրք դատապարտեալներ որոնցմէ մէկուն փորձուեցայ հարցնել հետաքրքրաբար . — Ձմեռն ի բուն այս ցուրտ ընդարձակ սրահին մէջ առանձին էիք : — Ո՛չ , մենք հոս 125 հոգի էինք , մեզմէ հարիւր քսան հոգին չեթէ գրուելով մեկնեցան : Մենք չուզեցինք չեթէ գրուել , որովհետեւ մեր պատիժին երեք չորրորդ մասը քիչ ատենէն լրանալու մօտ է եւ Կայսերական ներման արժանանալու յոյս ունինք :

Եօթն օր մնացինք Մէհտէրհանէի բանտը , անհամբեր սպասելով կա՛մ մեր ազատութեան , կա՛մ տարագրութեան : Բանտին տնօրէնը

նախորդ արքայազններուն ընկերացած էր մինչեւ էնկիւրիւ : Ուրբաթ վերադարձաւ :

Կիրակի գիշեր ճաշելէ վերջ , երբ սրահին մէջ համախմբուած՝ մեր վիճակին վրայ կը խօսակցէինք , ահա սանդուխէն վեր կ'ելլեն երկու պաշտօնեաներ , տնտրակ մը եւ հրագ մը ձեռքերնին : Անոնցմէ մին ըսաւ .

— Ձեր մէջէն ո՞վ որ վրան դրամ կամ արժէքաւոր իրեր , ոսկի կամ արծաթ ժամացոյց եւ այլ առարկաներ ունի , արձանագրել տալու պարտաւոր է . ունեցածներնիդ ըսէ՛ք որ արձանագրենք :

Իսկզբան չկրցանք ունէ մեկնութիւն տալ այս պահանջումին , եւ ենթադրաբար կարծեցինք թէ գողութեան դէպք մը պատահելու պարագային՝ գողն ու գողօնը դիւրաւ գտնելու համար էր իրենց այս դիմումը , մինչդեռ իրողութիւնը տարբեր է եղեր : Կէս գիշերը հազիւ երբ 2 ժամ անցեր էր երբ նոյն անձերը յանկարծ արթնցուցին զմեզ եւ իւրաքանչիւրէս 192 դրշ. եւ 10 փարա պահանջեցին : Ի՞նչ պիտի ըլլար այս 10 փարան , թերեւս կամուրջին դրամն էր , կ'ըսէինք իրարու :

— Ի՞նչ բանի համար է այդ դրամը , հարցուցինք :

— Ձեր ճամբորդութեան ծախքն է . վաղ առաւօտ իսկ կանուխ պիտի մեկնիք դէպի էնկիւրիւ , պատասխանեցին մեզ :

Անոնք որ կրնային վճարել՝ հատուցին , իսկ անոնք որ ամբողջապէս չունէին նոյն գումարը , իրենց ունեցածներն վճարեցին : Այլեւս չկրցանք մեր այքերը փակել եւ մեր պատրաստութիւնը տեսանք , առաւօտուն մեկնելու կազմ եւ պատրաստ գտնուելու համար :

Հազիւ արշալոյսը ճեղքուած էր , զինուորական կարգով ճամբայ հանուեցանք դէպի կամուրջ : Մեր մէջէն Գարթալցի ծերունի մը , Վրդանէս աղա , որ արիւններթութենէ կը տառապէր՝ աղաչեց որ կառք մը վարձէ , որովհետեւ քալելու անկարող էր , բայց մեզ ընկերացող անոպայ ոստիկան - զինուորներէն մին չարաչար ապտակեց զայն եւ գետին տապալեց : Այն ատեն միայն վերահասու եղանք որ բազաններու հետ էր մեր գործը : Երբ ձրղալ Օղլուի զառիվայրէն կ'իջնէինք , քանի մը ծանօթ հայ լրագրավաճառներ մեր դէմ ելան , որոնք ժառանակի խմբագրատունը կ'երթային : Ակնարկներով հասկցուցինք թէ կը մեկնէինք : Վերջապէս հասանք կամուրջ , որ սակայն բաց էր նոյն պահուն : Այդ պատճառաւ նաւակներով տարուեցանք շոգենաւ : Երբ Հայտար - Փաշա հասանք , կայարանին մէջ եւս պահ մը արգելափակուելէ վերջ՝ մասնաւոր վակօնի մը մէջ տեղաւորուեցանք ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ : Կառախումբը ճամբայ ելաւ , մինչ մեր սիրտերը կ'արիւնտէջին սաստիկ՝ մեր սիրականներէն այսպէս հեռանալուս պատճառաւ :

Մութը կոխած էր արդէն , երբ հասանք էսկի - Շէհիր ուր — կիներու սպասման սրահին մէջ , որ հազիւ 15 քառ. կանգուն տարածութիւն ունէր — 29 հոգի արգելափակուեցանք ամենախիստ հսկողութեան տակ : Յաջորդ առաւօտ մեր ուղեւորութիւնը շարունակեցինք դէպի էնկիւրիւ : Կառախումբը ո՞ր կայարանը որ կը հանդիպէր , հայ հե-

տաքրքիրներու ստուար խումբ մը կ'ողջունէր զմեզ , եւ տեղ տեղ առատածեւն անձեր ուտեստ կը բաշխէին , առանց փոխարէնը պահանջելու : Եղբայրսիրական այդ անմոռանալի ցոյցը կը սրտապնդէր զմեզ : Դ՛շ. իրիկուն հասանք էնկիւրիւ եւ արգելափակուեցանք տեղւոյն ոստիկանական բանտին մէջ : Հոն եւս երկու խումբի բաժնեցին զմեզ եւ զատ զատ արգելափակեցին : Յաջորդ առաւօտ երբ բանտին բակն իջանք , տեսանք որ մեծ ցնձութիւն մը կը տիրէր բանտարկեալներուն մէջ : Հետաքրքրութեամբ անոնցմէ մէկուն մօտենալով հարցուցի .

— Ի՞նչ է ձեր այս ցնձութեան պատճառը :

— Մենք չեթէ գրուեցանք , վաղ առաւօտ իսկ պիտի մեկնինք :

— Արդեօք կրնամ հասկնալ թէ ի՞նչ յանցանքով դատապարտուած էք :

— Իբրեւ մարդասպան 15 տարուան բանտարկութեան դատապարտուած եմ , պատասխանեց մին ցրտօրէն :

— Ձո՞վ սպաննեցիք :

— Աղջիկ մը կը սիրէի , ծնողքը չուզեց զայն կնութեան տալ ինձ . ես ալ լեռը փախցուցի զայն եւ կիրքս յագեցնելէ վերջ սպաննեցի , յարեց յաղթական ցնձութեամբ մը :

Հազիւ 22 տարեկան երիտասարդ մըն էր խօսակիցս : Ուրիշ երիտասարդի մը մօտենալով , նոյն հարցումներն ուղղեցի եւ գրէթէ նոյն պատասխանները ստացայ : Երիտասարդ բանտարկեալ մըն ալ՝ որ կ'երգէր եւ ուրախութենէն կ'ոտոտէր , հարցմանս պատասխանելով ըսաւ անտարբերութեամբ .

— Ես ալ աղջիկ մը կը սիրէի որ սակայն սիրտն ուրիշ երիտասարդի մը տուած էր : Երկուքը մէկէն , թէ՛ սիրականս եւ թէ՛ մրցակիցս սպաննելով վրէժս լուծեցի :

Երեւակայեցէ՛ք , երբ այս կարգի եղեռնագործներ չեթէ արձանագրուած ըլլալուն համար Կայս. ներման կ'արժանանան , ինչի՞ր չեն ըներ անմեղներու դէմ , կ'ըսէինք իրարու , առանց մտքէ անցունելու թէ այս մարդասպաններէն կազմուած չեթէները նոյն իսկ Հայութիւնը բռնաջինջ ընելու կոչուած էին , ինչպէս իրողութիւնք անհերքելի կերպով ապացուցին ի վերջոյ :

Երկու օր էնկիւրիւի բանտը մնալէ վերջ , ուրբաթ առաւօտուն կանուխ ճամբայ հանուեցանք : Անոնք որ թէ՛ Մէհտէրհանէի եւ թէ՛ էնկիւրիւի բանտին մէջ առանձին արգելափակուած էին , դէպի Չանղըրի դրկուեցան , իսկ անոնք որ Մէհտէրհանէի բանտին մէջ ազատ թողուած էին , կարծես ի վարձատրութիւն՝ դրկուեցան Այաշ ուր բանտարկութիւն միայն կ'սպասէր իրենց , մինչ Չանղըրի տարագրողները քաղաքէն դուրս չելլելու պայմանաւ ազատ թողուած էին :

Բաց դաշտին մէջ հազիւ երկու ժամ յառաջացած էինք , եւ ահա ահեղ փոթորիկ մը ծագեցաւ : Բռնաշունչ քամին մեր կուրծքերը կը ձեռնէր եւ տեղատարափ անձրեւը մեր քամակները կը ձաղկէր : Անձեռէր եւ տեղատարափ անձրեւը մեր քամակները կը ձաղկէր : Անձաժովոյթ սայլերու մէջ նստած , ցուրտէն կը սարսուայինք : Այսպէս

շարունակեցինք մեր ճամբան մինչեւ լեռան մը ստորոտը, ուրկէ վեր սկսանք մագլցիլ հետիոտն, որովհետեւ ոստիկանները հրաման ըրին որ սայլերէն վար իջնենք: Բարեբախտաբար փոթորիկը քիչ մը հանդարտեցաւ եւ հովն ու անձրեւը մեղմացան: Երբ լեռան գագաթը հասանք, մեր առջեւ պարզուեցաւ Այաշ քաղաքը, որ ձորի մը մէջ շինուած կ'երեւէր: Եննի Գափուռի վարժարանին տնօրէնն՝ անմոռանալին Մարգպետ ու ես երբ լեռը կը մագլցէինք, կարծես լռելեայն կը մրցէինք՝ իրարմէ առաջ անցնելու համար: Անիկա մերթ ընդ մերթ կը կատակաբանէր եւ կարեւոր խոստումներ կ'ընէր զիս քաջալերելու համար, եթէ երբեք օր մը կողկաս երթար: Այլեւս սայլակ չբազմեցանք երկուքս. հետիոտըն իջանք զառիթափէն վար եւ իրիկուան դէմ հասանք կառավարական պաշտօնատան առջեւ որ լեռան ստորոտը կառուցուած էր: Պահ մը կանգ առինք, մինչ մեզ ընկերացող ոստիկան - զինւորներէն մին պաշտօնատուն կ'այցելէր: Սյո շէնքին դիմացը, հազիւ 40-50 քայլ դէպի վար, իսլամական գերեզմանատան մը ստորոտը կառուցուած կ'երեւէր միայարկ ու փայտակերտ շէնք մը, որուն պատուհաններէն քանի մը գլուխներ դուրս ցցուած էին:

Մեր մէջէն ձայն մը գոչեց յանկարծ.

— Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, Զարդարեանին գլուխն է, ահա՛ Խաժակն ալ, եւ դեռ ուրիշներ . . . :

Մեր ակնարկները դէպի հոն սեւեռեցան: Հասկցանք իսկոյն թէ մենք ալ նոյն շէնքին մէջ պիտի հիւրընկալուէինք: Քանի մը վայրկեան վերջ, զինւորական կարգով դէպի յառաջ խաղալու հրամանը ելաւ: Երբ հասանք դրան առջեւ, ցնծագին ողջոյններով ընդունուեցանք մեր բանտակից եղբայներուն կողմէ:



Մեր բնակավայրը 15 կանգուն լայնքով եւ զրէթէ 20 կանգուն երկայնութեամբ միայարկ շէնք մըն էր: Պատուհանները երկաթեայ վանդակներով պատած էին. տեղական իշխանութիւնը —

Կ Ե Ա Ն Ք Ն

ԱՅՍԵՒ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

թերեւս բարձրագոյն հրամանով — այդ երկաթեայ ձողերը բաւական չհամարելով՝ շէնքին շուրջը մէկ կանգուն հեռաւորութեամբ փայտէ վանդակորմ մըն ալ շինած էին, փախուստը դժուարացնելու համար. շուրջը զիշեր ցորեկ կը հսկէին մասնաւոր պահակներ: Երեք կանգուն լայնքով նրբանցքի մը երկու կողմը կային երկու սրահներ, որոնցմէ մին երկու սենեակներու բաժնուած էր, մին բանտարկեալներուն՝ իսկ միւսը ոստիկան-զինւորներու բնակութեան յատկացուած: Փոքր սրահը հայ-չայփական կը կոչուէր, վասն զի իրենց բնակութիւնը հոն հաստատած էին անոնք որ նիւթական կարողութեան տէր էին: Իսկ միւս սրահը ժողովրդական կը կոչուէր:

Այաշի մէջ բանտարկուած էին հայ մտաւորական դասակարգին

ամէնէն կարկառուն դէմքերը, զոր կառավարութիւնը «քաղաքական յանցապարտ» տիտղոսով որակած էր: Այդ մակդիրը կը կրէին նամակատան եւ հեռագրատան ստացագիրները «Միւնրխիւնը սիյասայեհեհն . . . ֆիդան հֆհեհնի» բացատրութեամբ:

Բանտարկեալներն ընտանեխումբեր կազմած էին, աւելի կամ պակաս թիւով անդամներու մասնակցութեամբ միասին կը ճաշէին՝ ծախուց խնայողութեան համար: Ամէն ընտանեխումբ իրեն յատուկ խոհարարն ունէր եւ միւս անդամները կարգաւ լուացարարի դերը կը կատարէին: Ագոստանաւոր մարմինն առանձին ընտանեխումբ մը կազմած էր Խաժակի նախագահութեամբ: Ամէնէն բազմանդամ եւ պատկառելի ընտանեխումբն էր այս: Համբարձում Պոյաճեան (Մուրատ) եւ Ճանկիւլեան ուրոյն ընտանեխումբ մը կազմած էին որուն կողմէ հիւրասիրուեցանք Պէշիթաշի Ազգ. վարժարանի տնօրէն Հիւսեան, զրավաճաւ Գըլըճեան ու ես, եւ արդէն երեք անբաժան ընկերներ դարձած էինք Մէհտէրհանէի բանտէն իսկ: Եւ սակայն մեր սիրտը խորապէս վիրաւորուելով իմացանք որ յաջորդ օրն իսկ Համբարձում Պոյաճեան Կեսարիա պիտի մեկնէր կառավարութեան որոշմամբ, տեղոյն պատերազմական ատեանին առջեւ դատուելու համար: Շահրիկեան ուրոյն ընտանեխումբ մը կազմած էր եւ իր տկարութեան պատճառաւ զուրգուրալի եւ որդիական հոգածութիւն մը կը վայելէր իր ընկերներուն՝ Օննիկ Սրապեանի, Բարթող Զօրեանի եւ Ատոմ Շահէնի կողմէ: Իսկ «հայլայփական սրահ»ին ամէնէն կարկառուն դէմքերն էին Բոստոմ Բոստոմեանց (զորդի հանրածանօթ վաճառական, ռուսահպատակ պատուական ու հայրենասէր Հայր), Տօթ. Նագզաշեան, ազնուասիրտ Սամուէլօֆ, երեսփոխան-քննադատ Արիստակէս Գասպարեան, զուարճաբան Վրթանէս Մարտիկեան, վաճառական Մենձիկեան, անմոռանալին Տօթ. Տաղաւարեան (որ անձնուիրութեան մարմնացումն էր, իր բժշկական տաղանդն ու մարդասիրական ոգին աննիւղ ի սպաս դնելով բոլոր հիւանդ տարագիրներուն անխտիր), Կէտիկ Փաշայի ազգ. վարժարանի տնօրէն Ներսէս Զաքարեան (ազնուասիրտ երիտասարդ մը, որ արարողապետի եւ միջնորդի դերը կը կատարէր ընդմէջ կառավարութեան եւ բանտարկեալներու): Իր հսկայ հասակն ու վառվռուն դէմքը պատկառ կ'ազդէին, երբ երկու ոստիկան-զինւորներ իր ետին ձգած՝ պաշտօնատուն կ'երթար մեր մէկ խնդրանքը Գայմագամ պէյին մատուցանելու եւ գոհացում ստանալու համար: Միհրդատ Հայկազն ներքին կարգապահութեան եւ մաքրութեան հոգածութիւնը ստանձնած էր եւ անթերի կը կատարէր իր պաշտօնը: Առանց կուսակցական խտրութեան, եղբայրսիրական վառ եւ ընդհանուր ոգի մը կը տիրապետէր բանտարկեալներուն մէջ, ինչ որ ամէնէն մխիթարական երեւոյթն էր մեզ ամէնուս համար. թէեւ պէտք է խոստովանիլ թէ քանի մը անոպայ անձնասէրներ ալ անպակաս էին: Թղթատարին մեկման օրը, Սմբատ Բիւրատ, Սերովբէ Նորատունկեան, Համբ. Համբարձումեան եւ ես քարտուղարի դերը կը կատարէինք,

մեր բանտակից եղբայրներուն նամակները , հեռագիրներն ու խնդրագիրները շարադրելով թրքերէն լեզուով , որովհետեւ թղթակցութիւնը լոկ այդ լեզուով արտօնուած էր :

Թղթատարին ժամանած օրը , անհամբեր ոգեւորութիւն մը կը տիրէր : Անոնք որ իրենց սիրականներէն նամակ ընդունած էին , բնական ուրախութիւն մը կ'զգային , իսկ անոնք որ չէին ընդունած՝ պահ մը կը տխրէին , բայց ապա նամակներէն ումանց ընկերած յուսատու լուրերէն կը մխիթարուէին : Բարեբախտաբար Պօլիս հրատարակուող հայերէն եւ տաճկերէն լրագիրներ անվրէպ կը հասնէին մեր ձեռքը : Եւ ահա՛ ընդհանուր հաւաքոյթը տեղի կ'ունենար , եւ խորին լուսթեան մէջ՝ քաջավարժ ընթերցող մը կարգաւ կը կարդար օրուան թերթերուն ամէնէն կարեւոր լուրերը . յետոյ կ'սկսէին դատողութիւնք ու դիտողութիւնք : Երբ թերթերն աւետեցին թէ Իտալիա երրեակ գինակցութենէն բաժնուելով՝ համաձայնութեան կողմը յարած եւ Աւրստրիոյ դէմ պատերազմ հրատարակած էր , անսահման ուրախութիւն մը յառաջ եկաւ , այն համոզմամբ թէ այդ կարեւոր իրողութիւնը պիտի փութացնէր պատերազմին վախճանը , մանաւանդ որ իտալական նաւատորմին մասնակցութիւնը դիւրաւ յաղթանակել պիտի տար Տարտանէլի նեղուցին առջեւ մղուած կռիւին : Շահրիկեան այն աստիճան համոզուած էր անգլ . քաղաքականութեան վերջին յաղթանակին , որ իր անձնական տկարութեան հակառակ՝ ոգի ի բռին անգլիերէն կը սորվէր - իրեն ուսուցիչ ունենալով Լարննցը - եւ ամէն առաւօտ կը մասնակցէր մարմնամարզի փորձերուն զոր Շ. Գրիսեան սիրայօժար կատարել կուտար փափաքողներուն : Մարմնամարզի այս փորձերը պահակ պաշտօնեաներուն կողմէ մեկնուեցան իբրեւ զինուորական մարզանքներ եւ արծազանգ գտան մինչեւ կառավարութեան մօտ . թիւրիմացութիւնը դիւրաւ փարատեցաւ սակայն : Գետնայարկ ու խոնաւ (մանաւանդ երբ օդը անձրեւոտ ըլլար) շէնքի մը մէջ գիշեր ցորեկ փակուած երիտասարդութիւնը , - թո՛ղ ձերութիւնը , - մարզանքի պէտք ունէր քիչ շատ կազդուրուելու համար , քանի որ դուրս ելլելու , արեւի և րես տեսնելու եւ մաքուր օդ ծծելու աստուածային պարգե՛ն իսկ կը զլացուէր իրեն : Ն. Չաքարեանի միջոցաւ քանիցս դիմում կատարուեցաւ Գայմագամին մօտ , որպէս զի օրը գոնէ մէկ ժամ արտօնէ բանտարկեալներու՝ դուրս ելլել եւ արեւի լոգանք մը ընել զինուորական հսկողութեան տակ : Վերջապէս առնուեցաւ այդ ցնձառիթ այլ վաղանցիկ արտօնութիւնը որ մէկ օրուան տեւողութիւն ունեցաւ , ավիսո՛ս , գիտէ՞ք ինչո՛ւ համար : Երբ բանտարկեալք իրենք զիրենք արեւին կենսատու ճառագայթներուն տակ զգացին , կարծես ամէն պատշաճութիւն մոռցան եւ անառակ տղու խաղերով սկսան զուարճանալ , մինչ «Պէյ»ը հեռուէն կը դիտէ եղեր ամէն ինչ : Նոր բայց անօգուտ դիմումներ . օրերը կ'անցնէին եւ մաքուր օդ ծծելու շնորհը կը զլացուէր մեզ : Շաբաթներ անցնելէ վերջ միայն՝ բացառիկ արտօնութիւն շնորհուեցաւ որ տասնական հոգի կարգաւ եւ կէս ժամ կարենանք

շէնքին առջեւ ման գալ : Իսկոյն ցուցակներ պատրաստուեցան այբուբենական կարգաւ , դուրս ելլելու իրաւունք ունեցողներուն անուններով , եւ դրան քով պատերուն վրայ փակցուեցան կարգապահութեան համար :



Տեղւոյն ջուրը կաւային էր եւ նստողական կեանք վարողներու համար յոյժ վնասակար , քանի որ մարսողութիւնը կը դժուարացնէր :

Ամէն առաւօտ կանուխ օրուան ջուրի պէտքը ԿԱՄԱԻՈՐ ԶԻԿԻՐՆԵՐԸ հոգայու համար , կամաւոր ջրկիրներու խումբ մը ձեռքէ ձեռք կը խլէր հողէ սափորները :

Ամէնէն տարիքոտներն իսկ դրան վանդակորմին առջեւ սափոր ի ձեռին՝ կ'սպասէին ջուրի երթալու հրամանին : Բուն նպատակը ջուր բերելէ աւելի՝ արեւջրուիլն էր : Աղբիւրը կը գտնուէր պաշտօնատան դէմ՝ բլուրին ստորոտը : Հազիւ մէկ երկու սափոր լեցուած , ահա յանկարծ ջուրը կը կտրէր եւ հարկ կ'ըլլար քաւորդ ժամ , կէս ժամ սպասել ջուրին վերսկսելուն : Ու ատիկա բախտաւորութիւն մըն էր անոնց համար որոնց կարգն էր օրուան ջրկիրութիւնը : Որովհետեւ աղբիւրին հանդէպ , մարգագետնին վրայ եւ արեւին կազդուրիչ ճառագայթներուն տակ , ժամանակ անցընելու առիթը կ'ընծայէր անոնց :

Մաքրութեան համար տարուած հոգածու եւ մանրախոյզ խնամքներու հակառակ , ոջիւներու արշաւախումբ մը գրոհ տուաւ յանկարծ մեր սրահներէն ներս , եւ այդ՝ երկու պատճառով . ա) Կառավարութեան խնդրանք մատուցինք , որպէս զի քանի մը կապերտ հայթայթէ՝ տախտակամածները ծածկելու համար , քանի որ շատեր տախտակներու վրայ զիշերելու ստիպուած էին : Մզկիթէ մը քանի մը կապերտներ բերուեցան , որոնք ոջիւներու ճշմարիտ բոյներ են եղեր : Կապերտները նոյն օրն իսկ ետ դրկուեցան խորին շնորհակալութեամբ : ք.) Բանտարկեալներէ ումանք անկողիններ վարձած էին , որոնք նոյնպէս կեղտոտ ու ոջլոտ էին : Հարկ եղաւ ամէն օր արեւին հանել զանոնք եւ այսպէս ճողոպրիլ անպիտան այդ անասնիկներուն համաճարակէն :

Լուացուելու շնորհն իսկ երկար ատեն զլացուեցաւ մեզ : Բազմադիմի աղերսանքներէ վերջն էր որ հինգական հոգիի բաղնիք երթալու արտօնութիւնը շնորհուեցաւ : Օրը հազիւ 15-20 հոգի կրնային վայելել այդ շնորհը : Կարգի սպասելու էր : Բայց ի՞նչ բաղնիք , աղտոտութեան կեղրոնավայր մը : Աւազանները ո՛չ տաք ջուրի , ոչ ալ պաղի ծորակ ունէին : Ծորակը գոյութիւն չունէր Այաշի համար : Բոլորակ փայտ մը կը կատարէր անոր դերը : Պաղ ջուրը դոյլով միայն կը հայթայթուէր . ջուրին չափազանց տաքութիւնը մեղմելու համար՝ դուրսէն պաղ ջուր բերելու ստիպողութիւնն անհրաժեշտ էր :

Քաղաքը թէեւ օժտուած էր հռովմէական ժամանակէն մնացած հինաւուրց ջերմուկով մը , բայց մեզմէ հազիւ տասը հոգի առիթ ու-

նեցան մօտէն տեսնելու եւ վայելելու զայն, վասն զի այդ արտօնութիւնն ալ շուտով զլացուեցաւ: Օր նոր, հրաման նոր, այս չէ՞ միթէ մեր երկրին մէջ աիրող փոփոխական ոգին:

Ժամանակը սպանելու համար, շատեր ընթերցանութեամբ կ'զբաղէին, մինչ ուրիշներ զանազան զբօսախաղերով կը զուարճանային, որոնց մէջ կարեւոր տեղ մը կը զբաւէին աղիւսախաղն ու ճատրակը: Պարսկահայ երիտասարդ մը հացի միջուկով աղիւսախաղի քարեր, համրիչներ եւ ճատրակի քարեր կը շինէր մեծ ճարտարութեամբ: Աղիւսախաղի ամէնէն ճարտար վարպետներն էին Հայկ Թիրեաքեան եւ Սմբատ Բիւրատ որոնք իրարու հետ կը մրցէին, յաճախ հետաքրքիրներով շրջապատուած: Բանագող Լուսթիւնեան ամէն օր կ'իկոյի զեղազիր իր օրացոյցը կը ցուցադրէր զանազան սրամիտ ակնարկութիւններով: Համբարձումեան կը զեղազրէր այդ օրացոյցները: Իսկ նուագահանդէսը կարեւոր տեղ մը կը գրաւէր մեր գիշերային ժամանցին մէջ: Դիւսաւորաբար Նորատունկեան եւ Ժիրայր բարեացակամ յօժարութեամբ կ'երգէին զանազան ազգային երգեր, ունկնդիրներուն մէջ մեծ ոգեւորութիւն յառաջ բերելով: Ենովք Շահէն մենախօսութիւններ կ'արտասանէր, գլխաւորաբար Սիամանթոյի հատընտիր բանաստեղծութիւններէն: Մարտիկեան նմանաձայնութեան իր ընածին տաղանդով ատենաբանութիւններ կ'արտասանէր, մերթ Խաժակի, մերթ Շահրիկեանի եւ մերթ Ակնունիի ծայնը ձեռացնելով, այնպէս մը որ կարծես թէ ատենաբանողներն անոնք ըլլային. եւ այսպէս քրքիչներ ու կեցցէներ կը կորզէր ունկնդիրներէն: Ժիրայր իր թաւ ծայնով Կուռնկ Հայաստանին կը մեներգէր, իսկ Նորատունկեան երգահանդէսը կը փակէր Հոյ Նազանդըր երգելով, որուն կը ծայնակցէին զրէթէ բոլոր ունկնդիրները, մեծ խանդավառութեամբ. յետոյ խորին լուսթիւն մը կը տիրէր, երբ ընկողմանելու վերջին ժամը կը հնչէր:

*

Մերթ ընդ մերթ խորհրդակցական գաղտնի ժողովներ տեղի կ'ունենային «Հայլայֆական սրահ»ին մէջ. կա'մ Խաժակի եւ կա'մ Ակնունիի նախագահութեան տակ: Այդ ժողովներուն մէջ որոշուեցաւ — եւ իրաւամբ — զգուշանալ մեր ընտանեկան նամակներուն մէջ որ եւ է ակնարկութիւն ընելէ քաղաքական կուսակցութեանց դէմ: Անգամ մը, տրուած որոշման համաձայն, հեռագրով դիմում եղաւ Ներքին Գործոց նախարարութեան՝ կա'մ դատական ատուանի մը յանձնել զմեզ եւ կա'մ ազատ արձակել, քանի որ որոշ ամբաստանութեան մը ներքեւ չէինք գտնուեր, այլ պարզապէս արգելափակուած էինք արտաքին ամէն յարաբերութենէ զրկուած, միայն թէ մեր ընտանիքներուն հետ կրնայինք թղթակցել թուրքերէն, զրաքննութեան բովէն անցնելու պայմանաւ. ազատ էինք նաեւ օրուան թերթերը ստանալ եւ օրուան դէպքերուն իրազեկ ըլլալ:

Եւ սակայն մեր դիմումներուն ունէ գոհացում չէր տրուեր: Օր մը միայն Դաշնակցական կուսակցութեան պետերէն ումանք — Ինչպէս Տօթթ. Փաշաեան եւ է. Ակնունի — մեր վրայ հսկող ոստիկանական Գումիսէրին կողմէ խորհրդածութեան հրաւիրուեցան: Երթեւեկութիւն մը տեղի ունեցաւ եւ կուսակցութեան գլխաւոր անդամներէն խորհրդակցական գաղտնի ժողով մը զուարուեցաւ: Հակառակ շարժած բուռն հետաքրքրութեան, գաղտնի պահուեցաւ այս խորհրդակցութեանց եւ երթեւեկներուն շարժառիթը, բայց ի վերջոյ անգաղտնապահ շրթունքներ փարտացին թէ Իթթիհատական կուսակցութեան կողմէ մասնաւոր պատգամաւոր մը դրկուած եւ Դաշնակցական պետերուն առաջարկած էր Իթթիհատին հետ միանալ Ռուսիոյ դէմ, ապազային համար մեծամեծ եւ հրապուրիչ խոստումներով. մինչ Դաշնակցութիւնը — յետ խորհրդածութեան — պարզապէս պատասխանած էր. «Նախ կ'արձակէք զմեզ այս արգելափակումէն եւ ապա կը խորհինք ձեր առաջարկին վրայ»: Թէ ո՞ր աստիճան ստոյգ է եղած այդպիսի առաջարկ մը եւ տրուած մերժողական պատասխանը, չենք կրնար երաշխաւորել այդ կէտը, քանի որ մենք ներկայ չէինք ժողովին: Սաչափ միայն կ'ըսէինք թէ իրականութիւն մը ըլլալու էր, որ գաղտնի պահուեցաւ, բայց ատիկա բերնէ բերան արծազանգ գտաւ: Ինչ որ ալ ըլլայ իրականութիւնը, սա ստոյգ է թէ Իթթիհատին եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ բանակցութիւն մը տեղի ունեցաւ որուն գաղտնիքն, աւա՞ղ, կուսակցութեան պետերուն քովը միայն մնաց:

*

Մինչ հայ ազգն ամենուրեք ընդհանուր տարագրութեան առթած արհաւիրքին մատնուած՝ Ազգ. Սահմանադրութեան տարեդարձն իսկ միտքէ չէր անցուներ, անդին՝ Այաշի բանաւճ. ՍԱՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ տին մէջ արգելափակուած Հայ մտաւորականութիւնը երբեք չվարանեցաւ ազգային ներքին ինքնավարութեան տարեդարձը տօնել մեծ հանդիսաւորութեամբ, կարծես այն նախագագուցութեամբ թէ ազգ. ազատագրութեան նախախայրիք տարեդարձն էր որ կը տօնէր: Խաժակ նախագահեց եւ պարագային յարմար պերճ բանախօսութեամբ մը բացաւ հանդէսը, ստոնաբան փափաքողներուն խօսք տալով: Շահրիկեան իր ընդոծին քննադատական ոգիով, լայնօրէն բանախօսեց եւ սա եզրակացութեան յանգեցաւ թէ Ազգ. Սահմանադրութիւնն իրմէ սպասուած օգուտները չէր ընձեռած, մասնաւոր գաւառաքնակ Հայութեան: Իրմէ վերջ խօսք առաւ Հրանդ եւ դարձադարձիկ խօսքերով արտասանեց թէ Ազգ. Սահմանադրութիւնը ո՞րչափ ալ իրմէ սպասուած օգուտակարութիւնը չէր ընձեռած, գէթ ներքին ինքնավարութեան գաղափարը զարգացուցած էր հայ ազգին մէջ եւ թէ օրէնք մը իրական եւ ճշմարիտ գործադրութեան մէջ է որ օգուտակար կրնայ ըլլալ: Այս երկու-

քէն վերջ ո՛չ որ խօսք առաւ: Այն ատեն Այաշի նոր սոխակները սկսան
երգել, մեծ խանդավառութիւն առաջ բերելով: Դերասան Ենոք Շա-
հէն մենախօսութիւններ եւ Սիւրամանթոյէն բերթուածներ արտասանեց
երգերու ընդմիջումով: Հանդէսը վերջացած էր Հոյ Նազարի միանուագ
երգովը, երբ սրահին դուռը յանկարծ բացուեցաւ եւ Ռոստոմ Ռոս-
տոմեանց (որուն թեւերը մտած էին Սամուէլօֆ եւ Վ. Մարտիկեան)
ներս մտաւ երկնադուրդ եւ կոկորդալիւր ձայնով մը գոչելով. — «Կեց-
ցէ՛ Հայաստան, կեցցէ՛ Հայութիւն...»: Ծափեր որոտընդոստ ու
խանդաղին՝ պատասխանը եղան Ռոստոմեանցի սրտազեղ աղաղակին:
... Ո՛վ հայրենասէր եւ ազատախոհ ողի, ո՛ր ես, ե՛լ եւ ող-
ջուն՛ջ՝ քու պաշտած Հայաստանդ, որուն սիրովն ա՛յնքան կը խան-
վառուէիր եւ որուն ազատագրութիւնը ողջունելու աւիւնովդ կը հրա-
հրէիր մեր սիրտերը: Կը հաւատամ թէ՛ երբ մարդակերպ ճիւղա-
ներ քու բեղմնաւոր եւ խոստմնալից կեանքդ կը զրաւէին անմահ եւ
անմահ ընկերներուդ հետ, քու վերջին շունչդ, քու հուսկ յետին ձայնդ
դարձեալ կը գոչէր. «Կեցցէ՛ ազատն Հայաստան, կեցցէ՛ Հայութիւն»:



Հայ մտաւորականութիւնը երկրին Վեհապետին հանդէպ իր քա-
ղաքավարական պարտականութեան մէջ չթերացաւ, թէեւ այդ Վեհա-
պետը երկրին մէջ անցած դարձած իրականու-
թիւններով չհետաքրքրուէր: Տարեդարձին գիշերը
կառավարական պաշտօնատունն ու մինարէները
լուզազարդուեցան: Առաւօտուն, արարողապետ
Ներսէս Զաքարեան յատկապէս պաշտօնատուն
երթալով ի դիմաց բանտարկեալներու շնորհաւորած էր Սուլթանին
տարեդարձը: Գիշերը նուագահանդէս մը կազմակերպեցինք եւ թուր-
քերէն ու հայերէն երգերով մասնակցեցանք տօնին: Մեր վրայ հսկող
ուստիկան զինուորները մեծ ուրախութիւն զգացին իրենց Վեհապետին
ի պատիւ սարքուած այս հանդէսին համար, որուն արձագանգը հա-
սաւ մինչեւ Գայմագամ պէյին ականջը: Սա, ի նշան իր զգացած գո-
հունակութեան, յաջորդ օրն իսկ արտօնեց որ բոլոր բանտարկեալներս,
ման գանք հանդիպակաց մարգագետնին վրայ: Այս անգամ բանտին
շուրջը կազմուած հսկողութեան զօտին աւելի ընդարձակուած եւ աւելի
մեծ տարածութիւն մը ընդգրկած էր: Պայծառ արեւուն տակ պտոյտ
մը կատարեցինք հոգեպարար զուարթութեամբ, որովհետեւ մինչեւ
այդ օր քաղաքը լոկ հեռուէն դիտելու դատապարտուած էինք: Մէկ
ժամ այսպէս ազատ ու բացօթեայ ժամանակ անցունելէ վերջ՝ ուրախ
վերադարձանք մեր արգելարանը, ուստիկաններ մեզ աւետած ըլլալուն
թէ քիչ օրէն ամէնքս ալ տեղերնիս պիտի մեկնէինք:

Եւ արդարեւ մէկ քանի օր վերջ, մեր բանտակից ընկերներէն վեց
հոգի — Խաժակ, Ակնունի, Ռուբէն Զարդարեան, Սարգիս Մինասեան,

Տաղաւարեան եւ Ճանկիւլեան — կառավարութեան հրամանով մեկ-
նեցան բանտէն, ըստ ոմանց էնկիւրիւ եւ ըստ այլոց՝ դէպի Պօլիս: Այն-
պէս կ'ըսուէր թէ էնկիւրիւի մէջ Պատերազմական Ատեան մը կազ-
մուած էր, որուն առջեւ պիտի դատուէին բոլորն ալ երկու օր վերջը:
Սիւրամանթօ եւս հսկողութեան ներքեւ անոնց ետեւէն ղրկուեցաւ:
Այսպէս քանի մը օրեր անցան անստգութեան մէջ եւ մենք զանազան
ենթադրութիւններու մէջ կը տարուբերէինք: Շաբաթ մը անցնելուն,
Տօթթ. Փաշայեանի հասցէին հասաւ հետեւեալ հեռագիրը, Պօզանթին
քաշուած՝ Զարդարեան ստորագրութեամբ. — «Դրամնիս սպառեցաւ,
Տիզրանակերտի Առաջնորդարանին միջոցաւ դրամ ղրկեցէ՛ք մեզ»: Ասիկա
պարզապէս հասկցնել կ'ուզէր թէ իրենք հող ղրկուած էին եւ թէ անկէ
ալ Տիզրանակերտ պիտի ղրկուէին: Արդէն լսեց ինք որ վեհանձն Զօհ-
րապ եւ արիասիրտ Վարդգէս Պօլսէն տարագրուած եւ Տիարպէքի
ղրկուած էին: Այս լուրը խորին տխրութեան մէջ ընկղմեց մեր սիր-
տերը, մանաւանդ որ զաւառաբնակ Հայերու տարագրութեան լուրն
ալ անուղղակի կերպով հասած էր մեր ականջին: Նոյնիկ Տէր-Ստեփան-
եան Չանդըրիէն կը գրէր Այաշ իր ազգականին՝ Օննիկ Սրապեանի որ
հօրմէն հեռագիր մը ստացած էր ծանուցանող թէ իր ընտանիքին
հետ ողջամբ Ակն հասեր էր: Այս լուրը կը բաւէր ցոյց տալու որ ա-
րեւելեան վեց նահանգներու հայ ժողովուրդը դէպի Միջագետք տա-
րագրելու ծրագիրն արդէն իսկ գործադրութեան դրուած էր: Ամէն օր
սրտատրոփ կ'սպասէինք նոր լուրերու: Եւ ահա՛ Չանդըրիէն Այաշ հա-
սաւ «Ազատամարտ»ի Հրայր: Սա անմահ ազնուութեամբ մը պնդած
էր թէ Հայկ Թիրեաքեան անունով փնտռուած անձը ինք է եւ Չան-
դըրի գտնուող Հայկ Թիրեաքեանը տարբեր անձնաւորութիւն մըն է:
Եւ արդարեւ այս վերջինն ազատ արձակուեցաւ եւ Պօլիս վերադար-
ձաւ: Նոյնպէս մեր մէջէն ուրիշ քանի մը անձեր (Տօթթ. Ալլահվէրտի,
Տօթթ. Նազգաշեան, Մարգպետ եւ Քրիս) Պօլսէն եկած հրամաններու
վրայ արձակուած էին: Հէք Մարգպետի համար վերջէն լսեցինք թէ
Պօլիս բերուելէ ետք՝ կրկին տարագրուած էր: Այսպէս օրերը կը սա-
հէին եւ մենք վաղուան անստուգութեան մէջ կ'սպասէինք մեզ վերա-
պահուած ճակատագրին իրականացման:



Ազատ արձակուելէս 3 օր առաջ կրկնուեր էր այն տարօրինակ
երազը, — զոր ձերբակալումէս երեք օր առաջ տեսեր էի, — բայց այս
անգամ սա տարբերութեամբ որ դէպի արեւմուտք
ԻՆՁՊԵՍ ԱԶՍ կը ճամբորդէի: Ընդոստ արթնցած, անկողինի
ԱՐՁԱԿՈՒԹԵԱՅ ընկերս՝ Հիւսեանն ալ արթնցուցած էի, «Գրաւ
կը դնեմ որ երեք օրէն ազատ պիտի արձակուինք»
ըսելով իրեն: Միեւնոյն օրը (Յունիս 12) Սարգիս Աճէմեան պաշտօնա-
տուն կանուցեցաւ: Դարձին՝ իրեն ընկերացող ուստիկանը ձեռքը
թուղթ մը՝ ձայնեց մեզ.

« — Աչքերնիդ լոյս, ձեր մէջէն 5 հոգի իրենց ընտանիքներուն քով պիտի վերադառնան . տարտը միւսներուն . պիտի կարգամ , մտիկ ըրէ՛ք . — Տիգրան Աճէմեան , Գրիգոր Սիւրմէեան , Մկրտիչ Կարապետեան (Կաթողիկ), Յարութիւն Ասատուրեան (մաթպատճը) , Բիւզանդ Պօզաճեան» :

Ա՛լ կրնաք երեւակայել մեր եւ մեր ընկերներուն զգացած ուրախութիւնը : Սրտապնդեցինք զիրենք եւ խոստացանք հարկ եղած դիմումներն ընել Պատրիարքին մօտ, որպէս զի իր ազդեցութիւնն ի գործ դնէ՛ ընդհ. բանտարկեալներուն ազատութիւնը ձեռք բերելու համար : Խնդրեցի Քօմիսէրէն որ նոյն գիշերը ներսը մնանք , այն դիտաւորութեամբ որ թէ՛ ընդհ. խորհրդակցութիւն մը կատարենք եւ թէ՛ զուարթ գիշեր մը անցունենք , թէ՛ եւ մեր խնդրանքը մերժումով ընդունուեցաւ միայն :

Կատարեալ սրտաբեկութեամբ եւ ակամայ բաժնուեցանք մեր եղբայրներէն : Իսկոյն որոշեցինք նոյն գիշերն իսկ քամբայ ելլել եւ յաջողեցանք ստանալ մեր ճամբորդութեան : Վիսիգան : Գայմազամը մեր անունները կարգաւ կարդաց հեռագրի մը մէջէն եւ ապա մէկիկ մէկիկ բաղդատեց ընդարձակ ցուցակի մը հետ որուն վրայ արձանագրուած էին բոլոր բանտարկեալներուն անունները : Երբ կարգն իմինիս եկաւ, յարեց .

— Սիկուրաճի Բիւզանդ . այս անձը դուն ըլլալու չես, դուն քիւճ-ձար եագրճարս ես, մինչդեռ հեռագրին մէջ յիշուած Բիւզանդը սիկուրաճի է :

Առանց պաղարիւնս կորսնցնելու, իսկոյն պատասխանեցի .

— Պէյիմ, թէ՛ եւ վաճառականի գրագիր եմ, բայց բաթրոնս զլսաւորաբար ապահովագրական գործերով կ'զբաղի եւ այդ պատճառաւ է որ սիկուրաճի Բիւզանդ ըսուած է հեռագրին մէջ :

Պահ մը խորհելէ վերջ, — «Եթէ այդպէս է, լաւ» ըսաւ եւ սկսաւ գրել Վիսիգաս, մինչ ընկերներս ապշուածեամբ երեսս կը նայէին : Պէտք է ըսել որ կառավարական պաշտօնեայք ամբողջովին մեկնած էին եւ Գայմազամն ալ բնակարանը դարձած էր : Բայց բազում աղաչանքով հաճեցուցինք զինքը մինչեւ պաշտօնատունը գալու եւ մեր թուղթերը շնորհելու, որովհետեւ գիշերանց հետիոտն ճամբորդելու ստիպուած էինք : Արդարեւ պաշտօնատունէն դուրս ելլելուս, մեր նախորդ որոշումին մէջ ամրապնդուեցանք : Կառք մը վարձելով ճամբայ ելանք : Լիալուսինն արդէն կը ճառագայթէր երկնակամարին վրայ : Երբ կառավարական պաշտօնատան առջեւի զառիվերէն կը բարձրանայինք, հեռուն, մութին մէջ երկու մարդկային շուքեր նշմարեցինք եւ պահ մը կասկածեցանք թէ՛ Չեքե են անոնք : Խորհուրդ ըրինք ցրուած քալել : Երբ մօտեցանք, զարմանքով տեսանք որ մեր վրայ հսկող ոստիկան զինուորներէն երկուքն էին, անոնք որ շատ անգամ կ'ըսէին մեզի . — «Մենք զիտենք թէ՛ դուք ինչո՞ւ համար հոս բերուած էք. դուք ձեր ազգին ամէնէն պատուաւոր ու կարող դասակարգը կը կազ-

մէք. անիծեալ ըլլան անոնք որ զձե՛զ ալ կը չարչարեն, զձե՛զ ալ» : Ողջերթ մաղթելու եկած էին : Անոնցմէ մին տոյն թխամորթ գինուորն էր որ շատ անգամ օգտակար եղած էր մեզի, երբ պահակութեան կարգն իրեն վիճակէր : Օր մը երբ աչքերս լիալուսնի պաղպաղուն սկաւառակին սեւեռած՝ պիշ պիշ կը դիտէի, հարցուցած էր ինձ .

— Ի՞նչ կ'որոնես երկինքին վրայ :

— Նախ Արդարութեան պատկերը կը կարծեմ ցոլացած տեսնել անոր մէջ , յետոյ կ'երեւակայեմ թէ՛ անոր վրայ հեռանկարուած են անմեղ ու սիրասուն զաւակներուս լուսաշող դէմքերը :

— Իրաւունք ունիս, պատասխանեց , ես ալ ձեզի պէս զրկուած եմ ընտանիքէս եւ որդեակներէս : Արդարութիւնն ո՛ւր, մենք ո՛ւր . . . մեր քով Արդարութիւն մի՛ փնտռեք :

Մենէ՛ երկու հոգի իրենց ճամբորդութեան ծախքը հայթայթելու համար Սինճանքէօյէն էնկիւրիւ երթալու ստիպուած էին, մինչ մենք երեքս Սինճանքէօյէն (վերջնութեւ կայարան էնկիւրիւի) ուղղակի Պօլիս պիտի դառնայինք : Երբ յայտնեցինք թէ՛ մեր ընկերներէն երկուքը դրամի չգոյութեան պատճառաւ էնկիւրիւ երթալու ստիպուած էին, թխամորթն իսկոյն քսակը հանեց եւ ըսաւ .

— Որչափ դրամի որ պէտք ունիք՝ պատրաստ եմ տալու, Պօլիս հասնելէ վերջ կը զրկէք : Ես ձեր պատուաւորութեան վրայ կատարեալ վստահութիւն ունիմ :

Այդ առաջարկին վրայ ապշեցանք մնացինք եւ ա՛յն ատեն հաւատացինք թէ՛ այդ մարդուն երակներուն մէջ գէշ արիւնը չէր որ շրջան կ'ընէր : Շնորհակալութեամբ մերժեցինք իր առաջարկը . ողջերթի մաղթանքներ փոխանակելէ վերջ բաժնուեցանք եւ սկսանք բլուրն ի վեր մազցիլ , յետին ակնարկ մը նետելով այն տխուր շէնքին վրայ, որուն մէջ երկու ամիս արգելափակ ապրած էինք մեր բանտակից ու սիրական եղբայրներուն հետ , եւ ճամբան՝ մեր սրտին խորերէն բաղձալով որ անոնք ալ ի մօտոյ մեզի պէս վերստանային իրենց ա՛յնքան տենչալի ազատութիւնը : Կարծես թէ՛ ակամայ կը հեռանայինք , չէ՞ մի որ ամէնուս բուն ու ջերմագին իղծն էր խմբովին վերադառնալ մեր ընտանեկան օթեւիանները : Գրէթէ ամէն օր զա՛յս կը հոլովէինք :

Սակայն ափսո՛ս , երկինք չսեց մեր ձայնը . եւ այսօր դառնագին եւ անմոռուց վիշտով մըն է որ յաւէտ կ'ողբանք կորուստն այն վեհ հերոսներուն որոնք Հայութեան մէկ լուսափողփող համաստեղութիւնը կը կազմէին :

Ո՛ւր էք , ո՛վ ազիւ հոգիներ , ո՞ր ճիւղային ձեռքերը ձեր ա՛յնքան բեղմնաւոր կեանքը զրաւեցին եւ զմեզ ու ամբողջ Հայութիւնը զրկեցին՝ զձեզ մեր մէջ ողջունելու անսահման ուրախութենէն՝ այս փառայեղ օրերուն երբ ձեր պաշտած ու սիրած Հայաստանն այսօր կը վերականգնի Ազատութեան խորանին վրայ , ա՛յն Հայաստանը որուն համար միշտ պատրաստ էիք ձեր կեանքը նուիրելու :

Ո՞ւր էք Խաժակներ , Մուրասներ , Ակնունիներ , Շահրիկեաններ ,

Չարդարեաններ , Սամուէլօֆներ , Նորատունկեաններ, Սիւմանթօներ, Մինասեաններ , Տաղաւարեաններ , Չաքարեաններ , Հիւսիսեաններ . եւ լէ՛ք եւ ողջունեցէ՛ք Հայութեան լուսապայծառ արեւը որ ահա՛ իր կենսաւոյգ ճառագայթները կ'արծակէ ամէնուս սիրտերուն մէջ :

Ո՛վ հայրենանուէր Հայորդիներ որ ո՛չ եւս էք, բայց որ ձեր կենդանութեան երբեք չմոռցաք Հայութիւնն ու անոր պաշտելի Հայրենիքը, ո՛վ դուք որ ձեր անձը զոհաբերեցիք Ազատութեան բազինին վրայ, հաւատացէ՛ք որ Հայեր եւ Հայաստան աշխարհ պիտի չմոռնան զձեզ ու իրենց նոր Պանդէոնին մէջ պիտի յաւերժագրեն ձեր պանծալի անունները : Մենք ամէնքս կը հաւատանք թէ Անձանօթին ճամբուն վրայ՝ երբ հրոսախուժբերու անողոք հարուածներուն տակ ձեր հոգիները կ'աւանդէիք հունդազին , վերջին ձայներնիդ , հուսկ յետին շունչերնիդ դա՛րձեալ կ'արծագանգէր . «Կեցցէ՛ Ազատութիւն , Կեցցէ՛ Հայաստան» : Վկայ այն լեռներն ու ձորերը , որոնք ականատես եղան այն քստմնելի Տուամին որուն զոհ գացիք այնքան անողոք կերպով . վկայ այն ժայռերն ու սարաւանդները որոնք իբրեւ բնական ձայնազիր՝ ընդունազրած են ձեր ողբազին եւ ահասարսուռ ճիչերը , երբ նզովք կը կարդայիք Հայութիւնն անճիտելու դիւային խորհուրդը յղացող մարդակերպ զազաններուն : Եթէ ձեր ընտանիքները , ձեր սիրասուն զաւակները զոր ամէն օր կը հոռովէիք՝ զրկուեցան ձեր թանկագին կենակցութենէն , իրաւո՛ւնք ունին ճակատաբաց պանծալու թէ Հայութիւնը ձեզ եւ ձեր նման անմահ նահատակներո՛ւն կը պարտի այսօր իր քաղաքական ազատութիւնը :

Ձեր հոգիները թո՛ղ խայտան այսուհետեւ այն երանաւէտ օթեվանին մէջ ուր կը հանգչիք լուսապսակ-գլուխներով , դիտելով անդրըջիրմի բարձունքներէն հրճուանքը վերածնեալ Հայութեան , եւ ունկընդդեմով պատգահիկ դաշներզը վերականգուն Հայրենիքին . . . :

ԲԻԻ-ՉԱՆԴ ՊՕՉԱՃԵԱՆ



ՉԱՆԴԱՐԸԵՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

ԱՅՍՕՐ, երբ հրաւէրը կ'ըլլայ ինձի, որ պատկերը տամ Չանդրըրի իմ ընկերներուս կեանքին , անոնց նահատակութեան անթաղ Պանթէոնն է որ աչքիս առջեւ կուգայ , եւ դառնօրէն կը զգամ , թէ մ'որ հոգիներուն շիրմացումին կը սպասէ ան՝ իր վերեւ , վաղուան փառքի ճամբուն մէջ : Հաւաքական փառքին տանող ամէն ճամբայ , ի՞նչ նահատակները ունեցած է , եւ այսօր ամէնքս ալ կ'ընդունինք թէ զոհուածներուն հոգիները, մեզ վրկութեան ճամբուն վրայ տանող կամուրջը եղան պորտիւրէ :

Սիրելի բացականերու վրայ խօսիլը , դարպաս մըն է անոնց յիշատակին : Իսկ ինձի համար , Չանդրըրի վրայ խօսիլը , որ ա՛լ յաւիտենական բացական է , ապրիլ է այն սարսափը որ ամէնուրեւս եղաւ . անոնք՝ սարսափէն յետոյ , գացին կորուստի ճամբան , ու ինձի , թերեւս նախասահմանութեամբ մը , տրուեցաւ վերապրիլ , եւ խղճմտանքիս մէջ սզալ անոնց կորուստը :

Հիմա , բովանդակ աղէտէն յետոյ , ամէն անգամ որ մտքի եւ սրտի կորուստներուս հաշուեկշիռը կ'ուզեմ հանել , մեծ նաւաբեկութենէն սակաւաթիւ ազատուածներէն մէկուն հոգեբանութեամբ կը խորհիմ թէ վերապրիլը միշտ երջանկութիւն մը չէ ենթակային համար , քանի որ կը կարծուի թէ կորսուողը կրնար , տարբեր կարգադրութեամբ մը կամ դարձուածքով մը , ազատիլ վերահաս վտանգէն : Մարդս , թերեւս նախասահմանուածին որսը , շատ անգամ կ'ուզէ անգիտանալ այդ բանը եւ առկից էր որ յառաջ կուգայ հակամարտութիւնը իր ջանքերուն եւ տեղի ունեցող դէպքերուն միջեւ :

Խղճմտանքիս վրայ , մտածումներու այսօրինակ բեռով մըն է որ հիմա միտքս կը բերեմ Չանդրըրի մեր կեանքը :

Շատերով գացինք այնտեղ , ճամբան՝ Այաշին մեր ծանրածանր հարկը տալէ յետոյ : Բախտին հաւասար զաւակներն էինք դարձած ամէնքս ալ , թէեւ ամէն ոք , իր օրինաւոր ջանքերով կ'ուզէր առանձին շնորհներու ընկերանալ բախտէն : Մէկէ աւելի անգամներով , մեր ընկերներէն երեսունի չափ , (մեր ընդհանուր թիւը հարիւր յիսունի մօտ եղած էր Չանդրըրի մէջ) արտօնուեցան Պոլիս վերադառնալ :

Աստուծոյ յետոյ, Հայկական Խնդրի ընդհանուր կացութիւնը այնքան վատթարացած էր արդէն, որ մեր սնուցած վախերէն զերծ մնալնիս լիապէս բաւական կը համարէինք, ինքզինքնիս բախտէն նպաստաւորուած նկատելու համար, եւ որքան ալ յանդուզն բացատրութիւն մը պիտի ըլլար ըսելը «չէինք յուսար», բայց ես մեր հոգեբանութիւնը ներկայացուցած պիտի ըլլամ երբ յայտնեմ թէ ատեն մը եկաւ ուր ա՛լ չէինք յուսար Պոլիս վերադառնալ :

Ուրեմն ի՞նչ եղան մօտ այն հարիւր քսան հոգիները, որոնք մեր խումբէն Պոլիս չվերադարձան : Աստուծոյ հազիւ տասն եւ հինգ հոգիի չափ վերապրած են այսօր : Ուրեմն բախտը ուզեց որ մնացած շուրջ հարիւրը Եղեռնին յանձնուին :

Բախտը քմահաճ նկատուած է ընդհանրապէս : Մարդիկ այնպէս կարծած են թէ ան իրենց նկատմամբ միշտ դիմագծութիւն կը փոխէ : Ես մօտէն վերահասու եղայ անոր հաստատակամութեան, անոր հետեւողականութեան :

Մենէ, երկու անգամով, երկու կարաւաններ բաժնեցին . առաջինը յիսուն երկու հոգի եւ երկրորդը քսանեւէտը : Երկու կարաւաններն ալ Տէր-Չօրի համար ճամբայ հանուեցան : Այն ատեն, ղեռ ընտանի չէինք այս անունին : Առաջին կարաւանէն, եղած դիմումներու հետեւանքով վար դրուելով, բողոքական գրածախ Պարոնեան միայն Պոլիս վերադարձած է : Միւս բոլոր ընկերները, մէջն ըլլալով նաեւ խոստմնալից, համակրելին Արմէն Տորեան, զացած են Ալպիստանի ճամբաներուն դժխեմ զոհերը ըլլալ : Երկրորդ կարաւանէն վերապրած է միայն Արամ Անտոնեան, որուն Չանդըրընէն Էնկիւրի գացած պահուն, արկածով ոտքը կոտրելով, վերջին քաղաքին մէջ հիւանդանոց մը նետուած է, որովհետեւ անկարելի էր զինքը քալեցնել, եւ միւս ընկերները, հետիոտն տարած են քաղաքէն երեք ժամ հեռու, էլ մա Տաղի ստորոտը, եւ առանց բացառութեան ամէնքն ալ խողխողած են :

Ամէն անգամ, երբ կը խորհիմ թէ ինչպէս կազմուած են այս երկու կարաւաններու ցանկերը, բնազդական մղումով մը բախտին կը վերագրեմ այդ բանը :

Առաջին կարաւանին մաս կազմողները զլխաւորաբար, մեր մկանաւոր բախտակիցներն էին . բայց աստուծոյ զատ, իրենց հետ առնուեցան նաեւ ուրիշներ : Կեդրոնէն՝ շատ քիչերու մասին ցուցմունքներէ զատ, մնացեալներուն ցանկը Չանդըրընի մէջ կը պատրաստուէր : Յանցապարտութեան կամ անմեղութեան մասին ամենքս ալ իրարու հաւասար էինք : Ուրեմն ի՞նչ բան կար որ կ'առաջնորդէր Չանդըրընի վատշուէրները, իրենց ցանկերը պատրաստելու ատենին : Արմէն Տորեան մաս կազմեց առաջին կարաւանին, որովհետեւ, իբր Ֆրանսական զուարթախոհութիւնը իւրացուցած մէկը, շէնշող էր եւ երգի մը մուտուքին թրթռումները միշտ շրթունքին վրայ : Ես հրաւիրուեցայ մաս կազմել նոյն այս առաջին կարաւանին, որովհետեւ մեր մկանաւոր ընկերներէն մէկուն հետ, աւագանի անուան նոյնութիւն

մը ունէի : Այսօր, այդ կարաւանէն ետ մնալս, բախտով միայն կրնամ բացատրել :

Երկրորդ կարաւանը կազմուեցաւ աստուծոյ որոնք, կամ որ եւ է պարկեշտ աշխատանք կը կատարէին քաղաքին մէջ, իրենց կեանքը շահելու համար, եւ կամ թէ, չգիտցուիր ի՞նչպէս, ուշադրութիւնը գրաւած էին ցանկը պատրաստողներուն : Այս կարաւաններու կազմութեան զլխաւոր շարժիչ ոյժը եղած է նոյն տեսիլ Իթիֆիատի պատասխանատու քարտուղարը Օղուզ, որուն վրայ կը ծանրանայ զլխաւորաբար, մեր հարիւրէ աւելի կորսուած ընկերներուն արեան պարտքը :

Այն երեք զոհերը, որոնց հետ անձնական շատ մը յիշատակներով կապուած եմ, եւ որոնց ելերական վախճանը միշտ սրտիս մէջ կ'արիւնի, եղած են Դանիէլ Վարուժան, Տիրան Բէլէկեան եւ Ռ. Սեւակ :

1915ի Յունիսի վերջերը, առաջին կարաւանին մեկնելէն եւ տասն եւինը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ, մէկուկէս ամիսի չափ, միասին ապրեցայ Սեւակին հետ : Ես ուրիշ վից հոգիներու հետ միասին կ'ապրէի : Բոլոր ընկերներս ալ, առանց բացառութեան, մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն, Սեւակ ալ, այդ օրերուն նոր հասած էր Չանդըրը, ուրեմն անմիջապէս որոշեցինք մեր կենակցութիւնը :

Պոլսէն ծանօթ էր ինձի իր դիւրահաղորդ եւ զուարթ հոգին : Տօնական զուարթախոհութեամբը լեցուցած էր տուններնիս : Այդ ատեններուն, (յուլիսի սկիզբները) տակաւին չէինք գիտեր առաջին կարաւանին վիճակուած բախտը, եւ անտեղեակ էինք տակաւին թուրքին եղեռնի կամքին :

Իսլամին ծոմապահութիւնը սկսած էր արդէն, եւ ծայր տուած է լեռնի ապերասանութիւնը : Զարդերու չարաշուք գրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ : Այդ միջոցներուն էր, օր մը մեծ իրարանցումի մէջ տեսայ զինքը : Այն տեսակ խօսք մը տարածուած էր քաղաքականներու մէջ, թէ մահմետականութիւն ընդունողը ազատ պիտի արձակուէր : Այդ ատենները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն եւ եօթանասուն հոգիի չափ մնացած էինք : Ամբողջ երկու օր, խեղճ աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, եւ զատ զատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին :

Երբ մեր կարաւանը Չանդըրը հասաւ, մեր մէջը ութը բժիշկներ կային, իսկ Չանդըրընի մէջ բժիշկ չկար բնաւ : Մեր բժիշկ ընկերները իրենց արուեստը, տեղույն բնակիչներուն բարւոյն ի գործ դրին : Պոլիս մեկնումներէ յետոյ, երեք բժիշկներ մնացած էին : Այդ երեքն ամէնէն աւելի փնտուածն էր Սեւակ : Բաղաքին մէջ կանոնաւորապէս բժշկութեամբ կը զբաղէր : Տօթ. Տինանեան, Պոլիս վերադառնալուն ա-

ռիթով, Սեւակին յանձնած էր վիրադարմանութիւնը (pansement) թուրք աղջկան մը, որուն վրայ ինքը վիրաբուժական գործողութիւն մը կատարած էր: Այդ աղջկան հայրն էր Չէթէճի Արապահը Լսփայիւ-այս մարդը ակուայ ունէր Տօթթ. Տինանեանին, որուն չէր կրցած իր ուզած գինովը կատարել տալ վիրաբուժական գործողութիւնը: Եւ Տօթթ. Տինանեան, Պոլիս վերադարձի արտօնութիւնը գալուն, ամէն նախազգուշութիւն ի գործ դրած էր, վերոյիշեալին իր մեկնումի օրն ու ժամը չգիտցնելու համար:

Տօթթ. Տինանեանի մեկնումէն յետոյ, Սեւակ կանոնաւոր կերպով կը շարունակէր իր բժշկական այցելութիւնները այդ աղջկան:

Օր մը, կէս օրէն բաւական վերջը, տակաւին ճաշի չէր եկած: Ճիշտ կէս օրին ճաշի համար տունը կը գտնուէինք իրարու չսպասե-լու համար: Տրուած ըլլալով իր ճշդապահութիւնը, արտասովոր բան մըն էր եղածը: Ես, գրեթէ մտահոգ իրեն կը սպասէի, ճաշասեղանին գլուխը:

Վերջապէս եկաւ. բոլորովին անսովոր կերպով իրեն համար, անխօս էր. տքնութենէ դեռ նոր դուրս եկողի մը յոգնածութիւնը ունէր դէմ-քին արտայայտութիւնը: Յայտնապէս չարչարուած էր: Սեղանի վրայ բան մը չխօսեցաւ. երրորդ մը կար մեզի սեղանակից: Երրորդին մեկ-նելէն յետոյ, երբ առանձին մնացինք, խոստովանելու պէտքէն ճնշուած մէկու մը երկչոտութեամբ սկսաւ պատմել ինծի թէ ինչպէս դարմանուող թուրք աղջկան հօրը կողմէ տուն կանչուելով երկու ժամ վար դրուած էր: Ապիրատը նկարագրած էր թէ ինչպէս հայկական ջարդերը մո-լուցքով մը կատարուելու վրայ էին, թէ ամէն օր նմանօրինակ հրա-մաններու կը սպասուէր Չանդըրըի Հայերուն համար, հետեւաբար իր խանդաղատանքի զգացումները պարզելով Տօթթէօրին, կը համոզէր զինքը ընդունիլ մահմետականութիւնը, քանի ուշ չէր: Պտտուցած էր զինքը իր տանը բոլոր մութ անկիւնները եւ խորհրդաւոր նկուղները, ջատուկ մօրը՝ Տօթթէօրին ճակատը համբուրել տուած էր, եւ յետոյ գրեթէ արտօնած զինքը որ մեկնի, հրաւիրելով որ մինչեւ 24 ժամ զին-ւորագրութեան ճիւղի նախագահին դիմէ, իր կրօնափոխ եղած ըլլա-լը յայտնելու համար: Հետեւեալ օրը Պայրամ էր: Սեւակ, ճակտի պար-կեշտ քրտինքով մը պատմեց ինծի թէ ինչպէս ոգորած էր, համոզելու համար այդ անողորմ թէ այդպիսի պահանջում մը չներկայացուի ի-րեն, թէ ինքը ո՞րքան կը սիրէր կեանքը՝ իր զաւակներուն համար, ուս-տի չէր ուզեր մեռնիլ: Մեկնած ատենը, հեթանոսը նորէն շեշտած էր թէ սպասուած հրամանը կրնար նոյն իսկ քսանեւչորս ժամէն առաջ հասնիլ, հետեւաբար պէտք էր անպարել, պաշտօնական դիմումը ընելու համար զինուորագրութեան ճիւղի պետին: Սպառնալիքին դէմ կարելի չէր անտարբեր մնալ, որովհետեւ տեղեակ էինք եղեռնին հա-մատարած թաւալումին, որուն երեք չորս օր առաջ, էնկիւրի իր եր-կու հազարէ աւելի լաւագոյն այրերը զոհ տուած էր: Մենք որոշումը տալու համար չմտածեցինք իսկ, որովհետեւ մէկ հատիկ էր ան: Սե-ւակ, երեք իրմէ սպասուած դիմումը չըրաւ զինուորագրութեան ճիւղի

պետին: Մեր ընկերները խուճապի չմատնելու համար, գաղտնի պահե-ցինք միջադէպը, մեզի գաղտնակից առնելով միայն Տիրան Քէլէկեանը:

Բայց մեր հոգիները, սկսած էին արդէն, տաժանութեան մթնո-լորտին մէջ թեւածող մահուան սարսափը ծծել: Մեր տունը քաղաքին եզրն էր, գրեթէ դուրսը: Որոշեցինք քաղաքին մէջ փոխադրուիլ, եւ գացինք տեղաւորուիլ, մեր դժբախտ մեկնող ընկերներէն թափուր մնացած տուն մը:

Այս վերջիններէն մէկուն ժառանգը մնացած էր Սեւակին՝ տեսակ մը տարաշխարհիկ թռչուն, որուն տեսքը չարագուշակ կը թուէր ին-ծի: Երբեք չեմ տեսած թռչուն մը, որ այնքան եղբրականութիւն ար-տաշնչէ իր փետուրներէն, որքան այդ անհամեմատօրէն փոքր գլխով թռչունը: Մանաւանդ, զգացած էինք արդէն իր առաջին տիրոջ՝ եղեռ-նին նշաւակ ըլլալը. ան առաջին կարաւանին հետ մեկնած էր:

Չանդըրըի Իթիհատի պատասխանատու քարտուղարին ջանքե-րով, տեղւոյն միւթէսարըֆը Ասաֆ պէյ, (Տէօթթ-Սօլի Ասաֆը, որ Ատանայի ջարդէն յետոյ իբր նոխազ բաւութեան հինգ տարի անպաշ-տօն մնացած էր, եւ անկից յետոյ իր առաջին պաշտօնն էր Չանդը-րըի միւթէսարըֆութիւնը) ուրիշ տեղ փոխադրուեցաւ, որովհետեւ յայտնապէս Հայերու հանդէպ բարեացակամ վարմունք մը ցոյց կու-տար: Ասաֆէն վերջ, փոխանորդաբար Չանդըրըի միւթէսարըֆու-թեան պաշտօնը կը վարէր, Բասթէմունիի վիլայէթին ոստիկան զին-ւորներուն ընդհանուր հրամանատարը: Բէշիտ Բաշա կուսակալութե-նէ տակաւին չէր հեռացուած:

Սեւակ, միւթէսարըֆի փոխանորդին հետ շատ մտերիմ յարաբե-րութեան մէջ էր: Շատ անգամ, իրիկունները, կառավարչատան մէջ անոր մասնաւոր սենեակը կ'երթար օղի խմելու համար: Չարագուշակ թռչունին նկատմամբ իմ թելադրու-թիւններուս վրայ, իրիկուն մը գըլ-խատեց զայն, իր անձին չարաբախտութիւնը գլխատելու զոհունակու-թեամբ, եւ խորովել տալով միասին տարաւ, եւ կառավարչի փոխա-նորդին հետ իրենց օղիին աղանդեր ըրին զայն: Ո՞րքան խղճալի են մարդուս՝ իր չարաբախտութեան դէմ մաքառելու միջոցները: Արդէն հո՞տ է բուն անօգնականութիւնը մարդուն:

Երկրորդ կարաւանն ալ տունիս մենէ, անօրէնութեան ճամբանե-րուն, եւ անոր յուղարկ երթալէ մեր վերադարձին, կառավարչատուն հրաւիրուեցանք զեկոյցի մը տեղեկանսու համար: Երեսուն եւ եօթը հոգի մնացած էինք, մեր մէջ հաշուելով Սեւակը, Վարուժանն ու Քէլէկեանը: Երեսուն եւ եօթը հոգիներու ցանկ մը եկած էր: Ստոնք ազատ պիտի ձուլին եւ Պոլսէ զատ ուզած տեղերնին երթալու ազատ պիտի ըլլային: Այդ ցանկին անուններէն հինգին տէրերը կամ Պոլիս վերադարձած էին, կամ թէ մենէ մեկնող կարաւաններէն՝ մէկին կամ միւսին մաս կազմած: Ասոր փոխարէն, մեր ընկերներէն հինգին ա-նունները կը պակսէին ցանկին մէջ: Այդ հինգ մեր սիրելիներուն մէջ էին նաեւ մեր սիրելագոյն Վարուժանն ու Սեւակը: Աստնք՝ Պոլիս,

թէ՛ իրենց ընտանիքներուն եւ թէ՛ ներքին Գործոց նախարարութեան ղեկավար ըրին հեռագրով, որպէս զի իրենք ալ մեզի պէս նկատուին, առանց չարաբախտութեան կամքին, արդէն ուրիշ պատճառ մը չկար, որ անոնք տարբեր նկատուէին:

Մինչ այն, Իթթիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով, որոշուեցաւ որ այդ հինգը մեր Այաշի ընկերներուն քով փոխադրուին: Որոշում կայացած էր, Չանդըրըի մէջ հայ արտրական չթողուլ: Քաղաքային եւ զինուորական գերիներ սկսած էին հասնիլ քաղաք: Շատ նշանակալից պարագայ մըն է վերջին տեղեկացածս թէ, մեր հինգ ընկերները Այաշ փոխադրելու որոշումը տրուած թուականին Այաշի մեր ընկերները ա՛լ չկային յաւիտենապէս:

Սեւակ օգտուելով կառավարչի փոխանորդին հետ ունեցած իր մտերմական յարաբերութիւններէն, իրենց մեկնումի օրը, երկու-երեք, անգամ յետածոյ տուաւ, եղած ղեկավարներու վրայ Պոլսէն գալիք պատասխանի մը սպասելով: Ո՛չ մէկ պատասխան:

Վերջապէս Օգոստոս 13/26 1915, հինգշաբթի առաւօտ մը, նախորդ գիշերը Սեւակ հրաժեշտ առած էր կառավարչի փոխանորդէն, հինգ հոգին երկու կառքով ճամբայ ելաւ, մէկ հեծեալ ոստիկան-զինուորով եւ մէկ ոստիկանով: Մի թէսարըֆի փոխանորդը ամէն բարեացակամ կարգադրութիւն ըրած էր, Սեւակը եւ իր ընկերները ողջամբ Այաշ հասցնելու համար: Սեւակի կառապանն ալ, կառավարչի փոխանորդին Քասթէմունիի ամենօրեայ կառապանն էր, որ դիպուածով Չանդըրը եկած էր, եւ որուն՝ իր տիրոջը կողմէ յանձնուեցաւ Սեւակ, անոր ապահովութեանը մասին ամենախիստ հրամաններով:

Սեկնումի գիշերը, մեր տանը մէջ, բաղաւորաբար ու-մուսլ անցաւ: Երկուքս ալ այն իրիկունը, օգտուելով մեր խոհարարուհիին կարողութիւններէն, Այաշի մեր ընկերներուն համար քաղցրուենիք պատրաստելու զբաղեցանք: Մասնաւորաբար Սիւսանթօ բարեկամիս պատուոյ կտորներ սահմանեցի, շատ մօտէն ծանօթ ըլլալով ինծի, ամենազգի քաղցրութիւններու համար իր հոգիին անպատու տկարութիւնը: Շատ ուշ պառկեցանք գիշերը եւ շատ քիչ քնացանք: Օրուան լոյսը տակաւին հեռու էր մենէ, երբ մենք արդէն ոտքի վրայ էինք: Չարաբախտութեան ցուցմունքն էր որ նորէն վրդոված էր մեզ: Երազին մէջ Սեւակ տեսած էր կինը բոլորովին նիհարցած ու տգեղցած, իսկ անդրանիկ մանչ զաւակը անօրինակ կերպով մեծցած ու գեղեցկացած: Երազի հաւատացողներ, միայն մէկ տեսակ մեկնութիւն կու տան այս երազին, այսինքն, ենթակային համար մեծ չարաբախտութիւն մը կը սպասէ:

Կառապանը եկած էր արդէն, շատ ժամանակ չունէինք խորհելու, եւ ճամբայ ելանք, մեկնողներու ժամադրաւայրը, քաղաքին կամուրջը փութալու: Անլուսին, օգոստոսեան պայծառ երկնքի մը տակ, դեռ չճեղքուած մութին յանձնեցինք մեր ընկերները:

Նոյն իրիկունը, ժամը 12 ին անոնց սպանման լուրը, թիւնէյէն

հեռածայնով եկեր էր Չանդըրը: Տեղւոյն ոստիկան զինուորներու հրամանատար Նուրէտտին եւ Իթթիհատի պատասխանատու-քարտուղարը Օղուզ, հեռածայնի տեղը գանուելով, բրքիջով ընդունելու էին գոյժը: Գիշերը՝ կառավարչի փոխանորդը, եղեռնէն կատղած, մանաւանդ իր սիրական բարեկամին սպանութենէն այլայլած, ներկայութեանը կը կանչէ Նուրէտտինը եւ իր ծանր կասկածները կը յայտնէ: Այդ միջոցին Ռէշիտ Բաշա տակաւին կը շարունակէր կուսակալ մնալ վիլայէթին, եւ ձեւական հետապնդումներ կատարուելով, իբր սպանիչ, տասնեւմէկ խեղճուկ գիւղացիներ բերուեցան Չանդըրըի բանտը: Հետեւեալ օրը, ուրբաթ, կառավարչի փոխանորդին մօտ մեր ղեկավարին, տեղեկացանք այս մանրամասնութիւններուն, ու տեղեկացանք նաեւ, մահէն դառնագոյն իրողութեան, այն թէ այդ առտուն իսկ, հինգ զոհերուն մեկնելէն 24 ժամ վերջ, Պոլսէն հեռագիր մը եկած էր, արտօնող որ այդ հինգն ալ միւս 22ին պէս նկատուին: Տրուած չէ երբեք մարդուն, չարաբախտութեան անողոք անիւր կասեցնել:

Յետոյ ստուգապէս տեղեկացայ, որ չէթէ Արապաճի Իսմայիլ, մեր հինգ ընկերներուն ժամանելէն երկու ժամ առաջ, երեւցած է թիւնէյ, գիւղացիները զուխը հաւաքած, բանի մը համոզելու աշխատելով, ու յետոյ իր ճամբան շարունակած է դէպ ի էնկիւրի:

Վարուժան Չանդըրըի մեր ընկերներուն ամէնէն լուսկեացներէն ու քաշուածներէն եղաւ: Ինքը գլխաւորաբար զբաղած էր մշակական բանաստեղծութիւններ գրելով: Անգամ մը, մեր ամէնէն աւելի խոռվայոյզ օրերուն, նոր զրած մշակական մէկ քանի հնչեակները ինծի կարդալէ վերջ, չկրցայ զարմացումս ու հիացումս միանգամայն յայտնելու իրեն, որ այդքան արհաւիրքներու մէջ կրցած էր այնքան ջիւղ ու այնքան անապական պահել իր հոգին եւ ծնունդ տալ, այնքան խորունկ հանդարտութեամբ բնութենապաշտ բանաստեղծութիւններու: Ան պատասխանեց թէ իր այդ հանդարտամտութիւնը կը քաղէ այն հաւատքէն զոր ունի Հայուն ապագային վրայ: Ինչո՞ւ չտրուեցաւ իրեն ապրիլ իր հաւատքին պակոււմը:

Այս հինգ զոհերուն նախհիրէն յետոյ, անշուշտ մենէ ո՛չ մէկը ուզեց օգտուիլ իրեն տրուած ազատութենէն, ուրիշ տեղ մը ճամբորդելու համար: Երեսուներկու հոգի մնացած էինք: Մեր մէջ ունէինք տակաւին Տիրան Բէլէկեանը: Արտասահմանէն վերաշարժէն ի վեր, Պոլսոյ մէջ լաւ բարեկամներ էինք իրարու: Մեր ծանօթութեան տասնեւթօթ տարիներու ընթացքին, թէեւ այլապէս հայ գրականութեան համար տող մը չէ բերած, բայց իմ գրական բոլոր ձեռնարկներուս, սկսելով Կիսամսեայ «Մասիս»էն, լայնօրէն աշխատակցած է, հայ գրականութեան լաւագոյն էջեր արտադրելով:

Տիրան Բէլէկեան շատ ճկուն միտքով պատեհապաշտ մը եղած է: Ճանչցած եմ զինքը կորովի եւ ձեռներէյ: Բան մը միայն զինքը վախցուցած է, կեանքի նիւթական դժուարութիւնները եղած են ատունք,

եւ իր տկարացումներն ալ ատոնց հանդէպ է միայն որ երեւան եկած են: Մեր՝ Չանդըրը հասնելէն երկու շաբաթ վերջ, առաջին Պոլիս վերադարձողներուն առիթով թէեւ հաղորդուեցաւ իրեն թէ Պոլսէն գատ, ազատ է ուզած տեղը երթալ, բայց Քէլէկեան նախընտրեց մեզի հետ մնալ: Թէեւ իր սեւեռեալ մտածումն էր, ծովեզերեայ տեղ մը երթալով իր փախուստը հնարաւորել. բայց մտածումը երբեք գործի չփոխուեցաւ:

Չանդըրը մէջ, մէկ բանի վրայ տարակարծիք էի իրեն հետ: Քէլէկեան, իբր ամէնէն աւելի թափանցողը իթթիհատական մտայնութեան եւ քաղաքականութեան, շատ ճիշդ կերպով կը բնորոշէր երբ կ'ըսէր թէ իթթիհատականները գիտական ճշգրտութեամբ մը վարելու վրայ էին հայկական հալածանքները, եւ յետոյ կ'ընդունէր թէ իրենց երկրին ամէն մէկ թիզը թշնամիին պիտի յանձնէին, բուն ոգորումներէ յետոյ: Այս վերջին կէտին մէջ տարակարծիք էի իրեն. Քէլէկեան մեծ պատիւ մը կ'ընէր իթթիհատական բախտախնդիրներուն: Իրենց երկիրը թիզ առ թիզ թշնամիին յառաջխաղացութեան առջեւ պաշտպանելու համար ահագին զոհողութիւններ հարկ էր ընել: Անոնք, ո՛ր պիտակին տակ ալ որ ըլլան, անկարող են այդ բանին: Իսկ հայկական հալածանքը անշուշտ մինչեւ վերջը պիտի տարուէր, որովհետեւ իրենց ամէն քաղաքական բաժանումներու մտայնութիւնը այդ է, քրիստոնեաներու դէմ ընդհանրապէս, եւ վերջին կէս դարուն՝ Հայերուն դէմ մասնաւորաբար, երբ ինքզինքնին անպատասխանատու շրջանի մը մէջ կը զգան, ազատ ասպարէզ տայու համար, իրենց նախամարդկային առհաւական բնազդներու շղթայազերծումին:

Քէլէկեան Պոլսէն, ձեռքի տակէ, կնոջմէն լուր ունէր թէ գերման դեսպան Վանկէնհայմ թուրք կառավարութենէն երաշխաւորութիւն առած էր իր կեանքի մասին: Ուրեմն, մեր շուրջը եւ հեռուն, հակառակ տեղի ունեցող անլուր նախճիրներուն, Քէլէկեան լաւատես էր իր կեանքին համար: Մեծ հաւատք ունէր Վանկէնհայմի վրայ, եւ գիտէր թէ ան կարող է յարգել տալ, իրեն եղած խոստումը:

Հոկտեմբերի աշնանային առաւօտ մը, հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէր, պնդերակութեան հետեւանքով, գերման դեսպան Վանկէնհայմի մահը: Ժամանակ չէինք ունեցած տակաւին չափելու այդ լուրին քաղաքական կարեւորութիւնը, կամ մեզի համար ունենալիք հետեւանքները: Յաջորդ առտուն Քէլէկեան ձերբակալուեցաւ արդէն, եւ Չորումի պատերազմական ատենը զրկուելու պատրուակին տակ ճամբայ հանուեցաւ: Ընկճուած էր ինքը, վախճանը նախատեսած, եւ արքորակից եկեղեցականի մը յանձնարարած ոչ կիրակի օրը իր հոգւոյն պատարագ ընէ: Կարծեմ չորեքշաբթի օր մը մեկնեցաւ:

Իսկ ես, երբ այսօր, իր յիշատակին այս տողերը կ'արձանագրեմ, միտքս կ'իյնայ իր մէկ խոստովանութիւնը բախտի գոյութեանը մասին իր հաւատքին:

Ղրկուելէն մէկ ամիսի չափ առաջ էր, ղրկած էինք արդէն Վա-

րուժանն ու Սեւակը: Բարտիներու ծառուղիի մը վրայ կը պտտէինք միասին: Մեր խօսակցութեան նիւթն էր բախտը, չար կամ բարի: Քէլէկեան ըսաւ.

— Բախտը իմ կեանքս, եօթը տարիներով հանգրուաններու բաժնած է: Եօթը տարին անգամ մը, կեանքի մեծ ճգնաժամ մը կ'անցընեմ ես, յետոյ դժուարութիւնները կը յաղթահարուին ի նպաստ ինձի: Այս անգամ նորէն եօթը տարուան շրջանս լրացած է...

Մնացածը չըսաւ. թէեւ գիտէի թէ այս անգամ ալ լաւատես էր, դժուարութեանց ելքի մասին: Մարդիկ կան, որոնց դէմ չարաբախտութիւնը կը գործէ ճակատ ճակտի, իսկ մարդիկ ալ կան որոնց ետեւէն կը դաւաճանէ զաղտագողի:

Քէլէկեանի հեռացումէն երեք շաբաթի չափ վերջը, ես մեկնեցայ Չանդըրըն ուրիշ եօթը ընկերներու հետ: Վերջը մեզի հետեւեցաւ մէկ հոգի եւս: Իսկ մեր ընկերներէն մնացած քսան հոգիները, Բասթէմունիի Հայութեան տեղահանութեան՝ միասին տարազրուեցան եւ իրենցմէ երեք հոգի միայն ողջ մնացած է, տասնեւեօթը հոգին զոհ երթալով դժուարագոյն պարագաներու եւ սոսկալի համաճարակներու:

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵՍՆ



ՆԱՀԱՏԱԿ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ

ԱՅ հոգեւորականը ժողովուրդին ծոցէն ծնած եւ ուռճացած՝ անբաժանելի եւ բաղկացուցիչ տարրը կազմած է անոր: Շատ խոնարհ ու ժողովրդական է անոր տիպարը: Հակառակ որ մեր քաղաքական կեանքին անկումէն յետոյ բարձրագոյն դեկավարը Ազգ. Եկեղեցին եղաւ, հայ կրօնաւորութեան գերակշռութիւնը միշտ բարոյական քաղցրութիւններ ունեցաւ, եւ ծանր ու անըմբռնելի լուծի մը խորշումը չազդեց ժողովուրդին:

Հայ կղերը վեճական վայրկեաններուն պահած է իր բարձրութիւնն ու արժանաւորութիւնը: Հսկայ եւ լուսաշող դէմքերու պատկառելի շարք մը կը գեղազարդէ մեր պատմութիւնը Դ. դարէն ի վեր: Ան լիաձեռն բերած է իր մասնակցութիւնը ազգային քաղաքակրթութեան տաճարին կառուցին մէջ: Ազգին ճակատագիրը դարձնող բոլոր կարեւորագոյն շարժումներուն ու հզօր ճիգերուն մէջ տիրական դեր մը ունեցած է: Ուստի, շատ բնական էր թէ Ցեղին մարտիրոսութեան սրբազան սեղանին վրայ իր զոհաբերութեան բաժինը մեծագոյնը պիտի ըլլար: Իժովային տերազորութեան ահաւոր սպանդին մէջ հայ կրօնաւորը — եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, — առ հասարակ նահատակութեան պսակով անմահացան: Պէտք է ըսել, ի պատիւ հայ հոգեւորականութեան, որ զրեթէ չենք կրնար արձանագրել կրօնափոխութեան դէպքեր, եւ վերապրող խլեակներուն մէջ հազիւ կը հանդիպինք քանի մը հոգեւորականի, մազապուրծ եղած:

Կարելի չէ ստոյգ վիճակագրութեամբ կազմել ցուցակը նահատակ եկեղեցականներու: Շատ մեծ է անոնց թիւը, քանի որ ամենէն փոքրիկ գիւղն անգամ ունէր իր ժամն ու *skrsker*: Սակայն հնար է զատորոշել ասոնցմէ ոմանք որ մտաւորականի շնորհն ու դէմքն ունէին, թէ՛ իրենց խնամեալ կրթութեամբ եւ թէ՛ զրջի արդիւնքով: Այս կարգէն են տասնեակ հոյ մը Արմաշականներու, որոնք իբրեւ առաջնորդ մեռան պատուոյ դաշտին վրայ:

Տ. Մմբաս Եպս. Սաստիբեան, Առաջնորդ Կարնոյ, ծանրախոհ եւ բարեհամբոյր եկեղեցական մը:

Տ. Խոսրով Եպս. Պեհրիկեան, Առաջն. Կեսարիոյ, ժողովրդանուէր եւ դրական ձիրքերով օժտուած տիպար մը:

Տ. Սահակ Ծ. Վ. Օսապաճեան, Առաջն. Պրուսայի, ժրաջան եւ անվեհեր հովիւ մը:

Տ. Արտաւազ Ծ. Վ. Գոյիկեան, Առաջն. Եդեսիոյ, զգայուն եւ գեղապաշտ դէմք մը:

Տ. Գեորգ Ծ. Վ. Թուրեան, Առաջն. Տրապիզոնի, բազմահմուտ եւ զուարթամիտ կրօնաւոր:

Տ. Պարգև Ծ. Վ. Դանիելեան, Առաջն. Կուտինայի, լուսաէր, մեղուաջան գործող եւ խոնարհամիտ:

Տ. Շաւարշ Ծ. Վ. Սահակեան, Առաջն. Եւդոկիոյ, խանդոտ եւ քաջարթուն վարդապետ:

Տ. Պսակ Ծ. Վ. Տիր Խորհեան, Առաջն. Խարբերդի, եռանդուն եւ տրնասէր գործիչ:

Տ. Գեղամ Վ. Թիվիկեան, Առաջն. Բղիի, ինքնատիպ զրիչ, յեղափոխական խառնուածքով:

Տ. Սուրեն Վ. Գալիմեան, Առաջն. Պիթլիսի, վառվռուն բնաւորութեամբ եւ յամառ աշխատող:

Նահատակներու այս շարքին պէտք է կցել.

Սասկան Ներսէս Եպս. Դանիելեանը, Առաջն. Եօզկատի, բանաստեղծ հոգի եւ փափուկ սիրտ, որուն ոգելից գրուածքները միշտ պիտի պահեն իրենց թարմութիւնն ու հրապոյրը:

Մտաւորական այս խմբակին հետ՝ յաւերժական փառքի եւ անմահութեան դափնիներուն արժանի են այն բազմաթիւ կրօնաւորները, ամէն աստիճանէ, որոնք իրենց սուրբ արիւնը խառնեցին բիրաւոր ժողովրդեան մաքուր արեան հետ, եւ ստուարացուցին լուսապսակ երամը Ս. Դեռնդեաններուն:

11 Ապրիլ 1919

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՍՐԱՅԵԱՆ



Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Զ Ո Յ Ե Ր

Մ ԽԻԹԱՐԵԱՆ Միաբանութիւնն ալ ունեցաւ իր զոհերը: Մխիթար Աբբան՝ հեռատես եւ մտացի՝ իր վանքը հիմնեց Եւրոպայի մէջ, գիտնալով մտայնութիւնն այն կառավարութեան, որուն երկաթ լուծին տակ կը ճմուէր դարերէ հետէ Հայութիւնը: Քանի՛ քանի՛ վանքեր հիմնուած՝ բայց քանդուած առեւապուռ, կապուտ կողոպուտ, բայց կործանած հիմն ի վեր: Չուզեց ան որ քանդուէր իր հիմնածը, եւ չքանդուեցաւ: Բայց իր աշակերտները եւրոպան չէ՛ր որ պիտի լուսաւորէին, այլ իր ազգին զաւակները: Ուստի նոյն հեռատես խոհականութեամբ չորրորդ ուխտ մըն ալ դրաւ իր աշակերտներուն առջեւ. «մինչեւ ցհեղումն արեան», այսինքն երթալ ո՛ւր որ ալ դրկէ զիրենք Հնազանդութիւնը, նոյն իսկ եթէ հարկ ըլլար արիւննին թափել: Եւ այդ դժնդակ հարկը հիմնարկութենէն 213 տարի վերջ (1701-1914) եկաւ ու սաւառնեցաւ իր սեւ թեւերով՝ ինչպէս ամբողջ գաւառի Հայութեան՝ նոյնպէս եւ հոն գտնուող Մխիթարեան Հայրերուն վրայ:

Մխիթարեանները դպրոցներ ունէին Մուշի, Տրապիզոնի, Իզմիտի եւ Պարտիզակի մէջ: Մերտին եւս նոր դպրոց մը հիմնելու նախօրեակին մէջ կը գտնուէին:

Իզմիտի Հայրերը երկամեայ տառապանքներէ վերջ՝ շնորհիւ ազդեցիկ եւ պատուական Հայու մը միջամտութեան՝ վերադարձան իրենց աքսորանքէն: Պարտիզակի Հայրերը մինչեւ Իզմիտ աքսորուած՝ հրաշքով մը կարծես՝ հոն մնացին, ուրկէ յետոյ Պոլիս եկան ուրիշ միջնորդութեամբ: Բարեբախտաբար Մուշի մէջ Մխիթարեան Հայր չէր գտնուեր աքսորանքի կամ մանաւանդ ջարդի պահուն: Իսկ Տրապիզոն գտնուող երեք Հայրերը, ինչպէս նաեւ Մերտին գտնուող Հայրը, նահատակուեցան դժոխասիրտ դահիճներու եսթաղաններէն:

Այդ տարածամ շիջուցուած արեւ կեանքերուն գրական համառօտ գործունէութեան պատկերն է որ պիտի ջանամ գծել հոս քանի մը տողով: Առաջին զոհն է՝

Հ. ՄՏԵՓԱՆ Վ. ՍԱՐԵԱՆ. — Տեսուչ Տրապիզոնի Մխիթ. Վարժա-

րանին, տորդոր Աստուածաբանութեան եւ Փիլիսոփայութեան, պսակուած ի Հռովմ: Իբր գրական երկ՝ ունի ընդարձակ Աստուածաբանութիւն մը տեսական, հետեւողութեամբ Ս. Թովմաս Ագուհնացիին, գրաբար լեզուով: Դպրոցական գիրք:

Էակներու ծագումը անունով հատոր մը, որ կը խօսի էակներու ծագման մասին, եւ

Մագնիսական խուսանուն հատորիկ մը, որուն՝ ինչպէս եւ վերինին մէջ՝ կը խօսի իր ուսած աստուածաբանական դպրոցին հայեացքներուն համեմատ, քան թէ գիտնականի մը գիտական հմտութեամբն ու ծանօթութիւններովը:

ԲագմաՎեպի մէջ եւս ունի ինչ ինչ թարգմանութիւններ եւ յօդուածներ: Հմուտ էր լատիներէնի, իտալերէնի, ֆրանսերէնի, եւն:

Երկրորդ զոհն է՝

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ-ՄԱՀԱԿԵԱՆ. Ուսումնապետ նոյն վարժարանին, Մշոյ դաշտէն չքնաղ ծաղիկ մը, դեռա՛յ. թիթ՝ թերաբամիկ կոկոններով: Բանասէր, լեզուագէտ եւ զգայուն բանաստեղծ: ԲագմաՎեպի մէջ ունի բանասիրական յօդուածներ, ինչպէս նաեւ բագմաՎիւ ոտանաւորներ, որոնց մէջ կայ «Իմ աստղը» վերնագրով գեղեցիկ ոտանաւոր մը, ուր կը մարգարէանայ կարծես թէ իր կեանքը պիտի թաւա՛մի ծիղէն խզուած ծաղկի մը նման:

. . . Մայր չքնաղ, Տարօն, ուր տեղ պատմութիւն՝

Բնութեան հետ մըրցի գեղոց Եւրոպոյ .

Ուր տեղ յԱստուածագէտ կ'եկեմ իրիկուն,

Փառք եւ Անցեալ՝ լուսնով ոսկեգոծ . . .

Ձեռք մանուկ իր սօր՝ ծոցիդ մէջ նրնջեմ,

Երկիրն ուր մահն ալ, մահն ալ անուռ ե .

Լուսնակայդ իջնայ, խոսք զիս ծածկէ,

Սրբինգը հրնչէ բլուրներու մէջէն:

Ու սիւզդ սնյնելով դամբանիս վրայէն,

Կեանքիս քառամած՝ ըլլայ ողբերգուն .

Հոն, հոն նրնջեմ ես յաւե՛ծ մեղմօրեմ

Ճակատքս դեպ իմ աստղը դողողօրուն:

Դժբա՛խտ բանաստեղծ . չկատարուեցաւ իղծդ . դամբան մը չունեցար, որուն վրայէն Տարօնի սիւզն անցնելով ողբերգէր ա՛յդքան տարապարտուց, տարածամ, յախերկան եւ առաւիժ թառամած ծաղիկ կեանքդ . . . Թոց գիւղն էիր՝ երբ խուժաղուժ երկաթը խոհուն ճակատդ հեղքեց . չմեռար, կեանքի անուշ բնազդը ոյժ տուաւ քեզի տոկալու . ու տեսան քեզ՝ ճակատդ պատանքով փաթաթուն՝ — պատանք գերեզմանի — երբ, Թոց գիւղէն՝ Տրապիզոն բերուած՝ սուրնաւոր եւ դժոխականայ դժոխերես դահիճներէ շրջապատուած, կ'անց-

նէիր՝ միւս դժբախտ ընկերներուդ հետ՝ Տրապիզոնի մէջէն, ու կերթայիր «իբրեւ զոչխար ի սպանդ», եւ հոն մօտերը՝ նման մեծ Վարդապետին՝ որուն աշակերտած էիր, երբ դահիճներն իրենց կիսաւարտ ոճիւրը կը գլխէին, «իբրեւ զորոջ աւաջի կտրչի» այնպէս չբացիր, չբացի՛ք բերաննիդ, ու բտտրագուզ՝ վարդափթիթ ձեր արիւնտով ներկեցիր Պոնտոսի հողն ու աւազը:

Չունեցա՛ր դամբան . . . բայց քու ասողդ անշուշտ եկաւ ու կեցաւ վերեւը այն տեղին՝ ուր կը հանգչէին չարակոշկոճ ու չարակտուտ սակորներդ . . .

Հանգիստ անոնց . . .

Կը թողու «Հայ Կայսերք» անունով երկհատոր աշխատասիրութիւն մը, որուն մէջ կը խօսի Բիւզանդական գահուն վրայ նստող հայազգի կայսրերու մասին՝ հմտալից եւ աշխոյժ ոճով:

Այդ հատորները հրատարակելէ վերջ՝ Ֆրիպուրկի Համալսարանն յանախելով, հետեւեցաւ գրականութեան, եւ իբր աւարտաճառ իր փայլուն ուսանողական ընթացքին՝ հրատարակեց «Chateaubriand en Orient» անուն ընդարձակ ուսումնասիրութիւն մը Ֆրանսերէն լեզուով: Այդ անձի մասին շատեր շատ բան ըսած էին. պէտք էր նոր բան մ'ըսել, եւ Հ. Տէր-Սահակեան ըսաւ. ապացուցուց որ Շադոպրիան՝ գրած էր իր դէպ Արեւելք ուղեւորութիւնը, առանց այցելելու շատերն այն տեղերէն՝ զորս կը նկարագրէր. գտաւ աղբիւրներն որոնցմէ օգտուած էր, դէմ դիմաց հառնմատեց, հակասութիւններ դրաւ իր ըսածներուն մէջ, եւ Բարիզեան մամուլին միահամուռ զովեստներուն արժանացաւ:

Արեւայիս Մամիկոնեան կեղծ անունով երգած է Համիտի տապալումը, տպուած Կ. Պոլիս, 1910, «Հրատարակութիւն Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտաց Միութեան»: Կ'իրգէ «Վագրի հրճուանք», «Իչպ ի Երլորդ», «Պատերազմ», «Ապտիւլ-Համիտ գերի», «Ծեր ոճրագործին աքսորը», «Շիյեոնի դղեակին», 23 էջերու մէջ:

Գնարեղգակ բանաստեղծի խառնուածքն ունէր Հ. Տէր-Սահակեան, բայց իր արուեստը հեռու էր դեռ կատարելութեան դրոշմն ունենալէ. կան ճաշակի թերութիւններ, անհաւասարութիւններ, բառամթերք՝ ոչ այնքան ճոխ, որմէ ինքն եւս զոհ չէր, եւ սոյն տողերը գրողին կ'ըսէր, որ երբ անգամ մ'աւարտէր իր համալսարանական ընթացքը, պիտի աշխատէր այդ պակասը լրացնելու. հայերէն լեզուի վրայ աշխատած չէր այնքան՝ որքան պէտք մը, հա՛րկ մըն էր իր կարողութեանն ու գրական մտքին . . .

Անողորմ հրէշներն ի դերեւ հանեցին ամէն ինչ, մեզի թողլով միայն ողբ եւ աշխատանք խոստմալից եւ աւուրգ կեանքի մը այդքան անգթօրէն մահանալուն:

Երրորդ զոհն է Հ. ՍԱՀԱԿ ՕՏԱՊԱՇԵԱՆ, նոր ձեռնադրուած երիտասարդ հայր մը, աշխարհագրութեան հետամուտ. ունի անտիպ դասագիրք մը նոյն նիւթին վրայ:

Չորրորդ զոհն է Հ. ՊՕՂՈՍ Վ. ԳԱՍՊԱՐԵԱՆ, տորչոր Աստուածաբանութեան եւ իմաստասիրութեան, պսակուած ի Հոռով: Տակաւին գրական գործ չէր արտադրած:

*

Մխիթարեան զոհերու մասին երբ կը խօսուի, զուցէ աւելորդ չըլլայ յիշել հոս նաեւ անշունչ զոհ մը, որ շնչաւորներուն չափ եւ զուցէ աւելի զգալի է գրականութեան համար, քանի որ այլեւս անդարձ է անոր կորուստը: Այդ զոհն է՝ «Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայ կեանքի» անուն գործը, որուն առաջին հատորը Ա. — Մ, լոյս տեսած եւ ծանօթ է հասարակութեան: Մնացեալ մասը որ պիտի ուրիշ նոյնաչափ երկու հատոր եւս կազմէր Լրագրագիտութեան եւ յաւելուածով, այսինքն շայ գրէն մինչեւ վերջ (Յ եւ Ն գրերը տպուած են), ամբողջ հանուած են իրենց թաքստոցէն, ուր պահուած էին խնամքով: Տողբս ստորագրողին այդ տաժանելի եւ տասնամեայ ճիգերուն անբախտ պտուղին հետ՝ կորսուած են Ողբականի ծայրերն հասած թարգմանութիւնը, ֆրանսահայ առձեռն բառգիրք մը (համեմատութեամբ Բագրատունիին թարգմանութեանց), երկայն տարիներու գործ, եւ տրձակ մը լեզուական, եւն. անթիւ նօթերու . . .

Ողբականը կարելի է կրկին թարգմանել. բառգիրքին ցաւն ալ յարբերական ցաւ մըն է, աւելի իմ անձնականիս. նօթերն ալ կրնան զըրուիլ, բայց Մատենագիտութեան կորուստը անդարմանելի է. որովհետեւ հնար չէ դարձեալ միւսանգամ կտրել անցնիլ լողալով ովկիանոս մ'անձայր ու անդնդախոր: Գուցէ յանդգնութիւն ըլլայ ըսելը, բայց ըսել կուգայ, որ պիտի նախընտրէի ես ինքս զոհուած ըլլալ՝ քան այդ աշխատութիւնը, որուն համար երիտասարդ՝ աւուրգ հասակիս լաւագոյն մասը մաշեցուցած եմ, եւ այլեւս անկարող վերաշինելու . . . մտածելն իսկ սոսկում կը բերէ վրաս:

Հ. ՍՐՍԷՆ Դ. ՂԱԶԻԿԵԱՆ



ՎԵՐՋԱԲԱՆԻ ԴԵՂ

ԱՅՅՕՐ կը լրանայ չորրորդ տարին այն զարհուրելի գիշերէն ետք ուր հայ մտաւորականութեան ընտրելագոյն ներկայացուցիչները ձերբակալուեցան չքացուելու համար աքսորի ճամբաներուն վրայ :

Ահաւոր Աղէտէն վերապրող խումբ մը մտաւորականներ այս առթիւ պարտականութիւն զգացին իրենց դժբախտ եղբայրներուն յիշատակին յարգանքի եւ սուգի արտայայտութիւն մը ընել :

Այս նպատակով կազմուելիք յանձնախումբին անդամակցելու հրաւերին պատասխանեցին հետեւեալները .

Տիկիներ. Եւփիմէ Աւետիսեան, Զարուհի Գալէմբեարեան, Պերճուհի Պարսամեան, Մարի Սթամպուլեան եւ Օր. Արփիար: Պարոններ. Տիգրան Զաւէն, Մերուժան Պարսամեան, Յ. ձ. Սիրունի, Գէորգ Մեսրոպ, Շահան Պէրպէրեան, Յովհ. Պողոսեան, Թագւոր Սուքիասեան եւ Տօքթ. Բարսեղ Տիւանեան :

1919 Ապրիլ 12ի ուրբաթ օրը սարքելով հանդերձ եկեղեցական եւ աշխարհական փառաւոր սգահանդէս մը , Յանձնախումբս յաւերժացնելու համար իր յարգանքի եւ սուգի արտայայտութիւնը, ձեռնարկեց ներկայ «Յուշարձան»ին հրատարակութեան, Պոլսէն աքսորուած եւ նահատակուած մտաւորականներէն ու գործիչներէն զատ՝ տեղ տալով նաեւ գաւառի այն մտաւորականներուն եւ հանրային գործիչներուն որոնք միեւնոյն ոճրապարտ նպատակին համար զոհուեցան:

Ներկայ պարագաները նկատի առնելով՝ արդար պիտի չըլլար Յանձնախումբիս վերագրել լիակատար եւ անթերի գործ մը մէջտեղ բերած ըլլալու յաւակնութիւնը :

Նախափորձ մըն է ասիկա, եթէ կարելի է ըսել , առաջիկային աւելի ճոխացած եւ լիակատար ձեւի մը տակ ներկայացնելու համար այս Յուշարձանը, որուն հասոյթը յատկացուած է Մտաւորականներու Ֆօնտը կազմելով մասնաւորապէս օգնելու Մեծ Զոհերու այրիներուն եւ որբերուն :

ԱՊՐԻԼ ՏԱՍՆՂՄԷԿԻ ՍԳԱՀԱՆԴԵՍԻ

ՅԱՆՁՆԱՆՈՒՄԸ

12 Ապրիլ 1919

Գ Ի Ն

1 ոսպի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Կ. ՊՕԼԻՍ
